

# ԱՐՄԱՆԻՑ ԿՈԶՄՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵՎ ՊԱՐՍԻՑ  
ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԼԵՏԻԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԱՆԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

«Քարավագոյն պատկեր»

(1991-1992)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՀԱՅՐԻ Ազգային գրադարան

ԵՐԵՎԱՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

АРМАНУШ КОЗМОЯН

## СРАВНИТЕЛЬНАЯ ПОЭТИКА АРМЯНСКОЙ И ПЕРСИДСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ЛИРИКИ

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

EPEBAH 1997

8(55)  
4-63

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒԾ

**ԱՐՄԱՆՈՒՅՆ ԿՈԶՄՈՅԱՆ**

## ԱՐՄԱՆՈՒՅՆ ԿՈԶՄՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵՎ ՊԱՐՍԻՑ

ՀԱՅՈՑ ԵՎ ՊԱՐՍԻՑ

## ՄԻԶԱՆԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ

(10-16 դդ)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1997



Դ.8Հ.891.891.0+82.09 (55)  
ԳՄԴ 83.3Հ+83.35 (5 Իրան)  
Կ 636

Տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պրոֆ. Պ. Մ. Մուրադյան

Կողմոյան Ա. Կ.

Կ 636 Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (Պատ. խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան). — Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997. — 224 էջ

Մենագրությունը հետազոտում է հայոց և պարսից միջնադարյան սիրային քնարերգության ձևակորման և զարգացման ընթացքը ու օրինաչափությունները. «սիրային» հասկացության մեջ մերակելով նաև միստիկական սերը Աստծո նկատմամբ, որը առավել տեսանելի է դրամում հետազոտում հայ բանաստեղծության աշխարհականացման ուղին: Գրական-փաստական ատադի, պատմական ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական հրողությունների, ինչպես նաև համեմատական գրականագիտության արդի տեսական դրույթների քննությամբ. բացահայտվում և գործառության մեջ են դրվում հայ-իրանական գրական առնչությունների տարրեր ծները՝ տիպարանականը, ծագումնաբանականը, ինչպես նաև՝ փոխազդեցությունների բարդ համակարգում ձևավորվող սինթեզը՝ նրանում առկա Արևելք-Արևմուտք ոգու առկայությամբ:

Աշխատությունը հասցեագրված է ինչպես միջնադարագետներին, գրականության և մշակույթի տեսարաններին, այնպես էլ ընթերցող լայն շրջաններին:

Կ 0505040004  
703(02)-97

ԳՄԴ 83.3Հ+83.35 (5 Իրան)

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997

## ԱՐԱՋԱԲԱՆ

Ամեն մի ազգային գրականության առանձնահատկություն առավել ցայտուն է գրաւորվում, եթե այն ուսումնասիրվում է իր զարգացման ընթացքի մեջ, այլ ժողովուրդների գրականությունների հետ ունեցած ընդհանրությունների և տարբերությունների, առնչությունների և փոխազդեցությունների համապատկերում: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում հայ (10-16-րդ դդ.) և պարսից (10-14 դդ.) միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան:

Նոր չէ հայ-իրանական պատմամշակութային, գրական-մատենագրական կապերի ուսումնասիրությունը: Դրանց փաստագրման, ի մի բերման և վերլուծության բնագավառում մինչև օրս պատկառելի աշխատանք է կատարվել: Հայ-իրանական առնչությունների ուսումնասիրությունը տարբեր կտրվածքներով՝ պատմաբանասիրական, թարգմանական, աղբյուրագիտական, լեզվաբանական, քննության առարկա է եղել նախորդ և ժամանակակից բազմաթիվ հետազոտությունների՝ Հ. Հյուրշմանի, Յ. Մարքվարտի, Հ. Աճայյանի, Ն. Մառի, Հ. Օրբելու, Մ. Աբելյանի, Հ. Թիրյաքյանի, Մ. Հասրաթյանի, Լ. Գյուղալյանի, Ա. Փերիխանյանի, Ա. Շահովարյանի, Հ. Մովսիսյանի և այլոց աշխատություններում: Հայ-իրանական գրական առնչությունների հետազոտության արժեքավոր և ուսանելի հողվածաշար է թողել Կ. Մելիք-Օհանջանյանը<sup>1</sup>: Նրա հետաքրքրությունների ոլորտն են մտել պարսից մեծ ժանրային ձևերում (հպու) և մեր պատմագրության մեջ պահպանված վիպական մոտիվների ընդհանրությունները: Դեռևս 1930-ական թվականներին նա հստակ տարբերակել է այլ կայլ

1 Կ. Մելիք-Օհանջանյան, Ֆիրդուսին և իրանի վիպական մոտիվները «Օհանջանուն» կ հայ մատենագրության մեջ, «Ֆիրդուսի», հոդվածների ժողովածու, Երևան, 1934:

երկրներում նույն սոցիալ-պատմական ենթահողով պայմանափորված գրական ընդհանրութան այն տեսակը, որը այսօր մենք «տիպաբանական» ենք կոչում, տերմին, որը մեզանում ձևավորվեց ավելի ուշ։ Հայ-իրանական առնչությունների քննությանը նվիրված նորօրյա հետազոտությունների շարքում է գտնվում թ. Չուգասյանի աշխատությունը<sup>2</sup>, որը պարունակում է աղբյուրագիտական և վերլուծական հարուստ նյութ, հմտորեն բացահայտում Մովսես Խորենացու որոշ ակնարկները։ Հետաքրքիր են նաև թաջիկ հայագետ Ա. Դավրոնովի հարցադրումները<sup>3</sup>։

Նախորդների դիտարկումներն ու կռահումները կողմնորոշում և մտաշղացումների նյութ են տալիս մեզ։ Այդ է պատճառը, որ այսօր մենք կարող ենք գիտականորեն համակարգել հայ-իրանական գրական առնչությունները և ելնելով ժամանակակից գրականագիտության տեսական դրույթներից՝ քննել դրանք ծագումնաբանական, պատմատիպաբանական, ինչպես նաև փոխազդեցությունների բարդ համակարգում ձևավորվող «սինթեզի» և ուղղակի ազդեցության պարամետրերի սահմաններում։ Քննության այս մեթոդը առավել հասկանալի է դարձնում հայոց գրականության գարգացման բազմաթիվ խորքային երեսույթներ, հնարավորություն և հիմք է տալիս համեմատության լույսի տակ տեսնել մեր միջնադարյան դասականների գրական ժառանգության մեջ ավանդականն ու նորարարականը, ինքնուրույնն ու առանձնահատուկը, ինչպես նաև՝ տարբեր պատմական ժամանակաշրջաններում շփումների և կողմնորոշման ոլորտի որոշակի աստիճանը (բյուզանդաքրիստոնեական, արեւելախամական) միջնադարյան գրականությունների ընդհանուր համակարգում։

Հայ ժողովրդի ճակատագիրը սերտորեն կապված է եղել

հարեւան պարսից ժողովրդի հետ, և այդ երկու աշխարհները, իրենց պատմաքաղաքական և էթնիկ-մշակութային առանձնահատկություններով հանդերձ, դարերով գոյատեսել են կողք կողքի՝ ապրելով մերձեցումների և օտարումների բազմաթիվ շրջաններ։ Ամեն մի մերձեցում, անշուշտ, իր հետ բերել է առնչությունների նոր որակ, ուստի դյուրին չէ ուսումնասիրել և ճշտել նրանցում կոնկրետ ազգեցությունների աստիճանը և չափը։ Պարզ է, սակայն, որ հնագույն շրջանին առավել բնորոշ են եղել ծագումնաբանական կապերը։ Գրիստոնեության ընդունումը հայերին անքակտելիորեն կապել է բյուզանդական-արևմտյան աշխարհին և հեռացրել կից՝ պարսից ժողովրդի քաղաքակրթությունից։ Սասանյանների անկումից և իսլամի ընդունումից հետո հայ-իրանական հարաբերությունները մտնում են մի նոր փուլ։ Երկու հզոր գաղափարախոսական պատնեշներով անջատված ժողովուրդների մշակութային կապերը գրեթե խզվում են, վերահսկվում հակոսնյա հոգևորականության կողմից։ Մեզանում ձևավորվող և՝ քաղաքական և՝ գեղագիտական գիտակցությանը խորթ էր իսլամական աշխարհն իր բոլոր արտահայտություններով։ Ինչպես զրադաշտական, այնպես էլ հետագայում մահմեդական աշխարհն ընդունելի չի եղել և չի մտել հայոց քրիստոնեական էթնոմշակութային հետաքրքրությունների ոլորտը։ Կամ, եթե անգամ արծարձվել է, ապա գերազանցապես՝ հակածառության տեսքով։ Այդ է պատճառը, որ հայ մատենագրության մեջ նշված շրջանում իրանական մշակութային աշխարհի արտացոլումը շատ զուսպ է։ Նույնիսկ հոգևոր ինստիտուտի թուլացումից հետո՝ Հայաստանում աշխարհիկ մտքի վերելքի շրջանում, մեր մատենագիրները վերապահութեն էին նայում պարսից արվեստին և ըստ կարելվույն խոչընդոտում նրա մուտքը հայոց աշխարհ։ Մասսամբ այս պարագայով պետք է բացատրել 10-րդ դարում մեր գլուխայի անկախությունը պարսից աշխարհիկ գրականությունից, որը համեմատության խորքի վրա առավել ցայտուն է դառնուում։

Գրիստոնեության և իսլամի ընդունումից հետո ձևավորված

2. Բ. Լ. Չուգասյան, Հայ-իրանական գրական առնչությունները (հետախուզություններ), Երևան, 1963։

3. Դավրոն Ա. Ս., Основные этапы таджико-армянских литературных связей, (авто-реферат канд. дисс.), Душанбе, 1992.

Հայոց և պարսից պոեզիաները այդ նոր գաղափարախոսությունների շրջանակում, այնուհանդերձ, հետահայաց ինչ-որ չափով կրում էին սեփական ժողովուրդների գեղագիտական չափանիշների, գիտամշակութային և կրոնափիլիսոփայական ժառանգության կնիքը, և այդ է պատճառը, որ նրանք բազմաթիվ եղբերով նորից ու նորից մերձենում և բաժանվում էին միմյանցից:

Մեկ աշխատության սահմաններում, հարկավ, հնարավոր չէ քննել գրական կապերի և առնչությունների բոլոր ձևերն ու դրսերումները, ուստի մեր ուսումնասիրության ինդիրն ենք դարձրել միջնադարի սոցիալ-պատմական օրինաչափությունների համակարգում ձևավորվող երկու գրականությունների սիրային քննարերգության (աշխարհիկ և հոգեոր) կայացման ու զարգացման որոշ առանձնահատկությունները՝ դիտելով այդ շրջանը ոչ միայն որպես քաղաքական պատմության ժամանակահատված, այլ նաև մշակութային մի ֆենոմեն՝ նրանում միջնադարյան մարդու տիպաբանորեն ընդհանուր աշխարհընկալմամբ, գաղափարախոսությամբ, աստվածապետական-դասային մտածողությամբ, իրականության ընկալման և արտացոլման յուրահատկությամբ, գեղեցիկի չափանիշներով ևն:

Գրիգոր Նարեկացու (մոտ 945-1003) և Աբգալլահ Ռուդաքի (մոտ 860-916) ստեղծագործությունները վաղուց չափանիշի ուժ են ձեռք բերել՝ մեկը հայ, մյուսը պարսից իրականության մեջ՝ արտացոլելով էթնիկ գրականության ավանդույթները, ոգին ու ոճը: Ավելին, նրանց ստեղծագործությունները դուրս են եկել ազգային գրականության շրջանակներից, գարծել համամարդկային արժեք, ուստի մեր ամբողջ աշխատանքում դիտվում են որպես ելակետային և ներկայացվում համեմատությունների բոլոր մակարդակներում, թեև քննարկվող հայ և պարսից միջնադարյան սիրային քննարերգությունները իրենց տարատեսակներով ժամանակագրական կտրվածքով անհամեմատելի են, քանի որ ձևավորման հենց ակունքներում զարգանում էին իրարամերժ ուղղություններով՝ աշխարհիկ և հոգեոր: Երբ Նարեկացին կերտում էր՝ աստվածային սիրո հիմնը, Ռուդաքին կոչում էր աշ-

խարհիկ կյանքի: Սակայն իրականում երկուսն էլ որոշ առումով «քաղաքականացնում» էին գրականությունը՝ ծառայեցնելով այն տիրողներին: Այդ է պատճառը, որ ոչ միայն ընդհանրություններն են դառնում մեր ուսումնասիրության առարկան, այլ նաև տարբերությունները, որոնք համեմատությունների լույսի ներքո, առնչությունների և փոխադացությունների բարդ համակարգում մեր առջև բացում են նորանոր շերտեր: Վեկայակոչելով հայ և պարսից քննարերգության նմուշները՝ մենք փորձում ենք տեսական բնույթի եղրահանգումներ անել մեր գրականության ինքնուրույնության և կրած ազգեցության աստիճանի, ազգային կերտվածքի, ինքնատիպության, եզակի ձեռքբերումների, այսինքն այն ամենի մասին, ինչը կոչվում է ազգային առանձնահատկություն և որշում հայ չափած խոսքի տեղը միջնադարյան գրականությունների համակարգում, երկու հզոր՝ բյուզանդական և պարսկական գրականությունների կողքին:

Արևելյան աշխարհում ստեղծագործող այդ երկու մեծությունները՝ Նարեկացին և Ռուդաքին, ջատագովն էին երկու հզոր սոցիալ-կարգավորող ինստիտուտների՝ եկեղեցու և արքունիքի: Նրանք արտոնյալ խավի ներկայացուցիչներ էին, որը և պայմանավորում էր նրանց պոեզիայում տիպաբանական բազմաթիվ ընդհանությունները՝ չնայած նրանց հակագիր գաղափարների և հավատամքի: Օրինակ՝ բանաստեղծի յուրահատուկ կարգավիճակը, դրանից բխող պոեզիայի էլիտար բնույթը, բանաստեղծի և լսարանի հարաբերությունը, այստեղից՝ ստեղծագործության որոշակի ներփակվածությունը, ժողովրդական ոգու հետ անմիջական կապի թուլացումը, կանոնարկված մոտիվներն ու թեմաները, իդեալականացման կայուն մեթոդը, սիրային քննարերգություննում անհատականության պակասը, կաղապարված սիսեմաները, ավանդապահ ժանրային ձևերը ևն, որոնք միջնադարյան գրականություններին յուրահատուկ նորմատիվությունից բխող ընդհանուր երկույթներ են:

Բոլոր միջնադարյան գրականություններին բնորոշ է աստվածաբանական մտածողությունը, ուստի աշխատանքում հա-

տուկ տեղ է տրված հայ և պարսից միջնադարյան քնարերգության մի մասը կազմող «Աստծո սիրուն», որում առկա են և՝ ծագումնաբանական և՝ տիպաբանական ընդհանրություններ՝ կապված Արևելքը և Արևմուտքը մերձեցնող համաշխարհային կրոնների մշտական ուղեկցի՝ միստիցիզմի, ինչպես նաև նեռալլատոնիզմի, գնոստիցիզմի, պանթեիզմի ևն, այսինքն՝ համամարդկային մտավոր այն ժառանգության հետ, որոնք ձևավորել են հայոց և պարսից միստիկ (սուֆի) բանաստեղծների պոետիկան: Այստեղ ի հայտ են գալիս ունիվերսալ արժեքների ընդհանրություններ՝ կապված միջնադարյան մտածողի աշխարհընկալման և հոգեբանական կերտվածքի հետ:

Երկու ժողովուրդների միստիկական քնարերգության մեջ առաջնային է խոսքը աստծո հետ, որից բխում է նաև աստծո կերպարի՝ որպես բարոյական չափանիշի ձևավորումը և նրան հաղորդակցվելու միջոցների որոնումը (աղոթք, ողբ, ներբող ևն): Եվ, այնուհանդերձ, էականորեն տարբեր են այդ երկու միստիցիզմների արտահայտությունները և միստիկ մտածողների՝ աստծո հետ ունեցած իրացիոնալ շփման վերջնական արդյունքները, որոնք առավելապես ակնհայտ են դառնում «Ես»-ի ձևավորման շրջանակում:

Նարեկացու և Ռուդաքիի քերթության պատմահամեմատական հետազոտությունը ավելի է ընդգծում 10-րդ դարում հայ քնարերգության անկախությունը, նրա ազգային առանձնահատկությունները, անցյալի էթնիկ ժառանգության և քրիստոնեական (բյուզանդական) աշխարհի հետ ունեցած նրա սերտ առնչությունը: Մի կողմից՝ Հոգեոր դասի ուժեղ ազդեցությունն էր կանխում պարսկական աշխարհիկ ողու մուտքը հայոց պոեզիա, մյուս կողմից՝ մեր գրականության անկախությունը արդյունք էր նաև այն հանգամանքի, որ պարսից քնարերգությունը իսլամի ընդունումից հետո նոր էր ձևավորվում և ավելի քան երկու դար որոնումների մեջ էր, այն զեպքում, երբ հայերը արդեն անցել էին կրոնափոխության ժանր շրջանը և անընդեմ շարունակում էին իրենց գրական ավանդույթները:

Օտարումը իրարից այդ շրջանում երկուստեղ էր: Իրոք, ինչպես մեր միջնադարյան ձեռագրերում էին հատուկներ թարգմանություններն ու հիշատակությունները, այնպես էլ 10-11-րդ դդ. պարսից գրական հուշարձաններից մեզ հասած նմուշներում, այդ թվում ամենահայտնի արքունական բանաստեղծների դիվաններում (Ռուդաքի, Օսորի, Ֆառուխի, Մանուչեհրի, Ասդազի, Անվարի ևն) պահպանված հազարավոր բեյթերի մեջ ընդամենք մեկ-երկու հիշատակություն կա հայոց մասին, որոնց նշանակալի մասը կատարված է հանգի պահպանության համար: Օրինակ՝ 11-րդ դ. ամենահայտնի արքունական բանաստեղծներից մեկի՝ Մանուչեհրիի դիվանում հետևյալ տողերը կան:

Վեր կաց, ո՞վ հարճ, լից գավը գինով (հոսուն),  
Գեղեցկացրու խնջույքը մեր՝ Բալխից մինչև Հայաստան:<sup>4</sup>

Այստեղ ակնհայտ է բաթիե-արմինիե (գավ-Հայաստան) հանգավորման ձգտումը:

Կամ'

Նոր տարին ուրախության տոն է և հույսի,  
Հագնում են դաշտերը հայկական դիպակ:<sup>5</sup>

Մունջիկ թերմեզի.

Ո՞վ դու, որ առավել գեղեցիկ ես, քան հայկական դիպակը,  
Ո՞վ դու, որ առավել անարատ ես, քան Բահման ամսվա  
(գարնան-Ա.Կ.) անձրևի կաթիլը:<sup>6</sup>

Ռուդաքի.

Դեմքը (նրա) ավելի պայծառ է, քան արեգակը,

Եվ փառքն ավելի ամոր է, քան Սահլանն ու Արարատը<sup>7</sup>:

4 Դիվան-է Մանուչեհրի Դամդանի, Թեհրան, 1347, ս. 90:

5 Խոլմ տեղում, էջ 128:

6 Աախոր համար Ռուդաքի, Ստալինաբադ, 1958, 352 (այսունուկ՝ Աախոր). Այս աղբյուրը բավականաշափ անփոյթ է հրատարակված, ուստի որոշ հատվածներ ճշտել ենք պրոֆեսոր Մ.-Ն. Օ. Օսմանովի խորհրդատվությամբ, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Ռուդաքիի ժամանակակից բանաստեղծ Խոսրովին իր մեկնասի առատաձեռնությունը մեծարում է հետևյալ չափազանցությամբ:

Նոյի տապանը չէր հանգրվանի Արարատի վրա,  
Եթե քո (ձեռքի) ափը դառնար ջրինեղի պատճառ<sup>8</sup>:

Այսինքն՝ մեկնասն այսքան շռայլ է, որ համաշխարհային ջրհեղեղը հարատև կշարունակվեր, եթե նրա առատաձեռնությունը լիներ ջրհեղեղի իսկական պատճառը: Բնագրում անթաքույց է Ձուղի-Արարատ, ջուղի-առատաձեռն բառախաղը:

Այդ տեսանկյունից հիշատակություններն առավել գիտակցված են քիչ ուշ, Խաղանի Շիրվանի, նեղամի Գյանջավիկի և այլոց մոտ: Դրանք հաճախ ընդգծված գնահատական են արտահայտում<sup>9</sup>: Այսպես, Նեղամի «Խոսրով և Շիրին» պոեմում Շիրինը հանդես է գալիս որպես քրիստոնեութիւնի, հայուհի: Դա նույնիսկ ավանդույթ դարձագ նեղամից հետո այդ թեմայով ստեղծագործող բոլոր բանաստեղծների՝ Զամիի, Նեղենիի և այլոց համար: Այդ արդեն 12-րդ դարն էր, այն շրջանի սկիզբը, երբ աշխարհականացող հայոց գրականությունը պարսկականի հետ անմիջական շփումների և յուրացումների բազմաթիվ փաստեր է պարունակում: Ի դեպ, իրանական արվեստի աշխարհիկ ուգին Անդրկովկասում ձեւագորում էր նաև վրաց աշխարհիկ պոեզիան:

12-13-րդ դարերում արդեն առավել սերտ հարաբերություններ են սկսվում ոչ միայն հայոց և պարսից, այլ ամբողջ արևել-

7 Ասար-է քաղիմանեն-լեն Արու Արդալլահ Զաֆար Էբն Ռուդաքի, Ստուիլիարադ, 1958, ս. 45 (այսումնեն՝ Ռուդաքի, Դիվան):

8 Առեօրի, 330.

9 Հայերի մասին տեղենկություններն ավելի հարուստ են համեմատարար մեծ ժամանակին ձևերում: Ֆիրդուսու «Չահնամենում» հայերին նվիրված հատվածներից հետաքրքիր է հատկապես «ասպազեն» հայկական գնդի Ակարագիրը, որը բովանդակության թելադրանքով պատմական ժամանակաշահտում է պարունակում և մեծապեսական երանց ունի: Այդ մասին (տե՛ս «Ֆիրդուսի», քաղեց Հ. Աճառյանը, Երևան, 1942, էջ 67):

յան աշխարհի ժողովուրդների միջև, որոնց փոխազդեցությունները էական են դառնում: Պարսից մշակույթի գերիշխանությունը Մերձավոր և Միջին արևելքում առկա է նույնիսկ նրա քաղաքական իշխանության բացակայության ցեղերի միջնորդությամբ է մուտք գործում վերջիններիս կողմից նվաճված երկրներ: Ինչ վերաբերում է հայերիս, ապա կապված էինք արևելքի հետ առևտրատնտեսական, Հոգեբանական բազում թելերով և քաղաքներում ունեցած էթնիկական բազմազանությամբ, ինչն էլ խթանում էր այդ աշխարհի փոխարաբերությունը: Հայունի է, որ «սելջուկյան շրջանի» արվեստի հուշարձանները կրում են քրիստոնեամահմեդական միասնականության կնիք: Դրանք իրանական, կովկասյան (Հայոց, վրաց ևն) թյուրքական և այլ ժողովուրդների ստեղծագործության արդյունքն են, ուստի «Հայոց վզդեցությունը նշմարվում է ոչ միայն Փոքր Ասիայի սելջուկյան արվեստի վրա...»<sup>10</sup>:

Հայոց գրականություն մուտք են գործում արևելյան աշխարհին բնորոշ բազմաթիվ երանգներ, պարսկերեն, արաբերեն, թյուրքերեն բառեր և տերմիններ: Դա արդեն մտածողության գարգացման արդյունք էր, որին խորթ չէր նաև ուղղակի ազդեցուրյան երևոյնը և որը տարբեր ձևեր էր ստանում սկսած տեղական միջավայրում «Հյուր» երեւոյթի տեղայնացումից, վերջացրած ազդեցության ճկուն ձևերով, մտածված ոճապատճենմամբ են: Վերջիններս անվերապահորեն նոր որակ են բերում և ձևի և բովանդակության առումով:

Աշխարհականացող հայոց քնարերգության առաջին ներկայացուցիչները իրենց ստեղծագործությունները երկակի մեկնարանելու հնարավորություն էին տալիս: Դրա դասական օրինակն ու ապացույցը Կոստանդին Երգնկացու արտահայտությունն է, թե «... ես շինեցի զբանքս զայս, ի Շահնամայի ձայն կարդա-

10 Կ. Մար. Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության, Փարիզ, 1925, էջ 23:

ցէք»<sup>11</sup>: Ճիշտ է, ըստ Մ. Արեղյանի մեկնաբանման<sup>12</sup> այստեղ խոսքը վերաբերում է Շահնամեի տաղաչափությանը և կարդալու (ասելու) չափարանությանը, սակայն մեզ հետաքրքրող հանգամանքը հեղինակի «թույլտվությունն» է՝ իր ստեղծագործությունը ուղած ձեռվ ասելու, մեկնաբանելու։ Մրանով պարզ է դառնում նաև մեր տաղասացների քաջատեղյակությունը պարսից աշխարհիկ պոեզիային, մի բան, որ մենք առանձնապես չենք նկատում նարեկյան շրջանի գրականության մեջ։

Կոստանդին երգնկացու, Հովհաննես թլկուրանցու և Գրիգորիս Աղթամարցու գրական ժառանգության՝ մեր կողմից կատարվող համեմատական վերլուծությունը չի հավակնում ներկայացնել սիրային քնարերգության բոլոր առանձնահատկությունները, այլ փորձում է վեր հանել դրանց գեղարվեստական դրսերման որոշ տիպարանական գծեր, ինչպիսիք են հիմնական թեմաները և մոտիվները, նկարագրման իդեալականացման մեթոդը, գեղարվեստական արտահայտչամիջոցների նախընտրությունները, կերպարների կանոնարկված ձևերը, ինչպես նաև պարսից պոեզիայի՝ հայոց վրա ունեցած ազդեցության որոշ տարրերը, որոնք քննվում են ոչ թե իրրե սովորական յուրացում, այլ որպես «փոխազդեցության բարձրագույն ձև՝ սինթեզ», ինչը, սակայն, չի բացառում այդ քնարերգությունների յուրահատկությունն ու բազմազանությունը։ Այստեղ ակնհայտ են դառնում յուրացումների որոշ տեսակներ, որոնք ձևական բնույթ են կրում։ Հաճախ մեր պոեզիային հատուկ որևէ ձևի պարսից տարբերակը մուտք էր գործում բանաստեղծություն։ Դրանցից մեկը, օրինակ, թափալուն է՝ գրական անվան հիշատակումը բանաստեղծության վերջին բեյթում, որից երբեմն օգտվել են մեր տաղասացները՝ գլխագրերի, ծայրակապի հետ միաժամանակ։ Թաղալուն պարսից բանաստեղծության մեջ կանոնարկվեց դազ-

լում, 13-14-րդ դդ.։ Հասկանալի է, որ մեր տաղասացները իրենց տեղյակությունն էին ցուցաբերում, գուցե նաև հարգանքի տուրքը մատուցում Սաադիի, Հաֆեղի արվեստին։

Այդ շրջանում երկու գրականության մեջ էլ ի հայտ է գալիս «սոցիալական տարբերակման» երևույթը, երբ էլիտար պոեզիայի հետ մեկտեղ զարգանում է նաև դեմոկրատական միտումներով, ժողովրդական ոգուն մոտ, երբեմն ուամիկ ոճով, զվարճալի, կենցաղային տարբերով հագեցած բանաստեղծությունը։ Իր ստեղծման դարբնոցից՝ արքունիքից և եկեղեցուց, քաղաքների և արհեստաների բուռն զարգացմանը համընթաց, պոեզիան տեղափոխում է հանրության մեջ՝ արտահայտելով նրա գեղագիտական չափանիշները, լեզուն և ոճը, թափանցում է քաղաքացու, արհեստագորի և առևտրականի հետաքրքրությունների ոլորտը։ Երկու ժողովուրդների չափածո խոսքի արվեստում անառարկելի են դառնում տիպարանական այն ընդհանրությունները, որոնք ակնհայտորեն սոցիալ-պատմական հիմք ունեն և ինչպես հայրեններն ու պարսից քաղաքներն են ցույց տալիս, ձևավորվում ու զարգանում են թեև անկախ, սակայն՝ նմանօրինակ։ Հայոց քնարերգության ինքնատիպությունը չի խաթարվում այդ շրջանում օտար, հատկապես պարսից լեզվաոճական ներմուծումների ո՛չ քանակից և ո՛չ էլ որակից։

Հետաքրքիր են տիպարանական համեմատության մեթոդով վեր հանած ընդհանրությունները և տարբերությունները, որոնք մի կողմից՝ ավատատիրական հասարակարգում ապրող այդ ժողովուրդների պատմական զարգացման նույնանման օրինաչափությունների, մյուս կողմից՝ իշխող զաղափարախոսությունների և նրանց Առւրբ գրքերի, սոցիալ-քաղաքական ինստիտուտների, էթնիկ ժառանգության յուրահատկության և այլ առանձնահատկությունների արգասիք են։

Փոքր ժանրային ձևերի (հայրեն, քառյակ, դագալ) քննությունը հարուստ նյութ է տալիս արևելյան միջնադարում ձևավորվող գրական նոր կողմնորոշումների և միտումների, ինչպես

11 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենումի Սրապյանի, Երևան, 1962, էջ 209։

12 Մ. Արեղյան, Հայոց հիմն գրականության պատմություն, Գիրք Երկրորդ, Երևան 1946, էջ 552։

նաև ժանրային համակարգում բանաստեղծական ձևերի նոր գործառության և կարգավիճակի ուսումնասիրման գործին:

Հայ և պարսից գրական առնչությունների համակարգման և վերլուծության ընթացքը սույն աշխատության մեջ հիմնավորվում է պարսից քնարերգության այն փաստական նյութի հիման վրա, որի մի նշանակալի մասը մեր կողմից պարսկերենից թարգմանվել և տարրեր հրատարակություններով արդեն շրջանառության մեջ է դրվել<sup>13</sup>: Բանաստեղծությունների տողացի թարգմանությունները բերում ենք այն գեպքում, երբ առկա բանաստեղծական թարգմանությունը չի բավարարում պոտիկայի մասնագիտական նրբությունները բացահայտելուն և առաջ քաշած դրույթը հիմնավորելուն:

Աշխատության հիմնական խնդիրների քննարկմանն անցնելուց առաջ ցանկանում ենք երախտագիտություն հայտնել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի գործընկերներին, ինչպես նաև՝ Հարգարժան բանասերներ Ա. Ղազինյանին, Ա. Մադոյանին, Ա. Դոլուխանյանին, Վ. Ներսիսյանին, Գ. Ասատրյանին՝ խորհուրդների և օգտակար դիտողությունների համար:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԵՐԿՈՒ ՊՈԵԶԻԱ - ԵՐԿՈՒ ՀԱՎԱՏԱՄՔ

(ՆԱՐԵԿԱՑԻ ԵՎ ՌՈՒԴԱՔԻ.

ՊԱՏՄԱՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁ)

«Մարդու» բացահայտումը միայն  
Վերածննդի մենաշնորհը չէ:  
Դ. Ս. Լիխաչով

Հայտնի չէ, թե ինչպիսին կլիներ քաղաքակրթության հետագա ճակատագիրը, եթե յոթերորդ դարում Մոհամադի գրուներքո չմիավորվեին այն բազմաթիվ ցեղերը, որոնք ապրում էին Արարիայի ընդարձակ տարածքներում «անկախ և ինքնազլուխ»: «Արարական խալիֆաթ» կոչվող նոր ձեւվորված պետության տարածքները ձգվում էին Հնդկաստանից մինչև Ատլանտյանի ափերը, Միջին Ասիայից մինչև Աֆրիկա: Իրանը, Եգիպտոսը, Միջին Ասիանը, Պաղեստինը, միջինասիական երկրները, Հնդկաստանի հյուսիսային շրջանը, Հայաստանը, Վրաստանի մի մասը, Ատրպատականը մտան Արարական խալիֆաթի կազմի մեջ: Արաբների հաղթարշավն ավարտվեց Եվրոպայում, երբ 711 թ. արար հրամանատար ալ Թարիղը մտավ Խապանիա՝ իր անունը թողնելով Զիբրալթար (Թարիղի լեռ) նեղուցի վրա:

Խալիֆաթի մայրաքաղաքից հեռու ընկած ծայրամասերը կառավարում էին կենտրոնից նշանակված կուսակալները: Կենտրոնաձիգ պետության կողմից գործադրած ամենախիստ և հետևողական ջանքերն անգամ ի վիճակի չէին սանձահարելու հսկայածավալ այդ տարածքներում բնակվող ժողովուրդների անկախության ձգտումները: 9-10-րդ դդ. արդեն խարխլվել էին Արմանուշ Կողմոյանը, Երևան, 1995 (այսուհետև՝ Ռուդարիք):

13 «Մարգարտաշար». կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջարկեց և ծանոթագրեց Արմանուշ Կողմոյանը, Երևան, 1990 (այսուհետև՝ «Մարգարտաշար»): Օմար Խայամ, Քաղյակեներ, թարգմանեց Գ. Էմինը, կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, վերջարանը գրեց և ծանոթագրեց Արմանուշ Կողմոյանը, Երևան, 1993 (այսուհետև՝ Օմար Խայամ): Ռուդարիք. Ղափիդեներ, դազալեներ, խոհական-փիլիսոփայական բանաստեղծություններ, ոռքայաթ. թարգմանեց Վահագն Դավթյանը, կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Արմանուշ Կողմոյանը, Երևան, 1995 (այսուհետև՝ Ռուդարիք):

բարական խալիքաթի հիմքերը, և բազմաթիվ ավատատիրական տներ անկանություն էին ձեռք բերել: Խսպանիայում ձևավորվել էր Կորդովայի էմիրությունը<sup>14</sup>, Հայաստանում՝ Բագրատունիների և Արծրունիների, Միջին Ասիայում և Իրանում՝ Սաֆարյանների և Սամանյանների թագավորությունները: Զարգանում էին քաղաքները, Անին, Դվինը, Սամարդանդն ու Բուխարան, դառնում Մերձավոր և Միջին արևելքի տարանցիկ առևտրի խոշորագույն կենտրոններ:

Պարսկաստանը, որ 637 թ. Քադիսիի ճակատամարտում Սասանյան վերջին շահի՝ Հազկերտ Յ-րդ-ի պարտությամբ ավարտել էր իր պետականության փառավոր ճանապարհը, ապա կորցրել զրադաշտական կրոնը, ընդունել իսլամը, կորցրել էր փահլավական գիրը և ընդունել արարականը, կորցրել էր պետական լեզուն, և, հետեւաբար կապը գրական մշակութային ավանդույթների հետ, 9-10-րդ դդ. դանդաղ և հետեւողականորեն վերագրում էր արդեն իսկ խոսակցական ֆարսին, յուրացնում արարական պոեզիայի ժանրային ձևերը, և արուգ կոչվող քանակական տաղաչափությունը (երկար և սուլ ձայնավորների հերթափոխությամբ) հարմարեցնում ֆարսի լեզվի առանձնահատկություններին<sup>15</sup>:

Հայոց պոեզիան, այդ շրջանում երկփեղկում է՝ մի կողմից

14 Խսպանիայում 9-րդ դարում արդեն տեղի էր ունեցել այն երևույթը, որը համաշխարհային մշակույթը հարստացրեց Անդալույսան կոչվող սինթեզով: Արաբների հետ հոգներ Մերձեցման մի հիմնայի օրինակ է քերում Կորողվայի եպակուպու Ալվարը: Նա բողոքում է, թե երիտասարդ քրիստոնեաց արաբներն ավելի լավ են բացատրվում, քան լատիներն, կարդում են արարական բանաստեղծություններ, ուստինասիրում մահմետական փիլիսոփաների և աստվածաբանների ստեղծագործությունները, արմամարիում Սուրբ գրքի լատիներն մեկնությունները (տե՛ս Ի. Յ. Կրաչковский, Արաբская культура в Испании, М., 1937, стр. 11):

15 Ա. Կրիմսկին այդ շրջամի մասին գրում է. «Պարսկական գիտակցված ազգայնացույցը (այն ժամանակվա արարական անվանմամբ՝ շորիզմ) ամեն իր վառ արտաքայտությունն էր գտնում պարսիկների կողմից օգտագործվող արաբներն լնզվի քորի տակ այնքան ժամանակ. միջն որ վերցանեն սկսեցին ուղղակի պարսկերն գրել»: А. Крымский, История Персии, ее литературы и дервишской теософии, 1903, т. 1, стр. 1:

ուղղակիորեն շարունակելով հին գրական ավանդույթները եկեղեցական հիմների և շարականների հունով, մյուս կողմից՝ գնում գեապի աշխարհականացում՝ վերջինս հատուկ գաղափարական և ժամանրային բազմագանությամբ:

Հայաստանում ազգային պետականության երկարատև բացակայությունը բնականարար հանգեցրել էր եկեղեցու գերիշխանությանը մշակութային կյանքի վրա, իսկ վերջինս էապես կաշկանդում էր աշխարհիկ ոգու դրսւորումները: Դրան հակառակ, իրանում և Միջին Ասիայում, Բուխարայի և Սամարդանդի սուլթանական ավարանքներում և ավատատիրական տներում զարգանում էր աշխարհիկ պոեզիան: Խրախուսվում էր ներբողը, գովքը, պատերազմների և խրախճանքների նկարագրությունը: Սոցիալական ինստիտուտների կողմից այդպիսի երկարատև հսկողությունը մշակութի վրա հանգեցրեց այն բանին, որ Հայ գրականությունը հայտնի ուշացումով մտավ զուտ աշխարհիկ գրականության ոլորտը, իսկ պարսից պոեզիան դեռևս երկար ժամանակ գտնվում էր միօրինակ ներբողագրության, թեմաների կրկնության և մանվածապատ ոճի ու սալոնային հաճույքներին բնորոշ բովանդակության շրջանակում:

Ահա այդպիսի սոցիալ-պատմական մեծ տեղաշարժերի պայմաններում էր ձևավորվում պարսից նոր պոեզիան, որը կտրվելով մայր գրականության ավանդույթներից՝ որոնումների մեջ էր: Հնի և նորի, աշխարհիկի և հոգեորի այդ բարդ խաչմերուկում էին գտնվում Նարեկացին և Ռուդաքին, որոնց բախտ էր վիճակվել նոր էջ բացել սեփական ժողովրդի մշակույթում, վիճակվել էր նոր գրականության և նոր խոսքի ձևավորման պատմական առաքելությունը:

Նրանք ներկայացնում էին արևելյան աշխարհի տարբեր տարածաշրջաններ, տարբեր գաղափարախոսություններ, էթնոսներ, ստեղծագործում էին տարբեր ժանրային համակարգերում: մեկը ազգարարում էր երկնային սերը՝ մտածելով խորհրդանշներով, մյուսը՝ աշխարհիկ սերը՝ մտածելով կենդանի պատկերներով.

մեկը ներբողում էր աստծուն՝ ձաղկելով իրեն, մյուսը ներբողում էր սիրուհուն և մեկենասին՝ մեծարելով իրեն (Փախր):

Նրանք ապրել են 10-րդ դարում, գրեթե ժամանակակիցներ են, սակայն ստեղծագործել են երկու հակաղիր սոցիալական ինստիտուտներում՝ եկեղեցում և արքունիքում: Այդ հանգամանքը մեծապես կողմնորոշել է նրանց ստեղծագործության ոգին: Բոլոր տարբերություններով հանդերձ (որոնք կարևոր են մեր միջնադարյան գրականության տեղը և դերը համաշխարհային գրականության մեջ ճիշտ ճանաչելու համար, քանի որ համեմատական գրականության առարկան ոչ միայն ընդհանրություններն են, այլ նաև տարբերությունները)՝ մեզ համար ակներև է դառնում նրանց կյանքն ու գործը մերձեցնող սոցիալ-պատմական, համամարդկային-գեղագիտական տիպարանությունը. Հումանիզմ, գեղեցիկի պաշտամունք, ևն:

Ովքե՞ր էին Ռուդաքին և Նարեկացին:

Նրանց կենսագրությունից մեզ հասած կցկտուր տեղեկությունները պարուրված են ավանդագրույցներով: Ռուդաքիի անունն է Աբու Աբդալլահ Զաֆար էրն Մոհամադ: Ծնվել է Սամարղանդի մոտ՝ լեռների լանջին փոված Փանջոռուդ (հինգ վտակ) գյուղում, որից և ծագում է նրա գրական կեղծանունը՝ Ռուդաքի: Ավանդագրույցներից տեղեկանում ենք, որ Փանջոռուդի հրաշալի անկյուններից մեկն էր նրա մանկական ժամանցի վայրը, ուր գյուղն օղակող սարերի փեշերին ծվարած հովիվների սրինգն ու սոխակների երգերն են եղել նրա առաջին ուսուցիչները: Նրա կյանքի ժամանակահատվածին առավել մոտ կանգնած մեզ հայտնի մատենագիրը՝ Մոհամադ Առուֆին (13-րդ դ.) հաղորդում է, որ Ռուդաքին կույր է ծնվել, սակայն այնքան ընդունակ էր, որ ութ տարեկանում անդիր գիտեր Ղորանը, բանաստեղծություններ էր գրում նրբանաշակ ոճով, և ժողովուրդը նրան հիաց-մունքով էր վերաբերվում: Աստված նրան օժտել էր նաև հրաշալի ձայնով: Նա դասեր էր առնում հայտնի երաժիշտ Բախտիարից, որը նվագ էր ուսուցանում բարբաթի վրա: Երբ արդեն խոս-

քի վարպետ էր, էմիր Նասրը՝ Ազմեդի որդի Սամանյանը, նրան հրավիրում է արքունիք, որտեղ և նա մեծ հարստության տեր է դառնում<sup>16</sup>:

Ռուդաքին Սամարղանդի մադրասեում ստացել է իր կրթությունը, և երբ մի օր բռնել է Սամանյան արքունիքի ճամփան, որտեղ արարական լուծը թոթափած իրանական պետականությունն էր ձևավորվում, ինչպես հավաստում են մատենագիրները, արդեն հայտնի է եղել որպես խոսքի վարպետ, երաժիշտ և երգիչ:

Միջնադարյան բանաստեղծների կենսագրական դիմագիծը ճշտելու ամենահավասար աղբյուրը հենց իրենց գրական ժառանգությունն է:

Հեռու-հեռու ճամփաներից եկավ հեծյալ մի առնական, եկավ քեզ մոտ ծառայելու, եկավ հոժար, խոնարի այնքան.....<sup>17</sup>

Հայտնի է, որ Սամանյան արքունիքը, ինչպես նաև ինքնիշխան ավատատերերը ապարանքներին նոր բովանդակություն և փայլ տալու համար հովանավորում էին տաղանդավոր գիտնականների, քաղաքական գործիչների, արքեստագետների: Հատկապես գնահատվում էին բանաստեղծները, որոնք իրենց «տերերի» վարած քաղաքականության քարոզիչներն ու ջատագովներն էին, նրանց անունը պատմության էջերում ամրագրադները:

Այն փաստը, որ Սամանյան արքունիքում Ռուդաքին փայլել է իր տաղանդով, հաստատում են պարսից մատենագիրները: Այսպես, նեղամի Արուզի Սամարղանդին (12-րդ դ.) իր հայտնի

16 Հմտ. Part 2 of the Lubabu-L Albab of Muhammad Awfi. Edited in the original Persian, with preface, indices and variants by Edward G. Browne, London-Leide, 1903, p. 6-9 (այսուհետև՝ Լուբաբ-ալ-Ալբաբ):

17 Ռուդաքի, էջ 9: Տողացի թարգմանությունները կատարել ենք Ռուդաքիի Դիվանի բնագիր հրատարակությունից՝ Սաար-է բաղիմանդե-լե արու Արդալյան Զաֆար էրմ Ռուդաքի Սամարղանդի, Էստալիմարադ, 1958, (այսուհետև՝ Ռուդաքի, Դիվան):

«Զորս զրույցում» գրում է. «Այն երջանկությունը, որ բախտ վիճակից Ռուդաքիին Սամանյան տոհմի թագավորության օրոք հանպատրաստից ստեղծագործելու և արագորեն էքսպրոմտներ ասելու համար... չէր տեսել և ոչ ոք»<sup>18</sup>:

Ռուդաքին արքունիքում գլխավորում էր Սամանյան պալատին Հեղինակություն բերող բազմաթիվ շնորհալի բանաստեղծների խումբը: Ճիշտ է, միայն Ղազնավյանների օրոք Մահմուդի կողմից օրինականացվեց «բանաստեղծների արքա» տիտղոսը<sup>19</sup>, սակայն Ռուդաքին էմիր Նասրի պալատում արդեն այդ տիտղոսակիրն էր<sup>20</sup>: Հովանավորելով գիտության և արվեստի գործիչներին՝ արքունիքը իրականացնում էր իր հայրենասիրական նկրտումները, սատարում իրանական ոգու վերելքը, այնուհանդերձ, իր խիստ կանոնակարգված կենսաձեռով թելադրում էր նաև որոշակի կողմնորոշում: Արքասի գործը կորցնում էր իր իրական կոչումը, գառնում քաղաքականության գործիք<sup>21</sup>:

Այսպիսով՝ արքունական բանաստեղծը պատասխանատու էր գառնում ոչ միայն իր ամեն մի տողի համար, այլ նաև արվեստի ուժով ստեղծած տրամադրության, քանի որ անպատճ խոսքը կարող էր ողբերգական վախճան ունենալ:

Արքունական բանաստեղծի կյանքի սովորական ուրվագիծը հետեւյալն էր՝ պաշտոնական ճանաչում, փառք, անկում: Քչերն են խուսափել այդ օրինաչափությունից: Դժբախտ է եղել նաև

18 Հնամի Արզու Սամարկան, Собрание редкостей или четырёх бесед, М., 1963, стр. 60.

19 Ի դեպ, Անզիայում միայն 14-րդ դ. արքունական բանաստեղծին շնորհնեցին poet-laureate տիտղոսը:

20 Հայտնի է, որ Վրաստանում Բագրատունիները պարսից տիրակալների օրինակով իրենց շրջապատում էին արվեստի գործիչներով: Ն. Մահի խոսքը՝ ասած՝ «ասպետականությունն իր բավարարությունն էր փնտրում...» (հմտ. Հ. Յ. Մար, Կավազական կուլտուրան մասին, Երևան, 1995, стр. 44):

21 Երբ սեղուկան շաբ Սանջարը կուպում էր Խորեզմշաբ Ասրիզի դեմ, նրանց արքունական բանաստեղծները՝ Անզարին և Ռաշիդ առ-Դին Վարվար. Նմանամարտում էին քառյակներում և ենթարկում իրենց տերերին (տես՝ Բ. Ա. Ժյոկովսկի, Ալի Այահեծին Էնքրի, СПб., 1883, 11 համար, стр. 60-65):

Ռուդաքիի վախճանը. ստուգապես հայտնի է, որ նա վտարվել է արքունիքից սոցիալական հավասարություն քարոզող դարմաթյան<sup>22</sup> շարժմանը համալրելու համար և, ըստ որոշ աղբյուրների, կուրացվել: Հարմաթյանները խսմայիլական հզոր շարժման ուղղություններից մեկի հետևորդներն էին և ժողովրդական ամենալայն զանգվածներ էին ներկայացնում: Նրանք անտեսում էին միջնորդի գերը աստծո և անհատի միջև, քարոզում էին սոցիալական հավասարություն ևն: Հատկապես վերջին գաղափարն էր, որ իր հետևից էր տանում ժողովրդական տարրեր խավերին: Իրենց գաղափարներին հակառակ քաղաքական գործիչների հանդեպ կիրառած դաժան հաշվիհարդարները ցնցում էին օտար նվաճողների պետության հիմքերը:

Ենթադրվում է, որ էմիր Նասրի մահից հետո Ռուդաքին վտարվել է արքունիքից և մահկանացուն կնքել աղքատության մեջ, իր հայրենի գյուղում: Եվ իրոք, երբ մոտ հազար տարի անց թագիկ գրող և ազգային գործիչ Սագրիգին Այնին Սամարդանդի մոտ, Փանջուղղ գյուղում հայտնաբերեց Ռուդաքիի գերեզմանը, իսկ մարդարան-քանդակագործ Մ. Գերասիմովը վերականգնեց նրա դիմանկար-քանդակը, ապա պարզ դարձավ, որ Ռուդաքիի աչքերը այրել են: Կենսագիրներից ոչ մեկը չի շրջանցել նրա կյանքի այդ ողբերգական փաստը: Ինչպես տեսանք, Մոհամադ Առուֆին նրան ի ծնն կուրություն է վերագրում, սակայն որոշ հետազոտողներ այս պարագան դիտում են որպես հանճարեղ և սիրելի բանաստեղծին Հոմերոսին նմանեցնելու ավանդական մոդել<sup>23</sup>: Պարզ է, որ նրա կյանքի երկրորդ շրջանի դրամատիկ իրա-

22 Ե. Բերտելը դարմաթյան շարժման մեջ մեծ տեղ է տալիս հին իրամամետ ազգայնական շարժման հետևորդների գործունեությամբ, որոնց նշանակալի մասը ազգականներ էին (Բմմտ.՝ Ե. Է. Բերտել, Ինքնանություն և պատմություն Իրանի մասին մանրամասն տես՝ Ե. Է. Բերտել, Ռուդակի և Կարմատա և այլն, Ռուդակի և այլն, 1958, Ա. Հ. Բոլդյարեվ, Եղանակը և այլն, 1962):

23 «...պետու և իդիլիստիվան հովանի հիեալում պետք է լինենին կույր. կույր կենապես անօգնական է, նա դուրս է մղված կյանքից, բայց իր արտիրավիճա-

դարձությունները չէին կարող իրենց արձագանքը չգտնել նախ՝ նրա պոեզիայում, հետո՝ մատենագիրների և ժողովրդի հիշողության մեջ: Իուդաքին այնքան վառ երեակայություն ունի, այնքան գունեղ և տեսողական պատկերներ, որ ֆրանսիացի արևելագետ Զոն Դարմստերը, որ հավաստի չի համարում այդ կենսագրական փաստը, կատակել է, թե «...Իուդաքին հաճախ մոռանում է իր կուրության մասին»<sup>24</sup>:

Իուդաքին չափազանց մոտ է ժողովրդական լեզվամտածողությանը, նրա գեղագիտական զգացողությանը, այդ է պատճառը, որ նրա պոեզիան ժամանակի ընթացքում ձեռք բերեց չափանիշի ուժ, խոսքի հմտության մեջ նա դարձավ անհասանելիության օրինակ և մեծապես նպաստեց պարսկական գրականության հետագա զարգացմանը: Նրա հետարգները միշտ ձգտել են նմանակել նրան: 11-րդ դարի ամենահայտնի բանաստեղծը՝ Օնսորին, որը Մահմուդ Ղազնավիր արքունիքի «պոետների արքան էր», տրանզում է, թե իր դազալները «ոռուդաքիական» չեն.

Հրաշալի են Ռուդաքիի դազալները,  
Իմ դազալները ոռուդաքիական չեն.  
Որքան էլ շանում եմ Երրորեն երևակայել,  
Այդ գաղտնիքի Վարագույրը բացել անկարելի է<sup>25</sup>:

Հասկանալի է, որ ճաշակի և գեղագիտական չափանիշների փոփոխության համար 100 տարին քիչ ժամանակ չէր, որովհետև

կայնության մեջ հասնում է ստեղծագործական ազատության և տեսնում է անտեսանելին» (տե՛ս С. С. Аверинцев, Грееческая литература и "блаженствоочная" словесность в сб. "Типология и взаимосвязь литератур древнего мира", М., 1971, стр. 25):

24 Дж. Дармстетер, Происхождение персидской поэзии, пер. Л. Жиркова, М., 1924, стр. 18.

25 Տե՛ս Լուրար-ալ-Ալբար. Էջ 6: Խնկապեն այդ են հաստառում Օնսորիի դիվանից մեզ հասած բազմաթիվ դասիդն-Անրորդները և մի քանի դազալը: Ամենայն հավանականությամբ բանաստեղծական այդ հրաշալի ձևին վարպետորեն չի տիրապետել «պոետների արքա» Օնսորին, որը արդունիցում նաև «հացիմ» գիտուն տիտղոսն էր կրում (տե՛ս Դիվան-է Արու ալ Շասան Հասան էրմ Ահմադ Օնսորի, Թնիրան, 1341, այսուհետև՝ Օնսորի, Դիվան):

փոխվում են ժամանակները, փոխվում են և պահանջները: Նոր լսարանը նոր խոսք է պահանջում: Խուդաքին այնքան մոտ էր ժողովրդական լեզվին և պատկերագոր մտածողությանը, որ նրա քերթության ոճը բնորոշվել է որպես «սահլ-է մոմթանե», որ տարբեր հետազոտողների կողմից թարգմանվում է որպես «հանճարեղ պարզություն», «անկրկնելի պարզություն» կամ «վեհասարանչ պարզություն»: Վերջինս հոետորական արվեստի յուրահատուկ ձև է, որի մասին պոետիկայի տեսաբան Խաչիդ-աղ-Դին Վաթիվաթը գրում է, թե «...սահլ-է մոմթանեն այն է, երբ բանաստեղծությունը թվում է շատ պարզ, սակայն այն ստեղծելը շատ բարդ է»<sup>26</sup>:

Փորձենք այդպիսի անկրկնելի պարզության մեկ օրինակ քերել: Իուդաքիի կյանքի հետ կապված ավանդագրույցներից մեկը հավաստում է, թե էմիր Նասրը իր թագավորական շքախմբով Բուխարայից Հերաթ էր գնացել: Քանի որ Հերաթի մի գեղատեսիլ վայրում էր հյուրընկալվում, և նրա ժամանակն անցնում էր միայն հանգստի և զգարճությունների մեջ, էմիրը մոռացել էր իր գահանիստ Բուխարան և չէր էլ մտածում տուն վերադառնալու մասին: Եքախմբի անդամները հոգնել ու ձանձրացել, կարոտել էին իրենց հարազատներին և բարեկամներին, սակայն չէին համարձակվում էմիրին այդ մասին հայտնել: Վերջապես նրանք գտնում են միջոցը: Իուդաքիին, որ էմիր Նասրի արքունական բանաստեղծն էր և շրջազայում էր նրա հետ, չինք հազար ոսկեդրամ են խոստանում և համոզում՝ որևէ կերպ էմիրին տուն վերադառնել: Հաջորդ օրը՝ առավոտյան, Իուդաքին նստում է իրեն հատկացված տեղը և, վերցնելով չանգը<sup>27</sup>, գովերգում է Բուխարան:

26 Рашид-ад-Дин Ватват, Сады волшебства в тонкостях поэзии. Перевод с персидского, исследование и комментарий Н. Ю. Чалисовой, М., 1985, стр. 70 (այսուհետև՝ Рашид-ад-Дин, Сады):

27 Հարային երաժշտական գործիք:

Հեռու-հեռվից Մուլյան<sup>28</sup> գետի բույրն է գալիս,  
Սիրած յարիս հիշողության հուրն է գալիս,  
Ամու գետի ավազների ալիքը տար  
Մետաքսի պես իմ ոտքերին դուր է գալիս:  
Զեյթունը<sup>29</sup> հորդ մեր սպիտակ նժույգների  
Կեսից վար է, հոխորտալով զոր է գալիս:  
Ո՛վ Բուխարա, ուրախ եղիր, ապրիր ուրախ,  
Էմիրն ինքը ելել ու քեզ հյուր է գալիս:  
Նոճին է նա, իսկ Բուխարան՝ չքնաղ այգի,  
Նոճին ելել, չքնաղ այգու դուռն է գալիս:  
Թե Բուխարան երկինք է մով, լուսին է նա,  
Ականջ արեք, լուսնի ծագման լուռն է գալիս<sup>30</sup>:

Ասում են՝ Ռուդաքին դեռևս չէր արտասանել իր վերջին բեյթը, երբ նասրը վեր թուավ տեղից և հեծնելով առաջին պատահած ձին՝ տնային կոչիկներով սուրաց դեպի Բուխարա: Շքախմբի շվարած անդամները հազիկ հասան նրա ետևից և առաջին իջևանում հագցրեցին ճտքակոչիկները<sup>31</sup>:

Երբ Վ. Բրյուսովը նարեկացու մասին գրում է, թե նա կատարելության հացցրեց բանաստեղծության ձևը՝ սիրով արմատավորելով ձայնաներդաշնակությունը շատ ավելի վաղ, քան այն զարգացավ պարսից և արաբական աշխարհներում<sup>32</sup>, ապա բացարձակապես չվիճարկելով նարեկացուն շնորհված առաջնությունը՝ մենք ցանկանում ենք հիշատակել նրա ավագ ժամանակակցին՝ Ռուդաքին, որի պոեզիայի ոգին էր ներդաշնակությունը:

28 Մուլյան Բուխարայի մոտով հոսող գետակ է, որի ափին տարածված են եղել խնձորի հրաշալի այգիներ և ծառաստաններ: Մատնագիրները հավատում են, թե այդտեղ են եղել իշխանական տներն ու դղյակները:

29 Զեյթունը Ամու Դարյալի արաբերեն անվանումն է:

30 Ուուդարի, էջ 47:

31 Հիզами Արզն Սամարկան, Աշվ. աշխ., էջ 64:

32 Հմմտ. Поззия Армении с древнейших времен до наших дней. Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова, М., 1916, стр. 48.

Վերը բերված օրինակը հայտնի է ձայնանվագով և հետագոտողների կողմից ստացել է «ախորժալուր» որակումը<sup>33</sup>: Եվ իրոք՝

Բույի ջույի Մուլյան այադ համի,  
Ցադի յար-է մերներան այադ համի...

Հետագայում բազմաթիվ բանաստեղծներ փորձել են նմանակել այս բանաստեղծությունը<sup>34</sup>, ոմանք, սակայն, մեկ երկու անհաջող բեյթից հուսախաբ՝ հրաժարվել են այդ մտքից: Շատ ավելի ուշ, արքունական պոետների կողմից մշակված նրբաճաշակ ոճի, բանաստեղծական բարդ հնարանքների և ճարտասանական մրցույթների բովում կոփված պոեզիայի որոշ գիտակներ ըստ արժանվույն չին գնահատում Ռուդաքիի պարզ, խորասանյան կոչվող ոճը: Պարսկական գրականության պատմությանը հայտնի է 15-րդ դ. մատենագիր Դովլաթշահ Սամարդանդիի կարծիքը, որը զարմանում է, թե ինչպես են ժամանակին հավանել ու սիրել Ռուդաքիի պարզ ու անպաճույն բանաստեղծությունը<sup>35</sup>: Անշուշտ, գեղեցկության չափանիշը պատմական երեւյթ է, և գուցե վերջինիս փոփոխությունն է պատճառը, որ նրա դիվանից նվազագույն մաս է պահպանվել:

Ռուդաքին արքունական բանաստեղծ էր և ծառայում էր այս աշխարհի հզորներին: Եվ քանի որ պարսից նոր ձևակորպով պոեզիան կայանում էր արքունիքում, ապա նրա առաջնային և

33 Ի. С. Брагинский, Комментарий к сб. "Рудаки", М., 1960, стр. 428.

34 Այդ նմանակումների ուսումնասիրությանը է Եվրոպած պարսիկ բանասեր Մոհամադ Մոհիմի արժեքավոր հոնվածը, որտեղ ըննության են առնված բազմաթիվ տարբերակներ (տե՛ս՝ Մոհամադ Մոհիմ, Եզ հասին-յն Ռուդաքի, Մաջան-յն դամնեշքյաղե-յն ադարիյաթ, Թուրիան, 1338, 3-4, ս. 73):

35 Է. Բրաունը, Բնտագայում մաս Ե. Բերտելըսը խիստ կասկածանքով են վերաբերվում Դովլաթշահ Սամարդանդիի գեղագիտական չափանիշներին: Ըստ Բերտելըսի՝ «...հազիկ թե այդ խառնաշփոր արքունական «գրականագետի» ճաշակը կարող է նեղունելի լինել որպես բավարար չափանիշ լուրջ Բնտագության համար» (տե՛ս Ե. Յ. Բերտելը, Աշվ. աշխ., էջ 10): Մինչդեռ նոյն Դովլաթշահի մասին Ա. Բարտոլդը գրում է. «պարսկական գրականագետական փայլուն գիտակը» (տե՛ս Յ. Բարտոլդ, Сочинения, том 6, М., 1966, стр. 198):

Հիմնական ժանրային ձևը պարսիկների կողմից յուրացված և տեղայնացված արարական դասիդե-ներբողն էր<sup>36</sup>: Այն մեծածավալ, միահանգ, կանոնիկ ժանրային ձև էր, ուներ պարտադիր օրենքներ և պահպանում էր իր հիմնական կառուցվածքը: Առաջին մասը (նախիր կամ թաղազոյ) քնարականն էր, որում բանաստեղծը ազատ էր թեմայի ընտրության մեջ և հագուրդ էր տալիս իր զեղումներին: Այն կարող էր լինել սիրուհու, գինու գովք, բնության նկարագիր ևն: Երկրորդ, հիմնական մասը՝ ներրողը (մադի), բեյթերի տեսակետից առավել լայնածավալ է և կրում է հիմնական գաղափարական ծանրությունը: Որքան աննկատ է կատարվում անցումը (գորիզգան) նասիրից ներրողին, այնքան մեծ է գրողի վարպետությունը: Երրորդ մասը ունենում է բարոյախրատական, այլարանական բնույթ: Երրեմն դաստիարակչական և իմաստասիրական ավարտով բանաստեղծը կարծես արդարացնում էր իրեն, չափազանցված և շողոքորթ գովիստների համար: Ղասիդեի վերջին հատվածում հիշատակում էին հանգուցյալներին (մարսիե-էլեգիա), գովերգում իրենց տաղանդը, դրվատում սեփական արվեստը (Փախիր) ևն:

Ռուդաքիից մեզ հասած ընդամենը երկու դասիդեները այնքան են հագեցած ինքնակենսագրական տարրով, որ մենք մոտավոր կերպով կարողանում ենք վերականգնել նրա կյանքն ու գործը: Դրանք համեմատաբար մեծ կտավներ են, որոնք մեզ են հասցըել Ռուդաքիի միջավայրը, արքայական խրախճանքների պերճանքը, արևելյան արքունիքի ողջ կոլորիտն ու ազգագրական և պատմաժամանակագրական բազմաթիվ փաստեր: Մեծածավալ դասիդեներից մեկը պայմանականորեն կոչվում է «Գինու մայրը», որը անխաթար մեզ է հասել «Սիսթանի պատմությունից»: Անանուն հեղինակը հաղորդում է, թե այն գրվել է Էմիր Նասրի պատվերով, էմիր Ջաֆար էրն Մոհամադի պատվին կազ-

մակերպված խնջույքի համար<sup>37</sup>: Ռուդաքին այն գրել և մի կուժ գինու հետ ուղարկել է Սիսթան, որտեղ և Հնչել է առաջին անգամ: Ելնելով ներբողի եղբափակիչ՝ երրորդ մասից՝ կարելի է ենթադրել, որ Ռուդաքին չի մասնակցել խնջույքին: Առաջին մասում նա նկարագրում է գինու պատրաստման ընթացքը, նրա գույնը, համը, հոտը, ձևը, փայլը, վարքագիծը (եռում, վեր ու վար անում, խաղաղվում ևն): Պարսիկ բանաստեղծին, հատկապես Ռուդաքիին, խորթ չէր գինու գովքը, քանի որ նա հրաշալի ծանոթ էր սեփական ժողովրդի գրական ավանդույթներին և հոգեոր արժեքներին, այն էպիկական փաստական նյութին, որը բարեխաղորեն հավաքվում և դրառվում էր ազգասեր Սամանյան իշխանների կողմից: Արբեցուցիչ թուրմերի գոյությանը ծանոթ են եղել բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև պարսիկները: «Գինու առաջին հիշատակությունը սկսվում է Հուշանգից՝ պարսից քաղաքակրթության ստեղծողից»<sup>38</sup>: Ավեստայում՝ պարսից հին կրոնի՝ Զրադաշտականության սուրբ գրքում, գովերգվում էր հաօտա կոչվող բույսը, որից ստանում էին արբեցուցիչ թուրմ: Հայտնի է, որ կրոնածիսական արարողությունների ժամանակ չարաշահում էին այն, և գոհաբերությունները անզուսպ ու արյունահեղ բնույթ էին ստանում, ուղեկցվում խոշոր և մանր եղջերագոր անասունների սպանդով: Այդ էր պատճառը, որ Զրադաշտը արգելեց դրա գործածությունը: «Ըստ ժողովրդական ավանդույթների ծագելով քաղաքակրթության առաջին դրսերումների հետ միաժամանակ (Դիոնիս, Վակիս, Նոյ, Հուշանգ), գրգռող կամ թթացնող և պատրանքներ ծնող թուրմերը ուղեկցում են ժողովուրդներին նրանց հոգեոր զարգացման հետագարով շրջաններում»<sup>39</sup>:

37 Տե՛ս Տարիք-ի Սистան, Перевод, введение и комментарий Л. Смирновой, М., 1974, стр. 303:

38 Տե՛ս Ф. А. Розенберг, О вине и пирах в персидской национальной эпопее, Петроград, 1918, стр. 385 (отдельный оттиск из 5-го тома "Сборника Музея антропологии и этнографии при Российской Академии Наук").

39 Հմմտ. Ф. А. Розенберг, Աշկ. աշխ., էջ 376:

36 «Ղատ» արարելին նշանակում է նպատակառուղյամա: Ղասիդի գարգաման և պարսկա-արարական փոխազեցույթան մասին՝ A. Arberri, Classical Persian Literatur, London, 1958, р. 8-14. Աբդումանօն Աբդուրահման, Կասիդա և եւ ուսումնական արարական գաղափարությունների մասին համար առաջարկությունների մասին՝ Անանուն Հեղինակը հաղորդում է, թե այն գրվել է Էմիր Նասրի պատվերով, էմիր Ջաֆար էրն Մոհամադի պատվին կազ-

Ցիրուսին և Ռուդաքին օգտագործել են ժողովրդական աշխանդությունները, սակայն ճանաչել են հայտնի արար և այլազգի, գուցե նաև՝ անտիկ հեղինակներին։ Հերոդոտոսը գրում է, թե պարսիկները գինու մեծ սիրահարներ են և գինու գավի մոտ էին քննության առնում ամենակարևոր գործերը։ Այդ տեսակ հավաքներում կայացրած որոշումը մյուս օրը տանտիրոջ կողմից նորից էր ներկայացվում քննարկման՝ արդեն սթափ վիճակում։ Եթե նրանք այդ ժամանակ էլ էին հաստատում իրենց որոշումը, ապա իրականացնում էին։ Եվ հակառակ՝ սթափ ժամանակ կայացրած որոշումը քննարկում էին արբածոց։<sup>40</sup>

Բազմաթիվ հետազոտողներ այն կարծիքին են, որ Ռուդաքին նմանապես ծանոթ է եղել Արու Նավասի՝ արաբական պոեզիայում խրախճանքի՝ որպես ինքնուրույն ժանրի ստեղծողի բանաստեղծությանը, հատկապես նրա «խամրիյաթին»։<sup>41</sup>

Եվ այդպես լուս, այդպես հլու, հանգստացած,  
Նա կշողա՝ մարջանի ալ գույնն ստացած։  
Ալ՝ առավել, քան Եմենի սուտակը ալ,  
Առավել, քան Բադախշանի ակները լալ։  
Երբ հոտ քաշես, կրվա, թե վարդ է բուրում,  
Կրվա, թե մուշկ ու համապար ես համբուրում...<sup>42</sup>

Հասկանալի է, որ աշխարհիկ կյանքի այդ հզոր գործոնի հետ կապված բոլոր պարագաները խրախուսանքի չեն արժանացել հայոց մեջ. այդ է պատճառը, որ գիներգությունը, ճիշտ է, ուրույն տեղ ունի միջնադարյան հայ տաղերգության մեջ, սակայն ավելի ուշ է զարգացել։ Որպես հետաքրքիր գուգահեռ՝ կարելի է հղել թե՝ Աստվածատուր Տաղասացի և թե Սարկավագ Բերդակացու՝ խաղողի գովասանությանն ու գինուն նվիրված տաղերը, որոնք մեզ են հասել 16-17 դդ.

40 Հմտ. Գերոդ, Իстория, Л., 1972., стр. 55.

41 Գինու պեղիայի անվանումն է արաքերեն։

42 Ռուդաքի, էջ 34։

Դու ես գունով զէտ մանուշակ  
Կարմիր եաղութ ակն սուտակ։<sup>43</sup>

Այստեղ գրեթե համեմատության նույն եզրերն ենք տեսնում։ Իմաստային սերտ առնչություն կա Ռուդաքիի և Բերդակացու նշված տաղերի միջև։ Դա գինու ամենակարող ուժի պատկերման մեջ է, նրա այն չնորհի, որը ժամանակ դարձնում է շռայլ՝ վախկոտին՝ քաջ, ոխակալին՝ ներողամիտ, վշտահարին՝ ուրախ են։

Ռուդաքի։

Ժլատ գծուն այն ըմպելով դառնում շռայլ  
Վախկոտը՝ քաջ, դեղնած դեմքը դառնում է ալ.  
Երբ քո արյան ու սրտի մեջ նա է եռում,  
Ընկրկում են վիշտ ու տանջանք, փախչում հեռուն։<sup>44</sup>

Բերդակացի։

Զբագաւորաց սիրտն բանաս և տէր անես քաղքի հազար,  
Թե նա ունէր հազար շարկամ, նայ զո սիրովն մոռանայր։  
Թե բարկացեր լինի մարդոյ, կամ թե խոցեալ զինքն դիմար,  
Ցործամ խմէ կաթ մի քենէ, բաշխէր զամէնն և հաշտենայր։  
Ցործամ խմէ աղքատն ի քեն, որ զիացն ու զջուրն

մոլորանար,

Նա և լինի տէր աշխարհիս, արարածոց պարապար։<sup>45</sup>

Պարսից պոեզիայում մանրակրկիտ և պերճ նկարագրությունը հատուկ ժանր է և «վասֆ» է կոչվում։ Այստեղ Ռուդաքին ի ցույց է դնում վասֆի իր չնորհքն ու վարպետությունը։ Ճիշտ է, վերը հիշատակված «Գինու մայրը» ներբողը սոցիալական պատվեր է, սակայն այդ հանգամանքը բնավ չի նսեմաց-

43 «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (16-17-րդ դդ.)», թ. 1, աշխատամիրությամբ Հ. Սահմանականի, Երևան, 1986, էջ 76 (այսունետև՝ «Ուշ միջնադարի հայ բանաստեղծություն»)։

44 Ռուդաքի, էջ 35։

45 «Ուշ միջնադարի հայ բանաստեղծություն», էջ 283։

նում նրա արժեքը, որովհետև Ռուդաքին, ինչպես ասում են, տալիս էր «Կայսրինը՝ կայսեր, Աստծունը՝ Աստծուն»: Գովքով և ներբողով հանդերձ, այն իր ենթատեքստում մի մարդասիրական խորհուրդ ունի՝ պատվիրատուին վերագրվող վսեմ ու ազնիվ հատկանիշները ուղեցույց դարձնել, ուսուցանել ազնիվն ու բարին, ձևավորել արդարի կերպարը: Ռուդաքին այս դասիդեն, որը պարսից նորաստեղծ պոեզիայում այդ ժանրային ձևի առաջին դասական նմուշներից է, ավարտվում է վեհ ու բիբլիական Արարատ լեռան խորհրդանիշով.

Դեմքը նրա թող միշտ փայլի արեգակի պես անարատ,  
Ու փառքն անխախտ թող միշտ մնա,

որպես Սահլան ու Արարատ:<sup>46</sup>

Մյուս դասիդեն «Մերության ողբն» է, որը երիտասարդության, անցյալի փառքի կարուտախում է .

Ոչ ընտանիք եմ ունեցել, ոչ սրտամաշ հոգսեր ու կին,  
Նման բազում կապանքներից ազատել եմ ես իմ հոգին,,  
կամ՝

Երանելի ժամանակներն ու՞ր գնացին, ա՞խ, ի՞նչ եղան,  
Եր մեծամեծ էմիրների հետ էի ես նստում սեղան:  
Արքաների ձեռքին էին միշտ ոռքայիններն իմ դիվանի,  
Ու ես սիրված պուտն էի չքնաղագեղ Խորասանի:  
Իմ ճանապարհն ուր էլ գնար, որ հարուստի տունն էլ

տաներ,

Տերը նրա ինձ արծաթով ու նժոյգով պատիվ կաներ:  
Թե ուրիշին այլոք էին հարստություն ու փառք տալիս,  
Իմն ուղղակի շահի շնից, շահի ձեռքից էր ինձ գալիս:<sup>47</sup>

46 Ռուդաքի, էջ 42:

47 Նոյն տեղում, էջ 31-32: Ղափեղի ժամանակին ձկին բնորոշ էր ինքնակենացրական տարրը: Այս տեսակետից բազմաթիվ դասիդեներ առան պատմական, էթնոմշակութային, անձնական հյութ էին պարունակում և կոչվում էին «դասիդեն հային» վիճակի դասիդեն: Օյինակ՝ Օնսորին, որ Մամուլ

Միջնադարյան «ոեալիզմի» ոգին ինքնակենսագրական տարրն է, որով հագեցած է նաև Ռուդաքիի վերոհիշյալ ներբողը: Բայց մի դրամատիկ հակասություն կա այդ բովանդակությունն արտահայտող ժանրային ձևի գործառության (ներբող) և ձերության նկարագրի մեջ: Մերությունը այս գեպքում չի կարող գովիստի նյութ լինել: Ներբողվում է երիտասարդությունը, և ամբողջ դասիդեն իր գաղափարական լուծումն է ստանում կյանքի դիալեկտիկայի և համամարդկային օրինաչափությունների և հակասությունների քննության մեջ.

Ժամանակներն ուրիշ են արդ, ու ես ինքս էլ շատ եմ  
տարբեր

Ժամն է արդեն գավազանի, գավազանս ու մախաղս բեր:

Սա մեզ հիշեցնում է այն արժանապատիվ հնագանդությունը, որով Սոկրատեսն է ընդունել իրեն տված թույնի բաժակը. «Ժամն է այստեղից հեռանալու, ես՝ որպեսզի մեռնեմ, դուք՝ որպեսզի ապրեք... Սակայն որն է լավագույնը, հայտնի չէ ոչ ոքի:»

Եվ հեռացավ Ռուդաքին՝ կույր, ծեր ու ծեռնունայն, իր հայրենի գյուղը՝ Փանջուղը և մահկանացուն կնքեց (մոտավոր հաշվումներով) 940-ին:

Հերման Էֆիեն՝ Ռուդաքիի բանաստեղծական ժառանգության խնդրով գրաղվողներից առաջինը, գրում է, թե Ռուդաքին բանաստեղծություններ էր գրում նոր ոճով և մշակում էր իր սե-

Ղազնավանի արքունական բանաստեղծն էր, Մամուլի եղբորը նվիրված ներբողում բողոքում էր վիճակից նետնյալ խոսքերով.

Հոգոս խորքում ինձ այնպես է թվում,

Թե էմիրը նազեցն է իր խոսքառատ ծառայից,

Սառել է սիրտն ինձանից, որ այդպես

Կրծատես իմ վարձը ու ինձ չի նկատում:

Տե՛ս Օնսորի, Դիվան, էջ 82: Ծերության էլեգիաները բոլորովին ել գրական ավանդույթ կամ ընդունված ծև չէին, այլ իրականության, արքունական բանաստեղծի վիճակի և նրա ճակատագրի արտացոլումը: Երիտասարդությունն ու տաղանդը արքունիքում թողած նրանք, ծեր ու անօգնական, հաճախ «զինվորագրում էին» թափառող ներվիշների և սուֆի-միստիկների հզոր բանակին:

փականը, որը հատուկ էր ամեն մի ձևի՝ մասնավիի, դագալի, ոռպայիի և համար:<sup>48</sup>

Ռուդաքիին դագալի հիմնադիր կոչելու խնդիրը վիճահարույց է: Ղազալը կանոնիկ ձև է և ունի հատուկ օրենքներ: Պոետիկայի միջնադարյան տեսաբաններից մեկը գրում է. «Իմացիր, որ դագալը իր բառարանային իմաստով սիրո և կնոջ նկատմամբ վերաբերմունքի նկարագրություն է, իսկ տերմինարանորեն՝ մի քանի բեյթի միացությունը՝ միասնական հանգով և չափով: Դրանց առաջին բեյթը «մոսարրան» է (դա այն է, երբ առաջին երկու տողերը հանգամորգում են): Այդ առաջին բեյթը կոչվում է «մաթլա»: Վերջին բեյթը կոչվում է «մաքթա»: Ղազալի ծավալը չպետք է գերազանցի 12 բեյթից: Ումանք դագալ են համարում մոտ 19 բեյթ պարունակող ձևը, իսկ ավելի ուշ շրջանի որոշ բանաստեղծներ դագալի բեյթերի թիվը հասցնում են մինչև 21: Այն մեծ մասամբ նկարագրում է կնոջ գեղեցկությունը, սիրահարի վիճակը և այլն: Ղազալը սկսվում և ավարտվում է մեկ միասնական թեմայով, լինի դա հանդիպում սիրեցյալի հետ, թե բաժանում: Ղազալը չպետք է ունենա թույլ բեյթեր, ամեն մի բեյթը պետք է առանձնանա մյուսից և մեծապես տարրերից»:<sup>49</sup>

Իշարկե, այս բոլորին հարկավոր է ավելացնել նաև այն, որ մաքթա կոչվող վերջին բեյթում սովորաբար բանաստեղծը գրում էր իր կեղծանունը, որը կոչվում է «Թախալու»: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դագալի գաղափարական բովանդակությունը լայն ընդորկում ունի՝ սկսած բնակարից և վերջացրած փիլիսոփայական խորհրդածություններով: Եվ քանի որ Ռուդաքիից մեզ հասած բանաստեղծությունները ձևական տեսանկյունից որոշ անհամապատասխանություն ունեն ավելի ուշ ձևակորպած կատարյալ դագալի հետ (օրինակ՝ դագալի վերջին տողում սեփական անվան պարտադիր հիշատակումը ևն),

48 Այդ մասին մանրամասն տես՝ А. М. Мирзоев, Рудаки и развитие газели в 10-15 вв., Сталинабад, 1958, стр. 15.

49 Նույն ինդում, էջ 25

ապա որոշ հետազոտողներ վիճարկելի են համարում դագալի ձևակորման առաջնությունը Ռուդաքիին տալու խնդիրը: Ակներև է, սակայն, որ Ռուդաքիի հետորդ, հայտնի բանաստեղծ Օնսորին վերը բերված օրինակում նրա բանաստեղծությունը դագալ է անվանում: Պարզ է մի հանգամանք, որ այդ շրջանում դագալ էին անվանում սիրային ապրումներ, հոգեկան տվյալտանք, գեղեցկուհու և բնության նկարագրի, փիլիսոփայական խոհեր արտահայտող ոչ մեծ չափի բանաստեղծությունները: Այսպես, ուրեմն, տարրեր տերմիններով որակելով Ռուդաքիի անհատական պոեզիան (երգ, էլեգիա 50-եւն), բազմաթիվ հետազոտողներ համերաշխ են այն խնդրում, որ պարսկական դագալի փառավոր ճանապարհը մինչև Սաադի և Հաֆեզ սկսվում է Ռուդաքիից:<sup>51</sup>

Եթե դագալը գրսեկ բանաստեղծական ձև է, ապա քառյակը (բարանե, դոբեյթի) զուտ իրանական ծագում ունի, որը արաբների կողմից յուրացվելուց հետո փոխարինվել էր ոորայի<sup>52</sup> (Հոգնակի՝ ոորայաթ) բառով: Այս հանգամանքը, նաև այդ երկու ժողովուրդների մշակութային փոխազդեցության փաստերից մեկն է:

50 A. V. Williams Jackson, Early Persian poetry, New York, 1920, p. 39.

51 Արևևան գրականագիտությամբ հայտնի են դագալի զարգացման երկու հակադիր տեսակետներ: Ըստ Ե. Բերտենի՝ դասինիկ առաջին, քարական մասը՝ Ասաիրը, անշատվել է Արանից և Բետապայում ձևավորվել որպես ինքնուրուն ժանրային մն՝ իր ծագման թենա օրյանում դասմայով էլիտար գրական տեսակ: Այդ կարծիքն է նաև հայտնի Բնդիկ Բետապայում Ծիրի Նումանի, Մինչեն Խ. Բերգինսկին պացապացում է, որ դագալը իր միջրում եղել է Փոլիորային և Միայն Բետապայում է ձեռք բերել կամոնիկ, կաղապարված օրենքներ: Ա. Միրզուն դագալը դիսում է որպես ինքնուրուն մն, որի ձևակորմանը համարում է Ռուդաքիի բարական բանաստեղծությունները (Բիմետ, И. С. Брагинский, Очерки из истории таджикской литературы, Сталинабад, 1956, стр. 123, 138-40. Е. Э. Бертельс, Персидская поэзия в Бухаре, X в., М.-Л. 1935, стр. 32. А. Мирзоев, Աշլ. աշխ., հինգեն ման՝ Ծիրի Նումանի, Ծեր ալ Աշամ լու թարիխ-է շեր վա աղարիխ-է իրան, Թեմրուան, ջել-է ավալ, 1316): Ղազալին նշիրված վերջին աշխատություններից է Ան' Skalmowski W. "The meaning of the Persian ghazal", Orientalia Lovaniensia, Periodica, 18, 1987, pp. 141-162.

52 Բառացի նշանակում է չորս տող, քառյակ:

Իորային, որի ակունքները գնում են դեպի իրանական բանահյուսական արվեստի հիմքերը, մշակվել է ու հղկվել Ռուդարքիի կողմից և ձեռք բերելով բարձրաշխարհիկ արվեստին հատուկ տարրեր, դարձել է խոհական-փիլիսոփայական մտորումների և սիրային զեղումների արտահայտիչ<sup>53</sup>: Քառյակը, որը «գեղջուկ» ձև էր Համարվում, Ռուդարքիի շնորհիվ մուտք է գործում արքունիք և գրավում իր տեղը «ազնվական» ժանրային ձևերի կողքին: Ռուդարքիի ողջ ստեղծագործության ոգին ժողովրդական երանքն է, որն առավել ցայտուն է արտահայտված նրա քառյակներում: Աշխույժ, սրամիտ և ամբողջական են նաև նրա բեյթերը և բանաստեղծական մյուս ձևերը:

Ռուդարքին, ինչպես ասացինք, աշխարհիկ, արքունական բանաստեղծ է, այնուհանդերձ չի կարելի ասել, թե նրա պոետիկան գերծ է Դորանի ազգեցությունից, պատկերներից և մեջբերումներից: Սակայն նրա պոետիկայի քննությունը ցույց է տալիս, որ այդ ամենը Ռուդարքիի համար ծառայում է մի գաղափարի՝ աշխարհիկ սիրո:

Ռուդարքիի ստեղծագործությունների քանակի մասին խիստ տարբեր թվեր են մեզ հասել: Ռաշիդի Սամարդանդին գրում է, որ ինքը հաշվել է նրա տողերը տասներեք անգամ հարյուր հազար:

<sup>53</sup> Ի դեպ, պարսիկ բանասեր Զալալ Հոմային Ռուդարքիին է վերագրում ուրացի միայն կատարելագործումը, գումելով, որ այն վաղուց է գոյություն ունեցել պարսիկ բանահյուսության մեջ որպես 11 վանկանի շափ: Հոմային ժիստում է պարսիկ գրականության կողմից արարական տաղաչափության՝ արուցի լորացման դրությունը: Ըստ Երա, պարսիկները կատարելագործել են գոյություն ունեցող սիլարիկական համակարգը, քանի որ արուցը, ըստ Էրության, երաժշտություն է, իսկ իրենք չեն կարող այն չունենալ (տե՛ս Զալալ-է Հոմայի, Ռուդարքի վահանական ոռորայի, Մաշալն-ի համեցքյան-ի աղարիյաթ, շումարե-է 3-4, 1338, ս. 37-40; Բաղյակին են նվիրված նաև՝ Մոթաման Զեյն օլ-աբեյհն, Թահավուլ-է շեր-է ֆարսի, Թեհրան, ս. 90-105, Խ. Միրզոզադ, Ռուդակ և տակամուլու աշելի համար բան «Ռուդակ և զամոն յ», Ստալինաբադ, 1958, ստ. 142, Ա. Կ. Կոզմոյն, Բան և կլասսիկական պատմությունների համար, Երևան, 1981, Ա. Կ. Կոզմոյն, Դասական քաղաքական գործառությունների մասին, «Մարդարարաշար», էջ 3-26):

սակայն շատերը չեն հավատում այդ առասպելական թվին:<sup>54</sup> Մոհամադ Առուֆին էլ է անդրադառնում այդ խնդրին, սակայն մինչեւ օրս էլ վերծանված չեն ոչ Ռաշիդի Սամարդանդիի և ոչ էլ մյուսների տեղեկությունները: Պարզ է մի հանգամանք, որ Ռուդարքին բեղուն գրիչ է ունեցել և նրա ստեղծագործությունների քանակը ժամանակակիցների կողմից ուշադրության է արժանացել:

Ռուդարքիի անվան հետ է կապվում պարսիկ գրականության մեջ ստեղծագործությունների ժողովածուի (դիվան) ստեղծումը. «Վարպետ Ռուդարքին առաջին հեղինակն է, որ իր ստեղծագործությունների դիվանն է ունեցել»<sup>55</sup>: Ինչպես շատ միջնադարյան բանաստեղծների, այնպես էլ Ռուդարքիի դիվանի պատկանելությունը կասկածի տակ է առնվել,<sup>56</sup> սակայն Սայիդ Նաֆիսիի արհեստավարժ և հետևողական ջանքերի շնորհիվ (համեմատել է 78 ձեռագիր սկզբնապրյուր) այսօր ճշտված է Ռուդարքիից մեզ հասած տողերի քանակը, որը կազմում է 1048 բեյթ: Ճիշտ է, Ռուդարքիի բանաստեղծություններում հազգադեպ է հիշատակվում նրա գրական անունը, սակայն ինչպես պնդում են հետազոտողները, նույնիսկ գրական անվան գոյությունը երբեմ չի փրկել արվեստի գործը կեղծիքից և գրագողությունից<sup>57</sup>:

Ռուդարքին պարսիկ գրականության առաջին բանաստեղծը

<sup>54</sup> Տե՛ս Ե. Յ. Բերտելս, История персидско-таджикской литературы, М., 1960, стр. 139.

<sup>55</sup> Սադրիդдин Այնի, Ստու Ռուդակ, М. 1959, стр. 19.

<sup>56</sup> Ռուդարքիի դիվանը Ղաթթան Թաքրիզիին պատկանելու խնդրին բազմաթիվ թետագություններ են նվիրված (Ross D., Rudaki and pseudo Rudaki, JRAS, 1924, October, pp. 609-664 ևն): Այդ խնդրիները իրենց լուսաբանում ու քննությունն են ստացել պարսիկ գրականության Սայիդ Նաֆիսիի մեծածավալ աշխատության մեջ (Սայիդ-է Նաֆիսի, արկալ վա աշար-է... Ռուդարքի, Թեհրան, 1309-1319):

<sup>57</sup> Պարսիկ գրականության պատմությունից հայտնի է, որ Սեֆյան շշշամի բանաստեղծների ստեղծագործությունների դիվանը կրկար ժամանակ շրջել է Արքա Սարուի անվամբ (տե՛ս История персидской и таджикской литературы под редакцией Яна Рипка, М., 1970, стр. 110):

չէ<sup>58</sup>, սակայն հասուն և կատարյալ պոեզիայի առաջնեկն է, գրական ժանրերի ստեղծողն ու կատարելագործողը:

\* \* \*

Գրիգոր Նարեկացու կենսագրությունից աղքատիկ տեղեկություններ են հասել մեզ: Հայտնի է, որ եպիսկոպոս Խոսրով Անձնացու որդին է, ծնվել է մոտավորապես 940-950 թթ.: Հստագանդապրույցների՝ Նարեկ գյուղից փոքր-ինչ Հյուսիս՝ անմիջապես Վանա լճի ափին, նրա աղոթատեղին է եղել, մի դժվարամտչելի, բարձրաբերձ ժայռ, որի քարակոփ այրերից նայողի առաջ ծափալվում էր ծովը, և դիմացը երևում Առուել և Աղթամար կղզիները<sup>59</sup>: Կրթությունը ստացել է տեղում՝ Նարեկա վանքում, Հայտնի վարդապետ Անանիա Նարեկացու մոտ և երիտասարդ հասակում արդեն ճանաչվել որպես սրբակրոն և գիտուն այր: Նրա մասին տեղեկություններ ենք ստանում նաև իր ստեղծագործություններ թափանցած զուսպ ակնարկներից, երբեմն էլ՝ նրա արվեստին բնորոշ տրամադրության երանդներից (ինչը մեծապես բնորոշ է միջնադարյան բանաստեղծներին), ժողովրդի ընդերքում պահպանված ավանդագրույցներից<sup>60</sup>:

Նարեկացու կենսագրությունից մեզ հասած ամենազրամատիկ իրողությունը կամ պատումը աղանդավորական շարժմանը նրա համակիր լինելն է<sup>61</sup>: Դա թոնդրակյան շարժումն էր, որ զանգվածայնությամբ և տարբեր խավերի մասնակցությամբ մերձենում էր մեզ արդեն ծանոթ դարմաթյան շարժմանը իրանում:

58 Մոհամադ Ասուֆիի արդեն նշված երկում նրան ժամանակակից մոտ երեսում բանաստեղծ է Բիշատակվում, որոնց մեջ, այնուհանդերձ, առանձնահատուկ տեղ է գրավում Ռուդարի Սամարդանիին: Թվարկված մյուս բանաստեղծից միայն Բատուկենտ թվյեր են մեզ հասել:

59 Հմտ. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաքանչ թարգ. Մկրտիչ Խերամյանը, (առաջարկած Մ. Մկրտիչ), Երևան, 1960, էջ 3:

60 Ա. Ղափենանց նրա մասին կենսագրական աղյուրները տարբերակում է՝ մատենագրական և բանահյուսական (տե՛ս Ա. Ա. Կազնին, Գրիգոր Նարեկասի և ուսուցչական պոետիկա, Երևան, 1990, ստոր. 7):

61 Հարցու վիճակի արդու է: Հնտազոտողների մի մասը այդ վարկածը ընդունում է, մյուսը՝ ժխում:

Թերեւս այդ ընդհանրությունները զուտ պատմատիպաբանական համարեինք, եթե Գրիգոր Մագիստրոսի վկայությունը նոր եղանակումների առիթ չտար: Ըստ Մագիստրոսի՝ թոնդրակյան շարժման պարագլուխ Սմբատ Զարեհավանցին իր ուսմունքը բերել էր Պարսկաստանից: «յումեմնէ պարսկական բժշկէ և յաստղաբաշխ մողէ, զոր Մջուսիկդ կոչէք<sup>62</sup>»: Եթե ի նկատի ունենանք հայ հետազոտողների կողմից արդեն ուշադրության արժանացած եվրոպական ալրիգոյական-հերետիկոսական բազմախավ շարժումը, ապա պարզ կդառնա, որ դրանք ավատատիրական հասարակագի օրինաչափությունների և սոցիալական ցնցումների հետ կապված համընդհանուր երեսույթներ էին և դուրս էին գալիս մի երկրի, նույնիսկ մի աշխարհամասի սահմաններից: Թոնդրակյան շարժման հիմնական գաղափարներն էին հոգու անմահությունը, աստծո և անհատի միջն եկեղեցու՝ իբրև միջնորդի մերժումը և ամենակարևորը՝ սոցիալական հավասարության քառողը, որն իր հոտելից էր տանում ոչ միայն չքավոր խավին, այլ նաև ժամանակի լուսավոր այրերին և ազնվականներին: Իրենց հերթին, իրանում զարմաթյանները ժխտում էին ուղղափառ իւլամի ծեսերի մեծ մասը և Քարեի երկրագությունը համարում էին կուպաշտություն: Նրանք թալանել էին իսլամի այդ գլխավոր սրբավայրը, հոչակավոր «սև քարը» տեղահանել և երկու մասի բաժանելով՝ տարել իրենց հետ...<sup>63</sup>:

Պարզ է մի հանգամանք, որ և՝ դարմաթյան և՝ թոնդրակյան շարժումները մեծապես դուրս էին գալիս դավանական գաղափարների սահմաններից, ստանում ազգային-ազատագրական շարժումների ձև և ցնցում էին օտար նվաճողների պետության հիմքերը: Օրինակ՝ արաբ կուսակալ Արռու-ալ Բարդի տարածքներում էին կենտրոնացած թոնդրակյանների գործողությունները, և արաբն էր, որ «խայտառակամահ» արեց Սմբատ Զարեհավան-

62 Բ. Ն. Առաքելյան, Սոցիալական շարժումները Հայաստանում 9-11-րդ դդ. Հայ ժողովրդի պատմություն, Բատոր 3, Երևան, 1976, էջ 280:

63 Ի. Պ. Петрушевский, Ислам в 7-15 вв. М., 1966, стр. 284.

ցունեց: իրանում դարմաթյան շարժմանը հարում էին ազնվականներ, որոնք իրանական ազգայնական-չուրիական գաղափարակիրների ժառանգներն էին, այսինքն նրանք, ովքեր պարսից սկզբի հաղթանակն էին ապահովել արարական խալիֆաթի տիրապետության օրոք: Պատմիչ Ալ-Բիրունին հավաստում է, որ ծագումով թյուրք Մահմուդ Ղազնավյանը իր ժեռքով էր գաֆան հաշվեհարդար տեսնում «հավատքի թշնամիներ» դարմաթյանների հետ Հնդկաստանի Մուլթան քաղաքում և նրա գավառում, որտեղ նրանք իրենց գեմովրատական պետության հիմքն էին դրել<sup>65</sup>. «Մի անգամ Մուլթանում նա այնքան հերետիկոս կոտորեց, որ սառած արյունից թրի կոթը չորացավ ձեռքին: Հարկ եղավ այն թրչել տաք ջրով, որպեսզի պոկիփից»: «Նրանցից հազարները կախաղան հանվեցին, քարկոծվեցին և շղթայակապ ուղարկվեցին Խորասան՝ ընդմիշտ գերության: Բոլոր գրքերը, կապված նրանց հերետիկոսական հավատքի հետ, կրակի տրվեցին: 50 ուղտարեն գիրք այրվեց կախաղանների տակ, որոնցում կախված էին դարմաթները<sup>66</sup>»:

Մեզ հետաքրքրող խնդիրներից դուրս է թոնդրակյան գաղափարախոսության և Նարեկացու կապի ստուգության մանրամասների քննությունը, մանագանդ, որ Նարեկացու պոետիկայի հետագա վերլուծության ժամանակ «Մատյանի» ողբերգական հենքը այլ զուգահեռների ոլորտում և չենք բխեցնում նրա հալածական լինելու խնդրից: Միայն կարող ենք ենթադրել, որ մեծ հումանիստը, հնարավոր է, կարեկից է եղել ժողովրդական շարժմանը: Սակայն սա սուրյեկտիվ-հոգեբանական մոտեցում է: Առավել կարեոր փաստարկ ենք համարում այն հանգամանքը, որ Նարեկացին՝ որպես քրիստոնեական միստիցիզմի ջատագով, ընդուներ թոնդրակյանների. այն գաղափարնե-

64 Բ. Ն. Առաքելյան, Աշվ. աշխ., էջ 281:

65 Այդ մասին տես՝ Ի. Պ. Պետրովսկի, Աշվ. աշխ., էջ 281:

66 Տես՝ Ե. Է. Բերտելս, Избранные труды, История литературы и культуры Ирана, стр. 100:

67 Նույն տեղում:

ըր, որոնք վերաբերում էին աստծո հետ ուղղակի, առանց միջնորդի հաղորդակցվելուն:

Նարեկացին կրոնավոր էր և «ծառայում էր» աստծուն, այդ է պատճառը, որ նրա ստեղծագործություններում առաջնային տեղ է զբաղեցնում գովքն ու ներքողը բառիս իսկական, այլ ոչ թե ժանրային իմաստով: Այդ փառարանությունը տարրեր ժանրային ձևեր էր ստանում նրա պոեզիայում՝ տաղի, գանձի, պոեմի ևն:

Տաղը Հայկազյան բառարանում բնորոշվում է հետևյալ կերպ. «բան չափաբերական, ոտանաւոր, երգ, քերթուած նուագելի, շիր, դազէլ, նէվա, բէյթ»<sup>68</sup>: Վերջին չորսը արարապարսից անվանումներ են, որ նշանակում է, թե դրանք հայոց մեջ լավ ճանաչել են: Տաղը կարող է բազմաթիվ տողեր ունենալ՝ (20, 36, 56 ևն.), այսինքն՝ ձևական տեսակետից խիստ կանոնարկված չէ: Այդ է պատճառը, որ նա չունի հատակ սահմանում: Նրա բնորոշ հատկանիշներն են հանգը, չափը և ներքին մեղեղայնությունը: Այն բաղկացած է քառյակներից կամ երկոտղերից: Ամեն տողը կարող է ունենալ 4+4, 5+5, 4+4+4 ևն վանկեր: Հետագայում այն լայն թեմատիկ ընդգրկում ձեռք բերեց՝ ներքող, բարոյախոսություն, խոհ, բողոք, բնության նկարագիր, սիրո տվայտանք ևն:

Տաղը զարգացել է երկու ուղղությամբ՝ կրոնական (Հոգեոր) և աշխարհիկ: Ճիշտ է, տաղը այդ շրջանում անվերապահորեն Հոգեոր էր<sup>69</sup>, սակայն Հոգեոր կյանքին ծառայող բոլոր ավանդա-

68 «Նոր բազիկը Հայկազեան լեզուի», Բ. Բ. Վենետիկ. 1837, էջ 839:

69 10-րդ դարում քենոռողական արվեստը հոգևոր էր, սակայն մենք իրավունք չունենք մեր պաշտոնական գրականությունը գրկել այն հորից, որը Միշտ ուղեկցում էր Բայց ավանդականությամբ: 10-րդ դարում Բայտնի էր Անանուն շարականագիրը, որը իր կիրառած ձևով, հատկապես բովանդակությամբ, դուրս էր գալիս հասական շարականի կանոնիկ ավանդների սահմանմանը: Կենսունակ մի երանգ է մտնում այդ ժամանակ մեջ ժամանակակից նետարքքությունները մուտք են գործում նրա բովանդակառարթյուն: «Նրա ամեամեծ արժանիքն այն է, որ յորովի արտացոլում է իր ժամանակի հասարակական-քաղաքական տրամադրությունները՝ կամնալով նկեղեցու կամար-

կան ձերը, Նարեկացու ձեռքին մի նոր բովանդակություն ստացան, բարձրացան փիլիսոփայական-այլաբանական մտածողության մակարդակի, նոր գեղագիտական նրբերանգներ ձեռք բերեցին: Նարեկացին ստեղծողն ու ձևավորողն է գողտրիկ ժանրային ձեկ՝ գանձի, որի շնորհիվ վերջիններիս հավաքումն ու զետեղումը ժողովածուներում «Գանձարան» անունն ստացավ: Փաստորեն ժողովածու-գանձարանի ստեղծումը որպես գեղագիտական և մատենագրական երևույթ նույնպես կապվում է Նարեկացու անվան հետ<sup>70</sup>: Գրիգոր Նարեկացու տաղերը այնքան յուրօրինակ են, պայծառ, որ դուրս են գալիս հոգեոր ավանդապահ գրականության պատկերների համակարգից և հեռանում ընդհանուր ոգուց. մասամբ այդ է պատճառը, որ երբեմն որոշ տաղերի պատկանելություն կասկածի տակ է առնվում (մի երևույթ, որից սակավ միջնադարյան բանաստեղծներ են խուսափել, եթե իհարկե նրանցից բավականաչափ գրական ժառանգություն է մեզ հասել): Սովորաբար գրանց պատկանելությունը ճշտելու լուրջ փաստարկ են համարում գրական անվան առկայությունը (գլխագրերում և ծայրակապում ևն): Սակայն բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ դա բավարար փաստարկ չէ<sup>71</sup>:

Տերի տակ հնչեցնել ժողովողի բողոքը օստար տիրակալների դեմ, տենչալով պատություն և խաղաղություն: «Ուզն Շարակնոց աշքի է ընկնում նաև այլ բարեփոխությամբ. այնտեղ համարյա խսպար բացակայում են Աստվածաշնչից փոխ առնված հատվածները, որոնցով ողողված են կամնեի Շարակնոց ամեն կարգ ու ներամիավոր (տե՛ս Ա. Ը. Մնացականյան, Գեղարդաստական գրականության առաջնաբացը Հայաստանում 9-11-րդ դդ.. «Հայ ժողովող պատմություն», թ. 3, էջ 355-356):

70 Այդ մասին տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր աշխատասիրությամբ Ա. Քյոշկեռյանի, Երևան, 1981, էջ 21 (այսուհետև՝ Տաղեր և գանձեր):

71 Այստեղ հնատքորդի է հիշել համաշխարհային գրականությանը հայտնի «խայամյան» բառակների առեղծվածը: Նրան վերագրվող բառակների ճշգրտությունը ստուգելու համար գործադրված բազմաթիվ վիճակագրական, լեզվաբանական, գրականագիտական, հնութիւնիվ և այլ մեթոդները մնացել են համարյա անարդյունավետ, և այսոր ստիպված ենք հաշտվել Խալամյան վերագրվող նաև բազմաթիվ անարդյունավետ գոյության մեջ: Այդ խնդրին նվիրված գրականությանց մենք նշում ենք առաջիններից մեկը, որի բնորոշումը մտար համաշխարհային խայամագիտություն (տե՛ս Բ. Ա. Ժյոկովսկի, Օмар Խայյամ և "Странствующие четверостишия",

Նարեկացին հայ քերթողական արվեստի առաջին քնարերգակը չէ, այլ գրականության նոր ուղղու ձևավորողն ու հոգեւոր ժանրային ձևերին կենսական երանգներ հաղորդողը: Տաղի հաղթարշավը միջնադարյան հայ քնարերգության մեջ սկիզբ է առնում Նարեկացուց:

Նարեկացիով չի սկսվում հայ միջնադարյան գրական լեզուն, Նարեկացիով սկսվում է հայ միջնադարյան գրականության վերածնունդը<sup>72</sup>: Այս պարագայում մենք վերածնունդը դիտում ենք ոչ թե որպես պատմամշակութային ֆենոմեն, այլ որպես նարեկացիական ես-ի և շրջապատի հարաբերության (անհատ-հանրություն, մաս-ամբողջ, անհատ-աստված) նոր հարցադրում, որը հետագայում բերելու էր իսկական, ճշմարիտ վերափոխություն և ամենայն ավանդականի նոր մեկնարանում:

Հայ և պարսից միջնադարյան պոեզիան ուսումնասիրելիս չի կարելի շրջանցել քնարերգությունը իր տարատեսակներով՝ փիլիսոփայական, կրոնամիտիկական, սիրային ևն: Երկու գրականություններից մեզ հասած ժառանգությունը գաղափարական տեսանկյունից նույն պատմական ժամանակահատվածում զարգանում է բացարձակ հակադիր ուղղություններով՝ աշխարհիկ և հոգեւոր, և բնական է, որ դրանց համեմատության փորձն իսկ հանդուգն կթվա: Սակայն՝ միայն առաջին հայացքից և ոչ թե ըստ էության, որովհետև նմանությունները՝ համեմատության լույսի ներքո մեզ համար հասկանալի են դարձնում բազմաթիվ տիպարանական ընդհանրություններ կապված նույնատիպ սո-

76. Ալ-Մյազֆիրինա, Ըն., 1897, և Վերջին աշխատանքներից մեկը, որը ի մի է բերում այս ընթացքում կատարված բազմաթիվ փորձերը. Ի. Է. Կոսակովա, Օմար Խայյամ, Պրоблемա արինցուն բան, ավորեփար կանդ. դիս., Մ., 1983):

72 Վ. Ալոաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 251: Մեր աշխատությունը արդեն պատրաս էր, նոր հրատարակվեց Պ. Խաչատրյանի «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» արժեքավոր գիրքը, որում անառկելիորեն Նարեկացուն է վերագրվում հայ գրականության զարգացման նոր ուղղությունը և «...բնույթյան ու իրական աշխարհի զգացողության բացահայտումը (հմտ. Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 158):

ցիալ-պատմական սուբստրատի հետ, համամարդկային տիպարանություն արտահայտող մերձեցումներ, որոնք արտացոլում են երկու ժողովուրդների մտածելակերպի, աշխարհընկալման միասնություն, ինչպես նաև՝ այնպիսի գեղագիտական կատեգորիաների նույնություն, ինչպիսիք են՝ գեղեցկություն, բարիք ևն:

Ինուդաքիի և Նարեկացու բանաստեղծությունների համեմատության փորձը, որ մենք բերում ենք ստորև, կարծում ենք՝ արդեն անհիմն չի թվա, քանի որ պարզ դարձան նրանց ժամանակի, ճակատագրի, սոցիալական կարգավիճակի, գեղագիտական ինքնագիտակցության և այլ ընդհանրություններ: Մենք կփորձենք մեկ անգամ ևս տեսնել նրանց պոետիկայի առանձնահատկությունները և երկու մեծությունների տեղը սեփական ժողովրդի հոգեոր արժեքների համակարգում:

## ՊՈԵՏԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինուդաքի և Նարեկացի... արքունական բանաստեղծ և վարդապետ՝ սոցիալական վերնախավի երկու ներկայացուցիչ, որոնց պոեզիան ուներ որոշակի նպատակառուղղվածություն և կողմնորոշում: Սեփական կարգավիճակը պայմանավորում էր նրանց կենսափիլիսոփայությունը, գեղագիտական ընկալումները, գեղարվեստական խոսքի նկատմամբ ունեցած մոտեցումը, նկարագրման մեթոդը ևն: Նրանք գովերգում էին մեկը՝ Աստծուն, մյուսը՝ սիրուհուն: Երկու դեպքում էլ հարկավոր էր, Դ. Լիխաչովի արտահայտությամբ, «Հանդիսավոր պերճախոսություն»: Երկու գրականություններում էլ ակնհայտ է գովերգվողի կերպարի ձևավորման հատկանիշներից մեկը՝ նրա արտաքին բարեմասնությունների ընդգծումն ու դրվատումը:

Նարեկացի.

Աչքն ծո՛վ ի ծո՛վ ի ծիծաղախիտ ծաւալանայր  
յառաւատուն՝

Երկու փայլակնածն արեգական նման.

Ծողն ի ժմին իշեալ յառաւատէ լոյս:

Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,  
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տալին:  
Սոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,  
Սղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլը.  
Խնկեալ ի կնդրկէ բուրուառ՝ հրով աստուածայնով լցեալ...<sup>73</sup>

Ինուդաքի.

Գեմքդ գեղեցկության ծով է, հակինթդ՝ (շուրթդ) մարշան,  
Խոպոպդ՝ համպար, բերանդ՝ սադափ, ատամներդ՝  
մարգարիտ,

Հոնքի նավ է, խորշումը ճակատիդ՝ ալիք,  
Դժբախտաբեր ջրապտույտ՝ կզակդ, և աշքերդ՝ փոթորիկ: <sup>74</sup>

Ռուղաքի այս քառյակի գեղարվեստական արժեքը ծովային տարերքի պատկերների միտումնավոր խտացումն է: Բազմաթիվ պատկերներ նոր են, իսկ փոթորիկն ուղղակի նորարարություն է աչքերի մոտիվում: Հետաքրքիր է մետաֆորային համեմատությունը՝ հակինթ-մարջան, որն ուժգնացնում է գույնի հատկանիշը: Բովանդակությունը միանշանակ է. նա գեղեցիկ է: Յուրահատուկ ոճական միտում է նկատել այս բանաստեղծությունում Մ-Ն.Օ Օսմանովը. «Բանաստեղծությունը իրենից ներկայացնում է աստիճանավորում (շրածազյա) ինն համեմատությունից կազմված, որոնցից չորսը (չուրթ-մարջան, խոպոպ-համպար, սաղափ-բերան, ատամ-մարգարիտ) վերաբերում են մանրանկարայնին, իսկ մնացած հինգը՝ մոնումենտալին»<sup>75</sup>:

Ուշագրավ են համեմատության առարկաները: Բացի թվարկվածներից, գովերգվում են նաև մատները, որ հայ պոեզիայում հանգում է աստվածաշնչային «լուսապայծառ մատունքին», իսկ պարսից մեջ բազմիցս հանդես է գալիս իր ազգագրական ձևով:

Ռուղաքի.

Կակաշներն են կանչում հեռվից, իրենց այրվող ալը հանած,  
Ասես դրանք գեղեցկուի մատներն են նուրբ ու հինայած<sup>76</sup>:

Կամ՝

Դու կարմիր վարդից գույն ես գողացել, բույր փախցրել,  
Գույնը՝ այտերիդ, բույրը որ առատ վարսերին ցրել,  
Երբ լվացվում ես, քո վարդագույնից շիկնում է առուն,  
Երբ ծամդ ես բանդում, մուշկն է ակսում բուրմունքն իր

Փուղում՝ առաջանակ առաջանակ առաջանակ առաջանակ:

74 Ռուղաքի, Դիվան, էջ 124:

75 Մ.-Ն. Օ. Օսման, Տիպ, Մեթօդ, Стиль персидской поэзии 9-10 вв., М., 1974, стр. 82.

76 Ռուղաքի, էջ 46:

77 Նոյն տեղում, էջ 82:

Ակնհայտ է երկու բանաստեղծների պատկերավոր մտածողության և նկարագրման մեթոդի ընդհանրությունը: Ճիշտ է, ոչ ոք իր մտապատկերում չի վերականգնում համեմատվող առարկայի և համեմատության իրական նմանությունը, այնուհերձ, դրանք ժամանակի ընթացքում դառնում են մշտական, ձեռք են բերում կայուն խորհրդանիշի ուժ (արեգակ-դեմք, վարդ-շուրթ, ատամ-մարգարիտ, հասմիկ-այտ ևն): Եթե պայմանականորեն անտեսենք նարեկացու տաղի միստիկական ոգին, ապա ընդհանուր գծերով կստանանք սիրո օրյեկտի ներրողման նույն կաղապարված սխեման: Պարսիկ բանաստեղծի համեմատության առարկաներն են դեմք, շուրթ, վարսեր, այտեր, ատամ, հոնք ևն, հայ բանաստեղծինը՝ աչք, բերան, շուրթ, լեզու ևն: Երկու բանաստեղծներն էլ գովերգում են կուրծքը, իրանը, հայերը նաև՝ ծոցը: Երկու բանաստեղծների արգեստում էլ հատկապես ընդգծված է ձգտումը գեպի լույսը. միստիկ նարեկացին՝ դեպի հոգեւոր, Ռուղաքին՝ դեպի նյութական: Ահա այն խաչմերուկը, որտեղ հանդիպում ու հատվում են Ռուղաքի և նարեկացու հավատամքները: Երկու հեղինակների համար էլ լույսը խորհրդանշում է գեղեցկություն և բարիք: Այստեղից էլ բխում է գովերգվողի հատկանիշներից մեկը՝ նրա լուսափյուր դեմքը: Այն արտացոլում է ասաղերի, մոլորակների փայլն ու պայծառությունը և նրա հետ գուգորդվող բոլոր նրբերանգները: Հետագայում այդ անշարժ, դեկորատիվ իդեալականացման մեթոդը ուղեկցում է հայկական միջնադարյան տաղերգությանը, ինչպես նաև՝ պարսկական արքունական պոեզիային կոստանդին Երզնկացու, Գրիգորիս Աղթամարցու, Հովհաննես Թղկուրանցու, Օնսորիի, Մանուչեհրիի, Ֆարրոխիի և այլոց բանաստեղծություններում:

Ներբողակրի, սիրելիի կերպարը ձևավորվում է մի քանի հիմնական զգայական հատկանիշների վրա, նա կրողն է գույնի, լույսի, հոտի, ձեր, չափի, համի: Վերջիններս հետագայում իրենց զարգացումն են ստացել թվարկված հեղինակների մոտ:

Նարեկացի.

Արփիատեսիլ ճառագայթիք փայլեալ,  
Միիր և ծիրայնոյ վառ ի վառեալ ըգդէմս:  
Թեւական նման, արեգական նըման,  
Կաթուած գեղեցիկ ի քեզ կաթէ զըմուո՞յ:

Կամ

Մղիբն ծիրանի՝ մանուշակի հոյլը.

Խնկեալ ի կնդրկէ բուրուառ՝ հրով աստուածայնով լցեալ:

Կամ

Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով  
Ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր:

Քեսայի (Ռուդաքիի ժամանակակիցը).

Ուր հայացք ես գցում, այնտեղ նարգիզներ են ծաղկում,  
Ուր ոտք ես դնում, այնտեղ լուսնի շողեր են փայլում:

Մունջիկ (Ռուդաքիի ժամանակակիցը).

Այնտեղ, որտեղ քո վարսերն են, ամբողջ տարածքը  
բուրում է մուշկով,

Այնտեղ, որտեղ քո դեմքն է, ծաղկում է  
բրահմանների կրոնը:

Ռուդաքի.

Քո անունը բացվող օրվա դրոշի պես է փողփողում,  
Զեռիդ գավը նորած լուսնի արծաթով է ասես շողում:

Կամ

Եվ արևն է ասես խկույն վարագուրվում,  
Երբ նետում ես քող ու բացում այտերդ լալ:

78 Գրիգոր Նարեկացի. Տաղեր. էջ 127:

79 Նույն տեղում. էջ 124-125:

80 Ատօրի. 183.

81 Նույն տեղում. 352:

82 Ռուդաքի. էջ 86:

83 Նույն տեղում. էջ 52:

Բնութագրելով բյուզանդական գրականությունը՝ Ա. Կաժդանը գրում է. «Բյուզանդական գրականության մեջ գեղեցկուհին անպայման պետք է վարդագույն մաշկ ունենա, նրա հոնքերը պետք է կամար լինեն: Կայսրուհուն վայել է համեմատել լուսնի, իսկ կայսերը՝ արեգակի հետ»<sup>84</sup>:

Արարագետ է. Ֆոն Գրյուներառումը նկատել է, որ սիրուհու համեմատությունը աստղերով շրջապատված լուսնի հետ տեղ է գտել գեռես Սաֆոյի ասեղծագործության մեջ<sup>85</sup>: Անտարակույս, միջնադարի գրականությունը կրում է անտիկ ժառանգության տարրերը:

Նարեկացու և Ռուդաքիի պոեզիան ժամանակի ընթացքում ձեռք բերեց չափանիշի ուժ: Նրանց երկուսին էլ բախտ վիճակից դառնալ ոչ միայն գեղարվեստական խոսքի հմտության մեջ անմատչելիության օրինակ, այլև մեծապես նպաստել այդ գրականությունների հետագա զարգացմանը: Նրանց հետնորդները յուրովի շարունակեցին ազգային պոեզիայի ավանդույթները՝ զարգացնելով, լրացնելով և փոխակերպելով այն հիմնական գծերը, որոնք բնորոշ էին երկու վարպետների ստեղծագործություններին:

Ռուդաքիի լեզուն և ոճը մոտ են պարսից խոսակցական, ժողովրդական լեզվին, որի պարզությունը հասուլ է անուն ուներ և կոչվում էր խորասանյան: Ճիշտ է, պարսից պոեզիան այդ շրջանում էլիտար էր, սակայն Փարսի լեզվի միասնականությունը այդ գրականությունը հասկանալի ու սիրելի էր զարձնում հասարակ ժողովրդին: Որքան էլ որ հետագայում բարդանում է ճարտասանական արքստար, այնուհանդերձ այն մնում է պարսկալեզու ժողովրդների բոլոր խավերի և եփականությունը:

Նարեկացին ստեղծագործում էր դասական գրաբարով՝ ժողովրդին արդեն սակագ մատչելի լեզվով, ոչ պակաս անմատչելի

84 Ա. Կաջдан, Կուլտուրա Վիզանտիա, Մ., 1978, սր. 182.

85 Հման. Գ. Է. Փոն Գրյունեբամ, Էլեմենտներ գրականության մեջ՝ Արաբական գործականության մեջ, Եղիշե, 1978, սր. 182:

Էր նաև նրա պոեզիայի ինտելեկտուալ-իմացարանական հիմքը (փիլիսոփայական՝ նեռպլատոնիզմ, պանթեիզմ, գնոստիցիզմ. կրոնական՝ ասկետիզմ, միստիցիզմ): Եթե կրկին հիշենք, թե ինչպես էին անվանում Ռուդաբիի լեզուն ու ոճը, ապա նարեկացու «Մատյան ողբերգությանը» կանվանենք «Հանճարեղ», «անկրկնելի» և «վեհասաքանչ» բարդություն:

Հարկ է նշել, որ Հովհաննես Դրասխանակերտցու օրոք արդեն «գնահատվել» ու հաստատվել էր երկու ոճերի գոյությունը՝ «Քերթողական» և «Գեղջուկ»<sup>86</sup>, որի սինթեզի արդյունքն է 13-15-րդ դդ. հայ տաղերգության լեզուն և ոճը: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ երկու գրականություններում էլ հետագայում տեղի ունեցավ գաղափարական և լեզվագոճական շրջասություն: Հոգեոր հայ պոեզիան գնաց աշխարհականացման և պարզեցման ճանապարհով, իսկ աշխարհիկ պարսից բանաստեղծությունը բարդացավ և՝ գաղափարապես (հատկապես իսլամական միստիցիզմ-սուֆիզմի այլաբանությամբ), և՝ ոճական առումներով: Օրինակ՝ «Հնդկական» կոչվող ոճի բանաստեղծությունները առանց փիլիսոփայության, կրոնի և պոետիկայի գիտակների մեկնաբանման դժվար էր հասկանալ, սակայն այդ բարդ ոճի միտումները արդեն կային 11-12-րդ դարերի բանաստեղծների մոտ: Այդ շրջանում էր, որ բանաստեղծության տեխնիկան դառնում էր առաջնային, բովանդակությունն ու գաղափարական հենքը մղվում էին երկրորդ շարք: Տեխնիկական խաղերը երբեմն հասնում էին անհեթեթության, և բովանդակությունը անիմաստ մի բան էր դառնում:

### Բոլոր միջնադարյան գրականություններին հատկապես

86 •10-րդ դարում գուգանքաց գրոծում էին լեզվական երկու ուղղություն, մեկը ժողովրդական՝ պարզ ու հասկանալի, թերևս առանց տեսական հիմնավորման...., այս ուղղությամբ գրողները գրական լեզուն հետու էին պահում օտարաբանություններից, հումական քերականական կանոնների վրա կաղապարվող աննյութ, անկենանա լեզվից, իսկ մյուսները՝ հատուկ մոլեկան-դությամբ գրաբար լեզուն տանում էիր այդ վնասակար, մարվան դատապարտված ուղիով, արհմարիելով «գեղջուկ բանի» գրողներին» (Խմտ. Վ. Ալոքելյան, Զշվ. աշխ., էջ 22):

բնորոշ է անդրադարձը Սուրբ գրքերի թեմաներին, կերպարներին, պատկերներին, որոնք չափազանց տարածված լինելով հանդերձ պահանջում են դիցարանության, կրոնի որոշակի գիտելիքներ: Վերջիններիս անդրադառնում են նաև Ռուդաքին և Նարեկացին: Սակայն նրանց գեղագիտական խնդիրները և վերջնական նպատակները սկզբունքորեն տարբեր են: Ռուդաքին ստեղծագործությունում սուրբգրային-կրոնական մեջբերումները ծառայում են աշխարհիկ սիրո հաստատմանը, սեփական կենսափիլիսոփայության ընդգծմանը, քանզի «...ապնվականը հանդերձայլ կյանքի երանության կարիքը չի գումար, օգտվելով այս կյանքի հաճույքներից՝ հակառակելով նույնիսկ իսլամի պատվիրաններին»<sup>87</sup>:

Ռուդաքին հեռու է կրոնական մոլեկանդությունից, աչքի է ընկնում աշխարհիկ ոգով: Չեխ արևելագետ Յան Ռիպկան, ընորոշելով վաղ պարսկական պոեզիան, գրում է, որ նրան խորթ են հատուկ կրոնական տրամադրությունները, առավելապես՝ իսլամական: Այդ երևույթը իրականում գարմանքի արժանի է, եթե ի նկատի ունենանք պարսից բանաստեղծների հակումը սպիրիտուալիզմին և կրոնական որոնումներին, որոնք պատասխան էին սոցիալ-տնտեսական լծին»<sup>88</sup>:

### Ռուդաքի.

Ինչ օգուտ երեսը Քարենի կողմը դարձնելուց<sup>89</sup>,

Երբ սիրտը գրավված է Թարագի և Բուխարալի

հուրինների կողմից:

87 Յան Ռիպկա, История персидской и таджикской литературы, стр. 146.

88 Ասվածի հետ կարելի է համաձայնը որոշ վերապահությամբ, քանի որ դա առավելապես վերաբերում է առաջատար արքունական պետքային: Ծառ շուտով աշխարհիկ հետ միաժամանակ սկսվում է ձևավորվել նաև միատիկական-սուֆիական պետքային:

89 Քարեն մարմնեղական սրբավար է Մեքքայում, ուր, ըստ ավանդության, ընկեր է երկնային սրբազն «սև քարը», որի վրա և կատուցվել է մզկիթ: Թարագը քաղաք էր Թուրքեստանում (Ջամրով), որը հայտնի էր իր գնդեցութիւնով: Միջնադարյան պետքային նշանակում է գեղեցիկ կանանց հայրենիք (տե՛ս Ռուդաքի, Դիվան, էջ 85):

Մեր աստվածը քեզանից ընդունում է սիրո հուզունը,  
իսկ նամազը չի ընդունում:

Կամ՝

Ինձ Քարեից հեռացրիր, եկեղեցու դուռը տարար,  
Ոչ, ինձ նման այլ անհավատ դու չես գտնի երկրում արար,  
Երկու հազար աղոթք եմ ես իմ սիրածի դուանն արել,  
Սակայն, սեր իմ, ինձ դարձրիր այլ հավատի աղոթարար<sup>90</sup>:

Հետագայում մենք կտեսնենք, թե ինչպես այդ մոտիվը  
Ծուղաքի պոեզիայում կայանալով, օրինական իրավունքներ է  
ձեռք բերում և մեծապես հանդուրժվում՝ գրական կանոնի վե-  
րածվելով:

Նարեկացու պոետիկայի աղբյուրը հարկավ Աստվածա-  
շունչն էր, որը ուղեցույց դարձավ գրականության հետագա ոճի  
ձևափորման համար: Այն կապում էր քրիստոնյա ժողովուրդնե-  
րին և հոգեպես, և գաղափարապես ու դրանով իսկ օտարում  
Հարեւան պարսից ժողովրդից:

Նարեկացու պոեզիան ծառայում է աստծո սիրուն և նրա  
միջոցով միայն գեղեցկին ու բարուն հաղորդակցվելու գաղափա-  
րին: Ի վերջո, երկու հեղինակների համար էլ Մերը վեհացնող և  
ազնվացնող զգացմունք է և ամենայն բարիք նրանից է գալիս:

Նարեկացի.

Եւ յերեսաց քոց՝ լուսաւորութիւն,  
Եւ ի դիմաց քոց՝ զուարծութիւն,  
Եւ հոգուվի քո՝ բարութիւն,  
Եւ աւծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութիւն,  
Եւ ցաւով շնորհի քոյ՝ զուարթութիւն...<sup>91</sup>

Նարեկացու պոետիկայի ընդգծված առանձնահատկություն-

90 Ծուղաքի, էջ 77:

91 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ.  
Խաչարյանի և Ա. Ա. Ղազիճյանի, Երևան, 1985. Բան թ (Դ) (այսուհետև՝  
Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան):

ներից մեկը հռետորական ոճին բնորոշ հոմանիշների և նույն  
պատկերացումները ծնող հասկացությունների խտացումն է: Այս  
փոքրիկ հատվածում միայն ուղղահայաց կտրվածքով տեսնում  
ենք՝ լուսավորություն, զվարճություն, բարություն, սփոփու-  
թյուն, զվարթություն, բոլորն էլ նույն զուգորդությունների  
դաշտում:

Ծուղաքին ժխտում է ամենայն բարիք՝ առանց սիրո օրյեկ-  
տի, մինչդեռ Նարեկացին հաստատում է այն՝ սիրով: Երկու դեպ-  
քում էլ բովանդակությունը միանշանակ է՝ «Առանց քեզ կյանք  
չկա»:

Ծուղաքի.

Սիրուդ (տիրանալու) ոչ համբերություն կա, ոչ սիրտ,  
Առանց քո դեմքի ոչ խելք կա, ոչ սիրտ:  
Այն դարդը, որ իմն է, դարդ չէ, այլ Ղաֆ սարը,  
Այն սիրտը, որ քոնց է, սիրտ չէ, այլ գրանիտ քար<sup>92</sup>:

Կամ՝

Առանց քո դեմքի թող լուսնկայի լույսը չինի,  
Առանց քո գոյի թող արեգակի հուրը չինի<sup>93</sup>:

Նարեկացի.

Ոչ երեւեալ երբէք,

Եվ ոչ տեսականոթիւն՝ առանց քո ծագման լուսաւոր...<sup>94</sup>

Նարեկացու պոեզիայի գեղագիտական հիմքը ամբողջապես  
կրոնական զգացմունքի այլարանությունն է: Եվ Ծուղաքի, և  
Նարեկացու համար սերը անհասանելի է: Մեկի մոտ դա քրիստո-  
նեական միստիցիզմի անդրադարձն է, մյուսի՝ արարական դազա-

92 Ծուղաքի. Ղիվան, էջ 117: Ղաֆը դիցաբանական սար է, որը իբրև թե բոլո-  
րում է աշխարհը:

93 Նույն տեղում, էջ 120:

94 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, բան ԻԳ (ա):

լի օրինաչափություններից մեկը<sup>95</sup>:

Խուդաքիի բանաստեղծության վերջին բեյթի համեմատությունը (սիրտ-գրանիտ) ժողովրդական ոգով է շնչում: Հետագայում արքունական բանաստեղծ, բարդ ու նրբաճաշակ ոճի ջատագով Ծնորին նույնպես իր սիրեցյալին կերպրի քար սիրտ, սակայն պարուրված՝ սամույրով (կուրծք): Պրանով իսկ մեղմելով ժողովրդական գեղագիտության ուսմէկությունը:

Քրիստոնեական միստիկի համար աստված անհասանելի է: Ինքն իրեն և իր աստծուն ճանաչելու որոնումների մեջ է ձեռքորդում Մարդու մոնումենտալ կերպարը Նարեկացու «Մատյանում»: Երկու հեղինակներն էլ իրենց հավատամքը հաստատում են քնարական հերոսի միջոցով: Այստեղ արդեն կարելի է խոսել վերջինիս և հեղինակային «Ես-ի» նույնության մասին:

Մարդկային հոգեբանության խորաթափանց նկարագրությունը, նրա բարդ ու հակասական էության պատկերման առաջնայնությունը, անշուշտ, միջնադարյան գրականության համար ոչ բնորոշ երևույթներ էին, և դա է պատճառը, որ նրանց պոեզիան բազմաթիվ հետազոտողների կողմից գնահատվել է որպես Վերածննդյան: Հետագյում երկու գրականություններում էլ բանաստեղծականացման առարկան դառնում է «պատկեր-տրամադրությունը», օրյեկտները դուրս են գալիս անշարժ, կայուն վիճակից, ստեղծվում է հոգեբանական իրավիճակ:

Բնութագրելով Խուդաքիի ստեղծագործությունը՝ Ի. Բրագինսկին գրում է. «Մեր առջև միջին դարերի պոեզիա է՝ զերծ միջնադարից<sup>96</sup>»: Այդ մտքի հետ հիբավի կարելի է համաձայնել, եթե մենք միջնադարը ընդունենք միայն որպես «...մի երեսություրկ բարուց, գեղեցկությունից և նշմարտությունից<sup>97</sup>»:

95 Այդ ուղղության առանձնահատկությունների մասին տե՛ս սույն աշխատության 2-րդ գլուխ:

96 Ի. Ս. Բրագինսկի, Проблемы востоковедения, М., 1974., стр. 189.

97 Վ. Վ. Կոջինով, Средневековые или Ренессанс? "Русская литература", М., 1973, 3, стр. 162-164.

Մենք հակված չենք գրական երկու տիտանների պոեզիան արհեստականորեն մղել Վերածննդյան գրականությունների հունը: Անառարկելի է այն փաստը, որ այդ բանաստեղծներին բնորոշ են Վերածննդին հատուկ գծեր, քանի որ հանճարները միշտ ժամանակավեպ են և ազդարարում են ապագան: Այդ ամենով հանդերձ նրանք իրենց ժամանակի և միջավայրի ծնունդ էին և գտնվում էին դասային-աստվածապետական կապանքներում: Նրանց ստեղծագործությունը ուներ հստակ սոցիալական կողմնորոշում: Այսպես, օրինակ, արքունական արհեստավարժ բանաստեղծի համար պալատական բանսարկությունների և խարդավանքի միջավայրում անպատեհ խոսքը կարող էր անսպասելի, դրամատիկ վախճանի հասցնել: Բանաստեղծը պատասխանատու էր ոչ միայն իր խոսքի, այլ նաև արվեստի ուժով ստեղծած տրամադրության համար: Շատ բանաստեղծների օր ու գիշեր ուղեկցում էր իրենց նախորդների և ժամանակակիցների ողբերգական ճակատագրին արժանանալու ահը, իսկ պատիժները, ինչպես տեսանք, հազվադեպ չէին: Զնդանում հայտնվելը, արքունիքից հեռացվելը, նույնինսկ կյանքից զրկվելը սովորական մի բան էր պալատական կյանքում: Այդ է պատճառը, որ նրանց պոեզիան մեծապես կրում է սոցիալական պատվերի կնիքը: Ներբողի ծրագրային «աշխատանքից» հոգնած՝ բանաստեղծները հաճախ իրենց ապրումներն ու հուզող մտքերը արտահայտում էին այլ ժանրային ձևերում, որոնք նախատեսված չէին արքունական հանդիսավորության համար: Թախծի պահին գրված բազմաթիվ քառյակներ, հաղթահարելով ժամանակի ավերիչ ուժը, մեզ են հասցրել այդ բանաստեղծների նվիրական զգացմունքները, նրանց տանջող մտքերը, որոնք գուցե ժամանակին խնամքով թաքցվել են մեկնասներից և միջավայրից:

Մերձենում են երկու մեծ արվեստագետների ճակատագրերը: Նարեկացին, որ կենդանության օրոք արդեն սրբակրոն և հեղինակավոր այր էր, աղանդավոր է կասկածվել հոգեկորական դասի կողմից, այն դասի, որին ծառայում էր ողջ կյանքում: Ռուդաքին նույնպես մեղմագրվել է և ծեր ու անօդնական՝ վտարվել

արքունիքից: Այս համընկումները պատահական չեն: Տիպարանական այս ընդհանրությունը ծնվում է այդ հասարակարգին հատուկ ներքին օրինաչափություններից և համանմանությունից:

Նարեկացու կյանքն ու գործը ուսումնասիրողներից շատերը համերաշխ են այն խնդրում, որ նրա աստվածային սիրո երգը արդարացում, մեղքերի թողություն է՝ իրեն մեղավոր ճանաչած հոգևորականության առջև, մի հարկադրված քայլ՝ շատ սովորական միջնադարի համար: Հիշենք Օմար Խայյամի ուզենորությունը դեպի մահմեդական սրբավայրեր՝ մեղմելու համար իրեն հերետիկու ճանաչած հոգևորականության ցամում<sup>98</sup>:

Նարեկացու և Ռուդաքիի, ինչպես նաև նրանց ժամանակակիցների պոեզիան կրում է ինքնակենսագրական երանգ, որը միջնադարյան չգիտակցված ռեալիզմի ողին է: Ահավասիկ ազնվատոհմիկ բանաստեղծ Մոսերին, որը մահապատժի է ենթարկվել, այսպես է ներկայացնում աշխարհը.

Ո՞վ աշխարհ, դու ամբողջությամբ թախիծ ես և խաղ,  
Քանզի ոչ մեկի հետ չես հաշտվում, և մշտական չե-

98 Օարիաթի դատարանում Բերքելով ուացիոնալիստական մտածողությունը, որի կրողն էր և որի պատճառով նետապնդվում էր որպես «Բերետիկու ու նատորախիտ»: Խայյամը ճշմարտացի է համարում միստիկների ընտրած ուղին, որում «...շնորհ զանում հասկանալ խորին և մտածելու միջոցով և մարդում հոգին բնության և մարմնական ախտերից բարոյական կատարելագործմամբ» (հմմտ. Ս. Ե. Մօրոչնիկ, Բ. Ա. Ռօզենֆելդ, Օմար Խայյամ, Պօտ, մասնաւություն, Ստալինաբան, 1957, стр. 92): Հասկանալի է, որ Խայյամը թաքրել է իր մոտերքը՝ այդ հաստատում է արար մատնազիր Ալ-Ղեֆթին (12-13-րդ դդ.): «...Երբ ժամանակակիցները բացահայտեցին նրա (Խայյամի-Ա. Կ.) գաղտնիքները և սևացրին համար, որը թաքնում էր, նա վախեցավ իր այլան համար և կամաց-կամաց ձգելով իր լեզվի և գոյց սանձերը, ովհանացնացություն կատարեց (Մերքա) Վախիջ, և ոչ թե աստվածավախությունից:... Երբ նա հասավ Բաղդադ, նրա մոտ շտապեցին միմ զիտույթների գծով նրա համախմբները, բայց նա դուրս փակեց նրանց առջև: Երբ նաշից (ովհանացնացություն-Ա. Կ.) վերադարձավ իր քաղաքը, զիշեր ու ցերեկ սրբավայրեր հաճախելով թաքրեց իր գաղտնիքները, որոնք անխոսափելիորեն կրացվեն» (հմմտ. И. С. Брагинский, 12 миниатюր, М., 1976, стр. 152):

բարեկամությունդ.

Դու քամի ես, երբ սուրում ես և ալմատ, երբ կտրում ես.  
Դու թույն ես, երբ համտեսում են, և տավիդ, երբ լսում են,  
Արտաքինից տուն ես, Ազերի նախշազարդերով,  
Ներսից դու գարշելի ես, ինչպես խոզը և վարազը:  
Մեկի համար երանություն ես, մյուսի համար՝ դժոխք,  
Մեկի համար վերելք ես, մյուսի համար՝ անկում:

Այստեղ «գեղեցիկ-տգեղ» օքյումորոնը իրականացվում է նրբաճաշակ (Ազերի նկարներ, գեղեցկատեսիլ տուն) և առտնին (կեղտոտ խոզ ևն) ոճերի միասնությամբ:

Նույնատիպ մողելով՝ Հակադրելով ձեր և էությունը, Նարեկացին ընդգծում է տեսանելիի խարուսիկ լինելը:

Նարեկացի.

Ես ծառ բարձրուիեց՝ ստվար ոստերով,

սաղարթախիտ, բայց անպտուի,

Ծիշտ ու ճիշտ նման այն թզենուն, որ Տերը չորացրեց:

Թեն իսկապես վարսագեղ, սաղարթազարդ,

Արտաքին տեսքով բարեշոր ես դու

Պաճուճված, ինչպես պսակով մի պերճ,

Եվ հեռվից նայող ներին թվում ես բաղմալի,

Բայց երբ մոտենա տնկողն իր ուզած փնտրելու,

Ամեն բարիքից դատարկ և ունայն պիտի գտնի քեզ,

Եվ գարշելի՝ գեղեցկությանդ մեջ...<sup>99</sup>

Ռուդաքի.

Այս աշխարհը ամբողջովին նման է քնի:

(Ալդ) գիտի այն (մարդը), ում խելքը սթափ է.

(Այս աշխարհի) բարին այնտեղ է, որտեղ շարն է  
(տեղավորված),

99 Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, թարգմ. Մ. Խերանյան, Երևան, 1960, Բան Թ(թ):

Նրա խնդությունն այնտեղ է, որտեղ վիշտն է ծվարած:  
Ո՞վ դու, ի՞նչ ես նստել այս անդորր աշխարհում,  
Երբ աշխարհն իր ողջ (գործը) խառնաշփոթ է վարում.  
Չար է խրատը նրա, չնայած լավ է թվում,  
Ստոր է արարքների մեջ իր, չնայած,  
Գեղեցիկ է թվում<sup>100</sup>:

Կամ՝ Նարեկացի.

Եվ գոյության հետ զարդելի գարշություններ են

շարամանված,  
Երբ արտաքնապես թեն առողջ, սակայն ներքնապես է  
Վիրավորված...<sup>101</sup>

Իհարկե, վկայակոչված բոլոր բանաստեղծությունները  
ներծծված են խոհական-փիլիսոփայական, հոռետեսական տրա-  
մադրությամբ: Այստեղ «արտաքին-ներքին» հակասությունը  
անշուշտ պարուրված է ինքնակենսագրական շղաշով, սակայն,  
Նարեկացու բանաստեղծության մեջ հատկապես, չի կարելի այդ  
խոր կենսափիլիսոփայությունը՝ իրականության հակասականու-  
թյունն արտացոլող երևույթը, քննել միայն պարզունակ ես-ի  
սահմաններում: Նախ՝ քրիստոնեական աստվածաբանությունը  
երեացողը, արտաքինը, ոչ բարոյական նկատվածը մշտապես հա-  
կադրում է բարեգութ և կատարյալ Աստծուն, բացի այդ, ներքին  
կատարելագործման ձգտումը միշտ էլ ուղեկցում է միստիկ մտա-  
ծողներին, իրբե արտաքին, կեղծ բարեկաշտությանը անհարիր  
մի երեւույթ: Աստծո հետ առնչվելը միստիցիզմի գաղափարախո-  
սության հիմնաքարն էր, որը հակասում էր միջնադարյան դա-  
սական քրիստոնեության դոկտրինային՝ աստծո անհասանելու-  
թյանը: Անհատը, որը աստծո հետ անմիջականորեն մտնում է մե-  
նախոսության մեջ, փաստորեն, ազատագրվում է գուցե արտա-  
քինից ընդունելի, սակայն ներքնապես անկատար միջնորդի «ծա-

ռայությունից»: Այդպիսով նա ազդարարում է իր անկախությու-  
նը, լավի ու վատի, գեղեցիկի ու տղեղի մեջ փնտրում է իր տեղը՝  
դրանով մարդկային կյանքը բարձրացնում և հասցնում է  
հոգեոր ինստիտուտից անկախ մի ֆենոմենի: Մեր համոզմամբ  
այստեղ է նարեկացին կրկին մերձենում Վերածննդյան տիտան-  
ներին: Զարմանալի չեն այլքս աղանդավորական այն անվա-  
նումները, որոնք ուղեկցել են նարեկացուն, որովհետև Վերա-  
ծնունդը միջնադարի մերժումն է:

Հակաթեզը նարեկացու պոտետիկայի ամենալընդգծված ա-  
ռանձնահատկություններից մեկն է, որը վերլուծության բոլոր  
մակարդակներում ակնհայտ է՝ գեղագիտական, սեմանտիկական,  
լեզվաբանական ևն:

Նարեկացի.

Ոչ ընդ կենդանեացն ի լոյս,

Քան թէ ընդ գերեզմանականացն զգայական  
Հնչովն՝ ի խաւար,

Ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն

Եւ ընդ խորտակեալսն:

Ի հանգստեան իրում՝ վաստակեալ,

Ի խրախութեան՝ ինքեան տրտմեցեալ,

Դիմար՝ ժպտեալ, եւ մտար՝ խոցեալ,

Կերպ՝ ի ծաղը, եւ աշը՝ ի յողբումն...<sup>102</sup>

Այս հատվածի բոլոր մակարդակների կառուցվածքում ակն-  
հայտ է հակագրությունների մի քանի տարբերակ (լույս-խավար,  
կենդանեացն-գերեզմանականացն, ամբարձեալ-խորտակեալ և  
այլն):

Անանիա Նարեկացի.

Այսօր ուրախ, և վաղին տրտում,

Ընդ առաւօտս առողջ, և ընդ երեկս ցաւագին,

Այսօր փառաւոր, և վաղին անարգ,

102 Գրիգոր Նարեկացի. Մատնան ողբերգութեան. Բան Լ. (թ):

100 Ռուդարի, Դիվան, էջ 56:

101 Գրիգոր Նարեկացի. Աշվ. աշխ. Բան Ի. (թ):

Այսօր մեծատուն, և վաղին աղքատ,  
Այսօր ահարկու, և վաղին ահարեկ,  
Այսօր ի մեծութեան, և վաղին ի թաղման<sup>103</sup>:  
Իուդաքի.

Աշխարհը հավերժ նման է աչքի, կլոր է և միշտ պտտվում է, եվ իր ամբողջ գոյի ընթացքում նրա գործը պտտվելն է:  
Այս, ինչը որ դարման էր, ցավ է դառնում.  
Այս, ինչը որ ցավ էր, կրկին դառնում է դեղ:  
Հնանում է ժամանակին այն, ինչը որ նոր էր,  
Եվ նորում է հինը:  
Տխոր անապատների են վերածվում անցյալի ծաղկուն  
այգիները,

Եվ փթթում են առաջվա անապատները<sup>104</sup>:

Եվ պարսիկ, և հայ հեղինակների բանաստեղծական հատվածները, ինչպես տեսնում ենք, կառուցված են հակաթեզերի վրա, շարժուն են և ի ցույց են դնում իրավիճակների և կացության փոփոխություն: Ուղղահայաց կտրվածքով այդ հակաթեզերը ծնում են բարոյական, սոցիալական ասպեկտ՝ նմանապես «վեր-վար» տարրերակով: Բոլոր հատվածների կառուցվածքային հենքը հակադրությունն է, բոլոր հատվածներն էլ արտացոլում են դրականը և բացասականը: Ակնհայտ է սեմանտիկական միջուկը: «Ամեն ինչ հոսում, ամեն ինչ փոփոխվում է»:

Նարեկացու «Մատյանի» յուրաքանչյուր հատված ներձագած է հակադիր գաղափարների, հասկացությունների, պատկերների տասնյակ տարրերակներով: Մատյանը ամրող ջապես ընդելուզված է աստծու նկատմամբ սիրո և իր անձի նկատմամբ քամահանքի չափազանցված գգացումների առանցքին:

«Մատյանի» յուրաքանչյուր հատված հարուստ է հսկո-

103 Տե՛ս Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի. Կյանքը և մատնագրությունը, Երևան, 1986, էջ. 282:

104 Իուդաքի, Դիվան. էջ 25:

րական հարցերով, բառակապակցությունների, դարձվածների և հնչյունների հարակրկնություններով, որոնք պարզեցնում են շարահյուսությունը, ստեղծագործությանը հաղորդում համաշխափ հանդարտություն: Դրանք ժողովրդական ստեղծագործությանը բնորոշ գերեր են, որոնք արտացոլվել են գեղարվեստական խոսքի գեռևս հնագույն նմուշներում: Այդ առանձնահատկությունները նույգաքիի և նարեկացու պոեզիային տալիս են հետահայաց (թերոսպեկտաթիվ) բնույթ, որը արտացոլում է սեփական գրականության բնորոշ գերեր և ափանդույթները: Նշվածը յուրահատուկ է երկու գրականությունների բանահյուսական ակունքներին և մարդկանց գիտակցության հետ սերտաճած՝ անցնում է սերնդից սերունդ, բազմապատկվում նոր ձեռքբերումներով և գաղափարներով: Այդ ժամանակ էլ արվեստի պատմությունում ծնվում է նորը: Սակայն թվարկվածները նարեկացու մոտ շատ ավելի ընդգծված են և մեր կարծիքով առավելապես ուղղված են այլ նպատակի՝ էքստազային վիճակի նախապատրաստման, որը մենք կքննենք սույն գլխի երկրորդ մասում:

Իուդաքիի և նարեկացու պատկերավոր մտածողության և մտաշղացումների ընդհանրությունները, գեղարվեստական խոսքի նկատմամբ համանման մոտեցումը երկու գրականություններում էլ անշուշտ ձևավորվել են անկախ: Օրինակ՝ ձգտումը գեպի հակաթեզը ունի զուտ տիպարանական բնույթ: Գեղարվեստական և գեղագիտական այդ ընդհանրությունները բանաստեղծական երկու արվեստում էլ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պատկերավորության համակարգում սահմանարածան դնելով պոետիկայի ավանդականության և նորարարության միջև:

Քրիստոնեական աստվածաբան Ավգուստիանոսը գրում է. «Այս, ինչը հակաթեզ է անվանվում, շատ տեղին է խոսքը պճնելու համար», ապա վկայակոչում է «Ժողովողի» մի հատվածը.

Զարի դիմաց՝ բարի և մահվան դիմաց՝ կյանք,

Բարեպաշտի դիմաց՝ մեղսագործ,

Եվ այսպես հայելով ամենաբարձրլալի բոլոր գործերը  
Վերցրու զույգ-զույգ, մեկը մշուսին հակառակ<sup>105</sup>:

Ավգուստիանոսի գեղագիտական հայացքները ձևավորվել  
են ոչ առանց նեռպլատոնական գաղափարների (աստված-լույս)՝  
ազգեցության և ստացել են թեզը հակաթեղով հաստատելու հա-  
յցակետը: Խոլամական միստիկական (սուֆիզմ) պոեզիայի ջա-  
տագովներից մեկը՝ Զալալ-ադ-Դին Խումին<sup>106</sup> գրում է. «Գիշերը  
լույս չկա, դրա համար չես տեսնում գույն. այդ պատճառով քեզ  
համար լույսը պարզ է դառնում հակադրության միջոցով», իսկ  
Ալ-Ղազալին<sup>107</sup> նույն միտքը ձևակերպում է այլ կերպ. «Առար-  
կաները երեսում են, երբ նրանց հակադրում ես որևէ ուրիշը. եթե

105 Իստորիա Էշտետիկի, Դ. 1, Մ., 1962, սր. 277.

106 Զալալ-ադ դին Մոհամադ Ռումին ծնվել է 1207-ին, Բալխում (Աֆղանստան): Նա սերում է մահմեդական աստվածաբանության հայտնի գիտակի ընտանիքից: Երկար տարիներ Մերձավոր և Միջին արևելքում հոր հետ շրջազա-  
յելուց հետո հաստատվել է սեղուկների մայրաքաղաք Իկոնիայում (Ռում, այսուհետից էլ՝ Օրա Ռումի կենտրոնը), որը մշակութային և կրոնական կյանքի կենտրոն էր: Փայլուն կրթություն է ստացել և հումանիտար, և բնա-  
կան գիտությունների բնագավառում: Հոր մահից հետո, 24 տարեկան հասա-  
կում փոխարինել է նրան տեղի հայտնի մահրասեռում և անմիջապես ընուն-  
վել մեհմանական կրոնական գործիքների կողմից. ստացել է սուֆի շեյխի  
տիտղոս: Նշանավոր է իր «Մասնավիկ», որ պումի անվանումն է պարսից  
մեջ: Այն թեարդրված է Ռումիի և գրաված նրա աշակերտների կողմից: Հա-  
գարավոր տողեր է պարունակում գրված առակների ծևով, բարոյախրա-  
տական վերջարկությունների որպես սուֆիզմ շատազով իր ստեղծագոր-  
ծություններում ցուցաբերել է կրոնական գիտելիքների, բանահյուսական  
աղյուրների, սյուժեների հոր հմացություն: Նրա քարական ստեղծագոր-  
ծությունների դիվանը ընդունվում է քազմաքանակ կյունա-փիլիսոփայական  
բնույթի դազալներ և քայլակներ: Ծառ դեպքերում առաջին հայացքի չի  
ընկալվում դրանց մետափիզիկական մենքը և վերջիններու ներկայանում են  
որպես հրաշալի միրային բանաստեղծություններ: Կյանքի վերջին շրջանում  
իր ստեղծագործությունների վերջին բեյթը (Մաքրա) ստորագրել է իր հոգ-  
նոր ուսուցչի՝ (Մորշեն) Ծամս-է Թաքրիզիի անունով, որի Ըկատմամբ սերը  
պաշտամունքային բնույթ է կրել: Հայտնի է, որ վերջինին սպանել են Ռու-  
միի աշակերտները, Ռումիի հետ հոգեպես առնչվելու մենաշնորհը Ծամսից  
խելու համար:

107 Ալ-Ղազալին սուֆիզմը հարմարեցրեց իւլամին, որով Վերջինս կորցրեց իր  
ամենակարևոր՝ ընդունության գաղափարը (Քոյսը ըստ Յ. Դ. Ջավալիձե, Ս  
իստօք տրեքոյ լիտերատուրա, Թբիլիսի, 1979, սր. 32-33):

արել հարատեև լուսավորեր և մայր չմտներ, մենք երբեք չէինք  
իմանա, որ առարկաներն ուրիշ գույն ունեն, բացի այն գույնից,  
որ նրանք ունեն, երբ լուսավորված են արեսով<sup>108</sup>: Հակաթեղերի  
նկատմամբ հակումը պարսից պոեզիայում կարելի է փնտրել նաև  
մազդայականության թինար մտածողության հիմքում: Այսպես  
թե այնպես՝ դրանց գուգադրությունը մեզ կտանի դեպի համա-  
մարդկային տիպաբանություն, քանի որ լավի և վատի, հաճելիի  
և տհաճի, չարի և բարու չափանիշները, ավաղ, տարբեր աշ-  
խարհներում տարբեր են, սակայն հստակ գոյություն ունեն: Ա-  
հա թե որտեղ են գեղագիտական հայացքների և պոեզիայի կերպ  
ստացած բարոյական չափանիշների ընդհանրությունների ար-  
մատները հայոց և պարսից մեջ:

Ուուդաքիի և Նարեկացու բանաստեղծական արվեստի որոշ  
առանձնահատկությունների քննությունը մեկ անգամ ևս ցույց  
է տալիս, որ 10-րդ դարում Հայ քերթողական արվեստը լիովին  
գտնվում էր քրիստոնեական արևելութիւն ոճական-գաղափարա-  
կան համակարգում և միանգամայն զերծ էր պարսից ազգեցու-  
թյունից: Արաբապարսից գերակայությունը, որը նպաստել էր  
ընդհանուր մերժավորաբեկյան բանաստեղծական ոճի ձևավոր-  
մանը, չի ազդել 10-րդ դարի Հայ պոեզիայի վրա:

108 Նույն տեղում:

**ՄԻՍՏԻՑԻԶՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ 10-13 ՌԴ. ՀԱՅ ԵՎ ՊԱՐՍԻՑ  
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Դժվար է ճշմարիտ գնահատել հայ և պարսից միջնադարյան քերթողական արվեստի առանձնահատկությունները՝ առանց ճանաչելու և ուսումնասիրելու միտմիկական պոեզիան, որը կազմում է աշխարհում հայտնի «*Առօս Dei*» կոչվող գրականության մի մասը:

Միտմիցիզմն իրեւ կրոնափիլիսոփայական աշխարհայացք ունի հնագույն և խոր արմատներ: Այն մշտապես ուղեկցել է համաշխարհային կրոններին՝ հարմարվելով նրանց և տարափոխվելով: Եթե այնուամենայնիվ, չնայած գաղափարաբանական դրսնորման տարրեր ձևերին, միտմիցիզմի հիմնական գաղափարը՝ իրացիոնալ չփուլը աստծո հետ հոգու պայծառացման, էքստազի միջոցով, մնացել է անփոփոխ: Միտմիցիզմը (նեոպլատոնականության մեջ արտահայտված ձևով) Արևելքն ու Արևմուտքը, մահմեղական և քրիստոնեական աշխարհները մերձեցնող եղբերից մեկն է:

Առաջին ճգնակյացների ժուժկալ կենսակերպը առավելեապես հատկանշական էր քրիստոնեությանը, քան իսլամին<sup>109</sup>: Այդ պատճառով էլ իսլամական առաջին ճգնակորները (գահեղ) դիտվում էին որպես աղանդավորներ, որովհետև լրում էին հասարակությունը և առանձնանում մենաստաններում (դեյր): Ճգնակե-

109 Քրիստոնեական կրոնը խրախուսում էր ժուժկալությունը, աշխարհուրացությունը, կուսակրոնությունը. մինչեղու խպամը մերժում էր ասկետիզմը, ինչպես նաև մենակեցությունը. Ղորանի այսաթը ազդարարում է. «Կերեք և խմեր», կամ «Վայելեք բարիեները, որ մենք ձեզ պարզենել ենք» (տե՛ս Կորան, Պերեօճ և կոմմենտարի Ա. Յ. Կրակովսկու, Մ., 1963, սկզ 2, 167:172): ի դեպ, Լ. Մասիմյանը մերժում է այդ տեսակետը համարելով, որ Ղորանը տեղ-տեղ հնարավորություն է տալիս որոշ գաղափարների մեկնարանում միտմիցիզմի և ասկետիզմի ոգով (տե՛ս L. Massignon, *Essai sur les origines du lexique technique de la mystique musulmane*, Paris, 1922, p. 84):

ցությունը՝ միջնադարյան սոցիալական դժգոհության այդ ձևը, կրոնական երանգի հետ մեկտեղ կրում էր նաև հակավատատիրական պայքարի լիցքը: Այսպես թե այնպես, այն սասանում էր ոչ միայն հավատի գաղափարական հիմքերը, այլև նաև՝ պետության:

Հայաստանում կրոնաժողովրդական շարժումները ուժինացել էին 10-11 դդ. ավելի վաղ, սակայն պաշտոնական եկեղեցին անխնա պայքարում էր դրանց դեմ: Այդ շարժումներում ուշադրության արժանի է քրիստոնեական դերվիշականությունը, որը 11-րդ դ. սկզբին քարոզում էր Հակոբ Հարքացին (կարգալույթ եպիսկոպոս-Ա. Կ.): Նրա աշակերտները (տոհմիկ ընտանիքներից, սակայն առավելապես՝ հասարակ ժողովրդից), շրջում էին ոտարորիկ, կոպիտ բրդյա շորերով, քարոզում էին մաքուր կենցաղավարություն, ծոմ, քավություն և ինքնակատարելագործում: Նրանք ժիմում էին հաղորդությունը, պաշտոնական կրոնի ծեսերը, եկեղեցու միջնորդ գերի անհրաժեշտությունը: Դրանք հզոր կրոնաժողովրդական շարժումներ էին, որոնք բարձր էին կանգնած հավատքային նախապաշտումներից և դրանով էլ վարակիչ էին ոչ միայն քրիստոնեական համայնքի համար<sup>110</sup>:

Ճգնակեցությունը դանդաղ սկսեց կոնցեպցիայի բովանդակություն ստանալ և, ինչպես ամենայն ֆենոմեն, ձևական ատրիբուտներ ձեռք բերեց: Դրանցից մեկը քուրծն էր, կոպիտ, բրդյա հագուստը (արաբերեն՝ սուֆ, այստեղից՝ սուֆիզմ), որը կրում էին մարմինը տանջելու և այդ կերպ բարոյական իդեալին՝ աստծուն հասնելու համար: Նեոպլատոնականների տեսության մեջ այդ երկույթը հետեւյալ ձևակերպումն է ստանում. «Նյութական կյանքը հոգու կապանքն է», «Եթե անգամ նյութը մասնակից է լինում բարիքի իրականացմանը, ապա միևնույն է, նա չի կարող լինել բարություն, այլ չարիք է և արժանի է ատելության»<sup>111</sup>: Սա այն դրույթի շարունակությունն է, ըստ որի աշխարհը և ամրողը կենսական գոյը արտահեղման՝ աստվածային լույսի հմա-

110 Հմմտ. Հ. Յ. Մարք, Կավազսкий культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 91: 111 Գ. Լեյ, Очерк истории средневекового материализма, М., 1962, стр. 96.

նացիայի արդյունք են: Նրանք կազմում են համաշխարհային ոգու մի մասնիկը, նրա հետ կապի ամենացածր սանդղակում են գտնվում և մշտապես նրան հասնելու ձգտումն ունեն: Միայն այդ բարձր ոլորտում կարելի է ազատագրվել նյութականից՝ մարմնից: Ասկետիզմի, նեռալատոնականության, պանթեիզմի և տարբեր այլ գաղափարների փոխներթափանցումից է ձևավորվել միջնադարյան քրիստոնեական և մահմեդական միստիցիզմը, որի առաջնային և բնորոշ հատկանիշներից մեկը աստծո հետ մերձեցման ճանապարհների որոնումն է (թալար): Այստեղից էլ սկսվում է միստիկի կատարելագործման ընթացքը, որը ծնում է հոգեկան տվյալանք, սեփական անկատարելության զգացում, ինքնածաղկում, մեղանչում, բողոք ևն: Այս հոգեվիճակը, սակայն, թե՛ քրիստոնեական և թե՛ իսլամական միստիկի համար ընդհանուր է մինչև վերջնական նպատակին հասնելու պահը: Եթե քրիստոնյա միստիկը, մեր նարեկացու նման, կատարելագործման, ինքնամաքրման, ինքնաճանաչման, հոգեքննման «կայաններում» այնուամենայնիվ չի հասնում աստծուն, նրա հետ, իր խոսքով ասած, «Համաշնչապես» միանալուն, ապա իսլամական միստիկը ավելի պրագմատիկ է և ամեն մի «կայանում» բարոյական կատարելագործման մի նոր աստիճան է հաղթահարում՝ ավելի ու ավելի մոտենում Կատարյալին: Ավելին, իսլամական միստիկը (որին սուֆի են կոչում, իսկ ուսմունքը՝ սուֆիզմ) վերջնականապես հասնում է աստծո հետ ձուլվելուն, որ կոչվում է ֆանա (annihilation)՝ իրեն պատճառելով հոգեկան (ըստ էթոնոգերանների նաև՝ Փիզիլոգիական<sup>112</sup>) բավարարություն: Վերջինս համարժեք է անհացմանը և տարրալուծմանը, որը մարդու և անհատի միասնության (վահագ-ալ-վուլուդ) արտահայտությունն էր: Դրան հաջորդում է հավերժացումը (բաղա): Կատարելագործման ճանապարհը կոչվում է «թարիղաթ»<sup>113</sup>, մակարդակները՝

112 Տե՛ս Կ. Կազանսկի, Սүֆիզմ, Սամարկանդ, 1905.

113 Սուֆիզմն ընդունում է անձի ինքնակատարելագործման լոր աստիճան, որը սկսվում է որոնումից (թալար), հետո՝ սեր, խոստվամություն, շրջանայացություն (հալալը հարամից տարբերելու), ժուժկալություն, հճազանդություն,

«մաղամաթ»: Այսպիսով, աստծո հետ մերձեցումը սուֆիի համար վերջանում էր հոգեպայծառության պահով, երբ կտրվում էին բոլոր տեսակ կապերը արտաքին աշխարհի հետ, և անհատը վերածնվում էր նոր որակով, որպես Աստված կամ Առաջնային: Դա սկզբունքորեն իրացիոնալ երևույթ էր և ոչ մի ճանաչողական հասկացությամբ չէր միջնորդվում: «...Արդեն Ճ-րդ դարում միստիկական տրամադրությունները աճում էին ճգնավորական շարժման ընդերքում, հող էին նախապատրաստում այն «Աստվածային սիրո հիմնի» ձևավորման համար, որին սուփիզմը վերածվեց 10-11 րդ դդ.»<sup>114</sup>:

Սուփիզմի հայտնի պարագլուխներից մեկը՝ Հոսեին Հալաջը, գլխատվեց հոգեպայծառության պահին արտասանած «Ես Աստված եմ» (Ան-ալ-Հալդ՝ ես Շմարտությունն եմ) արտահայտության համար, մինչեռ միստիկ նարեկացին գրում է:

Առանց նուիրման այսր լիշտատակի  
Զեւ են իսկապէս կատարեալը իսպառ....<sup>115</sup>

Կամ՝

Հոգույդ առաջնորդութեամբ միանալ ի քեզ  
անընդմիջելի...<sup>116</sup>

Կամ՝

Անդէն առ նմին նովիմբ միշտ ի քեզ  
Ընզոյս ողջունի կապեալ ընդ շնորհիդ՝  
ի քեզ միանալ անբաժանելի...<sup>117</sup>

Պարզ է, որ աստծո հետ նույնանալը ուղղափառ հոգեկորա-

միացում (աստծո հետ): Այդ ճանապարհն ի նկատի ունի Ռումին, երբ հայտնի սուֆի բանաստեղծ Աթթարի մասին գրում է.

Սիրո յոթ քաղաք անցավ Աթթարը,

Մենք դեռևս նորանցքի առաջին կնոմանում ենք:

114 Է. Յ. Բերտելս, Սүֆիզմ և սუֆիյսկая литература, М., 1965, стр. 18.

115 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԾԳ ( դ):

116 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ՂԲ ( ժ):

117 Նույն տեղում, Բան ԻԴ ( դ):

կանության բողոքն ու ցասումն էր առաջացնում: Նրանք հետապնդում էին սուֆիներին՝ մեղադրելով նրանց աստվածուրացության և հերետիկոսության մեջ: Սուփիների համար սովորական վերը նշված բանաձեռ հակադիր էր իսլամի մոնոթեիստական այն գաղափարին, թե ալլահը միակն է («Զկա աստված՝ բացի ալլահից, և Մոհամադը նրա մարդարեն է»): Հետապնդումներին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ավելի ուշ, 11-12-րդ դդ. ձեւավորված սուփիական համայնքները և եղբայրությունները բացարձակապես չէին ենթարկվում իշխանություններին: Այս էր, որ հանգիստ չէր տալիս աստվածաբանների պրապող մտքին ու ստիպում էր նրանց հաշտեցման ճանապարհ գտնել սուփիզմի և իսլամի դրույթների խաղաղ գոյացության համար: Դրանով էլ ավարտեց իր առաքելությունը ականավոր աստվածաբան Ալ-Ղազալին: Նրա մշակած տեսության արդյունքն եղավ այն, որ սուփիզմը, աստծո հետ մերձեցման հիմնական գաղափարը պահելով, վերջնականապես հարմարվեց իսլամի դրույթներին և շահերին՝ կորցնելով այն ամենը, ինչը առաջադիմական էր, ընդդիմադիր և հումանիստական<sup>118</sup>: Եվ քանի որ սուփիզմը երկար դարեր պահում էր իր կենսունակությունը, հետևաբար տարափոխությունների էր ենթարկվում, հարմարվում ժամանակին, իշխող գաղափարախոսություններին կամ ընդդիմադիր տեսություններին: «Այն դարձավ տարահամակարգ կրոնափիլտրայական գաղափարների և բազմաթիվ ծեսերի ամրողացությունը ուղղված հավատացյալի և բացարձակի անմիջական միացմանը...»<sup>119</sup>:

«Ալ-Ղազալիից հետո սուփիզմը դադարեց քաղաքային գանգվածների սեփականությունը լինելուց, նրա ճանապարհը արդեն բաց էր գեղի ավատատիրական ամրոց»<sup>120</sup>:

118 Օրինակ, Ալ-Ղազալին երեք չի ընդունել իր տեսությունը ժողովրդական դարձնելու բանաստեղծական ձևը: Ավելին, նա քարդ ձևակերպումներով շղարշում էր իր կրոնափիլտրայական դրույթները:

119 Ի. С. Брагинский, КЛЭ, М., стр. 275.

120 Ե. Э. Бертельс, Եցվ. աշխ.էջ 43:

Հենց նույն ժամանակաշրջանում՝ 10-րդ, հայոց մեջ քրիստոնեության հիմքի վրա ձևավորված կրոնափիլտրայական միտքը ապրում էր սուփիզմի գաղափարախոսության մի տարատեսակ, որը, իհարկե, ստեղծում էր ոչ թե հասարակ ժողովուրդը, այլ ազնվական և կրթյալ խավը: Նեռվլատոնականությունը, որ Հայաստանում վաղուց իր ջատագովներն ուներ (Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի, Անանիա Նարեկացի ևն), ազգարարում էր հոգու հավերժությունն ու մարմնի ունայնությունը: «...Հոգին մարմնից ազատվելուց հետո ավելի է պայծառանում, անոթի մեջ դրված կանթեղը քիչ լույս է տալիս, իսկ անոթից հանելուց հետո ավելի պայծառ է լուսավորում...»<sup>121</sup>: Հայոց փիլիսոփայական մտքի համար խորթ չէին նաև սուփիզմի գաղափարներից շատերը, որոնք ժողովուրդների լայն հաղորդակցության պայմաններում այդ շրջանում համարելիյան բնույթ էին կրում: Աղամ Մեցը, օրինակ, գրում է, թե «Սովորաբար Շիրազը շատ խաղաղ քաղաք էր, և Ալ-Մաղդիսին (աշխարհագրագետ, պատմիչ - Ա.Կ.) նույնիսկ զարմանում է, թե զրադաշտականներն այնտեղ տարբերիչ նշաններ<sup>122</sup> չէին կրում, իսկ անհավատների տոնական օրերին ամբողջ քաղաքը զարդարված էր լինում: Երբ 371 թ. (981) մեռավ սուփիների պարագլուխը, նրա դիմակի հետևից գնում էին մահմեգականները, հրեաները և քրիստոնյանները<sup>123</sup>»:

Ճոն Տրիմինգեմը նույնպես հիշատակում է Ալ-Մաղդիսիին, որը 10-րդ դարի վերջին տասնամյակների մասին մի հետաքրքիր տեղեկություն է թողել սուփիզմի այդ ժամանակաշրջանի ամենատարածված Քարամիյա կոչվող միստիկական ուղղության հետևրդների մասին, որոնց հավաքատեղին մենաստան (խանեղակ) էր կոչվում: «Խանեղակ կա Դարիլում (Դվին, Հայաստանի

121 Հմմտ. Ս. Արևշատյան, Սուփիզմը Հայության մեջ, Երևան, 1956, 7, ստ. 79:

122 Ոչ մահմեղականները հասուն գոտի էին կապում, որը կոչվում էր «զոնար»:

123 Ա. Մեց, Մուսուլմանական պատմությունները, Երևան, 1966, ստ. 43.

մայրաքաղաք), որոնց բնակիչները թասավոփ<sup>124</sup> համակարգի միստիկներ են (արեֆ) և ապրում են ինքնակամ աղքատության մեջ՝<sup>125</sup> ի դեպ Քարամիյա ուղղությունը հայտնի էր իր ընդգծված անտրոպոլոգիզմով։ Նրանք աստծուն մարդկային տեսք էին վերագրում։<sup>126</sup> Մենք հաստատապես չգիտենք, թե ինչ աղդի ներկայացուցիչներ են եղել Դվինի մենաստանում առանձնացած ճգնակյացները, սակայն Ալ-Մաղդիսիի այդ հիշատակությունը զուգորդվում է Նեգամի Գյանջկիի «Խոսրով և Շիրին» պոեմի 19-րդ գլուխի (Շապուհը ուղերգում է Հայաստան Շիրինին գտնելու) մի հետաքրքիր դրվագի հետ։

Ժայռափոր հնամենի մի վանք կար,  
Սերունի վանականներուն էին այնունի ապրում.  
Մտավ (Շապուհը-Ա. Կ.) հնամենի վանքը  
Այդ սուրբ ճգնավորների սովորութի համաձայն<sup>127</sup>:

Հստ միջնադարյան մատենագիր Աֆլաքիի՝ Զալալ-ադ-Դինի (Ռումի-Ա. Կ.) մահվան օրը նրա պատգարակի մոտ հավաքվել էր մարդկանց հոծ բազմություն։ Բոլորը եղել են գլխարաց, թե՛ ազնվականները և թե՛ հասարակ ժողովորդը։ Թաղման թափորում եղել են քրիստոնյաներ, հրեաներ, Հույներ, արաբներ, թուրքեր։ Նրանք գնացել են սաղմոսներ երգելով, ավետարան և հնդամատյան կարդալով, և մահմեդականները ոչ մի կերպ չեն կարողացել նրանց հեռացնել այդտեղից։<sup>128</sup> Պարսից հայտնի բանասեր Ա. Զառինքուրը հաստատելով ասվածը, ավելացնում է, թե սելջուկների գահանիստ քաղաքը՝ Ռումը, Ռումիի մահից հետո ընկավ անձկության մեջ։ Մի քանի շաբաթ քաղաքը սգում

124 Թասավոփը մահմեդական միստիցիզմն է, սուֆիզմը. Մաղդիսին հաղորդում է, որ Դվինի մենաստանը այն միակներից էր, որտեղ կիրառվում էր ամձի կատարելագործման ուղղված հոգեվարդույթն։

125 Ջ. Տրմինգեմ, Ըստիկական օրդեններ և ապագա մասնակիություն։

126 Տե՛ս C. E. Bosworth, "Karramiyah" El., v. 2, Leiden, 1978:

127 Տե՛ս Քոլիյաթ-է Նեգամի-է Գյանջավի, Թերթան, 1341, ս. 14:

128 Վլ. Գործակական օրդենների մասնակիություն։

էր<sup>129</sup>:

Ժողովրդական հզոր շարժումների հետ մեկտեղ ձևավորված կրոնավիլիսփայական ուսմունքների զարգացման համընկնումները պատահական չեն մեր երկու աշխարհներում։ «Գրիգոր Մագիստրոսը պնդում է, թե թոնդրակյանների մեջ կային կատարյալ անստվածներ, էպիկուրյան փիլիսոփայության հետեւրդներ։ Սակայն ամենայն հավանականությամբ առավել արժանահավատ է այն տեղեկությունը, որը հիմք է տալիս ենթագրելու, թե թոնդրակյանների մեջ կար նաև պանթեիստական հոսանք։ Այսպես, օրինակ, Սմբատ Զարեհավանցու աշակերտ Կյուրեղը պնդում էր, թե «Աստված ամեն ինչի մեջ է, նա առկա է ամենուր և ամեն մի բանում»<sup>130</sup>։ Նույն պատկերն ենք տեսնում նաև զարմաթյան շարժման ընդերքում, որի մի թեկի իսմայիլականության և սուֆիզմի գաղափարակիր էր, օրինակ, Նասեր Խոսրովը, որը իր «Սաֆարնամենում» համակրանքով տեղեկություններ է հաղորդում զարմաթյանների կողմից ստեղծած պետության մասին։

Քանի որ մեր նպատակից դուրս է քրիստոնեական միստիցիզմի և իսլամական սուֆիզմի իմացարանական և սոցիալական էության բոլոր խնդիրների քննությունը, մանավանդ, որ այդ գաղափարախոսություններն իրենց բոլոր դրսերումներով մինչև օրս լրիվ ուսումնասիրված չեն, ուստի մենք բավարարվում ենք պարսից և հայոց միստիկական պոեզիայի մի շարք առանձնահատկությունների պարզաբանմամբ, կրոնավիլիսփայական գաղափարախոսություններից նրանց կախվածության աստիճանի, ինչպես նաև՝ նշված պոեզիաներում ծագումնաբանական և տիպարանական ընդհանրությունների բնութագրմամբ։

Թե՛ քրիստոնեական և թե՛ մահմեդական միստիկի բանա-

129 Հմատ. Արդարական Զարդարություն, Փելլե փելլե թա մոլադաթ-է խոդա, Թմիրան, 1374, ս. 344:

130 Տե՛ս Ս. Ս. Արևշատյան, Բայ մշակույթը 9-10-րդ դդ. (փիլիսոփայություն), Հայ ժողովրդի պատմություն, ჩ. 3, էջ 333։

ստեղծական ըմբռնումը գալիս էր աստծո հետ հաղորդակցվելու ելակետից: Պոեզիայում այն գուգորդվում էր ինքնամաքրման հետ՝ աղոթքի, զղման, ապաշխարման, ողբի միջոցով: Հատկապես վերջինս Նարեկացու «Մատյանի» ամենաընդգծված յուրահատկությունն է:

Զայն հառաջանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի  
Քնզ Վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց,  
Եւ մատուցեալ եղեալ ի հոր թախծութեան անձին  
տոչորման...<sup>131</sup>

Այս երեք տողում խոտացված՝ ձայն, հառաչանք, հեծություն, ողբ, աղաղակ, թախծություն, տոչորում... բառերը ստեղծում են չափազանց դրամատիկ պատկեր: Ինչու՞ ողբ: Որովհետև Աստվածաշունչը ազդարարում է. «...զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհս, թշնամի առնէ զանձն Աստուեց»<sup>132</sup>: Կամ «Սրբեցք զձեռս մեղաւորք (իսկ Նարեկացին միշտ իրեն մեղավոր էր համարում Կատարելության առջեւ Ա. Կ.), եւ ուղիղ արարէք զսիրտս, երկմիտք, տառապեցարուք, սգացարուք եւ լացէք. ծաղր ձեր ի սուդ դարձցի, եւ ուրախութիւն ձեր ի տրտմութիւն»<sup>133</sup>: «...Վ'այ ձեզ, որ ծիծադիք այժմ, զի սգացէք եւ լացէք...»<sup>134</sup>:

11-րդ դարի միստիկ բանաստեղծ Բաբա Թահեր Օրիանի բանաստեղծությունը այնպիսի թախիծով ու ողբով է համակված, որ անգլիացի հետազոտող Հերոն Ալենը նրան նվիրված իր ուսումնասիրությունը կոչել է «Բաբա Թահերի ողբը»<sup>135</sup>: «Եթե դուք իմանայիք այն, ինչ գիտեմ ես, — ազդարարում է Ղորանի հաղի-

սը<sup>136</sup>, — դուք կմոռանայիք ծիծադիք և շատ կողբայիք»<sup>137</sup>: Կամ «Հինգ ջրերից (Կյանքի, դրախտի ևն- Ա. Կ.) աստված սիրում էր իր ստրուկների և, հատկապես, մեղավորների<sup>138</sup> արցունքը»: Ինչպես տեսնում ենք, նրանց ողբը մեծապես հիմնավորված է:

Եվ այսպես, ապավինելով աստծո կամքին, Նարեկացին զղման աղոթքով և ինքնամաքրագործմամբ ազատություն է տալիս իր երեակայությանն ու մտորումներին և խոստովանելով իր մեղքերը՝ բարձրածայն անդրագառում է նաև սոցիալական և հասարակական այն խնդիրներին, որոնք հանգիստ չեն տալիս նրա մտքին ու հոգուն: Այսպիսով, Նարեկացու պոեզիան դառնում է վերանձնական հոգեվարժություն, համընդհանուր բարոյագիտության ուղեցույց, «համայնապատում խոստովանութիւն»:

Առ ստրուկս եւ ներքոյ անկեալս,  
Առ սեպուխ եւ գերաշխարհիկս,  
Միջակայնոց եւ պայազատաց,  
Ծինականաց եւ տոհմականաց,

.....  
Վեհից եւ փոքրունց,  
Պատուականաց եւ ուամկաց,  
Զիավարժից եւ սոսկականաց,  
Քաղաքականաց եւ գեղջկաց,  
Արքայից գոռողութեանց՝ ի սանծս ահաւորին ըմբռնեցելոց,  
Միայնացելոց՝ Վերնականացն խաւակցաց,  
Մաքրականաց՝ տիրանուէր զգաստութեանց,

131 Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան. Բան Ա (ա):

132 Թուղթ Յակովոր, Դ. 7-10:

133 Նոյն տեղում, Դ 9:

134 Նոյն տեղում, Զ 25:

135 E. Heron Allen, The lament of Baba Tahir, Being the rubaiyat of Baba Tahir Hamadani (Urian), 1902.

136 Հաղիս՝ արարերնն նշանակում է օրինակ. դրանք Մոհամադի գործության մեջ կապված պատմությունները են. Ղորանի տարբեր հասկածներից տրված ենք մենարանությունները, որոնք ուղեցույց էին դառնում հասարակական կյանքում և կարգավորում էին հոգեու պաշտամունքը:

137 Ա. Պ. Պետրուշևսկի, Եշվ. աշխ., Էջ 316.

138 Է. Յ. Բերտելը, Եշվ. աշխ., Էջ 259.

Քահանայական երջանկակրաւն ընտրութեանց...<sup>139</sup>

Այստեղ հետաքրքիր է պատմական այդ ժամանակահատվածի սոցիալական կազմը և, մանավանդ, հեղինակի կողմից մի դիպուկ գնահատականով արտահայտած սեփական վերաբերմունքը:

Նարեկացու պոեմիայում ներդաշն կրկնությունները, Հարակրկնությունները, Հակադրությունները, խտացումները հոգեվարժության այն ձևերից էին, որոնք գրգռում էին երևակայությունը՝ ավելի ու ավելի մոտեցնելով էքստազային վիճակին, հետևաբար նաև՝ կատարյալին:

Քրիստոնեական և իսլամական միստիցիզմում մեծ տեղ է տրվում ծիսականությանը՝ սկսած միստիկի արտաքին տեսքից, վերջացրած նրա վարքագծով։ Հատկապես այն իր յուրահատկությունն ուներ աղոթքների և հոգեֆիզիկական այլ միջոցներով էքստազային վիճակի հասցնելու գործում։ Տարբեր եղբայրություններ տարբեր մեթոդներ էին օգտագործում, ունեին տարբեր ծիսականություն և էթիկեա։ Սուֆիզմում շատ տարածված էին երգը և պարը (սամա), որը պատմության մեջ թողել է «պտտվող դերվիշներ» պատկերացումը։ «Հովհաննես Երզնկացին, մեկնարանելով սաղմոսը, խոսում է աղոթասացության, նրա հոգեֆիզիկական մեխանիզմի և դրա հետ առնչվող զանազան հնարքների և անհրաժեշտ հանգամանքների մասին՝ ստեղծելով «ներքին աղոթքի» մի տեսություն, որն ուներ յուրահատուկ աստիճանակարգ՝ զգացման, խոսովանության, և արտասուքի միջոցով աղոթողին հասցնում էր էքստազային վիճակի»<sup>140</sup>։ Խոսքի, պարի և երգի մեջ էքստազին նպաստում էին միապաղաղ կրկնությունները, երկարաձիգ տոնայնություննը, ինչպես նաև ոիթմը։ Հարմոնիային և ոիթմին իրենց գեղագիտական հայացքներում մեծ տեղ են հատկացրել հին հունական փիլիսոփաները՝ հաստատելով այն

դրույթը, որ մարդկության կյանքը մեծապես առնչված է դրանց<sup>141</sup>:

Սուֆիների աղոթք-բանաստեղծություններից մեկը ուղղահայաց կտրվածքով այս տեսքն ունի.

Ես այունն եմ տիեզերքի...

Ես գանձարանն եմ լույսի...

Ես ընտրյալն եմ ընտրյալների...

Ես դուռն եմ...

Ես պոռքկումն եմ լույսի...

Ես առաջինն եմ էռության... և<sup>142</sup>:

Այստեղ արտահայտչամիջոցների պոետիկան հանգեցնում է ամենայնի միասնությանը՝ տրանսցենդենտային մոնիզմին, այն դեպքում, երբ Նարեկացու մոտ առկա է ամենայնի պանթեիստական մոտեցումը.

Զի դու միայն ես յերկնի անճառ և յերկրի անգնին,

Ի տարր գոյի եւ յեզրս ծագաց աշխարհի,

Սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ,  
արինեալ ի բարձուն<sup>143</sup>:

Հետաքրքիր է դիտարկել Ես-ի տիեզերական ամբողջականացումը և բարձրացումը սուֆի բանաստեղծի պոեզիայում և նույն Ես-ի նսեմացումը տիեզերական բարձրության առջև Նարեկացու մոտ։

Նարեկացի.

Մեղա՛յ երախտեացի մոռացութեան, վերստին մեղայ,

Մեղա՛յ մարմնոյ ձեռն յոգի հարեալ, յիմարս մեղայ,

Մեղա՛յ առ կեանսդ դժողովութեան, իսկ եւ իսկ մեղայ,

Մեղա՛յ բանիդ ապախտ առնելոյ, չարաշար մեղայ,

Մեղա՛յ ի յար սատակման ինձէն ստիպեալ,

141 Տե՛ս Ա. Փ. Լոսև, Իстория античной эстетики, Софисты. Сократ, Платон., М., 1969, стр. 403.

142 Ջք. Տրմինգեմ, Աշվ. աշխ., էջ 171.

143 Նարեկացի. Մատեան ողբերգութեան, Բան ԽԱ. (թ):

Վատիարս մեղայ,  
Մեղայ՝ պարտականս անկենդան մահուն, ձաղելիս մեղայ,  
Մեղայ՝ անպատկառս քո բարձրութեան,  
տաղտկալիս մեղայ...<sup>144</sup>

Եեյխերից մեկի վկայությամբ՝ հոգեվարժության ժամանակ  
70 հազար անգամ կրկնում էին թահլիլ կոչվող աղոթք-բանածեղը.  
Լա-իլահա-իլլա-լ լլահ... (չկա աստված... ևն)<sup>145</sup>:

Այսպիսով, Նարեկացու «Մատյանը» և ձեռվ, և բովանդա-  
կությամբ ուղղված է Աստծուն և ծառայում է նրա հետ մերձե-  
նալու գաղափարին: Այդ հաղորդակցումը բանաստեղծին մաք-  
րում է իր միջավայրի երկրային և մարմնական ամենայն անմա-  
քուրից և մոտեցնում է կատարյալին:

Դա միջոց է դառնում բարձրածայն առաջ քաշելու նաև սո-  
ցիալական, էթիկական, փիլիսոփայական, ինքնակենսագրական և  
ժամանակի համար հրատապ այլ խնդիրներ, խորհել չարի ստեղծ-  
ման գործում աստծո պատասխանատվության հարցի և այլ ան-  
լուծելի առեղծվածների շուրջ:

Նարեկացի.

Մեզ, որ ի բնե հակամետ ենք միշտ  
ի հայտ բերելու բյուր ու անհամար չարության բեկր,  
Որոնք աճում են ու միշտ նորոգվում  
Մեր ամեն տեսակ փշեր բուսցնոյ բնության դաշտում  
Համաձայն անսուտ քո վկայության,  
Թե «Մարդու միտքն իր մանկությունից տրամադիր է  
շարիք գործելու»<sup>146</sup>.

Այս հատվածում նարեկացիական գուսապ ու հնագանդ հար-  
ցագրումը խայամյան ուսցիոնալիստական բանաստեղծության  
մեջ ըմբոստ մարտահրավերի տեսք է ստանում:

144 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԻԷ (Ա): ԸՆ. ուժ. 802:  
145 Ճ. Տրմինգեմ, Եշվ. աշխ., էջ 246:  
146 Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, ԺԵ, ուստի մասնաւություն:

Տեր, դու ես իմ կավը հունցել- ես ի՞նչ անեմ,  
Բուրդը դու ես մանել-օգործել, ես ի՞նչ անեմ,  
Այն ամենը ինչ կա իմ մեջ- թե լավ թե վատ,-  
Իմ ճակատին դու ես գրել- ես ի՞նչ անեմ<sup>147</sup>:

Այս առիթով ուզում ենք հիշատակել Ս. Ռասադինի մի դի-  
տողությունը, թե «Բանաստեղծի խոսակցությունը աստծո հետ  
արդեն իր մեջ ներառում է ըմբոստություն, արդեն արվում է ա-  
ռաջին քայլը<sup>148</sup>: Դասական գրականությունների իմացությամբ  
և ուշադրության արժանի գուգորդություններ և համեմատու-  
թյուններ ծնող այդ հոգվածը առավելապես զգացմունքային է:  
Ասվածը կարող է վերաբերել ուղղափառ հավատացյալին կամ  
անհավատին, բայց ոչ միստիկին, քանի որ վերջինիս ճանապար-  
հը էմայիրիկ ես-ի կորուստից մինչև համաշխարհային ոգին անց-  
նում է նրա հետ հաղորդակցվելու միջով, և ինչպես տեսանք,  
դրա տեխնիկական ամենակարևոր միջոցներից մեկն էլ խոսքն է:  
Խոսակցությունը աստծո հետ միստիկի հանապազօրյա գործու-  
ներությունն է և աստծո հետ իռացիոնալ շփման ճանապարհի  
սկիզբը:

Սկզբնական շըջանում, մինչև սուֆիզմի կրոնամիստիկա-  
կան էլլեկտիկ հզոր ուսմունքի վերածվելը, իսլամական միստի-  
ցիզմը ուներ մի ուղղություն, որը միայն ողբասացությամբ էր  
արտահայտում սերը Տիրոջ նկատմամբ և այդ ձեռվ թողություն  
հայցում գործած մեղքերի համար: Այդ ողբասացները Հարուն  
ալ-Ռաշիդի կողմէ Զուբեյդայի պալատում հատուկ կարգավիճակ  
էին զբաղեցնում և գիշեր-ցերեկ Ղորան էին կարգում: Թրդ գարի  
հեղինակներից մեկը գրում է, որ եթե որևէ մեկը գիշերով անց-  
նում էր Բաղդադի փողոցներով, ապա ամեն կողմից լսում էր զո-  
րանասացների ձայնը, որ «Հոսում էր, ինչպես ջուրը ջրհորդան-  
ներում»<sup>149</sup>:

147 «Մարզարտաշար», էջ 78:

148 Ստ. Ռասադին, Պредположения о поэзии, М., 1988, стр. 275.

149 Հմմտ. Ե. Յ. Բերտելս, Եշվ. աշխ., էջ 30:

«Հենց Ղորանի (որն անընդհատ կարդում էին, որի շուրջը անընդհատ մտորում էին, որը օգտագործում էին կյանքում) հիմքի վրա ծնվեց իսլամական միստիցիզմը՝ իր ձևավորմամբ և զարգացմամբ։ Այդ սուրբ տեքստն անընդմեջ կարդալը և այն անընդհատ հիշատակելն էր ձևավորում իսլամական միստիցիզմի բնորոշ հատկությունները»<sup>150</sup>։ Այսպիսով՝ 10-11-րդ դդ. Քրիստոնեական և իսլամական միստիցիզմները կայանում էին համապատասխան կրոնների և նրանց Սուրբ գրքերի ընդերքում, այդ է պատճառը, որ նրանց գեղարվեստական մտածողության մեջ ձևավորվում էր «հոգեբանական բարոյագիտություն», որը և թելադրում էր հատուկ ուշադրություն մարդկային անհատի նկատմամբ։ Ըստ սուֆիզմի գաղափարախոսության՝ «Տիեզերքը հայելի է, որտեղ Աստված հիմնում է իրենով, և ամենակատարյալ հայելին մարդն չ»<sup>151</sup>։ Գուցե այստեղից է գալիս Նարեկացու և սուփի բանաստեղծների անտրոպոցենտրիզմի հիմքը, որը նրանց պոեզիային հաղորդում է Վերածննդի շրջանին մերձեցող, բայց ոչ նույնացող հումանիզմ։ Այստեղ մենք համամիտ ենք Ա. Ղազինյանի այն դրույթին, թե Նարեկացին միջնադարյան բանաստեղծ է, և նրա գեղարվեստական մեթոդի հիմքում ընկած է միջնադարյան պատկերացումը երկու աշխարհների՝ երկնայինի և երկրայինի մասին<sup>152</sup>։

Նարեկացու դրամատիզմը, նրա պոեզիայում հատկապես ողբի երեռյթը միստիկական սիրո տեխնիկական միջոցներից մեկն է և ոչ թե նրա կյանքի անընդմեջ ողբերգական վիճակի արդյունք կամ եկեղեցու կողմից հալածանքի հետեւնք։ Դա ակներև է նրա պայծառ, լուսավոր և շարժուն տաղերի ոգուց։

Քրիստոնեական միստիցիզմը և սուփիզմը որպես գաղափարախոսություն ձևավորվել են սեփական պետական կրոնների Սուրբ գրքերի հողի վրա, ընդգրկել երկարատև պատմական ժա-

մանակաշրջան, կրել բազմաթիվ էական փոփոխություններ, և այդ է պատճառը, որ այդ կրոնափիլիսոփայական ուսմունքները խորապես մուտք են գործել կյանքի տարբեր ոլորտներ և, հատկապես, գրականություն։

Քրիստոնեական միստիցիզմը և սուփիզմը որոշում էին քնարերգության բովանդակությունը, ինչպես նաև ձևավորում նրա պոետիկան, որի առաջին առանձնահատկությունը սիմվոլն է՝ այլաբանությունը։ Ի՞նչ էր նշանակում այդ այլաբանությունը, և ի՞նչ չափանիշներ էին տարբերակում այն։ Հայտնի է, որ Ռուդարքին ոչ մի միստիկական ուսմունքի չի հետևել, աշխարհիկ բանաստեղծ է, և նրա փիլիսոփայական խորհրդածությունները պատվում են կյանքի հարափոփոխ անցողիկության խնդրի շրջանակում։

Սիրտ, սա այգի չէ, պտուղ մի փնտրիր, գտնել չես կարող,  
Ուունուտ է սա, որ չի ծանրանում բերքով ու բարով,  
Երկու դուռ ունի, իսկ այգեպանը հսկում է վերից,  
Սիրտ իմ, հող դարձիր ու քամու նման անցիր աշխարհով<sup>153</sup>։

Կյանքն անպտուղ այգի է՝ երկու դարպասով. մեկով մտնում ես ապրելու տենչով, հապաղում, մյուսով՝ հեռանում հողմի նման։ Բանաստեղծությունն ունի յուրահատուկ կառուցվածք. երկու գործող անձ՝ քնարական հերոս-ճակատագիր, երկու դուռ՝ կյանք-մահ, հին հունական և արևելյան միջնադարյան փիլիսոփայության չորս առաջնային տարրերից զույգը՝ հող և հողմ։

#### Կամ՝

Զեի արել դեռ ոչ մի քայլ քո հանդիպման ճանապարհին,  
Զեր ըմբոշնել իմ սիրտը դեռ քո շորտերի լույսն ու բարին,  
Երբ լսեցի հանկարծակի ես հրաման մի երկնային.  
-Խմիր գինիդ բաժանումի, ու թող անուշ լինի գինին<sup>154</sup>։

Սա նույնպես քնարական խորհրդածություն է, որի բանա-

150 Տե՛ս L. Massignon, Առյուն տնելում։

151 Տե՛ս Գ. Յ. Փոն Գրոնեբայմ, Կլասիկական Իսլամ, Մ., 1989, стр. 181։

152 Ա. Կազինյան, Ավորեֆերատ, стр. 19։

153 Ռուդարքի, էջ 76։

154 Ռուդարքի, էջ 75։

ստեղծական հենքը հանդիպում-բաժանում հակասությունն է, կապող օղակը՝ ճանապարհը, որ խորհրդանշում է կյանքը: Այս սկզբում է ժխտական երանգով՝ «չէի արել», «չէի ըմբռչնել», ինչը մեկ անգամ ևս ընդգծում է ուռդաքիական արդեն ծանօթ հոռետեսությունն ու ճակատագրապաշտությունը: Այս բանաստեղծությունները գուցեց թափի պահի և տրամադրության արտահայտություններ են և չունեն այլ քող: Սակայն հենց նույն այս պատկերները՝ սիրուհի, հանդիպում-բաժանում, գինի, ճանապարհ և այլն, սուֆիական-միստիկական պոեզիայում ստանում են բոլորովին այլ երանգ: Բացի սովորական, մեզ հայտնի իմաստից, դրանք արտահայտում են նաև այլ իմաստներ, կրում գաղափարական այլ ծանրություն և դառնում կող: Օրինակ «Նարեկացու գեղարվեստական մտածողության համակարգում խորհրդանշային ամենացայտուն տարրը թերեւս թվերն են՝ նրանց տրված այլաբանական իմաստներով և խորհրդավոր կիրառումով<sup>155</sup>:

Այսինքն, տեղի է ունենում վերաիմաստավորում, երբ սովորական դարձած պատկերները բարձրանում են փիլիսոփայական կատեգորիաների մակարդակի:

Ահավասիկ թարբա թահեր Օրիանի այս քառյակը.

Թե որ սիրու սիրուիի է, հապա ո՞րն է սիրուիին,  
Թե սիրուիին սիրու է, հապա էլ ի՞նչ անուն տանք սրտին,  
Սիրտ-սիրուիի խառնվել են, ձուլվել հոգուս խորքերուն,  
Սիրտս որ՞ն է, սերս՝ որը, ինչպե՞ս պարզեմ վերստին<sup>156</sup>:

Եթե սիրուհին Աստվածն է, սիրտը՝ աստծո նկատմամբ սիրո հայելին, որը նրան հասնելու կատարելագործման ճանապարհին մաքրվում է և փայլում, ապա վերջին բեյթը նեռալատոնական այն դրույթի գեղարվեստական արտահայտությունն է, որը ագդարարում է ամենայն նյութականի միացումն և միաձուլումը Համաշխարհային Ոգուն: Երբ սուփի շեյխին հարցնում են, թե

<sup>155</sup> Տե՛ս Պ. Մ. Խաչատրյան, Նարեկի միջնադարյան լուծմունքը, Երևան, 1990, Էջ 153:

<sup>156</sup> «Մարզարտաշար», Էջ 105:

ո՞վ է իսկական մորեղը,<sup>157</sup> նա պատասխանում է: «Նա, ով խոսքն իր սրտից է ասում, այսինքն՝ ասում է այն, ինչ ունի իր սրտի մեջ»<sup>158</sup>: Հնավանդ ոճով ձևակերպելու դեպքում այս միտքը ըստ էության համարժեք է Նարեկացու «Ի խորոց սրտից խաւաք ընդ Աստուծոյ» արտահայտությանը, ինչով սկզբում է նրա հանապագօրյա խոսակցությունն աստծո հետ: Միստիկների համար սիրտը այն տեղն է, որը արտացոլում է աստվածային գեղեցկությունը, և որով նրանք հայում են աստծուն: «Միստիկական խորհրդապաշտության մեջ սիրտը հանդես է գալիս միաժամանակ և որպես աստվածայինի շտեմարան, և որպես միստիկական ճանաչողության յուրահատուկ օրգան...: սիրտը նման է հայելու, որի մեջ արտացոլվում է աստվածային լույսը, բայց տեսնելու համար Աստծո պատկերը, այն հարկավոր է համապատասխան ձևով փայլեցնել: Մարդու բոլոր ջանքերը գործադրված են ճշմարտության ճանապարհի որոնմանը, ուղղված հենց այդ հայելին փայլեցնելուն, այսինքն բարոյական կատարելագործման»<sup>159</sup>:

Էքստազի պահին արտասանած «Ես աստված եմ»-ի հեղինակի ողբերգական վախճանն էր արդյոք պատճառը, ուղղափառ կրոնի կողմից սկզբած հետապնդումները, թե՝ այդ բոլորին մի գաղտնի, առեղծվածային բնույթը տալու և հետևողների պակելի մեծ քանակ ապահովելու համար էր այլաբանությունը գրվել սովորական պատկերների մեջ, վստահորեն չենք կարող ասել, բայց

<sup>157</sup> Մորեղը սուփիզմում հետևորդ-աշակերտն է, որի հոգնոր կատարելագործման մեջ երբեմն պաշտամունքի համոն տեղ է հատկացվում ուսուցչի նկանին: Այդ պարտականությունը սովորաբար իրենց վրա էին վերցնում տիտղոսափոր շեյխերն ու պատկառելի այլերը, որոնք կոչվում էին մորշեն: Սուփիի առաջին քայլերը սկսվում էին ուսուցչի որոնումից: Ուսուցչի Ակատմամբ պաշտամունքի մի օրինակ հայտնի է Զալալ-ադ-դին Ռումիի կյանքից: Այդ պաշտամունքը բանատեղին ոգեշնչեց համաշխարհային Ռումանիատական գրականությունը մասմարենու միաժկեմական «Մասմավի» պունմով և հազարավոր հազարներ պարունակող դիվանով, որը կորու է իր ուսուցչի Շամս-է Թաքրիզի (Թաքրիզի արև) անունը:

<sup>158</sup> Հյու-ալ-Յուլը, Խնձուուպահն աշխա Աբո-լ-Խասան Խարական (լուն՝ Ե. Է. Բերտելս, Աշվ. աշխ. Էջ 238):

<sup>159</sup> Մ. Տ. Ստեփանյանց, Փիլոսոփական ասպեկտներ կյանքանու ու բարյակեր պարունակող դիվանով, որը կորու է իր ուսուցչի Շամս-է Թաքրիզի (Թաքրիզի արև) անունը:

փաստն այն է, որ սուֆիզմի տեսաբանների և պոետների առջև իրականում դրված էին այլ խնդիրներ և նպատակներ: Սուֆիական պոեզիան պետք է ունենար իր տարրերիչ տերմինարանությունը և խորհրդանշների համակարգը, որը, սակայն, պետք է լիներ սովորական և ոչնչով չմատներ այդ սովորականի տակ թաքնված, երկրայինին հակադիր իրենց գաղափարները: Սրանով է բացատրվում այլաբանության հզոր հոսքը, որ մուտք գործեց արվեստ, հատկապես՝ քնարերգություն:

Արթուր Արքերին թվարկում է պատերների այն հիմնական շարքը, որոնք միստիկական բանաստեղծության մեջ տերմինի ուժ են ստանում. դեմք, խոպոպ, վիճակ, շուրթ, գինի, մատովակ, գավ, կուժ, ծով, գինետուն, կուռք:<sup>160</sup>

Այսպիսով, չխախտելով բանաստեղծական ավանդական պատերների համակարգը և նրանց ժանրային ձևական առանձնահատկությունները, միստիկները պոեզիա ներարկեցին հզոր ինտելեկտուալ, կրոնափիլիսոփայկան բովանդակություն: Սուֆիզմի գաղափարախոսության հուժկու գործիք գարձավ, օրինակ, քառյակը: Սուփիները, որոնք նաև ունեն, դերվիչ անվանումն ունեին, թափառում էին միջնադարյան արևելքի քաղաք-ներում և ծայրամասերում և մատչելի ձևով տարածում իրենց գաղափարները: Տարողունակ, ճկուն, մեղեդային այդ ձևը, որը առավելապես հարում էր ուամկականին և Ռուդաքիի շնորհիվ արքունիքում տեղ էր զբաղեցրել պաշտոնական ժանրային ձևերի համակարգում, շուտով հարմարվեց իր նոր գործառույթին և մեծ ժողովրդականություն ստացավ:

Սուֆիական բանաստեղծությունը (որին հետագայում ծառայեցին գոյություն ունեցող բոլոր ժանրային ձևերը) ուներ փիլիսոփայկան երանգ, սիմվոլիկ լեզու, պարզ և անպաճույն ոճ:

160 A. Arberry, Sufism, London, p. 113-14. Տե՛ս նաև՝ E. Z. Bertero, Աշվ. աշխ. էջ 110, տե՛ս նաև Սայիդ Զաֆար Սաշադի, Փարհանգ-է լողալ վա Էսթելա-հաթ-է էրֆանի, Թեհրան:

Քյամալ-աղ-Դին էսֆահանի.

Հոգիս վեր է թոշում՝ այրվող մոմի նման,  
Ապա Վար իշնում՝ հալվող մոմի նման,  
Թե ձուլվել ես ուզում, ոնց թիթեռը մոմին,  
Արի, քեզ եմ տենչում մարվող մոմի նման<sup>161</sup>:

Ֆիզիկական գոյությունից դուրս գալը՝ մահը, երջանկություն է, որի ձևերից մեկն այրվելն է, էքստազային միացման պահը: Այս է նշանակում մոմի և ցայգաթիթեռի սիրախաղի շարքը պարսկական պոեզիայում<sup>162</sup>: Դրանք պետք է մեկնարանել որպես «Ես-ի», անհատականության ոչնչացում, բոլոր միստիկական հավատների համար բնորոշ Աստծո հետ իրացիոնալ շվման սկիզբ: Ցայգաթիթեռը այրվում է մոմի կրակում, ձուլվում նրան, ապրում էքստազի պահ: Ահա այսպես, սովորական սիրային պատերների համակարգը փոխակերպվում էր, ստանում փիլիսոփայական հասկացությունների բնույթ, որտեղ սիրուհին աստվածային լույսն էր, գինին նրա սիրով արքենալու միջոց, սիրուհու դեմքը աստվածային լույսի ատրիբուտներից էր, իսկ խոպոպները՝ այդ ատրիբուտների փոփոխվող արտահայտությունը են:

Ամեններին պարտադիր չէր, որ բոլոր բանաստեղծները կիսեին այդ տարածված և մողայիկ գաղափարախոսության իմացաբա-

161 «Մարգարտաշար», էջ 152:

162 Այս շարքը լրացնում են նաև կաթիլ-ծով, սոխակ-վարդ և այլ թինար պատկերներ: Վերջինս արտացոլում է այդ շրջանում արդեն կաղապար դարձած Բնագույն ավանդագորույցը Վարդի և սոխակի դժբախտ սիրո մասին: «Կարմիր Վարդը աստվածային լույսի արտացոլում է» (տե՛ս Ernst W. Carl, Ruzbihan Baqli. Mysticism and the Rhetoric of Sainthood in Persian Sufism, Curzon Press, 1996, p. 66). Օրինակ կարող է ծառայել նաև Խաղանի հոլով-արեգակ պատկերը, որը կարելի է մեկնարանել սուֆիզմի ոգով: Իրականում Խաղանը չի կիսել այդ գաղափարները և սուփի չի եղել:

Ստիպված է արեգակը խեղճ հյուլեին գնում այցի,

Ինքը, հյուլեն, ինչպես գնա-կայրվի նրա հրդեներում:

Ալստեղ արեգակը խորհրդանշում է սիրուհուն, հյուլեն՝ քնարական հերոսին: Տե՛ս «Մարգարտաշար», էջ 132:

Նական տեսակետներն ու դրույթները: Շատերը ժամանակավորապես տուրք են տվել դրան կամ ուղղակի նմանակել: Օրինակ, հայտնի է, որ թե՛ Կոստանդին Երզնկացին և թե՛ Հովհաննես Թղկուրանցին միստիկներ չեն եղել, սակայն նրանց պոեզիայում ևս կան հատուկ կաղապարված ձևեր, որոնք միստիկական երանգ ունեն:

Կոստանդին Երզնկացի.

Այսօր հոգովս ուրախ եմ և ի մեծ մուրատ հասայ,  
Որ ես առանց շրբունք՝ կու խըմեմ յայն գինուն շիշայ,  
Սարխօշ եմ յան սիրուն և միտքս ի հօն՝ լուր ինք լինալ.<sup>163</sup>

Կարծում ենք, «գինի խմել առանց շուրթի» արտահայտությունը զուտ միստիկական բնույթ ունի:

Աչա Ձալալ-աղ-Դին Ռումիի քառյակներից մեկը.

Ես արքած եմ, բայց դա կարմիր գինին չե,  
Իմ մեջ ուրիշ արքեցում է, գինին չե,  
Դու եկել ես, որ իմ գինին ցրիվ տաս,  
Բայց հոգուս մեջ քո իմացած գինին չե<sup>164</sup>:

Հովհաննես Թղկուրանցի.

Զես ըգթիթեղն ի մոմն ի մօտ,  
Այրումն եկեր եմ, չկայ ճար...<sup>165</sup>

կամ

Քան զթիթելսն ի հուրն որ է ի վառման,  
Եկայ, որ այրիմ և մոծիր դառնամ...<sup>166</sup>

Այս պատկերները հատկանշական չեն մեր պոեզիայի հա-

163 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենութի Սրապյանի, Երևան, 1962, էջ, 191: Այս օրինակի վրա մեր ուշադրությունը հրավիրել է ամերիկացի հայագետ Փիթեր Քառու:

164 «Մարգարտաշար», էջ 156:

165 Հովհաննես Թղկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 132:

166 Նույն տեղում, էջ 155:

մար, սակայն մեկ անգամ ևս հաստատում են այն տեսակետը, թե մեր բանաստեղծները ոչ միայն տեղյակ են եղել, այլև տիրապետել են հարեւան ժողովրդի արվեստի նորույթներին և ժամանակի ոգուն: Այլ է Նարեկացու պոեզիան, որը իհարկե իրական միստիցիզմի դրույթների արտացոլումն է:

Սուֆիների կողմից մշակված խորհրդանշները բանաստեղծությունը երկիմաստ մեկնարաննելու հնարավորություն են տալիս: Հեղինակի գաղափարախոսությանն անտեղյակ ընթերցողը չի տարբերում սովորական սիրային բանաստեղծությունը սուֆիականից: Պարսիկ բանասեր Մ. Մորթազավին բանաստեղծներին բաժանում է երկու խմբի. բանաստեղծներ, որոնք ունեն իրենց գրական դպրոցը, գաղափարախոսությունն ու փիլիսոփայությունը, և ուղղակի բանաստեղծներ<sup>167</sup>: Մենք այսպես ենք հասկանում այդ տարբերակումը. բանաստեղծներ, որոնց կենսագրությունից հայտնի է, որ կրոնափիլիսոփայական խոհերի շրջանակում արված «հայտնությունները» և դրանց մարմնավորումը պոեզիայում չեն համատեղում գիտական որոնումների, սեփական փիլիսոփայական երկերի ստեղծման հետ:

Նարեկացին չի թողել իր կրոնափիլիսոփայական հայացքների տեսական շարադրանքը, այլ առանձին մտքեր ու դատողություններ է արտահայտել, որը մենք դիտում ենք որպես «քերթողական դատողություն<sup>168</sup>»: Նրա ողջ փիլիսոփայությունը կրոնական զգացմունքի և դրան ուղեկցող ատրիբուտների մեջ է<sup>169</sup>:

167 Տե՛ս Մանուչեր Մորթազավի, Հաֆեզենասի, դիբաշն, Թեհրան: Մեզ համար ընդունելի չեն Մորթազավի սույն տարբերակման շափանիշները: Ֆիրուզին և Սաադիին նա տեղ է տվել երկրորդ խմբում, իսկ, Օմար Խայմին չի հաջու ընթիանդապես:

168 Դավիթ Անհալթը դատողությունները հասաւում է հինգ տեսակի. ապացուական, դիալեկտիկական, ճարտասանական, սովորական և քերթողական (տե՛ս Հ. Զ. Ալիքսյան, Դավիթ Անհալթի գեղագիտական հայացքները, «Դավիթ Անհալթ», Երևան, 1980):

169 Եթե Նարեկացին, Ձալալ-աղ-Դին Ռումին, Սանային և ուրիշները՝ որպես ժամանակի լուսավորյալ այրեր, տիրապետում էին կրոնափիլիսոփայական ուսմունքների տեսական դրույթներին, ապա նրանց նետուրողների մեծ մասը

Հայոց միջնադարյան պաշտոնական գրականության մեջ առնապահագիմական երևոյթներից մեկը եղել և մնում է Նարեկացով սկիզբ առած անտրոպոցենտրիզմը: Թվում է՝ հակասություն կա միտտիկի կողմից սեփական «Ես-ը» մերժելու, ոչնչացնելու և վերը նշված գաղափարի միջև, սակայն միայն առաջին հայացքից: «Ես» մեղավոր պատյանը մեռնում էր, իսկական և ճշմարիտը՝ վերականգնվում: Հայտնի է, որ այդ աստվածային ես-ին հասնելու համար հարկավոր էր ճանաչել իրեն: Ընդհանրապես ինքնաճանաչման գաղափարը միշտ էլ եղել է հասարակական, կրոնական, գեղագիտական սրբածող մտքի ուշադրության կենտրոնում: Դեռևս անտիկ շրջանից էր գալիս «Ճանաչիր ինք քեզ» գաղափարը: Դորանի հադիսը ազդարարում է. «Ով ճանաչում է ինքն իրեն, նա ճանաչում է իր աստծուն»<sup>170</sup>:

Նարեկացի.

Որ ոչ իսկ ճանեայ զիս երբէք գիտել,

Թէ յո՞վ եւ յո՞յր պատկեր եւ վասն ո՞յր գոյացալ:

Խայամ.

Ես չգիտեմ, նա, ով ինձ ստեղծեց,

Դրախտի ժողովրդից արարեց, թե՞ դժոխքի<sup>172</sup>:

Սուփիները ազդարարում էին.

1. Ճանաչիր ինք քեզ քանզի աստված քեզ ճանաչում է:

2. Եղեք միայն Դու և նա:

3. Կա միայն նա, Դու չկաս<sup>173</sup>:

Հովհաննես Երգնկացու իմաստասիրական մի աշխատության մեջ կարդում ենք, որ մարդու մեծագույն իմաստությունը

միայն կրոնական մոլուադներ էին. որոնցից շատերի համար կարուր էր այդ ամենի արտաքին, ծիսական կողմը:

170 "Աֆակ և անֆոս". Պять философских трактатов (критич. текст, указатели, введение и изучение памятника А. Е. Бертельса, М., 1970, стр. 16).

171 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան Խ. (ա):

172 Տե՛ս Սահեղ-է Հեղալաթ, Թարամնիա-լն Խայամ, Թեհրան, 1339, 16:

173 Տե՛ս Է. Յ. Բերտելս, Սуֆիզմ և սүֆիյական լիտերատուրա, стр. 259:

իրեն ճանաչելն է, ինչը հնարավոր է ինն ձևով: «Առաջին՝ հայելի կերպ մարմնոյն և որ և ի նմայ: Երկրորդ՝ հայելի ի կերպ հոգոյն և ի գործն: Երրորդ՝ յերկուցն միութիւն...»<sup>174</sup> և այլն:

Տեսնենք, թե Դու և նա մոդելն ինչպես էր իրականանում սուփիական պոեզիայում:

Զալալ-աղ-Դին Ռումի:

Երանելի էր այն պահը, երբ նստած էինք օթյակում՝

Ես ու Դու,

Երկու դեմք էինք, երկու պատկեր, բայց հոգով մեկ՝

Ես ու Դու:

Այգու բարը ու հավքերի շունչը (մեզ) հավերժություն էր  
բերում

Այն պահին, երբ մտանք պարտեզ՝ Ես ու Դու:

Աստղերն էին նայում մեզ երկնքից,

Մենք լուսին էինք նրանց աշքում՝ Ես ու Դու:

Ես ու Դու, որ առանց Ես-ի առանց Դու-ի,

Ճուղացինք մենք խանդավառ

Խառնաշփոթ առօրյայից ազատ, անդորր... Ես ու Դու:

Բայց ո՞վ զարմանք, երբ Ես ու Դու միասին էիք այս տեղում,

Այս պահին Ես իրարում եմ, Խորասանում՝ Դու...

Ես ու Դու<sup>175</sup>:

Այս զագալը, որ թվում է, թե սիրային քնարերգության դասական նմուշ է, իրականում կրոնափիլիսոփայական հենք ունի: Արդեն նկատել ենք, որ, երջանիկ սերը գրեթե հազվագեց երեսութ էր 10-11 դդ. պարսից պոեզիայում: Մինչդեռ կարելի է եղրահանգել, որ սուփիզմի հետ պոեզիա մուտք գործեց երջանիկ և փոխադարձ սիրո գաղափարը:

Հենց առաջին բեյթի (մաթլա) մեջ ակներև է բանաստեղծու-

174 Ա. Արևշատյան, Հովհաննես Երգնկացու իմաստասիրական անհայտ աշխատյունը, Բանքեր Մատեան ողբերգութեան, Երևան, 4, 1958, էջ 307:

175 Ռումի Զալալ-աղ-Դին, Դիվան-է քամել-է Շամս-է Թաքրիզի, Թեհրան, 1371, ջելդ-է, ս. 353.

թյան մետաֆիզիկական հիմքը. մասնիկը միացել է ամբողջին և միասնականորեն հավերժացել: Աստղերը, լուսինը պարզ պայմանականություններ են, որ մի կողմից ապահովում են դագալի սիրային միկրոմիջավայրը, մյուս կողմից, որպես սուֆիական տերմիններ, ընդգծում նյութականի և հավերժականի հարաբերությունը: Դրանք միաժամանակ խորհրդանշում են երեկո, գիշեր՝ նույնպես կապված սուֆիական ծիսականության հետ. Հոգեվարժությունները, լինեին առանձին թե խմբակային, ինչպես նաև շփումը և միաձուլումը աստծո հետ սովորաբար իրականանում էին գիշերները: Ղազալի 4-րդ բեյթը սուֆիզմի հիմնական դոկտրինայի բանաստեղծական արտահայտությունն է: Զգան սուրբյեկտներ, կա Միասնություն: Անդորրը, Լոռությունը նույնպես կրոնափիլիսոփիայական ֆենոմեններ են: Ըստ Պլոտինի տեսության՝ դրանք միստիկական ճանաչողության գագաթն են. Հարկավոր չէ փնտրել աստվածային լույսը, այլ պետք է բացարձակ հանգստության մեջ սպասել նրա երևալուն<sup>176</sup>: Հուզմունքն ու խառնաշփոթ վիճակը հոգեվարժությամբ զրադշողի մշտական ուղեկիցներն են: Ճանապարհը դեպի միաձուլում անցնում է առօրյա խառնաշփոթի միջով: Զարմանքը վերջին բեյթում միայն գեղագիտական ֆենոմենն չէ և նույնպես կրում է փիլիսոփիայական տերմինի ուժ: Երբ սուրբյեկտը թողնում է իր էմպիրիկ ես-ը նրան պատում է ապշությունն ու զարմանքը: «Հենց որ հոգին զգում է այն աշխարհի ազեցությունը, անմիջապես ընկնում է հուզմունքի և արբեցման խանդագառության մեջ, լցում բուռն սիրո կրքով: Նա երկրային սիրահարի պես, որ սովորաբար ջանում է սիրո օբյեկտին նմանվելով առավել գեղեցիկ և առավել շնորհալի դառնալ, ձգտում է նմանվել բարձրյալին<sup>177</sup>»:

Վերջին բեյթն ունի մեթոդաբանական խորք և ուսուցողական նշանակություն: Կատարյալ դառնալու, միաձուլվելու համար չկան տարածություններ: Նա հասանելի է բոլորին և ամե-

նուր: Այդ էր սուֆիզմում դեմոկրատականը և հումանիստականը:

Իհարկե, միջնադարում Ես-ի, անհատականության առանձնացումը ընդհանուրից ընդունելի չէր, և չէր կարող լինել, իսկ սուֆիզմում Ես-ը ոչ միայն առանձնահատուկ դեր էր ստանում, այլ նաև հավերժանում:

Վերը նշված «Դու և Նա» հարաբերության ձևերից մեկը աղոթք-ներբողն է:

Ահա թե դա ինչպես է իրականացնում 11-րդ դարի պարսից սուֆի բանաստեղծ Սանային<sup>178</sup>.

Տե՛ր, քեզ եմ փառաբանում, քանզի Դու անբախի ու բարձրյալ ես,

Չեմ գնա Ես այլ ճամփով, քանզի Դու իմ ուղեցույցն ես:  
Բոլորս քեզ ենք փնտրում, իմաստությունն որոնում,  
Բոլորս քո միաստվածությունն ենք հեգում,  
ո՞վ միացման արժանիդ:

Դու իմաստուն ես, Դու մեծ ես, Դու գթառատ ես,

Դու արդարադատ ես:

Դու առաքինության կերպար ես,

Դու փառաբանության արժանի ես:

Անմասը տանջանքին ու այրումին, ցավին ու կարիքին,  
Անմասը անին ու հույսին, լավին ու վատին, անկարող է  
Քեզ փառաբանել, քանզի Դու չես տեղափորկում ոչ մի  
հասկացության մեջ,

Անկարող է նմանդ գտնել,

քանզի Դու երևակայությունից դուրս ես,

178 Աբրու-Աբաղդ-աղ-Դիմ էքն Աղամ Սանային ծնվել է Ղազախու (Ծերկային Աֆղանստանի տարածք): Հրաժարվել է Բահրամ շահի պալատում ծառայելուց, և միայն նրա հժգործությունը մեղմելու համար՝ նրան է նվիրել «Հայուղայալ հաղայել»: «Ծշմարտությամբ պարտեզ» սուֆիական-միահիկական պոեմը: Մեղադայնությամբ և պատկերների պարզությամբ ժողովողի ողուն մոտ են նրա քայլակներն ու դագալակները (տե՛ս նաև «Մարգարտաշար», էջ 86-97):

Ամենահզորն ես, ամենագեղեցիկն ես, ամենախմաստունն ես, իսկությունն ես,  
Ամենալուսավորն ես, առաջնորդն ես, ամենագթառատն ու ողորմածն ես:

Իմ շուրթերն ու բերանը, ողջ քո փառաքանությունն են  
անում,

Գուցե դժոխքի կրակներից փրկություն լինի<sup>179</sup>:

Նարեկացի.

Տեր իմ, Տե՛ր պարգևատու, ինքնարուն բարի,  
Բոլորին տիրող հավասարապես, միայն արարիչ  
դու ամեն ինչի.

Փառավորյալ, անքնին, ամեղ, ամարկու, սոսկալի, հզոր,  
Անպարագրելի, անմերձնալի, անըմբնելի, անհմանալի,  
Անճառելի, անտեսանելի, անզնելի, անշոշափելի,  
անորոնելի,

Անսկիզբ և անժամանակ, անշամանդադ գիտություն...<sup>180</sup>  
Կամ'

Դու մեր փրկության պայմանդ միակ.

Աստված բոլորի, անճառ մեծություն,  
Անբովանդակելի բնություն, անքննելի իսկություն,  
Հզոր գորություն, կարող բարերարության,

անպակաս լրություն...<sup>181</sup>

Պոետիկայի ընդհանրություններն ակնհայտ են, մեկնաբանություններն՝ ավելորդ:

Նարեկացու պոետիկայում մենք աշխարհայեցողական երեք  
շերտ ենք զանազանում. աստվածային, կոնկրետ-հեղինակային և  
գեղագիտական: Առաջինը նրա արժեքների համակարգի չափա-

179 «Աղոթքի» պարսկերեն տեքստը, որից մեմբ կատարել ենք սույն տողացի թարգմանությունը, մեզ տրամադրեց պրոֆեսոր Հ. Փափազյանը:

180 Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Գ (ա):

181 Նույն տեղում Բ (բ):

նիշը հանդիսացող աստվածային կատարելությունն է, որի միջոցով նա ձևավորում է իրականության իր արստրակտ մոդելը: Վերջինս չի համապատասխանում իրականությանը, և հեղինակը արստրակտից անցնում է կոնկրետ սոցիալ-պատմականին, որտեղից էլ բխում է արտաքին-ներքին հակասությունը, ինչպես նաև՝ Նարեկացի-աստված, Նարեկացի-իրականություն և այլ հակադրությունները: Եթե առաջինի՝ աստվածային ոլորտում նա միայն մասնիկ է, որը միշտ ամբողջին է ձգտում, ապա երկրորդի ոլորտում նա հանդես է գալիս որպես գործող անհատ: Սուփիների բարոյագիտական արժեքների համակարգում բողոքն էլ աստծոնկատմամբ սիրո արտահայտություն էր, որովհետև այդ համակարգը չէր արգելում այս աշխարհի քննադատությունը:

Երրորդ՝ գեղագիտական շերտը, Նարեկացու մատյանի միկրո և մակրո պոետիկան է՝ կառույցը՝ ենթարկված միստիցիզմի տրամաբանությանը. «Մատյանի» ամեն մի գլուխը հարաբերականորեն ինքնուրույն մի ստեղծագործություն է, որը, սակայն, ձգտում է ամբողջությանը, գրվագների իր ներքին միասնությանը: Միստիկ քնարերգակի ողջ ստեղծագործությունը իր բոլոր մակարդակներում արտացոլում է նրա կրոնափիլիսոփայական տեսությունը:

Այսպիսով.

10-13-րդ դդ. Հայ և պարսից բանաստեղծների գաղափարական հայեցակետը կրում է այդ պատմական ժամանակաշրջանի կրոնափիլիսոփայական գաղափարների ազդեցությունը:

Կրոնական հզոր հակադրություններով իրարից հեռացած երկու ժողովուրդների գրականություններն իրականում ունեն բազմաթիվ տիպարանական ընդհանրություններ, որոնք միջնադարյան աշխարհի նույնանման սոցիալ-պատմական տեղաշարժերի և օրինաչափությունների արդյունք են:

Առկա է նաև երկու ժողովուրդներին մերձեցնող հնագույն ծագումնաբանական արմատների՝ միստիցիզմի, միթրակզմի, նեռպլատոնիզմի, ինչպես նաև այլ՝ գաղափարախոսությունների գո-

յությունը, որը նախնիների ինտելեկտուալ նվաճումների յուրացման արդյունք էր:

10-12 դդ. պարսից պոեզիան զարգանում էր երկու ուղղությամբ՝ աշխարհիկ (արքունական) և հոգևոր (սուֆիական): Կար փիլիսոփայական քնարերգության մի տարատեսակ և՝ ուցիւնալիստականը, որը իր փայլուն արտահայտությունն է գտել Օմար Իտայամի քառյակներում:

10-րդ դարի պարսից աշխարհիկ պոեզիան մուտք չի գործել Հայոց բանաստեղծական արվեստ: Նրա ազդեցությունը մեր քնարերգության զարգացման վրա տեսնում ենք ավելի ուշ՝ մոտ երկու-երեք դար անց:

Հայոց քնարերգությունը զարգանում է մեկ ուղղությամբ՝ կրոնական, սակայն հենց նրա ընդերքում տեղի է ունենում երկփեղկում: Մեկը պահպանողականն է, որ գնում է ավանդական շարականների և հիմների ուղիով, մյուսը՝ ի դեմս նարեկացու՝ նոր որակի ձևավորում:

Երկու դեպքում էլ բանաստեղծները իրենց էթնիկական մշակույթի ժառանգորդներն են, շարունակում են սեփական պոեզիայի ավանդույթները՝ դտնվելով քրիստոնեական և իսլամական բարոյագիտության և գեղագիտության ոլորտում:

Հայոց պոեզիան զարգանում էր եկեղեցում, պարսից՝ արքունիքում:

Նարեկացու «Մատյանի» ընդգծված ողբերգությունը միստիկական տեխնիկական միջոց է և այս դեպքում չի արտացոլում բանաստեղծի կենսագրության իրական դրվագները:

Պարսից պոեզիան շարունակում է թե՛ ներբողագրությունը և թե՛ միստիկական-սուֆիականը: Երկու դեպքում էլ անհատը զբաղեցնում է կարեւոր տեղ: Առաջին պարագայում հերոսը սիրուհին է և մեկնասը, երկրորդում՝ Աստված և նրան ձգտող մարդկային ես-ը: Առաջին դեպքում մեկնասն է հասցվում աստվածային ոլորտ, իսկ երկրորդում՝ մարդն է աստվածանում:

Հայոց մեջ, ի դեմս նարեկացու, կայանում է փիլիսոփայական քնարերգությունը, որի ընդգծված անտորպոցենտրիզմը միջնադարյան պոեզիան որոշ եզրերով մերձեցնում է վերածննդյան գրականություններին: Նույնը վերաբերում է և պարսից պոեզիային:

Պարսից մեջ 10-12-րդ դդ. գործում են զանազան ժանրային ձևեր, որոնք չունեն ընդգծված գաղափարական կամ սոցիալական տարրերակում: Այստեղ տիրապետում է ազատ բազմազանություն: Բոլոր ձևերը ծառայում են բոլորին: Հայոց մեջ դրանք տարրերակած են, կրում են կրոնական բնույթ և ծառայում են իշխող ինստիտուտին:

Միջնադարյան մեծ գրողներին հատուկ է հակասականության ոգին: Նրանք առավել խորին են զգում ժամանակի շունչը, և նրանցից ամեն մեկին թվում է, թե իրեն է բախտ վիճակի ապրելու դարի ճգնաժամային պահը: Ճշմարտության իր որոնումներում հակասական է նաև նարեկացին. «Այսաւը՝ մաքուր հոգեկիր, եւ վաղիւ՝ մոլի խելագար...<sup>182</sup>»:

182 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ՀԱ (գ):

## ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՍՆԵՐ

Գեղեցիկ և բազմապիսի ձևեր,  
փայլուն և հաճելի գույներ՝  
ահա թե ինչ են սիրում աչքերը:

Ավգուստիանոս

Կրոնականից դեպի աշխարհիկ ընթացող հայ բանաստեղծությունը յուրօրինակ է իր զարգացման մեջ: «Գեղջուկ բանիւ» և գրաբարի սինթեզից ծնված ժողովրդական լեզուն մուտք է գործում գրականություն, դեմոկրատացնում այն, իսկ այդ լեզվի կրողները՝ միջնադարյան տաղասացները, կարծես շղարշում են իրենց աշխարհիկ ոգու դրսնորումները: Բանաստեղծները զգուշուն էին հարմարվում նոր խոսքին, հաճախ արդարանում, ուղղություն տալիս լսարանին «ի մարմին կամ ի հոգի» ընկալելու իրենց<sup>183</sup>: Ներսես Շնորհալին, որ հայոց տաղաչափության մեծ նորարար էր և արվեստում ժողովրդական լեզվի կողմնակից, կարծես արդարանում է իր եղբայրակից կուսակրոնների առջև, թե ինքը հետեւել է սիրո երգերի վայելուչ և գեղեցիկ ձևերին, այլ ոչ թե զգայական պատկերներին:

Եւ մի ի յայս ոք ախտանայ,  
թէ չափաւոր բանի է այս,  
Եւ արտաքին կարծի նըմայ.  
Որպէս և զերգն Ափրոդիտեայ<sup>184</sup>:

183 Այս խնդիրների վերլուծությանը է նվիրված Ս. Գ. Դոլուխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը հայ բնարեգության մեջ» մենագրությունը (Երևան, 1987):

Անշուշտ աշխարհիկ ինստիտուտի՝ արքունիքի բացակայությունն էր պատճառը, որ եկեղեցու հայրերը վերահսկողություն էին հաստատում հասարակական կյանքի բոլոր ոլորտների, հատկապես գրականության վրա: Մյուս կողմից՝ այն պայմանավորված էր հենց նույն հայրերի կողմից ձևավորված և ժամանակի ընթացքում ավանդությիթ ուժ ստացած ժողովրդական էթնոմշակութային և քաղաքական գիտակցությամբ<sup>185</sup>: Եվ օրինաչափ է, որ պարսից միջնադարյան գրականության համեմատությամբ, հայ գրականությունը որոշակի ուշացումով թևակոխեց աշխարհիկ սիրային քնարերգության ոլորտը<sup>186</sup>:

Այդ կարգի նմուշների բացակայությունը մինչև Կոստանդին Երզնկացին, մեզ կանգնեցնում է հետեւյալ հարցադրումների առջև:

185 Հետարքը է, օրինակ, որ Խորենացին իր «Պատմության» մեջ մի կողմից «զնամատու ե» պարսից առասպելները, կողմնորոշում է իր ընթերցողի միտքն ու չափանիշը, մյուս կողմից, ընդառաջենով Բագրատունու խնդրանցից, բարեկանորեն շարադրում է Բյուրասպ Ածդահակի և Ֆերեդոնի (Հրուդեն-Ա. Կ.) մասին: «...զի զորոց ատեմք գրան և զգործ, և այնոցիկ մանաւան, թէ լուրն զլեկիս մեր տաղտկացոցաներ՝ այսօր ծեռամբ ինով շարադրմ զայնոսիկ...» (տես Մովսես Խորենացի, Պատմութիմ Հայոց, Երևան, 1991, գիր Ա, էջ 90):

186 11-12-րդ դդ. որու գրականությունը, որը հայոց համեմատությամբ իր ետևում քաղաքակրության ոչ երկար ճանապարհ էր թողել, նույնպես չուներ սիրային քնարերգություն: Այդ աղիթով որու թետագոտողը գրում է: «Հին որսական գրականությունը ընդունում էր միայն ընտանեկան, օրինականացված սերը՝ ժմտենով և կիրք-սերը, և սքանչելի կնոշ պաշտամունքը Ըստ իս, այս երևույթի պատճառներից մենք այն է, որ որսական ուղղափառ քարտապետությունը Աստվածամոր գերուճացած պաշտամունք չի մշակել, որն Արևմուտքում զարգանում է մսսած 11-րդ դարից, ինչպես նաև չափից ավելի ուշադրության չի արժանացրել Քրիստոսի մարդկային կերպարանափոխությունը...: Որսական ուղղափառությունը չի ճանաչել Փրկչի նորք, թույլ, տառապայ մարմնի պաշտամունքը, որն Արևմուտքում առաջարձել էր «քաղցր-մեղք Հիսուսի» կերպարը, կուսանցներում առաջ բերել Քրիստոսի հանդեպ մարմնական, զգայական սիրո այնպիսի բռնկումներ, որոնք մոտ էին դիմարանական զգայականությանը. Եթե միանձնութիւնները մինչև իսկ հավաստում էին իրենց հոլիությանը Քրիստոսից (հմմտ.: Ա. Մ. Պանченկո, Հայութի պատմության մեջ մարմնական պատճենները, Երևան, 1970, էջ 108):

Ի՞նչ հիմքի վրա ստեղծվեցին Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու սիրային տաղերը, որտեղից նրանց քնարերգությունն ներմուծվեց արդեն պատրաստի «սիրային ճարտասանությունը»<sup>187</sup>:

Որո՞նք են արևելյան, մասնավորապես պարսից պոեզիայի հետ թեմաների, մոտիվների, գեղարվեստական խոսքի օդատագործման մեթոդի նույնատիպության պատճառները:

Արդյո՞ք, իսկապես, կնոջ պաշտամունքը, ինչպես եվրոպական, այնպես էլ Հայ գրականություն մուտք է գործել արաբականից, թե՞ այդ զուգահեռները կրում են զուտ պատմատիպարանական բնույթ, որոնք արդյունք են ...«տարրեր ժողովուրդների մշակույթների գարգացման փուլային-ժամանակագրական ընդհանրության և միանման հոգերանական հատկանիշների»<sup>188</sup>:

Կասկած չի հարուցում այն տեսակետը, որ Բագրատունիների և Արծրունիների արքունիքներում եղած լինեին պոետներ, երաժիշտներ, նկարիչներ։ Ավատատիրական վերնախավի շրջանում, ինչպես Հայտնի է, կային բոլոր նախադրյալները աշխարհիկ հետաքրքրությունների, այդ թվում սիրային քնարերգության՝ որպես մշակութային ֆենոմենի, և «կուրտուազ սիրո» իդեալի ստեղծման համար։ Հենց այդ նմուշների գրավոր գրականությունից դուրս մնալն է, որ Հայ գրականության հետազոտողներին հակում է 14-15-րդ դդ. աշխարհիկ սիրային պոեզիայի շատ գծեր գիտել որպես ազգեցություն, առավել ևս, երբ Հայկականը ձևավորվում է պարսկականից մոտ երեք-չորս դար հետո։

187 Մ. Արենյանը գրում է. « բանի դեռ չկը մեղել կրոնական ոգին, և Կոստանդնուպոլիսը կը մի վաճական էր, ուստի Գրիգոր Նարեկացու Ողբերգությունից և Աստվածածին Երգից անցումը Կոստանդնի սիրո Երգին կատարվել է. ըստ Երևոյթին, բնականորեն: Երևում է, որ այս բանաստեղծի սիրու Երգերի վուազդեցությունը է թողած գուսանականների մեջ նաև միա Միստիկական բանաստեղծությունը » (Մ. Արենյան, Եշվ. աշխ., էջ 389):

188 Гиль. А. Н. Робинсон, Задачи литературно-исторической типологии при изучении древнейшей русской литературы. Факторы литературной однотипности и разнотипности, "Пути изучения", стр. 20.

Քանի որ հայոց մեջ սիրային քնարերգության նմուշների հավանական գոյությունը ժողովուրդների մշակութային զարգացման պատճական օրինաչափությունից բխող հիպոթեզ է, Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու և Գրիգորիս Աղթամարցու տեղը հայ գրականության մեջ ճիշտ որոշելու, օտար գրականությունների հնարավոր ազգեցության աստիճանը չչափազանցելու համար անհրաժեշտ ենք համարում նրանց պոեզիան տեսնել իրենց շարժման մեջ՝ ազգային գրականության ավանդույթների և հարևան պարսիկ ժողովրդի հետ կապերի և զուգահեռների ետնախորքի վրա:

Ինչ վերաբերում է «ազգեցությանը», ապա այդ կապակցությամբ ուղում ենք հիշատակել «Արևմտյան-արևելյան սինթեզի» ջատագովներից մեկի՝ Գյոթեի այն միտքը, թե յուրաքանչյուր գրականության հարստացում և զարգացում հնարավոր է միմիայն ազգային սահմանափակումից հրաժարվելու և օտար մշակույթի հետ մերձեցման պայմաննարում։ Խորթացումը օտար մշակույթից անվերապահորեն տանում է դեպի գրականության աղքատացում և անկում։ Նշված երկու էլիտար գրականություններում (Եկեղեցում զարգանում էր հայ գրականությունը<sup>189</sup>, իսկ

189 Հոգևոր Բաստատովոյունները գիտության և լուսավորության կենտրոն էին: «Երգնեկան, որ վաճքերով շրջապատված էր ԺԳ-ԺՇ դարուն, փայլուն անոն մը ուներ Հայաստանի Մէջ, գիտական ճեմարան մը կներկայացներ, կարծես միզ մը ուներ միցելու Կիլիկիոյ Թեստ, որ ուստիմնական Վարդապետուն կենորոնավայրն էր: Չաս մը վարդապետներ, Ցովհաննէս, Մովսես, Գրիգոր Երգնեկացիներէց սկսեալ Կիլիկիա Կերթայի այլ աշխարհի գիտութիւնը հիբնացին աւելացնելու» (Հ. Մ. Պոտուեան, Կոստանդին Երգնեկացի, ԺԴ դարուն ժողովրդական բանաստեղծ և իր քննչուածները, Վենետիկ, Ս. Ղազար, 1905, էջ 10): Աղյափին էր պատմամշակութային պատկերը նաև հարեւան Վրաստանու: Ն. Մարգ գրում է, որ Կրոնության Կենտրոնները մենաստաններն ու վանական հպարունակն էին, և այնտեղ էր զարգանում և ծաղկում գրականությունը: Գրողները բացառապես եկեղեցու ծնունդ էին և չէր կարելի նրանցից անդրադարձ սպասել դեպի եկեղեցն արթեստը: Թերեւս նետաքրքրվեն Պատուհի երկխոսություններով, հոգու անմահության վերաբերյալ նրա դատողություններով, սակայն հունարենից թարգմանված հերոսական պատմություններով՝ երբեք (հմտ. Հ. Մարգ, Յօնիկովն և զարգացումը հայության մասնական պատմություններուն, 1899, ՀԿՀԱՊ, ստ. 226):

արքունիքում՝ պարսկականը) առկա է ընդհանրական մողելների և ճարտասանական կաղապարների մի շղթա, որի շրջանակում ստեղծագործում էր միջնադարյան բանաստեղծը: Դրանց անմիջական համեմատությունը երեան է բերում հետեւյալը:

1. Սիրո առարկան գեղեցիկ է (կրկնում է նյութական աշխարհի հատկանիշները՝ գույն, հոտ, համ, ձև, չափ ևն):

2. Այդ հատկությունները տառապանքի (հիվանդություն, մահ ևն) աղբյուր են, քանի որ սերը, որպես կանոն, անպատճան է և անհասանելի:

3. Սիրը օժտված է գերբնական հատկությամբ՝ մեռածին կյանք տալու, հիվանդին բուժելու, ինչպես նաև՝ հավատուրացության մղելու և մեծ «ավերածություններ» կատարելու:

4. Սիրահարը կամ չի հիշատակվում, կամ էլ անմիջապես վիճակի մեջ է: Նրա, ինչպես նաև սիրեցյալի կերպարը զուրկ է հոգեբանական և անհատական տարրերից:

5. Սիրեցյալը թանկ է ամենահայտնի արժեքներից (քաղաքներ, երկրամասեր, կրոն ևն):

6. Սուրբ գրքերի պատկերներն ու կերպարներ հաճախ կրում են գեղարվեստական բնույթ, չունեն կրոնական երանգ:

Ինչ վերաբերում է ձեր պոետիկային, ապա ակնհայտ է հայտադրությունը՝ ձգտումը գեպի միահանգությունը: Հիշենք Գրիգոր Մագիստրոսի կողմից մի գիշերվա ընթացքում ստեղծած «Հագարատողեանը»՝ վարպետության և հմտության այդ մեծագույն ցույցը արար բանաստեղծին:

Հայ տաղերգության ժանրում, ինչպես արդեն նշել ենք, ուշադրության արժանի է սեփական անվան հիշատակումը վերջին տողերից մեկում: Դա անկասկած պարսից «թախալոս»-ի ազդեցությունն է, ինչպես նաև անհատական «Ես-ի» սկիզբն ու հաստատումը բանաստեղծական արվեստում: Երկու պոեզիաների Համար ընդհանրական է նաև երկտողերի տրամաբանական անկախությունը և միջանցիկ սյուժեինը:

Երկու գրականություններում էլ սիրային քնարերգության ձևավորման սկզբնական շրջանում «Հերոսների» կերպարները ունեն «դիմանկարային» բնույթ: Այստեղ հարկ չկար միմյանցից ազդեցություն կրելու, որովհետեւ դա միջնադարյան գրականություններին բնորոշ երևույթ էր՝ կախված միջնադարյան մարդու գեղագիտական ընկալումներից, աշխարհի և շրջապատի «մողելավորումից» ևն: Ամեն մի նոր համեմատություն կամ խորհրդանիշ այդ դիմանկարին հաղորդում է մի նոր հատկանիշ, մի նոր բնորոշում, որը հիմնականում կատարվում է աստիճանավորման սկզբունքով՝ ավելի ու ավելի խորացնելով հատկանիշը և անընդհատ ձգտելով բազմազանության՝ նույն զուգորդությունների դաշտում: Ճիշտ է, այդ գեղարվեստական արտահայտչամիջոցները որոշակիորեն կաղապարված են, սակայն ամեն բանաստեղծ յուրօրինակ լուծում է տալիս դրանց: Բնությունը այդ պատկերների համակարգը սնող աղբյուրն է:

Պատկերագորման միջնադարյան իդեալականացման մեթոդը, ավանդույթի և գրական կանոնների ուժը, պոետի ճաշակի և գեղագիտական չափանիշների պայմանավորվածությունը սեփական սոցիալական կարգավիճակով և միջավայրով համարվում է երկու պոեզիաների միասնական-տիպարանական հիմքը: Բնորոշելով միջնադարյան պարսիկ բանաստեղծի կանոնիկ գեղարվեստական մտածողությունը և նրանց կողմից կաղապարված պատկերների երևույթը՝ պրոֆեսոր Մ.-Ն. Օսմանովը գրում է. «Ըստ պարսից գրական օրենքների՝ բանաստեղծի մոտ առավելապես գնահատում են նոր պատկերներ ստեղծելու կարողությունը, պարսկերն՝ «մասնի»: Նշենք, որ պարսկերն մասնի և պատկեր հասկացությունները իրենց բովանդակությամբ այնքան էլ չեն համապատասխանում իրար: Եվրոպական պոետիկայում պատկերն անվանում բանաստեղծական տարբեր արտահայտչամիջոցների օգտագործումը: Օրինակ, կարելի է գեղեցկուհուն նմանեցնել վարդի հետ, կեցվածքը՝ նոճու. այդ գեպքում վարդը կդառնա գեղեցկուհու համար պատկեր, նոճին՝ կեցվածքի: Մի բանաստեղծի կողմից ստեղծված պատկերը կրկնվելու դեպքում կորցնում է

յուրահատկությունը և կարող է փոխվել գրական կաղապարի:  
Պարսից պոեզիայում ամեն ինչ այլ է: Ամեն մի բանաստեղծության մեջ տասնյակ անգամներ կրկնվում են «վարդեր» և «նոճիներ», բայց դրանք կատարում են այսպիս ասած պատկերի հիմքի գեր, որը իսկական պատկերի է վերածվում «մաանիի», միայն նորանոր ոճական և բանաստեղծական միջոցների օգնությամբ, նոր սեմանտիկական կապերի հաստատմամբ»<sup>190</sup>:

Պարսից (10-12 դդ.) և Հայոց (14-16 դդ.) սիրային բանաստեղծությանը բնորոշ է սիրո օրյեկտի ներբողումը, նրա արտաքին հատկանիշների յուրահատուկ գնահատումը: Որպես կանոն երկտողերը և տները զուրկ են հետեւղական տրամարաննական կապից, այսինքն անկախ են: Ակնհայտ է պատկերների միտումնավոր բարդացում, կերպարների անշարժություն: Հոգեբանացման փորձեր չկան, եթե անգամ կան, ապա սահմանափակ պատկերների՝ տանջանքի, անքնության և այլ արդեն հայտնի արհետական գգացումների շրջանակում:

Onuphi.

Արմավենու սլացք (ունես), քաղցր շուրթեր  
ու փղոսկրե մարմին,  
Քար սիրտ, արծաթացոլ կզակ ու ոսկե գռտի.  
Համ սլացիկ նոճի ես, համ էլ Քաշդարի կուոք,  
Դու գերազանցում ես հորիներին, ո՞վ գեղեցիկն... մորճ<sup>191</sup>:

190 Հմտ. Մ.-Խ. Օ. Օսմանօվ, Պրоблемы и поиски в кн. "Омар Хайям", М., 1972, стр. 165: Ի դեպ.՝ «Ասահի» տերմինը տարբեր մասնագետների համար միանշանակ չէ: Ֆոն Գրյունեբաումը այն մեկնարանում է որպես իդեալ. մոտիվ (մե՛ս Փոն Գրյունեբաում, Основные черты арабо-мусульманской культуры, М., 1981, стр. 131 и др.), Ն. Զալիխովան ավելի անհնարդական է և կցույն է՝ մոտիվ. Եշակովուրուն, թեմա, բովանդակություն (մե՛ս Ռաշիդ-ադ Դին Վատվատ, Սադե, М., 1985., стр. 39, 199-203, 126 и др.). Ա. Կուլիկեհը այն անվանում է մոտիվ (Ա. Բ. Կուդելին, Средневековая арабская поэтика, М., 1983, стр. 70 и др.):

191 Օնորի, Դիկան, էջ 197:

191 ՕԾՈՐԻ. ԴԻՎԱՆ. Էջ 197:

Гендерные

Հոգը կայ է և նախարար իսրայել՝ այս

Աղետաբեր ջրապատճեն՝ կամու և աշբեռ՝ ինքընի.<sup>192</sup>

Հովհաննես Թյկուրանդի.

Աշերն է ծով, ունըն թուիս ամպ,  
Մազն է դեղձան ոսկի թելէն,  
Ինքըն ճռճար, զետ զ ունի ճնդ.  
Հրրով այրէր զերկիր ամէց 193.

440

Աշեր ունիք գէտ ըգծովէր,  
Ուներ ունիք՝ քան զթուխ ամպէր,  
Ծողայր կլափն ու լար շրթունք,  
Ու մարգարտէշար ատամունք<sup>194</sup>.

Ounph.

Գեղեցկուիի յար ունեմ՝ շաքարաշուրթ ու մարմարակուրծք,  
Մարմարը կրծքից է ծնվում, իսկ շաքարը շուրթից ծորում,  
Համպար է հանգույցը խոպառի և նարգիզներ՝ աշքերի տեղ,  
Դաշույն է ծալրը թերթիչների և բոյր՝ լեռնային ցոճի<sup>195</sup>.

### Կոստանդին Երգնեացի,

Ծաքար ու շիրիմ շրթունք,  
Երես՝ լի գունով ծաղկունք,  
Թուխ աչեր ու կամար ունք.  
Ար-եկ աշերուս իմ լուս 196.

192 Որոշակի. Դիվան. էջ 124

193 Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 148.

194 Նույն տեղում, էջ 142:

195 ՕԾՈՒՐԻ, ԴԻՎԱՆ, Էջ 183:

196 Կոստանդին Երգմկացի, Տաղեր, էջ 161:

## Գրիգորիս Աղթամարցի.

Քո մէջքդ է բարակ քան զուոի վարոց,  
Սահիտակ ատամունք՝ մարգարտէ շարոց,  
Դու քաղցրատեսիլ և պըտու ծառոց,  
Յայդ շիրին լեզուէդ տուր երկու զըրոյց<sup>197</sup>:

Ինչպես տեսնում ենք, օրինակների այս ամբողջ շարքում բացի ներրողակրի անձից, ուրիշ ոչ մի կերպար չկա: Բանաստեղծը ստեղծագործում է մշակված խորհրդանշների, մակդիրների, փոխարերությունների համակարգում, ինչպես նաև կայուն մոտիվների շրջանակում՝ իր օժտվածության սահմաններում խորացնելով, ընդարձակելով, նորոգելով Հինք՝ ավանդականը, քանի որ Հենց նույն մոտիվի տարրեր կրկնություններն էին խրախուսվում արևելյան աշխարհում: Իրանում արքունիքը և ավատատիրական տունը իր կանոնակարգված կենսաձևով, արհեստավարժանաստեղծների ինստիտուտով զարկ էին տալիս Հենց այդ ճարտար և նրանաշակ տեխնիկային: «Նկարագրվում էր ամեն ինչ, սկսած ծաղկից և գերջացրած ոսկե գավաթով, ըստ որում հիմնական նպատակն էր փայլուն և անսպասելի համեմատություն անել, ընդգծել ուրիշների կողմից չնկատված մի նոր հատկանիշ և բնորոշում»<sup>198</sup>: Արար միջնադարյան տեսաբաններից մեկը իրեն ժամանակից բանաստեղծի մի բեյթի մասին ասել է. «Դա լավագույնն է բոլոր այդ մոտիվով ասվածների մեջ»<sup>199</sup>:

Եթե մակդիրները, համեմատություններն ու սիմվոլները դուրս բերենք պատկերավոր մտածողության համատեքստից, որը ի դեպ նյութական աշխարհի այդ ամենասովորական առարկաների վրա լրացուցիչ պարտավորություններ է դրել՝ դասավորելով

197 Գրիգորիս Աղթամարցի, Ռատումասիրություն, բնական բնագրեր և ծանրագործություններ Մայիս Ավաղբեկյանի, Երևան, 1963, էջ 209: Քանի որ, ինչպես նշեցինք, երկողերը անկախ են և տրամաբանական կապ չունեն միմյանց հետ, ուստի օրինակները առանձին տմերից ենք բերում ամրող տաղը չիշշատակելու համար:

198 Է. Զ. Բերտելս, Պերսնդская поэзия в Бухаре 10 в., стр. 9.

199 Հղումը ըստ՝ Ա. Բ. Կուդելին, նշվ. աշխ. էջ 70:

ըստ յուրահատկության և համապատասխանորեն ձևավորելով մտացածին կերպար, ապա կտեսնենք, որ դրանք ունեն մշտական հատկանիշ, որոնք հատուկ գույն ու երանգ են ստանում տվյալ համատեքստում, երբ ընթերցողին «արդեն հանձնարարված է» կոնկրետ զուգորդությունը: Օրինակ՝ նույն հակինթը փայլի և գույնի իմաստով մի տեղ համարժեք է չուրթերին, մեկ այլ պարագայում՝ հերոսի արնաշաղախ արցունքներին, մի դեպքում ուկին հրաշալի և թանկարժեք, դրական զուգորդություններ ծնող երևույթ է, մեկ այլ դեպքում՝ սիրուց տվյալողի գեղնած դեմք են:

Թեև անվերջ կրկնվում են ատամ-մարգարիտ, չուրթ-շաքար, հոնք-ամպ, աչք-ծով ևն պատկերները, սակայն Ռուդաքիից բերված օրինակը նրա վարպետության և յուրահատուկ մտածելակերպի փայլուն ապացույցն է. նա ստեղծել է նոր պատկերներ (մաանի)՝ հոնք-նավ, աչք-փոթորիկ ևն: Աչքերի համար պարսից պոեզիայում սովորական և ընդունված համեմատությունը նարգիզն է, որը քնքշանված արբածության իմաստ ուներ: Փոթորիկը ուղղակի նորարարություն էր աչքերի մոտիվում: Այս ամենը, այնուհանդերձ, չի նշանակում, թե յուրաքանչյուր անհավանական, տարիմաստ ու ֆանտաստիկ համեմատություն և այլարանություն կարող էր հաջողություն բերել բանաստեղծին, առավել ևս՝ բարձր գնահատվել ունկնդիրների կողմից:

Եթե ի նկատի ունենանք, որ արքունական բանաստեղծի գործը գիշերային խրախճանքներում և մրցույթներում իր տաղանդն ու վարպետությունը ցուցադրելն էր, նույն երեւույթի և առարկայի վերաբերյալ հանպատրաստից՝ շլված ու անսպասելի պատկեր ստեղծելն ու փայլուն միտք արտահայտելը, ապա պարզ կդառնա, թե որտեղից էր գայլս այն միապատշաճ նույնատիպությունը, որը զարմացրել ու երբեմն էլ հիսաթափեցրել է ոչ միայն եվրոպացի ուստամասիրողին, այլ Հենց իրեն՝ պարսիկ բանաստեղծին: Խաղանին Մահմուդ Ղազնավյանի «պոետների արքա» առաջին տիտղոսակրի մասին գրում է:

Գեղեցիկ սիրուիու ու բարյացակամ մեկնասի

Տաղեգուն է եղել ու ներքողագիր՝ Օնսորին.

Բացի ներքողի և դազալի ձեփից,

Չի փորձել իր տաղանդը (այլ ժանրում) Օնսորին<sup>200</sup>:

Համեմատությունը (թաշրիչ) և՛ Հայ, և՛ պարսից պոեզիայի պատկերագործության համակարգի ուղղակի ոգին է, որի մասին 13-րդ դարի պոետիկայի հայտնի գիտակ Խաչիդ-աղ-Դին Վաթվաթը գրում է. «Արժանի և լավագույն է համարվում այն համեմատությունը, որը համեմատվող առարկայի և համեմատության օրյեկտի շրջասության դեպքում պահպանում է խոսքի հստակությունն ու մտքի ճշմարտացիությունը: Ճիշտ է խոպոպի համեմատությունը գիշերվա հետ, սակայն եթե գիշերը համեմատենք խոպոպի հետ, էլի լավ կստացվի. կամ կիսալուսինը համեմատենք պայտի հետ: Եթե նժույգի պայտը համեմատենք կիսալուսինի հետ, էլի լավ կստացվի: Սակայն անձաշակ է և գովական չէ այն, ինչ արել և անում են բանաստեղծներից շատերը՝ օրյեկտը համեմատելով այն բանի հետ, ինչը գոյություն ունի (միայն իրենց) պատկերացման և երևակայության մեջ, բայց ոչ՝ իրականում: Օրինակ՝ մարմրող մոխիրը համեմատվում է մշկյա ծովի հետ, որը ուսկի ալիքներ ունի: Իրականում ոչ մշկի ծով կա, ոչ էլ ուսկի ալիքներ գոյություն ունեն: Իսկ այսօրվա մարդիկ իրենց գիտելիքների աղքատությունից է, որ խանդավառվում և ըմբոշխնում են...<sup>201</sup>»:

Եթե միջնադարյան պարսից պոետիկայի նրբություններից ելեկով քննենք Օնսորիի վերոհիշյալ բանաստեղծությունը, ապա կարել է ասել, որ այն առանձնապես չի համապատասխանում Խաչիդ Վաթվաթի գրական ճաշակին, որը Օնսորիից երկու դար

ուշ է ապրել<sup>202</sup>:

Համեմատությունը պարսից պոետիկայի տեսառթյան մեջ տարբերակված է. Ըստ Խաչիդ-աղ Դին Վաթվաթի՝ գոյություն ունեն համեմատության բազմաթիվ տեսակներ<sup>203</sup>, բացարձակ, պայմանական, գաղտնի, ինչպես նաև՝ համեմատություն գերադասության ձևով, ակնարկի ձևով, հավասարագոր ևն: Նա նշում է նաև, որ համեմատությունը կազմվում է «նման», «ինչպես», «կարծես», «ասես» և այլ բառերով: Սակայն նուրի Օսմանովը վերապահությամբ է վերաբերվում դրան. «Համեմատություն են համարվում բայց «նման», «պես» օժանդակ բառերով կազմվածներից, նաև այնպիսիները, ուր բացակայում են այն օժանդակ բառերը, որոնք պարսից պոեզիայում կոչվում են համեմատության միջոցները»: Ըստ այդմ՝ նա տարբերակում է, օրինակ՝ կակաչաղեմ «մետաֆորիկ համեմատությունը» այտերդ ինչպես կակաչ «մաքուր համեմատությունից»<sup>204</sup>:

Հայոց մեջ համեմատությունը այդքան նրբորեն չի տարբերակված: Եթե օրինակներ բերենք պարսից պոեզիայից և մեր միջնադարյան տաղերգությունից, ապա պարզ կդառնա, թե Հայ բանաստեղծների համեմատությունները որքան պարզ են, իսկ պարսիկներինը՝ որքան բարդ և զարդարանդակ:

Պայմանական համեմատություն.

Կնմանվեր լուսնին, եթե չունենայիր սև խոպոպներ,  
Կնմանվեր Արուայակին, եթե չունենայիր մշկյա խալ,

202 Նշենք նաև, որ միջնադարյան գեղագետների և տեսաբանների ճաշակն ու շափանիշները նույնանու հաստատու չեին: Ամեն դարաշրջան ուներ իր ոճը, ամեն լսարան՝ իր պահանջը: Օրինակ Մուղադի ամենահայտնի բանաստեղծությունը մեկի («Հեռու մեռվից Մոլլան գետի բույրն է գալիս») կապացությամբ Դովլաթշահ Սամարդանին (15-րդ դ.) զարմանք է հայտնում. թե ինչպես են ժամանակին սիրել ու հավանել այդպիսի անմաշկ բանաստեղծությունը (տես Դովլաթշահ Սամարդանի, Թագթարե -ալ շորա, Բոմբեյ, ս. 18-19):

203 Ռաշիդ-ադ Դին Վատվատ, Սադե, ստ. 130.

204 Հմմտ. Մ.-Հ. Օ. Օսմանօ, Տիպ, մեջ, ստ. 93: Համեմատությունը առաջարկությունը

200 Դիվան-է Խաղանի-է Շիրվանի, Թեհրան, շափ-է փանջոմ, 1374, ս. 926 (այս սութեսն Խաղանի, Դիվան):

201 Հմմտ. Ռաշիդ-ադ Դին Վատվատ, Սադե, ստ. 130:

Դեմքդ իսկապես կանվանեի արեգակ,  
Եթե արևը չունենար մայր մտնելու հատկություն՝<sup>205</sup>

Գաղտնի համեմատություն.

Եթե դու փայլն ես լուսնի և ցոլքը մոմի,  
Ասպա ինչո՞ւ եմ ես նվազում և հալվում,  
Եթե դու ես մոմը, ինչո՞ւ եմ ես այրվում,  
Եթե դու ես լուսինը, ինչո՞ւ եմ ես նվազում<sup>206</sup>.

Ճիշտ է, այս պատկերներում առկա է նաև սեփական անմխիթար փիճակի ցույցը, սակայն հիմնական իմաստը տրամաբանական զուգորդությունների միջոցով ավանդական և սովորական հատկանիշի՝ սիրություն լուսափյուռ դեմքի ընդգծումն է:

Կոստանդին Երգնկացի.

Զերդ զլուսին սուրաթ բռնոր,  
Շուրջ գերեսին մազերն ոլոր<sup>207</sup>:

Ֆառուխի Միթանի.

Այն սև մուշկը (Վարսեր), որ յարի բարձին է սփռված,  
Լուսնի (երես) զարդարանքն է ու պերճանքը  
աստղաբոյլի (դեմք)<sup>208</sup>:

Հովհաննես Թլկուրանցի.

Կըտրեր քուն յաշւերուս՝ դու ֆարահաթ ես,  
Քո սէրդ զիս մոմ արար, դու ինձ պողպատ ու քար ես<sup>209</sup>:

Խուդաքի.

Այն դարդը, որ իմն է, դարդ չէ, այլ Ղաֆ սարն է,  
Այն սիրտը, որ քոնն է, սիրտ չէ, այլ գրանիտ քար է<sup>210</sup>:

205 Աայօր, 131.

206 Դիվան-է ամիր ալ-շոարա Մուեզզի, Թեհրան, 1318, Ուրամաթ.

207 Կոստանդին Երգնկացի. Տաղեր, էջ 163:

208 Դիվան-է հարիմ-է Ֆառուխի Սիսթանի, Թեհրան, ս. 444.

209 Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր, էջ 151:

210 Ուուդաքի. Դիվան, էջ 121:

«...Միջնադարյան մշակութային կյանքի բոլոր ձևերը ոչ այլ ինչ էին, քան այն դարաշրջանի մարդկանց ընկերային կենսագործունեության ֆունկցիա, նրանց կողմից աշխարհի «մողելավորման» արդյունք<sup>211</sup>: Այսպիս, ավատատիրական հասարակարգի օրինաչափությունները ու կենսաձեւը թելադրում էին և թեմաները, և պատկերները և ոճը, ինչպես նաև նպաստում էին նույն արվեստի բնագավառում, նույն մոտիվի և թեմայի շրջանակում բազմաթիվ տարատեսակների ստեղծմանը:

Բազմազան են հայ և պարսից միջնադարյան քնարերգության ընդհանրությունները: Նրանցում առկա են ծագումնաբանականը, տիպարանականը, ինչպես նաև՝ փոխադարձ հանդիպումներից ձևակորպած սինթեզը:

Հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում: Անդամականացումը հայութեան ազգականացումը և ազգականացումը նույնական է այս ամենում:

211 А. Я. Гуревич, Категория средневековой культуры, М., 1972, стр. 15.

## ՀՈՒՅՍԻ, ԲՈՒՑՐԻ, ԳՈՒՅՆԻ, ՀԱՄԻ, ԶԱՅՆԻ, ԶԵՎԻ, ԶԱՓԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆՆԵՐԸ

Սույն աշխատության առաջին մասում որոշ չափով անդրադարձել ենք այս խնդրին և նկատել, որ Նարեկացու պոեզիայում լույսը առաջնային է, որը քրիստոնեական գաղափարախոսության և գեղագիտության արտացոլումն ենք համարում: «...Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս: Եւ եղեւ լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է...»<sup>212</sup>: Կամ «Ո՞վ է սա, որ երեւեալս է իբրև գառաւօտ, գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն...»<sup>213</sup> են:

Սակայն լավը, բարին և գեղեցիկը լույսի և պայծառության տեսքով են հանդես եկել մինչև քրիստոնեությունը, մեր հեթանոսական արվեստի նմուշներում:

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,  
Ընդ եղեգան փող բոց ելանէր,  
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկին.  
Նա հոր հեր ունէր, ապա թէ բոց ունէր մօրու,  
Եվ աշկունքն էին արեգակունք:<sup>214</sup>

Կարենոր համարելով մեր այն թեզը, թե երկու քնարերգություններում էլ լույսի ֆենոմենը զուտ տիպարանական ընդհանրություն է, մենք կփորձենք հիմնավորել այն՝ նույն տրամաբանությամբ ետ դնալով գեպի արարական և պարսկական պոեզիաները: Եթե պարսից մեջ նոր ձևագորգած իսլամական գրականությունում առաջին հերթին լույսի աղբյուր համարենք Մոհամադ մարգարեին (նուր-է Մոհամադ), ապա Դորանի համարարրառը ցույց կտա, որ լույսի գաղափարը բավականաչափ հաճախակա-

նություն ունի նաև իսլամում<sup>215</sup>:

Աստվածաշնչում լույս բառը ուղիղ ձևով կրկնվում է մոտ 220, իսկ այլ՝ մոտ 50 անգամ: Դորանում նույնպիս բազմաթիվ են լույսի գաղափարը ծնող տրամաբանական զուգորդությունները: Պարզ է, որ պարսից պոեզիայում լույսի ֆենոմենը բոլորովին էլ իսլամական քաղաքակրթության արդյունք չէ, այլ այն ունիվերսալ քաղաքակրթության, որը կայացել էր հնդիրանական, չելլենական, արաբական և այլ ժողովուրդների հոգեւոր արժեքների սինթեզից: Հայոց և պարսից պոեզիայում առաջնային այդ երեսույթը հնդիրանական պատկերացումների աղերսների արձագանքն է՝ կապված Միթրայի՝ արեկի աստվածության հետ:

Հայտնի է, որ այդ պաշտամունքը տարբեր էթնոմշակութային միջավայրերում հեշտությամբ տարափոխվում և յուրացվում էր կրոնադիցարանական գոկտորինաների կողմից: Իսկ մաշմեդական դիցաբանությունը հեթանոսական պատկերացումներին չէր համապատասխանում և աշխարհի և մարդու գոյին բոլորովին նոր մեկնաբանություն էր տալիս<sup>216</sup>: Հայտնի է նաև այն, որ Միթրայի պաշտամունքը մեծապես ազգել է քրիստոնեության վրա, որոշ առումով ձևագործ նրա գեղագիտությունը: Վերը բերված օրինակները և նույնիսկ պատահական մեջքերումները մեզ համոզում են, որ լույսի ֆենոմենը պոետիկայում առաջնային է:

Խուղաքի.

Եվ արևն է ասես վարագուրվում,

Երբ նետում ես քողու և բացում այտերդ լալ<sup>217</sup>:

Մասուդ Սաադ Սալման.

Արևն է քո դեմքը սիրուն, ես՝ նունուֆար, իմ սիրենի<sup>218</sup>...

212 ՄԱՆԵՐԸ, Ա. 2-3:

213 Երգ Երգոց, Զ. 9:

214 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, գիրք առաջին, գլուխ Լ.Ա. (լթ) (ընդգումները մերը են):

215 Concordantiae Corani arabicae, Gustavus Flügel, 1842.

216 Ալյ մասին մանրամասն տես՝ К. В. Тревер, Отражение в искусстве дуалистической концепции зороастризма, Труды отдела Востока Государственного Эрмитажа, т. 1, Л., 1939, стр. 243-254:

217 Ռուդարի, էջ 52:

Խաղանի.

Ամբողջ շաբաթ արև յարս ինձ տանջանք էր միայն քերում  
Հետո եկավ Խաղանու մոտ ու ճրանից հայցեց ներում...<sup>218</sup>

Սաադի.

Այն գիշերը, երբ կողքիս ես, լուսնի պայծառ տոն է  
ηառում...<sup>219</sup>

Հաֆեզ.

Վարդ զոր է չափվում քեզ հետ, ճրա ուժն ի՞նչէ քո դեմ,  
Երբ լուսնից է իր լույսն առնում, իսկ լուսինը՝ քեզանից<sup>220</sup>:  
Թղկուրանցի.

Ար եկ արև գարնանային,  
Ար եկ աշնան պայծառ լուսին...<sup>221</sup>

Կամ'

Տեսայ պատկերք մի գեղեցիկ,  
Չետ զարեգակն որ լոյս կու տայ...<sup>222</sup>

Կամ'

Այդ քո մատունքն է լուսեղէն  
Այլ արեգակն լույս չի տար...<sup>224</sup>

Կոստանդին երգնկացի.

Ինչ զարեգական լուսն ես,  
Զինչ լուսինկան՝ գերուս ես,  
Ի դեմս է՞ր մայր մտնես...<sup>225</sup>

218 «Մարգարտաշար», էջ 60:

219 Նոյն տեղում, էջ 132:

220 Նոյն տեղում, էջ 166:

221 Նոյն տեղում, էջ 173:

222 Հովհաննես Թղկուրանցի, Տաղեր, էջ 120:

223 Նոյն տեղում, էջ 122:

224 Նոյն տեղում, էջ 158:

Կամ'

Ասեն՝ արև ծագեցաւ ի մէջ գիշերիս,  
Երբ փայլես յանկարծակի յերկրին երես....<sup>226</sup>

Եթե նկատի ունենանք, որ կանոնը՝ որպես երկույթ, ձևավորման ավելի երկարատև պատմական ժամանակահատվածի արդյունք է քան ավանդույթը, և որ վերջինիս համակարգումից և բյուրեղացումից է այն գոյանում, ապա հայ և պարսից պոեզիաներում լույսի ֆենոմենը արդեն կանոն պետք է համարենք, որը ունիվերսալ համամարդկային ծգտում՝ հասուլ ամեն մի պատմական ժամանակաշրջանի, սակայն միշտ տեղայնացված, միշտ կոնկրետ իր ժամանակում: Այսպիսով՝ լույսի առաջնայնությունը իր մեջ ներառում է և՛ ծագումնաբանական, և՛ տիպաբանական ընդհանրությունները<sup>227</sup>:

Յուրաքանչյուր գրողի վաստակը և նորարարությունը ավելի որոշակի է գառնում նրա նախորդի և հաջորդի ստեղծագործական նվաճումների ետնախորքի վրա: Եթե պայմանականորեն անտեսենք Ներսես Շնորհալու և Գրիգոր Նարեկացու որոշ տաղերի կրոնական ոգին, ապա ընդհանուր գծերով կատանանք պարսից միջնադարյան պեղպային շատ հասուլ սիրո օբյեկտի գովերգման նույն կանոնիկ սիմեման, որտեղ ներռողակիրը (սիրուհին) զուրկ է անհատական տարրերից, կտրված կոնկրետից, մեծապես արստրահաված:

Արժեքների սանդղակում լույսի հետ հավասարապես մրցակցում են գույնի, բույրի, համի, ախորժալուր հնչյունների և այլ զգայական երկույթներ, որոնք կոնկրետանում են կամ տրամաբանական զուգորդությունների միջոցով, կամ ուղղակի: Այն, ինչը սովորական էր և ընկալելի, գործում էր «ավտոմատիզմի» օրենքով՝ գիտակցության մեջ ընդհանուր գծերով անմիջապես

225 Կոստանդին Երգնկացի, Տաղեր, էջ 161:

226 Նոյն տեղում, էջ 167:

227 Ալյո մասին տես Ա. Կողմոյան, «Երկու պոեզիա-երկու հավատամք», ՊԲՀ, 1992-1993, 2-3, էջ 190-98:

Ճեավորելով վառ, հոտավետ, ճկուն երևույթ: Այս, ինչը խախտում էր սովորականը և դուրս էր գալիս այդ համատեքստից, անմիջապես աչքի էր ընկնում և համապատասխան ուշադրության արժանանում: Զարմանալի չէ, որ պոետիկայի գիտակները մեղադրում էին Սոլզանի Սամարդանդիին «ցածր ոճի» համար, երբ նա չարչրկված արևի պատկերը համեմատում էր ճաղատ գլխի հետ, ընդգծելու համար ոչ մեկ հատկանիշ՝ գույն, ձև, փայլ: «...միջնադարյան մարդու գիտակցության համար «գեղեցկություն» «կարգավորվածություն», «ներդաշնակություն», «սլացիկություն», «փայելչություն» հասկացությունները շատ մոտ էին իրար, եթե չասենք, որ համարժեք էին»<sup>228</sup>:

Ներսես Շնորհալի:

Սիրատուն սիրամարգ սըխրալի  
Նրբափայլ ոսկեթել տարփալի  
Եռապսակ հիտագլուխ ցանկալի  
Հրեշտակ հրաշագեկ Հոյիփսիմէ<sup>229</sup>:

Նարեկացի.

Մոցն լուսափայլ կարմիր վարդով լցեալ,  
Մողին ծիրանի՝ մանուշակի հոյլը... և<sup>230</sup>:

14-16-րդ դդ. տաղերգունները իրենց նրբաճաշակ պատկերներով և ձևի կատարելությամբ չէին զիցում Սամանյան, Ղազնավյան և Սելջուկյան արքունիքի արհեստավարժ բանաստեղծներին:

Արտաքին գեղեցկության իդեալը դինամիկ երևույթ է և ամեն պատմական գարաշջանում իր երանդն ու յուրահատկությունն է ստանում: Հիշենք Արդվիսուրա Անահիդայի կերպարը Ավեստայում և Վիշապաքաղ Վահագնինը՝ հայոց դիցարանում: Նրանց անհողողությունը, հզոր արտաքինը դիցարանական մտածողու-

228 А. Я. Гуревич, Категория средневековой культуры, М., 1972, с. 56.

229 Ներսես Շնորհալի. Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Արմինե Բյուշ-Կերյամի. Երևան, 1987, էջ 363 (տաղը Վերագրվում է Շնորհալուն):

230 Գրիգոր Նարեկացի. Տաղեր և գանձեր, էջ 124-125:

թյան արտահայտություն էր, անտիկ, հեթանոսական իդեալ:  
Կանգնած է տեսանելի  
Արդվիսուրա Անահիդան  
Հրաշալի կույսի տեսքով  
Հզոր, հիանալի կեցվածքով

.....  
.....  
Զրասամույրի մորթի է հագած,  
Արդվիսուրա Անահիդան,  
Երեք հարյուր էգ չրասամույրի՝  
Զորս անգամ մայրացած.

Լավ, ժամանակին մշակված

(Որ) Փայլում է մորթուն նայողի աշքերին՝  
Մաքրոր ոսկով ու արծաթով:  
Ոսկե մաշիկներ է նա կրում,  
Որն ամբողջովին շողում է<sup>231</sup>:

Հայոց և պարսից բանաստեղծության նկարագրման մեթոդում հետաքրքիր է աստիճանավորման երևույթը, որը նկատելի է դեռևս Շնորհալու վերոհիշյալ տաղում:

Հովհաննես Թլկուրանցի.

Ծուշան, ըլուհան ու մանուշակ,  
Ու նօնօֆար, ու ի ծոցն վարդ,  
Անմար խնձոր ու սերկնիլ,  
Նուոն ու նարինջ ու կարմիր վարդ<sup>232</sup>:

Կամ՝

Հանցկուն այլ ո՞վ տեսնէր զմրութ,  
Տպագին, ակն ու նորիար....<sup>233</sup>

231 Ավեստա, Բինգերորդ Յաշտ. ըստ Է. Է. Բերտելս, История персидско-таджикской литературы, стр. 62:

232 Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 129:

233 Նուոն տեղում, էջ 131:

Վահիդ-է Թաքրիզի.

Դու լուսին ու արև ես,  
հուրի ու փերի՝  
իրեշտակ թե մարդ ես...<sup>234</sup>

Դաղիղի.

Ո՞վ, դու, Լուսին ու Արև, Յուպիտեր, Մարս,  
Սատուն և Արուսյակ երկնքում.  
(Դրանք) հերթով գլուխները քո առջև խոնարիեցին  
հարյուր անգամ<sup>235</sup>:

Այստեղ տեղին է հիշատակել ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչյովի  
դիտարկումը միջնադարյան հեղինակի երեակայության մասին,  
որը անընդհատ պտտվում է հայտնի գաղափարների շրջանակում  
և երբ ընկնում է այդ պտույտի մեջ, հեղինակը հաճախ ձգտում է  
հնարավորին չափ ընդարձակել այն, չբավարարվելով մեկ կամ  
երկու համեմատությամբ, նա ստեղծագործության մեջ է մտցնում  
իր համար սովորական դարձած պատկերների ամրող շղթան<sup>236</sup>:

Համեմատությունները բազմաբովանդակ են, քանի որ նույն  
համեմատության զուգորդությունների դաշտում ձևավորվում են  
նյութական, զգացողական և այլ ոլորտների պատկերացումներ:  
Օրինակ, մուշկն ու համպարը պարսից պոեզիայում, բացի անու-  
շահուստության իմաստից, արտահայտում են նաև սև գույն:

Հոտավետ նյութերը գեռևս անտիկ աշխարհից ուղեկցել են  
մարդուն: Լոտոսի, գինու, գարչինի և այլ խառնուրդներից պատ-  
րաստված բուրավետ նյութերը հին եգիպտոսից հասնում էին  
Հնդկաստան: Մերձավորարեկելյան և ասիական քաղաքակրթու-  
թյունների մշակույթում և գեղագիտական գիտակցության մեջ  
առկա է անուշահուսությունների պաշտամունքը: «Այդ հասարա-  
կարգի մարդու համար գեղեցկության նշանակությունը ի հայտ  
է գալիս բուրավետ աշխարհի բազմապիսի երանգների միջոցով».

234 Վահիդ-է Թաքրիզի, Խեսալե-յն ջամ-է մոխթասար, Մուքու, 1959, ս. 88;

235 Նույն տեղում, էջ 82:

236 Д. С. Лихачев, Пoэтика древнерусской литературы, М., 1979, стр. 180.

դա մարմնի օծումն է տարբեր հոտավետ յուղերով, ծաղիկների և  
սանդալի բույրը վայելելը, վերջապես գա հաշիշը կամ ղեյլանն է,  
ինչպես նաև ձողիկները...<sup>237</sup>:

Եթե հիշենք, թե ինչպես նարեկացին մի շարքի վրա էր  
դնում տասնյակ էպիտետներ, ապա մեկ անգամ ևս կհաստատվի  
մեր այն դրույթը, թե 14-16-րդ դդ. հայ տաղերգունների պոետի-  
կան ունի հաստատուն ավանդույթ: Երբ Հովհաննես Թլկուրան-  
ցու տաղերից մեկը համադրում ենք Ներսես Շնորհալու տաղերից  
մեկի հետ, ապա տեսնում ենք էպիտետների և համեմատություն-  
ների խտացման հետեւյալ պատկերը, որտեղ ակնառու են վերը  
նշված բոլոր երեսությները.

Հովհաննես Թլկուրանցի.

Խորօտիկ

անուշահոտիկ

ծաղիկ

ուռիկ

խնձոր

շաքար

արեգակ<sup>238</sup>

Ներսես Շնորհալի.

սիրատոնդ

նրբափայլ

ոսկեթել

տարփալի

եռապսակ

իողագլուխ

հրաշագեղ<sup>239</sup>

Փաղաքական և փոքրացուցիչ մասնիկը ժամանակին գրա-  
վել է Նիկողայոս Մառի ուշադրությունը. «...սրտիկ, գոնիկ,  
խաբրիկ.... սերը փաղաքական անունների նկատմամբ մենք  
նկատել ենք դեռևս հին հայկական երգերում, որոնք պահպան-  
վել են Մովսես Խորենացու հատվածներում՝ կարմրիկ, եղեգնիկ,  
պատանեկիկ ևն»<sup>240</sup>:

Իրականում նարեկացու հետնորդների մոտ նույնպես բազ-  
մաթիվ պատկերներ սերում են Աստվածաշնչից (ծրար ստաշխից,  
լուսապսակ երես, լուսեղեն մատունք ևն), սակայն պատկերների

237 Հմմտ. Е. Г. Яковлев, Искусство и мировые религии., М., 1985, стр. 31.

238 Հովհաննես Թլկուրանցի. Տաղեր, էջ 150:

239 Ներսես Շնորհալի. Տաղեր և գանձեր, էջ 363-364:

240 Н. Марр, Из летней поездки в Армению, 1892, стр. 31.

Համակարգը ակնհայտորեն ընդլայնվում և հարստանում է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հետագայում (օրինակ՝ տաղերգության մեջ) օգտագործվում են բույսերի, շքեղության առարկաների անուններ, որոնք գրեթե չեն օգտագործվել նախորդների կողմից<sup>241</sup>: Հատկապես աչքի են ընկնում բանահյուսական պատկերները, մշտական էպիտետները և կայուն բառակապակցությունները, որոնց նշանակալի մաս պարսկերեն են: Պետք է ենթադրել, որ բանասացների միջոցով պարսից պոեզիայից մուտք գործած պատկերները նույնքան կենսունակ գործածություն են ունեցել հայոց առօրյայում և հատկապես բանահյուսության մեջ: Պոեզիայի լեզվում ակնհայտ այդ նոր շերտը նաև հարգանքի տուրք էր պարսից այն դասականներին, որոնց, հարկավ, ճանաչում էին մեր բանաստեղծները: Այդ ամենով հանգերձ, տաղը վերընթաց և կտրուկ զարգացում էր ապրում թե՛ ձեր և թե՛ բովանդակության տեսակետից:

Այսպիսով՝ հայոց և պարսից տաղերգուները ստեղծագործում էին սիրային (աշխարհիկ կամ հոգևոր) քնարերգության ավանդական և կանոնարկված շրջագծում: Անհատականությունը և ինքնատիպությունը դրսեւորվում էր սեփական տաղանդի սահմաններում:

## ԴԵԿՈՐԱՏԻՎ ՍԻՐՈ ՖԵՆՈՄԵՆԸ

Սիրային քնարերգությունը իր զարգացման առաջին շրջանում դեկորատիվ բնույթ ունի: Դրա մի տարատեսակն էր եվրոպական վաղ վերածնդյան «կուրտուազ» (ֆրանս.՝ *court-aρερունիք*) պոեզիան, որը «սալոնային զվարճալիք էր» և շատ սակավ էր արտահայտում իրական սիրային հարաբերությունները<sup>242</sup>: Հնդկական միջնադարյան գրականության դասականներից մեկի՝ Վիդյապատիի սիրային քնարերգության կապակցությամբ ասվում է, թե երբ նա նկարագրում է սիրային հանդիպումներ և բաժանության տառապանք, ապա դա բոլորովին էլ չի նշանակում, թե նա նկարագրում է իր անհատական փորձը, այլ ստեղծում է դրանք, որովհետև այդպիսին էին ավանդությով կանոնարկված բանաստեղծական արտահայտչամիջոցները<sup>243</sup>: Օրինակ՝ գերմանական մինեղինգերներից մեկը նկարագրում է իր սիրեցյալին հետևյալ կերպ. «վարդագույն շուրթեր՝ հարուստ խնդությամբ», «խաղվող, պայծառ աչքեր», գեմքին՝ «սպիտակ հասմիկներ և ալ վարդեր», ունի «սլացիկ հասակ»: Նա «թագն է բոլոր կանաց», «անամպ արեի ցոլք է» ևն: Այդ կապակցությամբ պղոփ. Ա. Միրոնովը նշում է, թե ավանդական թեման ընդունում է անհատական գեղարվեստական վարպետության գծերը<sup>244</sup>: Այդ, միայն որոշ գծեր, քանի որ վերը նշվածները հենց այն կանոննեն ներկայացնում, որի շրջանակում եվրոպայում ձևավորվում էր «սրտի դամայի» կերպարը: Այստեղ հայոց (14-16-րդ դդ.) և պարսից (11-12-րդ դդ.) պոեզիայի ընդհանրությունը անժխտելի է: Ժամանակագրական անհամապատասխանությունը գալիս է նրանից, որ տարբեր ժողովուրդներ գրականության զարգացման նույնատիպ փուլեր անցնում էին ոչ միաժամանակ: Հայոց պոե-

242 Հմետ. Իстория западно-европейской литературы под общей редакцией В. М. Жирмунского, М., 1947, стр. 136.

243 Տե՛ս С. Д. Серебряный., Видъяпти, М., 1980, стр. 201:

244 История западно-европейской литературы, стр. 158.

241 Հմետ. Վ. Ներսիսյան. Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները 13-16 դդ. Երևան, 1976, էջ 87:

զիայում մի քանի ուղղությունների ձևավորումը՝ երկու-երեք դարով ուշանում էր և եվրոպական, և պարսից պոեզիայից:

Ո՞ւր են տանում մեզ այդ ընդհանրությունների արմատները:

Ուսումնասիրություններից մեկում գերմանացի հետազոտողը համեմատում է արաբ բանաստեղծների, իտալական տրուբադուրների և գերմանական մինեղինգերների պոեզիայի ընդհանուր մոտիվները և հնարավոր համարում արաբական իսպանիայով (Անդալուզյան պոեզիա) մոտիվների և թեմաների թափանցում կենտրոնական եվրոպա<sup>245</sup> (շատ տարածված տեսակետԱ.Կ.): Վ. Ժիրմունսկին համերաշխ է ընդհանրությունները տիպարանական համարող հետազոտողների հետ, որոնք փաստարկում են, թե տրուբադուրների պոեզիան ձևավորվել է Պրովանսում, որտեղ չկային անմիջական մշակութային կապեր իսպանական արաբների հետ, և արաբներն լեզուն հայտնի չէր, իսկ քրիստոնեական իսպանիա կամ Սիցիլիա, որտեղ այդ կապերը առավել ամուր էին, այն մուտք է գործում Պրովանսից և համեմատաբար ավելի ուշ՝ 13-րդ դարում<sup>246</sup>:

Այսպիսով, հիմնավորվում է այն տեսակետը, որ արաբական պոեզիայի և եվրոպական տրուբադուրների արվեստի գուգահեռները ոչ թե ազգեցություն կամ ներմուծում են, այլ նույն սոցիալ-պատմական պայմանների և զարգացման արդյունք են, այսինքն՝ տիպարանական են:

Մեզ համար շատ էլ համոզիչ չէ այն փաստարկը, թե վերջիններս հեռու էին իրարից և կտրված: Բազմաթիվ օրինակներ մեզ ապացուցում են, որ ազգեցության գործում աշխարհագրությունը արգելք չէ, և ոչ էլ մդիչ ուժ, եթե դրա համար չկա համապատասխան ենթահող: Օրինակ՝ հայերը ապրել են պարսից տի-

րապետության տակ, աշխարհագրորեն ուղղակի իրար մերձակից, սակայն, ինչպես ասացինք վերում, իրանական ոգու գրսեղումները այդ շրջանում աննշան էին, իսկ հիշատակումները մատենագրություններում՝ զուսպ: Այս պարագայում մենք առավել հակված ենք Վ. Ժիրմունսկու այն թեզի հետ, ըստ որի՝ տիպարանական ընդհանրությունը չի բացառում նաև ազգեցության տարրը, (ընդգծումները մերն են), որ հենց նույնանման միտումների առկայությունն է ազգային գրականություններում դառնում միջազգային գրական ազգեցությունների նախապայմանը. վերջինս հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ հասարակության մեջ ծնվում է «գաղափարական արտահանման» պահանջ<sup>247</sup>:

Լեհ մշակութաբաններից մեկը ասպետական սիրո ձևավորման հիմքում տեսնում է տվյալ երկրում կնոջ սոցիալական վիճակի անբարեհարմարությունը, ինչպես նաև արաբ բանաստեղծների ազգեցությունն ու հունական մշակույթի (Օվիդիոս) արձագանքը<sup>248</sup>:

Եթե ավատատիրական միջնադարի օրինաչափությունների մեջ փնտրենք թվարկված գուգահեռների հիմքը (արքունիք-եկեղեցի, արհեստավարժ բանաստեղծի կարգավիճակ- համապատասխան լսարանի պահանջն), ապա հայոց մեջ դեկորատիվ սիրո ֆենոմենը պետք է ուղղակի ազգեցություն համարենք, և դրան կարծես թե չի ընդգիմանում Մանուկ Աբեղյանը: Նա գրում է. «...սիրավեպեր և սիրո արվեստներ, օրենսգրքեր չեն առաջ եկել մեր գրականության մեջ, զի մեզում կյանքի մեջ չի եղել դրանց պահանջն ունեցող արքունիք, «կուրտուազական» վերաբերմունք տիկինների հանդեպ: Զեն եղել և «կուրտուազ ասպետները», այն ժամանակի կիլիկյան բառով՝ «ձիավորներ»: Ճիշտ նույն

245 Հմմտ. Ecker Lawrence, Arabischer, provenzalischer und deutscher minnesang. Eine motivgeschichtliche Untersuchung, Bern, 1934:

246 Յ. Ժիրմունսկի, Сравнительное литературоведение, Восток и Запад, Л., 1970, стр. 37 и др.

247 Յ. Ժիրմունսկի, Աշվ. աշխ., Էջ 7:

248 Հմմտ. M. Ossowska, Ethos rycerski i ego odmiany, Warshawa, 1973, 92-126. տես ան A. Aziz, Origin of courtly love and problem of communication Islamic culture, Hyderabad, 1949, Էջ 23:

դարում թաթարական բռնապետությունն էր Մեծ Հայաստանում, և հայ ազնվականությունն արդեն դեպի քայլքայում և անկում էր գիմում...»:<sup>249</sup> Հետաքրքիր է, որ ոռուս հետազոտողը տասնամյակներ անց նույն մողելով և համարժեք փաստարկներով բացատրում է այդ դարերում իր գրականության մեջ սիրային քնարերգության բացակայությունը. «Ծուռաստանում չկային համալսարաններ, չէին կարող լինել նաև վագանտներ, չկար բյուրգերականություն, հետևարար՝ մայստերզինգին նման երկույթ<sup>250</sup>»: Այդ սոցիալ-պատմական օրինաչափություններով հանդերձ, մեզ համար ակնհայտ է այն ընդհանուր ոգին, որ միավորում է բոլոր թվարկված միջնադարյան պոեզիաները, որոնք եթե իրարից արմատապես տարբերվում են, ապա՝ լեզվով: Այդ ընդհանրությունները մենք որոշ դեպքերում համարում ենք փուլային-տիպաբանական, որը ապրել են բոլոր գրականությունները սիրային ժամանական սկզբնական շրջանում, երբեմն՝ սինթեզ, երբ դրա համար պարարտ հող է եղել, և եկվոր երկույթը անմիջապես յուրացվել է ու սեփականի հետ ի հայտ եկել նոր որակով, իսկ որոշ դեպքերում՝ ուղղակի ազդեցություն, որը նույնպես ճկուն ճկուն է ընդունել:

«Դեկորատիվ սիրո աշխարհագրությունը» շատ լայն է և ունի իր ճեւավորման և զարգացման քաղաքական, ինչպես նաև՝ սոցիալ-հոգեբանական հիմքը: Եթե այն ներմուծման արդյունք է, ապա հետաքրքիր է, թե որտեղից ծագեց, ո՞րն էր դրա ընդունման և հետագա զարգացման պարարտ հողը: Ինչու՞ մի երկրում՝ ճեւավորման օրրանում արդեն, սիրային քնարերգությունը ներառում էր ինչպես նկարագրական, այնպես էլ զգայական, հոգեբանական կամ ակտիվ սիրո գաղափար, իսկ մեկ այլ տեղ (Հայաստան), ընդունում էր դեկորատիվ սիրո տեսք, որի տեսակը ոռուս հետազոտողը անվանում է «սալոնային զվարճալիք»: Հարցերը բազմաթիվ են, իսկ այս բնագավառում արևմտյան և հատկապես

խորհրդային համեմատաբանների կատարած բազմաթիվ աշխատությունները ցույց են տալիս, որ պատասխանները այնուհանդերձ սակագ են:

Ենելով այս ամենից և ընդհանուր գծերով գնահատելով հայ միջնադարյան պոեզիան Նարեկացուց հետո ընկած ժամանակահատվածում, մենք կարող ենք ասել, որ այն դեպի գաղափարական և ժանրային բազմազանություն էր գնում: Պաշտոնական գրականության հետ մեկտեղ զարգանում էր նաև ժողովրդական բանաստեղծությունը, որի ոգու մուտքը գրականություն երկար ժամանակ արգելակվել է քրիստոնեական էթիկետի ջատագովների կողմից, իսկ ժողովրդական աշխարհիկ ազատախոհության ոգին խամրել, անցնելով խստակրոն եկեղեցական մտածողի գաղափարական և բարոյական գտիչներով:

Արևմտագետների հետագա ուսումնասիրությանը թողնելով «Պրովանս-արաբական խսպանիա» ազդեցության առաջնայնության խնդրի «թեր» ու «դեմը», փորձենք անդրադառնալ արաբական սիրային քնարերգության ուղղություններին, որի հետ ամենասերտ կապ է ունեցել ու ազդեցությունն է կրել հատկապես՝ հարեան պարսից մշակույթը: Դրանք էին Օմարյանների<sup>251</sup>, Հեջազի<sup>252</sup> և Ուղղայան<sup>253</sup> ուղղությունները, որոնք նշանակալիորեն տարբերվում էին իրարից:

Օմարյանների սիրային քնարերգությունը լավատեսական էր, ավելի պայծառ, սիրուհու և սիրեցյալի հանդիպումը բացառություն չէր, սիրուհին երբեմն գործուն դեր ուներ, նրա կերպարը հարաբերական շարժման մեջ էր: Այդ ամենով հանդերձ, արաբական միջնադարյան գրականության հրաշալի գիտակ ի. Ֆիլշտինսկին գրում է. «Օմարյան քնարերգության մեջ մենք չենք գտնի ո՛չ անհատական կնոջ դիմանկար, ոչ էլ անհատական հոգեբանական բնութագրություն: Իդեալական սիրուհին միշտ

249 Մ. Արենյան, Երկեր, Բ. Դ., Էջ 372:

250 Ա. Մ. Պանченկո, Աշվ. աշխ., Էջ 129:

251 Հիմնադիր՝ Օմար էբն Ռաքիա:

252 Տեղանուն:

253 Ցեղանուն:

«սեաչյա է», նման «վիթի» կամ «լուսնի», գեղեցկուհին՝ «բարակ մեջքով» և «շքեղ կոնքերով», քոչում է մի բանաստեղծությունից մյուսը: Հենց այդչափ էլ միապաղաղ են նրա վարքագիծը, նրա ապրումները և նրա արարքների պատճառաբանությունը:»<sup>254</sup>:

Պարսից պոեզիայում անպատասխան և դրամատիկ սիրո ձևավորումը որոշ հետագոտողների կողմից դիտվում է որպես ուզրայան պոեզիայի ազգեցության արդյունք, մանավանդ, որ մահմեդական աշխարհը վաղուց արդեն սկսել էր մահմեդական քաղաքակրթությունը ընդունել որպես «...պարսկախմամական սինթեզ խոսքեր չվատնելով դրա ապացուցման համար»<sup>255</sup>: Այդ սերը ավելի արստրակտ է, դրամատիկ, միշտ՝ անպատասխան, անհույս, բացարձակապես զուրկ զգայական և հոգերանական տարրերից: Ուզրայան քնարերգությունում սերը ստանում էր «սեր սիրո համար» բանաձեւը: «Սիրուհու իղեալականացումը հետևողականորեն հասցրեց նրան, որ ուզրայան պոետի «սրտի դաման» աննյութականանում էր և ետին շարք մղվում: Ուզրայանների մոտ նկարագրվող այդ սերը երբեմն այնպիսի արստրակտ բնույթ էր կրում, որ թվում էր, թե պոետների բոլոր սիրուհիները միայն ինչ-որ պայմանական խորհրդանիշներ են...»<sup>256</sup>:

Մենք նկատում ենք, որ սիրային քնարերգության ձևավորման սկզբնական փուլում և հայոց, և պարսից մեջ գերիշխում է հենց նշված անպատասխան, զեկորատիվ սիրո ֆենոմենը, որտեղ բառերը զրկված են իրենց էմպիրիկ նշանակությունից, և որի բառարանը չի կարելի տեղադրել այլ գաղափարների վրա:

Հայոց տաղերգության մեջ ոսկի, արծաթ, ոեհան, տպաղիոն, զմուռս, խունկ, մուշկ, նարինջ, նուռ, գոհար, ակն, մարգարիտ, հակինթ և բազմաթիվ այլ հասկացություններ իրենց մեջ ներա-

ռում են մշտական զուգորդություններ և համապատասխանորեն ուղղություն տալիս մտքին: Եթե որևէ մի պատկեր հանկարծ դուրս է գալիս այդ նրբաճաշակ, արդեն սովորական դարձած պատկերների շարքից, ապա դա նոր է: Այսպիսի համատեքստում ձևավորվում է սիրուհու կերպարը, որը նույնպես խիստ կանոնարկված է: Նա գեղեցիկ է և դաժան: Երկու գրականություններում էլ նրան վերագրվում է քարսիրտ կեցվածք: Նա կարող է երջանկացնել, բուժել, վերակենդանացնել, սակայն դա տեղի չի ունենում: Հնարավոր է, որ սիրահարի և սիրուհու հակամարտությունը իր արմատներով գնում է դեպի սիրո նեռալլատոնական ըմբռնում, ըստ որի մարմինները մոտենում են, բայց երբեք չեն միանում<sup>257</sup>: Այդ գաղափարը երն Սինայի սիրո տրակտատում ստանում է հետեւյալ ձևակերպումը. սերը հոգիների և սրտերի միացում է, սակայն երբեք՝ մարմինների<sup>258</sup>: Սիրո նմանօրինակ ըմբռնման հիմքը հավանորեն նեռալլատոնականությունն է, ըստ որի ձևավորվել են քրիստոնեական և մահմեդական փիլիսոփայության բազմաթիվ ուսմունքներ և պատկերացումներ:

Դեկորատիվ սիրո էթիկետի պարտադիր կանոններից է սիրահարի անմիխթար վիճակը: Նա տառապում է, հիվանդանում, մեռնում է և հարություն առնում: Նրա հոգեկան ապրումները դրսկորվում են սահմանափակ հիպերռոլիկ, հաճախ ցավային-օրգանական զգացումներով:

Հովհաննես Թլկուրանցի.

Դու հալած ու թափած ոսկի արծաթ ես,  
Ղումաշ ես խազընի, քանի գովեմ զբեզ,  
Քո սէրդ ի յիս դիպալ՝ ստոյգ կայրիմ ես,  
Ար-եկ ինձ դեղ արա, իմ ճարըն դու ես:  
Կտրեր քունն յաշւերուս՝ դու ֆարաղաթ ես,  
Քո սէրդ զիս մոմ արա, դու ինձ պողպատ ու քար ես<sup>259</sup>:

254 И. М. Фильшинский, Словоесное искусство арабов в древности и в раннем средневековье, М., 1977, стр. 210.

255 Г. Э. Фон Грюнебаум, Основные черты, стр. 72.

256 И. М. Фильшинский, Աշխ. աշխ., էջ 214:

257 Е. М. Мелетинский, Средневековый роман, М., 1983, стр. 209.

258 Տե՛ս Ս. Б. Серебряков, Трактат Ибн-Сины (Авиценны) о любви, Тбилиси, 1976:

259 Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 151:

Սիրո նույնանման գգացմունքների մի տարբերակն է Օնսո-  
րիի բանաստեղծությունը.

Երեսիդ վարդ է բացվում (իսկ իմը) սուզվում է  
արցունքներում,

Ես վառվում եմ, երբ խոպոդ հանգույց է ընկնում:  
Խոպոդներ կրակի աղբյուր են, ինձ խորովել են,  
Աշքերդ քնի աղբյուր են, իսկ ես անքուն եմ<sup>260</sup>:

Ահավասիկ կոստանդին երգնկացու տաղից մի հատված.

Երբ որ անուշ հոտն լիս բուրեց,  
Զիս ի խելաց շուտով թափեց.  
Ի յայն պահուն սիրտս եփեց՝  
Երբ իր տեսն ինձ երևեցաւ<sup>261</sup>:

Խուդաքի.

Քամու ճամփին քո (ձեռքի) կանթեղը,  
Վախենում եմ, թե հանգչի դեմքիդ շողից:  
Այրված սրտիս հոտը աշխարհով մեկ է եղել,  
Եթե չես զգում, կեցցեն ոռոնգերդ<sup>262</sup>:

Ինչպես տեսնում ենք, գեկորատիկ սիրո պոետիկայում այր-  
վող սիրտը իր բազմաթիվ տարբերակներով հերոսի վիճակի  
մշտական հատկանիշներից մեկն է: Այդ ընդհանրություններում,  
իհարկե, չենք հերքում պարսից պոեզիայի հետ հնարավոր ծանո-  
թության պարագան, սակայն առաջնային ենք համարում համա-  
մարդկային տիպարանության տարբերակը: Երկու գրականու-  
թյունների բանահյուսությանն էլ հատկանշական է սիրուց այր-  
վելու երևույթը::

Երկու պոեզիայում էլ սիրո էթիկայի պարտադիր օրինաչա-  
փություններից է սիրահարի արցունքը, որի մի քանի կաղապար-

260 Օնսորի, Դիվան, էջ 188:

261 Կոստանդին Երգնկացի, Տաղեր, էջ 163:

262 Խուդաքի, Դիվան, էջ 115:

ված հատկանիշներով (գույն, չափ, ձև) գծագրվում է «Ես-ի»  
դրամատիկ կերպարը: Բոլոր ժամանակներում և աշխարհի բոլոր  
ծայրերում սիրել են և արցունք թափել: Հարկ չկա այդ համա-  
մարդկային տիպարանության մեջ էթնիկական, տարածաշրջանա-  
յին կամ մեկ այլ առանձնահատկություն փնտրել: Սակայն այս-  
տեղ ուշադրության արժանի է ոչ թե լացի երևույթը, այլ դրա  
արտահայտության ձևերն ու միջոցները:

Քուչակ.

Հանցգուն եմ ի քո սիրուի,  
Զինչ ամաերըն կառնին շառափի.  
Զայդ երկիրն ամէն գիտէ,  
Սիրոյ տէր եմ հետ քեզ պարապ.  
Այս իմ նենցաւոր աշերս  
Զի կենար ըզքեզ մեկ պար մի պարապ.  
Կուլայ, զօրն ըզքեզ կուզէ...<sup>263</sup>

Օնսորի.

Այն շուրթերը չեմ համբուրի, շնայած ինձ սազական են,  
Քանզի շաքարը հալվում է, երբ այն համտեսում են:  
Իմ աշքերը նրա դարդից ոսկեցություն են անում,  
Հակիմթմեր (արցունք) են հալեցնում և ոսկու  
(տանջարար դեմք) վրա գլորում<sup>264</sup>:

Խուդաքի.

Իմ աշքերը նրա դարդից որքան հակիմթմեր հղկեցին,  
Որ դեմքիս վրա այդ գաղտնիքից  
հազար վարդ բացվեց<sup>265</sup>:

Սիրո տանջանքը տարբեր համատեքստերում տարբեր գույն  
է ստանում:

263 Նահապետ Քուչակ, «Հայուր ու մեկ հայրն», առաջարանը և տողացի  
թարգ. Լ. Մկրտչյան, Երևան, 1976, էջ 16:

264 Օնսորի, Դիվան, էջ 190:

265 Խուդաքի, Դիվան, էջ 115 (ընդգծումները մերն են):

<i>Քուչակ</i>	կարմիր
<i>Իռողաքի</i>	կարմիր
<i>Օնսորի</i>	կարմիր
<i>Աչքերի փունկցիան առավելապես գործ անելն է:</i>	
<i>Քուչակ</i>	չեն մնում պարապ
<i>Օնսորի</i>	ոսկերչություն են անում
<i>Որոդաքի</i>	հակիմքներ են հղկում

Տառապանքի ընդհանուր գույնը կարմիրն է, որը հայոց մեջ սովորական համեմատությամբ է արտահայտված, իսկ պարսից բարդ բանաձև-խորհրդանիշերի: Այստեղ ընդհանուր է նաև դեղին գույնը, որը կոնկրետանում է և նյութական և բուսական աշխարհի համեմատության առարկաների միջոցով՝ հափրուկ, խունկ, ոսկի ևն:

*Մունջիկ.*

Ես սուզվում եմ Եփրատում, քանի աչքերս կան...<sup>266</sup>

*Արու-ալ Բալիխի.*

Մատները հիմա է դնում իմ սրտի արյամբ (արցունը)...<sup>267</sup>

*Մասդի.*

Իմ արցունը ու քո դեմքը իրար հանգույն են դարձել...<sup>268</sup>

*Կամ'*

Հարյուր աղբյուր իմ աչքերից հեղեցիր ու գնացիր...<sup>269</sup> ևն:

*Երզնկացի.*

Դու քանի հեռացեալ ես այս քո գերուս՝

Արտասուրն ի վայր թափես ի աչերուս<sup>270</sup>:

266 Ախօրի, 352.

267 The Lubab-ul-Albab of Muhammad Awfi, part second, London, 1903, p. 26.

268 Մարդարտաշար, էջ 90:

269 Նոյն տեղում, էջ 91:

*Կամ'*

Լացն ու հառաչն է զիս պատեր..<sup>271</sup>

*Կամ'*

Զաշերս արեամբ հետ իր թանամ...<sup>272</sup>

Հայ տաղերգուների պոեզիայում առավել ընդգծված է սիրահարի և սիրեցյալի հակամարտության ըմբռնումը որպես հիվանդի և բժշկի, տիրոջ և ծառայի կամ թագուհու և գերու:

*Թղկուրանցի.*

Ես կու գրեմ զիս քեզ մատադ,

Ու քեզ ծառայ ու քեզ զաքաթ...<sup>273</sup>

\*\*\*

Տեսդ թժիշկ է հիւանդին...<sup>274</sup>

\*\*\*

Ար-եկ ինձ դեղ արայ իմ ճարըն դու ես...<sup>275</sup>

*Երզնկացի.*

Դու ես հոգի իմ հոգույս,

Խղճա քո գերուս, իմ լոյս:<sup>276</sup>

\*\*\*

Քո սիրոյդ հիւանդ եմ ես,

Ճերիմ ու ճարակ դու ես<sup>277</sup>:

270 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 166:

271 Նոյն տեղում, էջ 164:

272 Նոյն տեղում, էջ 163:

273 Հովհաննես Թղկուրանցի, Տաղեր, էջ 129:

274 Նոյն տեղում, էջ 120:

275 Նոյն տեղում, էջ 151:

276 Կոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 158:

277 Նոյն տեղում, էջ 160:

\*\*\*

Զի գիտե՞ս, որ ծառայ եմ քեզ...<sup>278</sup>

\*\*\*

Մաղկունաց Սուլթանն դու ես ...<sup>279</sup>

\*\*\*

Դու ծաղկանց ես թագավոր՝ վարդի գունով<sup>280</sup>.

\*\*\*

Դու հուրմով փատիշան ես՝ քո եասիրով,  
Եասիր կամ քո ծառայ՝ զինքն ազատես<sup>281</sup>:

Հուրայրի.

Այն կուրքը, որ բուժում էր համբույրով Բիվանդին,  
Ափսոսում է իր դեղը ինձ՝ տառապյալիս<sup>282</sup>:

\*\*\*

Քո գերին սև աչերովդ է հպարտ...

\*\*\*

Դու գեղեցկության շահ ես՝ սիրահարներդ՝ զորքի<sup>283</sup>... և ա:

Իհարկե, շատ գայթակղիչ է ազդեցության գաղափարը և  
դյուրին հիմնավորելի, առավել ևս, որ Հայոց սիրային քնարեր-  
գության բառարանում մի ամբողջական շերտ կա պարսկերեն  
լեզվով: Սակայն փորձենք վերը բերքած պատկերները փնտրել  
մեր նախորդների, օրինակ՝ Նարեկացու պոեզիայում: Նարեկացին  
իր սիրեցյալին՝ Հիսուս Քրիստոսին, թագավոր է կոչում, որը բու-  
ժում է և ողջացնում:

278 Նույն տեղում, էջ 160:

279 Նույն տեղում, էջ 161:

280 Նույն տեղում, էջ 167:

281 Նույն տեղում, էջ 168:

282 Անյօր, 120.

283 Անյօր, 183.

Հայր, թագավոր և այլ փոխաբերություններ մեր բանա-  
ստեղծություն մուտք են գործել Սուրբ գրքի ազդեցությամբ.  
սակայն նման բնույթի լեզվական երևույթները միջնադարի մար-  
դու մտածողության համար միս ու արյան նման մի բան են եղել,  
և ինքնին հասկանալի է, որ դրանց ընտրության համար մեր բա-  
նաստեղծները հատուկ ջանք ու եռանդ չեն գործադրել<sup>284</sup>:

Թագավոր զարաւոր, երկնաւոր, տէր Յիսուս Քրիստոս,

Լուսավորեցայց՝ կրկին ողջացեալ շնչով եւ մարմնով,  
Ամենային կարող եւ անվանելի<sup>285</sup>:

Կամ՝

Բժշկեա, ամենակարող, զներքինս եւ զարտարինս<sup>286</sup>.

Տվյալ դեպքում մենք վերանում ենք տաղի կրոնական  
ըմբռնումից. մեզ այս պարագայում հետաքրքրում է ձևի պոետի-  
կան: Հակված ենք կարծելու, որ պարսից պոեզիայի հետ որոշ  
տիպաբանական ընդհանրություններ արդեն եղել են մեր պոե-  
զիայում, և միջին հայերենի հետ մուտք գործած պարսկաբանու-  
թյունները, դրան գումարվելով, հաճախ ընդգծված ազդեցու-  
թյան տպավորություն են ստեղծել:

Ինչի՞ է հասցնում սիրո պաշտամունքը: Իհարկե, անվիճելի  
արժեքների նսեմացման: Այդ երկույթի ընդհանրությունը երկու  
պոեզիաներում կարող է լինել փուլային-տիպաբանական, քանի  
որ մի արժեքի ձևավորումը տեղի է ունենում հնի, ընդունվածի  
հետ հակադրման միջոցով: Եթե ի նկատի ունենանք այն տարած-  
ված տեսակետը, որ միջնադարյան մտածողը անվերապահորեն  
ելնում է իր դաշնամարդ գաղափարախոսությունից, ապա աստծո  
առաքյալների կարողությունները սիրուհուն վերագրելը, անգամ

284 Հմտ. Վ. Ներսիսյան, Աշվ. աշխ., էջ 94:

285 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան, ԽԳ (ա):

286 Վ. Նալբանդյանը նշում է, որ դա հոգով և մարմնով, զներքինս և արտաք-  
նով ողջանալու, ամրանդելու փափագ է (հմտ. նրա՝ Գրիգոր Նարեկա-  
ցի, Երևան, 1990, էջ 205):

եթե տուրք էր տարածված և ընդունված ձեին, անշուշտ միջնադարի համար ուշագրավ երկույթ է:

Զարմանալիորեն Մոհամադ մարգարեի ամենակարող լինելը (իրավամբ Ալլահը ամենահզորն է, իրավամբ Ալլահը իմաստուն է, իրավամբ Ալլահը ամենատես է, իրավամբ Ալլահը ամենագորեղն է) դրվում էր հարցականի տակ:

Սիրուհուն վերագրվում էր այն ամենը, ինչին զորու էր միայն աստված կամ նրա առաքյալը:

Օնսորի.

Ո՞վ դո՛ թուրակի լեզվով ու վայրի ցիոնի կեցվածքով, Գեղեցկությունի ամեն մի մեռածի կհանի գերեզմանից...<sup>287</sup>

Վերջին տողը մի տարբերակն է «քաղցր լեզուն օժին բնից դուրս կքաշի» առածի: Իհարկե, պարսից թարանեներում (քառյակ) այդ գաղափարն ավելի կոպիտ և ռամիկ ոճով է արտահայտված.

Եթե դու մեռել լվացող ես, ապա ես կմեռնեմ,  
Երբ ինձ լվանաս քաֆուրով, պատանքս պատոնմ,  
մի կուշտ քեզ նայեմ...<sup>288</sup>

Կամ'

Ո՞վ գեղեցկութիղ, ինձ հետ քնքույշ վերաբերվիր,  
Քո պատճառով ես Ալլահին դավաճանեցի:<sup>289</sup>

Կամ'

Ծուրթի Քարեն է, իսկ ես ոխտագնաց,  
Մի գիշերում հարյուր անգամ ոխտագնացություն եմ  
կատարում:<sup>290</sup>

287 Օնսորի, Դիվան, էջ 192:

288 В. Р. Жуковский, Образцы персидского народного творчества, СПб., 1902, стр.

232.

289 Տե՛ս Ներերի Արդ-ալ Հոսնին, «Ֆոլկլոր», ջելդ-է ավալ, Թեհրան, ս. 15:

Նման հանդուրժողականությունը գալիս է լսարանին արդեն շատ ծանոթ արքունական պոեզիայի արժեքների համակարգից, որտեղ չափազանցությունը առաջնային տեղ էր գրավում, որտեղ սրբերի մակարդակի հասցված ներքողյալը (շահը, Էմիրը) միշտ ամենահզորն էր, ամենաքաջը, ամենաշուայը, ամենաարդարը: Սա ինչ որ չափով մարտահրավեր էր Ղորանի հերոսի «ամենա»-ին, սակայն չէր գիտակցվում, դիտվում էր որպես արքունական էթիկետ: Օրինակ՝ Ձափար էրն Մոհամադին նվիրված ներքողում Ռուդարքին գրում է.

Թե հրեշտակ տեսնել ուզես, նայիր նրան....

\*\*\*

Ասես հաստատ Սողոմոնն է նստել գահին....

\*\*\* այսպահ զմ Յա նըալիս որ զնուայցա ու Յնոցը

Նա պահապանն է աստծո, ստվերն է սուրբ....

\*\*\*

Նրան են ենթարկվում Ղորանի այաթները ...<sup>291</sup> և ն:

Կամ' սիրային բանաստեղծության մեջ.

Նա, ով նման չէ ոչ որի, նա աստվածն է,

Դու աստված չես, սակայն նման չես ոչ որի<sup>292</sup>:

Սիլոգիզմին հատուկ երեք դրույթների ժխտման եղանակով թաքցվում է սիրուհուն աստծուն հավասարեցնելու միտումը: Այդ տրամաբանական եզրահանգումը կարող էր լինել՝

290 Արու ալ Ղասեմ Ֆաղիրի, «Ֆոլկլոր», թարամերա-յե մարմալի-յե Ծիրազի, Թեհրան, ս. 26:

291 Ռուդարքի, Դիվան, էջ 31-45:

292 Սայիդ-է Նախիթ-է զննեգի վա արվալ վա աշար- է Ռուդարքի, Թեհրան, 1331, ս. 538.

Աստված նման չէ ոչ որի.

Դու նման չես ոչ որի.

↓

Դուք (դրանով) նման եք իրար....

Ճիշտ այնպես, ինչպես պարսից պոեզիայի ձևավորման հենց արշալույսին Ռուդաքին արդեն տալիս էր կրոնի նսեմացման և սիրուհու առաջնայնության գաղափարը, այնպես էլ Հայոց նոր ձևավորվող սիրային բանաստեղծությունում այդ միտումը անթաքույց է: «Միջնադարյան պոեզիայում առաջին անգամ Թղկուրանցին է հայտնում այն միտքը, թե սերն ավելի ուժեղ է, քան քրիստոնեական հավատը»<sup>293</sup>:

Խաղանի.

Կրոնն ու աշխարհը, որ ծածկոցն են մեր բարոյականության,  
(Եկեք) գցենք ալդ երկուսը, մեր սիրածի ոտքերի տակ...<sup>294</sup>

Թղկուրանցի.

Մարդ որ սիրու կու հանդիպի,  
Նայ քան ըգկրակ կու լինի վառ,  
Այլ ոչ աղօթք միտքըն կու զայ,  
Ոչ յայսմատոր կարդայ և ճառ<sup>295</sup>:

Պալատական միջավայրում պարսից բանաստեղծությունը գուտ աշխարհիկ բնույթ էր կրում և գուրկ էր մահմեղական մոլիխուանությունից: Սիրուհին հասցվում էր աստվածային բարձրության, սրբավայրերը փոխվում էին հեթանոսական տաճարով կամ եկեղեցով, սիրուհու դեմքը համեմատվում էր սուրբ Քարեի հետ, որի կողմը դեմքով շրջվում է ամեն մի մահմեղական նամազի ժամանակ: Ղորանի քարոզած անժխտելի արժեքները կասկածի տակ են առնվում:

293 Վ. Նալբանդյան, Միջնադարի հայ տաղերգումներ, Երևան, 1958, էջ 29:

294 Խաղանի. Դիվան, էջ 643:

295 Հովհաննես Թղկուրանցի, Տաղեր, էջ 160-161:

Քո դեմքի դեմ Սալսարիլի սուրբ ջրերը ոչինչ են...<sup>296</sup>

Դիցաբանությունից և Ղորանից բերված ուղղակի և զուգորդական մեջբերումները հետապնդում են զուտ գեղագիտական նպատակ և հեռու են կրոնական ըմբռնումից:

Սերը մեծ «ավերածությունների» է ենթարկում ոչ միայն մարդուն (գեղնած գեմք, աղեղ մեջք ևն), այլ նաև բնության և մարդկության կողմից ստեղծածը:

Թղկուրանցի.

Զեզ ինչ դատար ես դիմանամ,  
Երբ դուք ի հալ հանեք զլերունք,  
Սիրով քակեք բարձր բերդեր,  
Ի գիլ հանեք վէմք ու քարունք<sup>297</sup>:

\*\*\*

Լոյս երեսացդ եմ քո փափիաք,  
Քաղաք Խութան Չին ու մաշին,  
Թէ տեսնուն զվարսն Հնդրստան  
Ընդ որ երթաս յետդ կոչին<sup>298</sup>:

Եթե հիշենք նարեկացուն, ապա պարզ կդառնա, որ այդ պատկերները արդեն գոյություն են ունեցել.

Դու, որ քարերի կարծրությունը ճեղքեցիր,

Դու, որ տարերքն անգամ սասանեցիր...<sup>299</sup>

Կարծում ենք, սիրու և կրոնի հակադրությունը մինչև Թղկուրանցին գոյություն է ունեցել ժողովրդի ընդերքում և իր առավել վառ արտահայտությունն է գտել Հայրեններում:

296 Սալսարիլը դրախտում հոսող գետն է:

297 Թղկուրանցի, Տաղեր, էջ 142-143:

298 Խոյն տեղում, էջ 134:

299 Գրիգոր Նալբանդյան, Մատյան Ողբերգության, 1.2 (թ):

Հաֆեզ. Յ հայոց պատմական գրականության նման լինելը ունի  
Նթե այն թրքուիին Ծիրազցի գրավի իմ սիրտը,  
Նրա խալին ես կենդիրեմ Սամարդանդն ու Բուխարան<sup>300</sup>:

Կամ՝

Թղկուրանցի.

Պագ մի յերեսէդ արժէ զեզնկան  
Զշապաշ ու զեաման, զՑիլ ու զՀնդուստան  
Երկու վարսէ զին, է՛ Զին ու Խորթան  
Պոլդար ու զըստամբօլ ու շահրի Եազտան...<sup>301</sup>

Պարզվում է, որ պրովանսյան տրուբադուրներն էլ են Արևելքի և Եվրոպայի հանրահայտ քաղաքները նվիրել իրենց սիրեցյալին: Կարծում ենք, Ա. Գուրենիչի համոզիչ տեսական եղբահանգումը մեծապես լուծում է մեզ երկմտանքի մեջ գցող «ազդեցություն» թ՞ե «տիպարանություն» հարցադրումը, մանավանդ, որ այդ երկուսի գոյությունն էլ միաժամանակ հնարավոր է: «Պրովանսյան տրուբադուրը երգում է իր սիրեցյալին, սակայն չի գտնում և հավանաբար չի էլ փնտրում հատուկ և չտեսնված խոսքեր իր գդացմունքներն արտահայտելու կամ նրա գեղեցկության նկարագրության համար: Հասկացությունների համակարգը և իր օգտագործած տերմինարանությունը՝ զուտ ավատատիրական, իրավական տերմինարանությունն է՝ «ծառայություն», «նվիրատվություն», «վասալական երգում», «սենյոր» ևն: Այդպիսին է սիրային բառապաշարը, որի միջոցով նա վարում է իր սիրային խոստովանությունը: Սիրուհին նրա համար թանկ է առավել, քան Անդալուզիայի և Արևելքի քաղաքները<sup>302</sup>:»

Թվում է՝ հարկ չկա նորանոր օրինակների: Արդեն հասկա-

300 Դիվան-է խաչն Հաֆեզ-է Ծիրազի, Թեհրան, 1346, ս. 1 (այսուհետև Հաֆեզ, Դիվան):

301 Հովհաննես Թղկուրանցի, Տաղեր, էջ 156:

302 Ա. Յ. Գրեւին, նշվ. աշխ., էջ 28:

նալի է, որ մեր ուշադրությանն արժանացած տեր-ձառա, Հիփանդ-բժիշկ, մահ-կյանք բինար գաղափարները արտացոլում են ավատատիրական կենսաձևի մոդելը: Ավելի դյուրին է գաղափարների, մոտիվների, թեմաների, բանաստեղծական արտահայտչաձևերի օգտագործման մեթոդի և այլ նմանությունները վերագրել մի գրականության ազդեցությանը մյուսի վրա ուղղակի կամ անուղղակի (միջնորդ) ձևով, հատկապես այս պարագայում, եթե երկու ժողովուրդները դարերով խաչաձևել են իրենց պետականությունն ու կենցաղը: Հայ և պարսից բանաստեղծական արվեստի բազմաթիվ նմուշներ մեզ նորից ու նորից մտածելու, խորհելու, ճշտելու և վերլուծելու առիթ են տալիս: Հետաքրքիր է հայրեններում այդ նույն գաղափարների առավել պարզ արտացոլումը, որ ցույց է տալիս ժողովրդի ոգուն մոտ ստեղծագործության և պաշտոնական նրբաճաշակ արվեստի փոխազդեցությունը:

Հայրեն՝

Աշերդ դու հանց ունիս՝ աշն էր՝ ձախըն խորովէ,  
Ունքներդ դու հանց ունիս, որ Ծիրազն ի հիմնէ քակէ...<sup>303</sup>

Իսպառ չենք բացառում նաև ազդեցությունների տարրերակը, հատկապես՝ օտարի գեղագիտական գիտակցությանը մերձենալու ամենամատչելի ձևով՝ թարգմանության միջոցով: Հայ գրականության հուշարձաններից մեկում՝ «Պղնձե քաղաքի պատմությունում» պահպանված կաֆաներից մեկը, որը ն. Ակինյանի կողմից քննվում է որպես 10-րդ դարի նմուշ և ունի իրեն կից արաբերեն բնագիրը<sup>304</sup>, մեր կարծիքով իր մերկ կառուցվածքով ուղղակի համընկնում է նուդաքիից մեզ հասած մի խոհափիլիսոփայական բանաստեղծության հետ: Հաս որում, Սայիդ Նաֆիսին, որ նուդաքիի քննական տեքստի հմուտ գիտակ է, կասկածի տակ չի առնում նուդաքիի դիվանում պահպանված այս բանա-

303 Ա. Չոպաննես, Հայրեններու բուրատանը, Փարիզ, 1940, էջ 169:

304 Տե՛ս ն. Ակինյան, «Օրուց պինձե քաղաքի», «Հանդէ Ամսօրեալ», 1958-59, էջ 45:

ստեղծության պատկանելությունը:

Կաֆա.

Ու՞ր են թագաւորք երկրի,

Որ առաջ զանանքն յիշեցի,

Եւ կամ քանի՛ քաղաք

Եւ բերդեր յերկիր շինեցին,

Ինչ մահն ի վերայ երեկ՝

Նայ ամէնցն դարտակ գնացին.

Խիրեանց անհուն գանձէն

Լոկ խիրեանց հետ փող մն շառին :

Խուդաքի.

Աշխարհի մեծերը բոլորը մեռան,

Խոնարհեցին զլուխները մահվան առջև:

Գետնի տակ անցան նրանք,

Ովքեր ապարանքներ արարեցին:

Հարյուր հազար բարիքից ու ինչքից

Վերջում պատաճը տարան միայն:<sup>305</sup>

Ակնհայտ սխեման է՝

Կլանք-----մահ

↓

↓

գանձ-----գերեզման

↓

ոչինչ

↓

պատաճը միայն

Սակայն այստեղ առավել հետաքրքիր է այն փաստը, որ Խուդաքիի բանաստեղծության պարսկերեն բնագրի վերջին տողը («Վերջում պատաճնք տարան միայն»), որը բառացի չի համընկնում արաբերենից թարգմանած հայկական կաֆայի վերջաբանին

305 Մոտաքի, Դիվան, 66:

(Լոկ իւրեանց հետ փող մն չառին), ուղղակիորեն համընկնում է հենց նույն ժողովածում պահպանված մեկ այլ կաֆայի վերջաբանին.

Զամենն այժմ այլոց թողի

Մեկ զպատաճըս առի ու գնացի<sup>306</sup>:

Կարելի է ենթադրել, որ իսկական բնագրը ոեցեպցիայի է ենթարկվել և, ցրիվ գալով զանազան նոր տարրերակներ ծնել: Գուցե այս հանգամանքը ավելի ամրապնդի ն. Ակինյանի այն դրույթը (որը ի դեպ պաշտպանվում է նաև Հ. Սիմոնյանի կողմից<sup>307</sup>), թե այդ կաֆաները իսկապես 10-րդ դարում կատարված թարգմանություններ են, որոնցում միջնադարի հայ թարգմանիչները իրենց ազատ են զգացել և հեռացել են բնագրից<sup>308</sup>: «Թարգմանություն» կոչվող իրողության միջնադարյան պատկերացումները միշտ չեն, որ համընկնում են ժամանակակից չափանիշներին: Միջնադարյան թարգմանիչները ազատ և անկաշկանդ միջամտում էին օտար հեղինակի տեքստին, յուրովի մեկնարանում էին այն և փոխադրում: «Փոխադրություն» կոչվածը այնքան հարաբերական էր դառնում, որ կարող էր զուտ աշխարհիկ ստեղծագործությանը զուտ հոգեւոր հագուստ հազցնել: Օրինակ, «...ոմն փարիզցի վանական 1467 թ. արտագրել է Օվիդիոսի «Սիրո արվեստը»՝ մեկնարանելով վերջինս ի փառս Մարիամ աստվածածնի»<sup>309</sup>: Փատորեն թարգմանվող ստեղծագործությունը հարմարվում էր ժամանակի ոգուն և ծնվում որպես մի նոր հուշարձան:

306 «Հանդէս Ամսօրեալ», Շուշ տեղում:

307 Տե՛ս Հ. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաֆաները, Երևան, 1975, էջ 142-51:

308 Օրինակ, 14-րդ դարի պարսկական բարյախրատական հուշարձաններից մեկը՝ «Թուրակագիրը», ժամանակին յարգմանվել էր սամակիտից: Սակայն բարգմաննիշը՝ Ձիյա-աղ-Դին նախշարին, այնպիսի մշակման և խմբագրման է ենթարկել, այնքան է հեռացել բնագրից, որ այն իրավամբ համարվում է վերջինն ստեղծագործությունը:

309 Բազմաթիվ են աշխարհիկ տեքստերին բարեպաշտական երանց տալու օրինակները եվրոպական հուշարձաններում (տե՛ս Ս. Դ. Սերեբրյանի, նշվ. աշխ., էջ 209):

Ըստ Գյոթեի արևմտյան-արևելյան սինթեզի տեսության՝ համաշխարհային գրականությունները «հրաշալի մեկուսացման» մեջ չեն եղել: Այդ է պատճառը, որ և արաբական, և պարսկական, և բյուզանդական և այլ գրականություններին հատուկ միտումներ և երանգներ մուտք են գործել հայոց պոեզիա, որոնք ոչ միայն չեին արգելակում ազգային-ավանդականի զարգացումը, այլ որոշ առումով նաև խթանում էին այն:

ՔՆԱՐԱԿԱՆ «ԵՍ»-Ի ՀՈԳԵԲԱՆԱՑՄԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Որպեսզի չստացվի այն տպավորությունը, թե հայոց և պարսից սիրային քնարերգության մեջ նկարագրական մեթոդի կողքին իսպառ բացակայում է հերոսների հոգերանացումը, ուղղում ենք կանգ առնել սակավաթիվ այն նմուշների վրա, որոնք կարծես թե դուրս են գալիս սիրային բանաստեղծության ընդունված կաղապարից: Դրանցում սիրուհին չի երևում, սակայն առկա են նրա հմայքի «Հետևանքները»: Բանաստեղծականացման առարկան սիրելիի «պատկերից» փոխվում է հերոսի «պատկեր-հոգեվիճակի» նկարագրմանը, որում կարծես թե աղոտ գծագրվում է շարժում, իրավիճակ: Կոստանդիին երզնկացու և Հովհաննես Թղկուրանցու ստեղծած գեկորատիվ սիրեցյալի կողքին երևում է նաև անհատականության տարրեր ցուցաբերող հերոս:

Ես քո սիրուն չեմ դիմանար, հալալ արա, հանսը մեռայ,  
Առ ի հետ այլ զոսկի փէտատ, և եկո փորէ ինձի թուրպայ:

Թող լրուանան զգիս զինով, մտրուա քերեն ինձ քահանայ,  
Կանանց տերևն թող պատնեն՝ տանին թաղեն ի նոր  
պաղչայ:

Զսիրտս երեցիր ու սղկեցիր ու քաշեցիր յաշըն սուրմա,  
Դարձար զարիւնը վաթեցիր և,  
ի ոսպօնի ոռրի ճինա: <sup>310</sup>

Այս սիրո տաղը տեղադրված է Թղկուրանցու ժողովածուի հավելվածում և կասկածի տակ է առնվում նրա պատկանելությունը։ Մենք նույնպես ունենք այդ կասկածները, որովհետև ակնհայտ է բառային ֆոնդի անհամապատասխանություն Թղկուրանցու բառարանին և ոճին։ Նման պարագայում հետաքրքիր

<sup>310</sup> Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 217:

արդյունք կարող է տալ թլկուրանցու բոլոր տաղերի հաճախականության բառարանի կազմումը։ Այս բանաստեղծությունը ավելի մոտ է չգտված, բանահյուսական արգեստին։

Անշուշտ պատմական միջավայրից կտրված բանաստեղծությունը, որը առավելապես հարում է անանունին, դժվար է մեկնաբանել և վերլուծել, սակայն այս պարագայում կարևոր չէ, թե մեզ հայտնի Հովհաննեսներից ո՞րն է իրոք այս «փոքր ողբերգության»<sup>311</sup> հեղինակը։ Մեզ հետաքրքրում է միայն գրական փաստը՝ հերոսի հոգեբանացման տարրերի երեան գալը, սիրելիի կերպարի երկրորդ պլան մղվելը (որը, չենք կասկածում ժողովրդական սիրային երգերում վաղուց առկա է եղել)։ Այն ցույց է տալիս, որ երկու գրականությունների քնարերգության ձևավորման սկզբից՝ իդեալականացման՝ ուսալիզմին խորթ այդ մեթոդի հետ զուգընթաց, զարգանում է մարդկային հոգեվիճակի նկարագրությունը, ճիշտ է, հաճախ նատուրալիզմի և ցավայինօրգանական գգացումների շրջանակում։

Բնութագրելով Հովհաննեսի վերոհիշյալ տաղը՝ Վ. Բրյուսովը գրում է. «Իսկական զգացմունքների այսպիսի ճիշեր չկան ոչ Պետրարկայի սոնետներում, որը ապրել է մի դար առաջ, ոչ էլ Ռոնսարի սիրային երգերում, որը գրել է Հավանորեն մի դար հետո։ Բանաստեղծը գտել է սիրո այնպիսի խոստովանություններ, որոնք մեզ լիովին հասկանալի դարձան այն բանից հետո, երբ իրենց հայտնություններն արեցին Ալֆրեդ դը Մյուսեն, Հայնեն, Բողլերը...»<sup>312</sup>։

Մենք մտադիր չենք նվազեցնել Հովհաննեսի բանաստեղծության արժեքը, ոչ էլ զրկել նրան վերագրվող պատմական առաջնությունից, պարզապես ուզում ենք հիշատակել արևելյան աշխարհի այլ տարածաշրջանում ստեղծագործող պարսիկ հեղի-

նակներին, հայ և պարսիկ ժողովրդի պատկերավոր մտածողության, գեղագիտական ըմբռնումների և չափանիշների ընդհանրությունը ընդգծելու համար։

#### Օնսորի.

Գիշերները, երբ հիշում եմ մեր միացման պահը,

Մինչև լուս հազար տեսակ ողբում եմ,

Սարսափում եմ (այն մտքից), որ գիշերը մահս ինձ շխնայի, Որ կրկին հանդիպմամբ խանդավառեմ հոգիս<sup>313</sup>։

Այս բանաստեղծությունները կառուցված են կյանք-մահ հայտնի Հակաթեղերի հիման վրա, համապատասխան դրամատիկ լրացումների ուղեկցությամբ (ողք, արյունահեղություն, այրում ևն)։ Ուշագրավ է սիրուհու կերպարի բացակայությամբ նրա հնարապորությունների ցուցադրումը՝ կառուցված տրամադրությունների հակադրության վրա։ Հերոսը տառապում է, իսկ սիրությեկտը՝ զվարճանում։

#### Հովհաննես.

Դարձար զարինը վաթեցիր ի ոտվընիդ դըրիր հինայ։

#### Թահիր Զագանի.

Երկի նրա համար այդ կուոքը իմ արյունը

Թափեց, որ (դրանով) ներկի իր շիկակարմիր ձիգ<sup>314</sup>։

Այսպիսով, պարզ է դառնում, որ սիրային քնարերգությունը այնուամենայնիվ զարգացել է երկու ուղղությամբ՝ դեկորատիվ-նկարագրական և հոգեբանական։

Վ. Ժուկովսկին իր աշխատությունը սկսում է հետեւյալ խոսքերով. «...Պարսկաստանում գրականության վրա իշխում էր քաղաքականությունը»<sup>315</sup>։ Այո, և այդ քաղաքականության իշխա-

311 Չոն Դարմստետրի արտահայտությունն է՝ արված Շեուղաքի բանաստեղծություններից մեկի կապակցությամբ։

312 Поззия Армении с древнейших времен до наших дней со вступительным очерком и примечанием В. Брюсова, М., 1916., стр. 54.

313 Պարսկական գրականության մեջ սիրային քնարերգության զարգացման առաջին շրջամին, որին պատկանում է Օնսորին, նույնականությունը համացանցական երանցը։

314 Մ.-Ի. Օ. Օսմանօ, Տիպ, մեթոդ, ստիլ, ստր. 47.

315 Վ. А. Жуковский, Али Ауахճազдин Էնվեր, СПб., 1883, стр. IX.

նությունը առավել գորեղացավ Մահմուդ Ղազնավյանի տիրապետության օրոք, երբ նա արքունիքում ստեղծեց արհեստավարժանաստեղծների ինստիտուտ, «բանաստեղծների արքայի» (մաւլեք ալ շոարա) գլխավորությամբ: Ի դեմս արքունական պոետների, այդ «բիրտ ու ռամիկ» թյուրքը հեռատեսորեն գնահատեց իր քաղաքականության՝ ավարառու արշավանքների քարոզիչներին և ջատագովներին, որոնք հերոսացնում և սրբացնում էին նրա կերպարը: Փաստն այն է, որ տաղանդավոր բանաստեղծների մի «Հզոր խմբակ» այսօր մեզ է թողել դիվաններ, որոնց մոտ 80 տոկոսը ներբողներ են՝ շատերը հենց նրան նվիրված: «Բանաստեղծների արքան» փաստորեն օրինականացված գրաքննիչ էր: Այդ է պատճառը, որ Խուդաքի պոեզիան Ղազնավյան շրջանի արքունական արվեստի համեմատությամբ անկաշկանդ ու պարզ է: Այնուհանդերձ, «...ամենախիսնդավառ և սահմակեցուցիչ ներբողների հետ մենտեղ, մենք տեսնում ենք այնպիսիները, որտեղ իսկապես զգում ենք մարդկային սիրտը՝ ցավող և տնքացող»<sup>316</sup>: Սակայն դա ժամանակավոր երեսույթ էր: 12-րդ դարից սկսած՝ պարսից պոեզիան ազատագրվում է այդ ճնշումից և զարգանում այլ՝ բնականոն հունով:

Հայոց պոեզիան, որ մինչև 13-րդ դարը գտնվում էր հոգեոր ինստիտուտի վերահսկողության տակ, ճանապարհ է հարթում դեպի ժողովրդական զանգվածները: Հատկապես այդ շրջանում հայ գրականությունը չէր կարող անհաղորդ մնալ սեփական ժողովրդական ստեղծագործությանը, ինչպես նաև՝ հարեւն ժողովրդների մշակույթին:

## ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, ԹՐԵ ՆՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Դա իր խոսքն է՝ գիտակցաբար վերահանդերձավորված օտարի խոսքով, և օտարը՝ խորաթափանց վերապրված՝ որպես սեփական:

Լ. Մ. Բատկին

Պարսից գրականության աշխարհիկ ոգին, անշուշտ, իր ազգեցությունը պետք է ունենար հարեւն ժողովրդի վրա և խթաներ այդօրինակ մտածողության դրսեորումները: Այն էական դեր էր խաղում տարածաշրջանում, այդ է պատճառը, որ հարեւն վրաստանը նույնպես զերծ չէր մնում այդ ազգեցությունից: Նիկողայոս Մատը այդ կապակցությամբ նկատում է, թե մոնղոլների օրոք, որոնք ի դեպ առավել հանդուրժող էին քրիստոնյաների հանդեպ, երբ կապը թուլացավ պարսիկների հետ, ապա Վրաստանը չտվեց և ոչ մի աշխարհիկ գրող<sup>317</sup>: 13-15 դդ. տարածաշրջանում սոցիալ-պատմական փոփոխությունների, ժողովրդական շարժումների, կրօնամիստիկական գաղափարների փոխներթափանցման, ժողովրդների անմիջական շփումների, հայոց մեջ հոգեորականության ազդեցության թուլացման հետ մեկսեղ պոեզիայում ձևավորվում է աշխարհիկ սկիզբը, որը բազմազան դրսեորումներով է հանդես գալիս: Անթաքույց է դառնում մեր տաղասացների՝ Կոստանդին Երգնկացու, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու և այլոց ծանոթությունը պարսից պոեզիայի նմուշներին: Գրիգորիս Աղթամարցու ժառանգության մեջ պահպանված տաղերը ցույց են տալիս, որ նա ճանաչել է իրանական պոեզիան, հատկապես՝ «խայտարդետ» կոչվող բանաստեղծությունների ձևը, որոնք գրվում էին ընդմիջվող պարսկերեն, թյուրքերեն, արաբերեն լեզուներով: Դա այնքան տարած-

317 Հմտ. Н. Mapp, Возникновение и развитие древнегрузинской светской литературы, стр. 232.

ված երևույթ էր, որ պոետիկայի տեսության մեջ անվանում ուներ՝ մոլամա, և դիվաններում հատուկ տեղ էր զբաղեցնում<sup>318</sup>:

Աղթամարցու պոետիկայում ակնհայտ է պարսից պոեգիայի հետ ընդհանրության մի քանի ձև, որոնցից մեկը քախալուն է, գրական կեղծանվան փաստումը, որը մենք նկատել ենք դեռևս կոստանդին և Հովհաննես Երզնկացիների մոտ: Դա պարսկական դագալի պարտադիր կանոններից մեկն էր, ուշագրավ մի երևույթ, որը վերջնականապես կայացավ 13-րդ դդ. և բանաստեղծական «հս»-ի հաստատման և անհատականության դրսերման եղանակներից մեկը դարձավ: Հայ տաղերգության մեջ մենք արդեն ծանօթ ենք այդ երևույթին, որը ակրոստիքոս է կոչվում: Դրա տարբերակները՝ ծայրակապը, գլխակապը, հայոց մեջ արտահայտում են մեր տառերի նկատմամբ ունեցած պաշտամունքը, որը տարբեր գեղարվեստական երանգավորում է ստանում: Գրիգորիս Աղթամարցու որոշ տաղերում կամ տողերի առաջին տառերով, կամ էլ վերջին տանը հիշատակվում է Գրիգորիս անունը.

Սորին սպասարորէ և աշակերտի՝  
Գրիգորիս, մականունս է Աղթամարցի<sup>319</sup>.

Հայտնի «Այրէն մինչև Քէն» բանաստեղծությունը<sup>320</sup> մեզ հիշեցնում է Մանուչեհրի բեյթը:

Աղթամարցի.

Այրէն մինչև ի Քէն քենէ գանգատիմ ես  
Բաներս ես յում ասեմ երբ դու լըսող չես<sup>321</sup>:

Մանուչեհրի.

Թյուրքական լաղով դու լավ ես երգում,  
Ինձ համար թյուրքական և օղուզական երգեր երգիր.

318 Տե՛ս Քոլլիաթ-է Սաահի, Թեհրան:

319 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, էջ 127:

320 Ն. Ակինյանի կարծիքով այն ուղերձ է իր վարդապետին:

321 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, էջ 160:

Ամեն լեզվով դու կարող ես երգել,  
Դու ինձ համար Ա-ն ու Հ-ն ես (ամեն ինչի)<sup>322</sup>:

Գրիգորիսի պոեգիայում տեխնիկական վարպետությունը ցուցադրելու երևույթը ակնհայտ է: Տաղերից մեկը իր քառյակների առաջին տառերով կրկնում է հայոց այբուբենը<sup>323</sup>: Այդ ամենով Աղթամարցին ընդհանրություններ ունի պարսիկ բանաստեղծների հետ, որոնք «պատասխան» անվան տակ նոր պատկերի և բարդ հանգի որոնումներում հաճախ զոհում էին բանաստեղծության միտքը: 12-րդ դարի արքունական բանաստեղծ Ամաղը այնպիսի կատարելության էր հասցել պատկերի բարդությունն ու ձայնաներդաշնակության տեխնիկան, որ նրա բանաստեղծությունը որպես նմուշ մտել է Ռաշիդ-ադ-Դինի Վաթվաթի պոետիկայի տրակտատ<sup>324</sup>:

Այս օրինակները, բացի մեզ հետաքրքրող բանաստեղծական միկրոպետիկայի ընդհանրությունից, ցույց են տալիս նաև, որ թյուրքերեն երգերը 12-րդ դդ. պարսիկ ժողովրդի մեջ արդեն գործածական են եղել, տարածված, որ այդ լեզուները տարածաշրջանում մատչելի են եղել և ընդունված: Մի հանգամանք, որ մենք ավելի ուշ՝ 14-15-րդ դդ., տեսնում ենք հայոց հայրենների բառապաշտում, որից և սնվում էին մեր տաղերգուները: «...Երբ փեսային կողմի խնամի կանայք աղջկան կողմը կերթան, ձեռաց թմբուկով տաճկերեն չորս, հինգ հարեն (երգ) կերգեն, յետոյ կսկսին գովասանական երգերը, որ սովորաբար տաճկերեն են և որոնց չեր կըսեն»<sup>325</sup>: «Մեր աշուղները, որ... շատ ավելի

322 Արաբական այրութենի տասնյակներ ցույց տվող տառերն են: (Տե՛ս Մանուչեհրի, Դիվան, էջ 138):

323 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, էջ 188:

324 Ամաղ Բոյսարայի.

Եթե մրջյունը խոսել իմանար, և մազը հոգի ունենար,

Ապա ես այդ մրջյունն եմ, որ խոսել գիտես, և մազը, որ հոգի ունի:

Բնագրում ակնհայտ է մ զ ս տառերի ձայնանվագը. ազյար մուրի սխան գոյաց, վը գյար մուի ուավան դարադ, մաճ ամ մուրի սխամզուամ, վը ան մույամ, թե չան դարադ (տե՛ս Ռաшиդ-ադ Ջին Վատվատ, Սադի, ստր. 132):

325 Թ. Շամիկյան, Հնութիւնը Ակնայ, Թիֆլիս, 1885, էջ 414:

պարսկերեն ու թըրքերեն լեզվով կըքերթեյին... պետք մը կըզգաւ-  
յին սակայն իրենց մայրենի լեզվով արտահայտելու իրենց հոգու  
մեծ հուզումները»<sup>326</sup>: Հենց այդտեղից էլ նրանք մուտք էին գոր-  
ծում գրականություն և սինթեզվելով պաշտոնական պոեզիայի  
ավանդույթների հետ՝ գրականության մեջ ձևավորում էին նոր ո-  
րակ: Այստեղից էլ սերում են Աղթամարցու և մյուսների «խայ-  
տարդետ» բանաստեղծությունները՝ գրված պարսկերեն, հայերեն  
և թյուրքերեն լեզուներով<sup>327</sup>:

Պարսկի բանասեր Զիա-ադ-Դին Սաջադին այդ պատմական  
ժամանակաշրջանը որակում է որպես Անգրկովկասի քրիստոնյա-  
ների ու մահմեդականների ամուր կապերի շրջան: Այդ առիթով  
օրինակ ենք բերում Խաղանիի բանաստեղծությունները:

Խաղանի.

Երբ ես հասնում եմ Հայատան,

Հայատանի ժողովուրդն ինձ զինով է դիմավորում<sup>328</sup>:

Մեզ հայտնի է Խաղանիի այդ ոգով գրված մեկ այլ բանա-  
ստեղծություն, որը հաստատում է այդ շրջանում հատկապես՝  
արելյան ժողովուրդների փոխադարձ բարեկամությունը.

Արխազիայում (միշտ) բաց է դուռը

Եվ հոռոմների մոտ՝ օթևանը՝ պատրաստ...<sup>329</sup>

Ինչպես տեսնում ենք, հետազոտողները չեն շրջանցում ազ-  
դեցությունների խնդիրը: «Կարելի է հաստատել, թէ պարսկերէն  
տաղերը, զորոնք կը գտնենք Աղթամարցւոյ տաղերուն մէջ,  
փոխառութիւն ըլլան պարսիկ բանաստեղծութիւններէ, բայց  
կրնանք ըսել, թէ անոնք յորինուած են նմանութեամբ պարսիկ

տաղերու, ուստի ենթակա պարսից ազդեցութեան<sup>330</sup>»:

Հարկ է կրկին վերադառնալ Երգնկացու և Աղթամարցու  
պոեզիային և ծշտել, թե ի՞նչ է ներառում ազդեցություն հասկա-  
ցությունը, և արդյո՞ք պարսկաբանությունների բոլոր տեսակնե-  
րը ազդեցություն պետք է համարել, թե՞ մեզ հետաքրքրող  
երևոյթի համար առավել համապատասխան որակում կա:

Կոստանդին Երգնկացին մի ուշագրավ վկայություն է թո-  
ղել, թե ինչու է ինքը բանաստեղծություն գրել «Շահնամայի  
ձայնով»: Այր մին...ել կայր ու Շահնամայ ասէր ձայնով. նա եղ-  
բայրք խնդրեցին թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ,  
ես շինեցի զրանքս զայս ի Շահնամայի ձայն կարդացէք<sup>331</sup>:

Դա նշանակում է՝ գրել հայերեն բանաստեղծություններ,  
կարգալ պարսից ձեռվ, հարմարեցնել հայոց բանաստեղծությունը Շահնամեի չափին: Աղթամարցու պոեզիայում «խայտարդետ»  
տաղերի երևոյթը մենք անվանում ենք դիտավորյալ նմանա-  
կում, ոճապատճենում, որտեղ նույնիսկ ջանք չի գործադրվում  
թաքցնել նպատակը:

Երբ Պետրարքայի բանաստեղծություններից մեկում հայտ-  
նաբերում են Վերգիլիոսի մի տողը, նա զարմանում է և արդա-  
րանում՝ ասելով, թե թող ների իրեն Վերգիլիոսը, քանի որ ինքն  
էլ ժամանակին օգտվել է Հոմերոսից և Լուկրեցիոսից<sup>332</sup>: Վեր-  
ջինս չգիտակցված «ընդօրինակություն» է, մեծագույն վարպետի  
ազդեցություն, իսկ մենք քննում ենք ազդեցության այն ձեւը, ո-  
րը նմանակում անունն է կրում և կատարվում է դիտավորյալ,  
անսըող, գուցե իր մեջ երբեմն կրում է «պարողիայի» երանգ:

Նմանակության և ոճապատճենման երևոյթը հատուկ է բո-  
լոր ժամանակներին և բոլոր գրականություններին: Միջնադար-

326 Կ. Կոստանդին, Գրիգորիս Աղթամարցի և իր տաղերը, Թիֆլիս, 1898:

327 Գրիգորիս Աղթամարցու տաղերի պարսկերեն հատվածներին է նվիրված Բ.  
Չուգազյանի «Հայ-իրանական գրական առնչությունները» հետազոտու-  
թյան 4-րդ գլուխը. Եղևան, 1963:

328 Խաղանի, ՈՒիկան, էջ 881.

329 Նույն տեղում, էջ 25:

330 Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարցի, կեանքն եւ ցերթուածները, գրեց Ն.  
Ակիմեան, Վիեննա, 1958, էջ ճնագ:

331 Կոստանդին Երգնկացի, Տաղեր, էջ 209:

332 Հմմտ. Ա. Բատին, Итальянское возрождение в поисках индивидуальности, М.,  
1989, стр. 32-40.

յան արվեստագետները հաճախ նմանակում էին անտիկ արվեստին, հետոորդները նմանակում էին իրենց հայտնի նախորդներին: Հայ գրականության մեջ այդ երեսույթը նույնպես տարածված և ընդունված էր: Հայտնի է, որ Նարեկացու հաջորդները ձգտել են նմանվել նրան, «...հետեւ հանճարեղ բանաստեղծի որեւ սկզբունքին»<sup>333</sup>: Նմանակության միջնադարյան պատկերացումները և ըմբռնումներն այնքան անկաշկանդ ու անսահմանափակ էին, որ արաբապարսից պոետիկայի մասին հայտնի իսլամագետ Գ. Ֆոն Գրյունեբաումը սրամտորեն նկատում է: «Կարելի է կարծել, որ բոլորը պատճենում էին իրար, և որ գրագողությունը մեծապես օգտագործվում էր և նույնքան էլ մեծապես՝ ներվում»<sup>334</sup>:

Պարսից պոետիկայում նմանակության երեսույթը դրված էր պոեզիայի ծննդարանության հենց հիմքում, այլապես ինչպես հասկանալ նեղամի Արուզի Սամարդանդիի՝ պոետիկայի գիտակի այն խոսքերը, թե բանաստեղծական արվեստում ոչ մեկը չէր հասնի կատարելության, մինչև անգիր չիմանար 20.000 տող իր նախորդների և 10.000 իր ժամանակակիցների բանաստեղծություններից<sup>335</sup>:

Նմանակությունը կատարվում էր ի լուր ամենքի: Այդ են ցույց տալիս համաշխարհային գրականության գանճարանը մտած րազմաթիվ նմանակություններ՝ Գյոթե-Հաֆեղ, Պուշկին-Ղորան ևն:

Պարսից պոեզիայում նմանակության երեսույթը այնպես էր օրինականացված, որ դրա տարբեր տեսակների համար պոետիկայում գոյություն ունեին հատուկ տերմիններ, իսկ վերջիններիս տարբերակման և իրարից օգտվելու թույլատրելի սահմանները

մասնագետների հատուկ քննության նյութն էին դառնում: Դրանցից են՝ բաղիդը, նազիրեն, ջավարը, բազմինը ևն, հասկացություններ, որոնց սահմանագատման եղբերը առաձգական են և աննշան տարրերություններով նույն երեսույթն են արտացոլում: Օրինակ՝ պատասխանը (ջավար) լայն ընդգրկում ուներ՝ սկսած պատկերի կրկնություննից, վերջացրած բանաստեղծական չափով կամ հանգով: Այն առավելապես տարածված էր մրցույթների ժամանակ և հաճախ էքսպրոմտի բնույթ էր ստանում:

Նմանակությունը տարբեր փունկցիաներ էր իրականացնում: Եթե այն պատասխան էր ինչ-որ մեկի հանգի կամ չափի կատարելությանը և վարպետությանը, ապա նմանությունն այնքան ընդգծված էր լինում, որ հարկ չէր լինում փնտրել բնօրինակը: Վերջինիս յուրահատկությունից՝ ոճից, հանգից, չափից, մոտիվից, հասկացվում էր, թե ում է ուղղված «պատասխանը»: Եթե հանձն առած մոտիվին կամ պատկերին (մասնի) չէին կարողանում առավել փայլուն և անսպասելի լուծում տալ, կարող էին «պատկերի գող» անվանվել<sup>336</sup>: Նմանակության մեկ այլ ձևը «թազմինն» է, որի մասին պոետիկայի հայտնի տեսարան Ալ-Ռադույյանին գրում է: «Թազմինը» այն է, երբ բանաստեղծը մեկ ուրիշի բեյթը տեղադրում է իր բանաստեղծության մեջ, որը կատարվում է հարգանքից և ոչ թե գողանալու ցանկությունից...»<sup>337</sup>:

Այստեղ կարեորը այն էր, որ մեջբերված բեյթը կապացվի սեփականի հետ և նախորդ հեղինակի գաղափար-պատկերը ներկայանա նոր որակով: Երբ մեջբերումը ճկուն և նրբաճաշակ լուծում էր ստանում, պոետիկայում այն կոչվում էր «հրաշալի ներմուծում» (հուն-է թալի): Այսպիսով՝ բանաստեղծությունները հանդես էին գալիս նոր, տվյալ բանաստեղծին յուրահատուկ

333 Տե՛ս Ա. Գ. Մադոյան, Միջնադարյան հայկական պոեմը (ԺԱ-ԺԶ դարեր), Երևան, 1985, էջ 31, տե՛ս նաև Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, էջ 22:

334 Հման. Գ. Է. Փոն Գրյունեբայմ, Основные черты, стр. 128.

335 Հիզамի Արյզն, նշվ. աշխ., էջ 59:

336 Տե՛ս Ա. Ա. Стариков, К вопросу о традиции эпической "Пятерицы" в литературах

восточного средневековья в сб.: Взаимосвязь литератур Востока и Запада, М., 1961, стр. 60.

337 Տե՛ս Ռахим Мусулманкулов, Асрори сухан, Душанбе, 1980, с. 7.

գծերով։ Դա կրկնություն չէր համարվում, արտագրություն՝ նույնպես, այլ դառնում էր այն, որը ստեղծվում էր ափանդականի, արդեն ծանոթի և նորի հանդիպումից։ Նմանակվում էր ոչ միայն հանգը, պատկերը, բառը, թեման, այլ նաև ժանրը։ Նեզամիի «Խամսեն» (Հնգամատյան) իր ետևից բերեց նմանակումների մի հզոր հոսանք ողջ արևելյան գրականություններում։ Զամի, Ամիր խոսրով Դեհկի, Ալիշեր Նավոյի, Լամիի ևն<sup>338</sup>:

Գրիգորիս Աղթամարցու հայտնի «Խայտարղետ» տաղերը նոր երևույթ էին հայ գրականության մեջ, որը մենք դիտակցված նմանակություն ենք համարում և ոչ թե ազգեցություն։ Դա հարգանքի տուրք էր պարսից դասական պոեզիային և ցույց՝ սեփական վարպետության և գիտելիքների։ Նմանակությամբ նմանակողը ընդգծում էր նմանակվող նյութի արժեքը, որտեղ նմանակության նյութը դառնում էր «փորձաքար» իր կարողություններն ու տաղանդը ցուցաբերելու։

Աղթամարցի.

Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդըն դու,  
Չըրա դէր ամատի, բէ մարամ բէ թու (Խնչո՞ւ ուշացար,  
Ես հիվանդ եմ առանց քեզ)...

Կամ՝

Պըստանամ թագպէի բփուշամ խրդայ (Մեղեսիկ<sup>339</sup>  
կվերցնեմ, քուրձ կիագնեմ)...

Կամ՝

Տուշմանի թուրալ ջավադ ճիկարխուն  
(Թշնամուդ սիրտը թող արյունի)...

Կամ՝

Պութիմ խիրաթմանդ քարդի դիւանայ  
(Խելամիտ էինք, դարձիր խելագար)<sup>340</sup>:

338 Տե՛ս Ա. Ա. Շտրիկով, նշվ. աշխ., էջ 60:

339 Թագբեհը մահմեղականի պարտադիր աստրիբուտն է:

Այս պարսկերեն ձևերը հետևողականորեն գծագրում են մեզ ծանոթ յաւելը՝ իր ափանդական աստրիբուտներով։ Մեռնում եմ, հիվանդ եմ, կրօնափոխ, դավանափոխ կլինեմ, դու գեղեցիկ ես, արյուն ես հեղում, խելագարություն բերում են։ Սապդիի «Խայտարղետ» բանաստեղծությունները, ընդմիջվող արարերեն և պարսկերեն բեյթերով, նույն մողելն ունեն։

Մինչև օրս ստուգապես հայտնի չէ, թե Աղթամարցին ու՞մ է նմանակում, ու՞մ պատկերներն է կրկնում կամ մեջ բերում։ Կարծում ենք, որ նրա ջանքերն ուղղված են սիրային թեմայի նմանակմանը, նրբանաշակ ոճին։ Այդ են հաստատում խայտարղետ տաղերի հայերեն հատվածներում համեմատությունների խտացումները, որոնք որպես բանաստեղծական արտահայտչամիջոց ծանոթ էին մեզ նարեկացուց, Ծնորհալուց։ Արեգակ, Լուսին, Արուսյակ, առավոտ, շուշան, ծաղիկ, վարդ, կանթեղ, ճոհար ևն, որոնք պարսկերեն զուգահեռների հետ միասին՝ շամս-արև, ճոհար-լալ, Արուսյակ-Ջոհալ ևն, գեկորատիվ սիրային քնարերգության մի նոր տարատեսակ են ստեղծում։ Այստեղ չենք կարող չհիշատակել Ն. Մաոի այն դիտարկումը, թե Աղթամարցին պճնազարդվում է իր լեզվական գիտելիքներով՝ երեք լեզվով<sup>341</sup>։

Այդ երևույթը միայն մեր գրականության մենաշնորհը չէր։ Հայտնի է, որ վրաց արքունիքում կազմակերպված խնդույթներին մասնակցում էին տարբեր ազգերի և դավանանքների պալատական բանաստեղծներ, որոնք տիրապետում էին արևելյան այլ լեզուների։ Խաղանից մեզ հասած մի քառյակը, որտեղ պարսկերենը ընդմիջվում է վրացերենով<sup>342</sup>, կամ Սուլանիի բանաստեղծությունը՝ ընդմիջվող թյուրքերեն արտահայտություններով, դրա փայլուն ապացույցն են։

340 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր. օրինակները բերված են «Դու ես արևակ, լուսին ի լուսան» սկզբանառողութ տաղից. էջ 199-205 (սովորացի թարգմանություն)։

341 Ի. Մարր, Խայտարղետ աղթամարցի պատմությունները. Երևան, 1960 թ. էջ 31.

342 Այդ մասին տե՛ս Կ. Ի. Չայկին, Խայտարղետ աղթամարցի պատմությունները. Տბիլիսի, 1938, էջ 23։

Սուզանի.

Ո՞վ լուսնադեմ թրքուիի, ի՞նչ կլիներ, որ գայիր գիշերը  
իմ խրճիթը և ասեիր «Ղոնադ քերաք»

Վարդերես թրքուիի, թեպետ ես թյուրք չեմ,  
(Սակայն) գիտեմ, որ թյուրքերեն ծաղիկը՝ չեշաք է  
(կոչվում)<sup>343:</sup>

Նմանակությունները կատարվում էին տարրեր մակարդակ-  
ներով: Գրիգորիս Աղթամարցու պոեզիային հատկանշական են  
լեզվական և պատկերամտածողական ոճապատճենումը: Այս ա-  
մենով հանդերձ Աղթամարցին հարազատ է իր գաղափարախո-  
սությանը, իր հավատին, իր էթնոմշակութային ավանդույթնե-  
րին:

Վաճառական մի հայ և յոյժ ճարտասահն՝  
Մխիթար Բաղիշեցի, և աստուածածան  
Գրնաց նա ի սահման Ատշրպատական,  
ի Ղում և ի Ցիրաղ և ի Խորասան...

Ասեմ. «Դու մուսուլման յազգէ Մահմետին,  
ի բաց թող ըգՔրիստոս և զիաւատ նորին,  
թէ ոչ՝ տանջենք ըզքեզ սաստիկ և ահագին»:  
Ասաց...»Ես ոչ փոխման զլոյս ընդ խաւարին<sup>344:</sup>»

Սա ոչ միայն ցույց է տալիս այն շարժումն ու կապը, որ  
կար արևելյան աշխարհի ժողովուրդների մեջ, այլ նաև քրիստո-  
նեության հաղթարշավ է, որտեղ մոռացության են տրված հավա-  
տը սիրուհուն ստորագասելու կաղապարված, կանոնարկված  
ձևակերպումները, որտեղ լույսը ավանդականորեն քրիստոնու-  
թյան խորհրդանիշ է:

Այսպիսով՝ 14-16-րդ դդ. աշխարհականացող հայոց բանա-

343 Դիվան-է Սուզանի Սամարդանի, Թեհրան: Անգլ. թ. 30 մ'ը Շահնահ թիւ 530:

344 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, էջ 121, 124:

ստեղծական արվեստում ձևավորվում էր սիրային քնարերգու-  
թյունը, որն ուներ կաղապարված և կանոնիկ մոտիվներ և թեմա-  
ներ, բառապաշար, պատկերավորության համակարգ, էսթետիկա  
և հոգեբանություն: Այն պարսից, արաբական և այլ գրականու-  
թյունների հետ ունեցած տիպաբանական, ծագումնաբանական  
ընդհանրություններով և ուղղակի փոխազդեցություններով  
հանդերձ, մտնում է միջնադարյան գրականությունների համա-  
կարգի մեջ և գարգանում նրա ընդհանուր օրենքներով, սեփա-  
կան բանաստեղծական արվեստի լավագույն ավանդույթների հի-  
ման վրա:

Նմանակումը այլ կթնոմշակութային համակարգի յուրաց-  
ման ձևերից է, որ բնորոշ է բազմաթիվ միջնադարյան գրակա-  
նությունների և դրանց գարգացման և նորոգման փուլերից մեկն  
է:

Անցումը միջին հայերենին, մերձեցումը ժողովրդական ար-  
վեստին և դրանց միջոցով պարսից պոեզիային հատուկ ձևերին,  
ոճին, բառապաշարին, մոտիվներին, գալիս են հաստատելու այն  
թեզը, որ միջնադարյան մեր տաղերգությունը նարեկյան շրջա-  
նից հետո, համարեկյան միջավայրում գարգացման մեծ ճանա-  
պարհ է անցել և բյուրեղացել որպես առնչությունների «բարձր  
ձև՝ սինթեզ»:

## **ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՆՆԵՐԸ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔԸ**

12-15 դդ. հայոց բանաստեղծության մեջ ձևավորվում և զարգանում է գաղափարական և ոճական տեսակետից միասնական փոքր ժանրային ձեր մի շերտ, որն ավանդականորեն մեկ անձի է վերագրվում և հայրեն անունն ունի: Հայրենների ստույգ պատկանելությունը ճշտված չէ մինչև օրս, սակայն, այդ ամենով հանդերձ, դրանց գոյությունը անսքող գրական փաստ է այն գրույթի օգտին, որ պաշտոնական գրավոր գրականության ընդհանուր հունից դուրս զարգացել է ժողովրդական բանաստեղծությունը, որում ժողովուրդն ազատ է եղել իր ընտրության մեջ և՝ բովանդակության և ձեր տեսակետից:

Այդ ժամանակաշրջանում, և՝ մահմեղական և՝ քրիստոնյա աշխարհում բուռն զարգացում էին ապրում փոքր ժանրային ձևերը, որոնք իրենց ծավալով, ճկունությամբ պատասխանում էին ժամանակի հրատապ հարցերին: Դրանք հաճախ հանդես էին գալիս ոչ միայն որպես ինքնուրույն ձեւ, այլ նաև՝ շաղկապված գրույթի, պատմվածքի ընդհանուր հենքին: Ա. Մնացականյանը նշում է, որ հայրենների մի ճյուղը, որ հայոց մեջ կափա է կոչվում<sup>345</sup> (այստեղ հայտնի է կաֆա-ղափիե արաբերեն՝ հանգ անվանումը, որն արդեն իսկ մտածելու տեղիք է տալիս, թե կաֆաները ամենայն հավանականությամբ մեր ժողովրդի մեջ մեծ շրջանառություն են ունեցել և այն էլ՝ ոչ մեկ լեզվով) մուտք է գործել նաև արձակ: Համանման երկույթ 13-14-րդ դդ. տեսնում ենք պարսից գրականության մեջ Սաադիի, Նախշաբիի և այլոց

մոտ, երբ քառյակը, բեյթը կամ բանաստեղծական բնկորը (դաթի) շաղկապվում են շրջանակավոր արձակի, զրույցի կամ պատմվածքի հենքին, լրացնում կամ հաստատում նրա գաղափարական բովանդակությունը:

Հայ քնարերգության գարգացման պատմության համար որշակի հայտնություն կլիներ, եթե 12-13 դդ. մեզ հասած հայրենների հավաստի ձեռագիր ապացույց ունենայինք: Սակայն, ցավոք, հայրենների ամենահին ձեռագիրը գալիս է 15-16-րդ դդ., հանգամանք, որ մեզ զրկում է ամուր կովաններից հայրենների ձևագրումը տանել ավելի ետ, ճիշտ այնպես, ինչպես մեզ արդեն հայտնի Օմար հայամին վերագրվող քառյակների ձեռագրերը, որոնք միայն 15-րդ դարից են սկսվում: Սակայն այս պարագայում որոշակիորեն հայտնի է հայամի անձը, նրա կյանքի և գործի դարաշրջանը, ինչպես նաև՝ նրա փիլիսոփայական երկերի գոյությունը, որը հնարավորություն է տալիս, համեմատելով քառյակների և տրակտատների գաղափարական ընդհանրությունները, ինչ-որ չափով ճշտել նրան վերագրվող քառյակների պատկանելությունը:

Ըստ Տեկանցի՝ նահապետ Քուչակն է հայոց դասական հայրենների շարքի հեղինակը, որն ապրել է 16-րդ դ., Վասպուրականի Տոսպ գավառի Խառակոնիս գյուղում և հայտնի է որպես «աշըլ Քուչակ», «վարպետ Քուչակ»: Ինչ վերաբերում է Քուչակ գրական անվանը, ապա ամենայն հավանականությամբ դա պարսկերեն քուչեքն է, որ նշանակում է փոքր. հանգամանք, որ ոչինչ չի ավելացնում մեզ հետաքրքրող հարցերին<sup>346</sup>:

345 Ա. Չոպանյանը չի ընդունում Մ. Աբեղյանի սովորացրությունը. «Քիչակը ալ ծիծաղելի և անլարմար կը գտնէի, որովհենուն աշուղները սիրուն, շնորհալի, պատկերատոր բաներ կը նորուն իրուն իրենց մականուն և ոչ թէ բնական պակասութիւն մը մատնանշող բան մը»: Ա. Չոպանյանը այն կապում է քոչվոր, աստամդական երգիշ-աշուղի կերպարը ծնող զուգորդության նետ (տե՛ս «Հայրեններու բուրաստանը», Փարիզ, 1940, էջ 93): Մենք այս բացատրությունը անհիմ ենք համարում: Քուչեք նրան կարող էր անվանել ժողովուրդը:

345 Տե՛ս «Հայրեններ», աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյան, Երևան, 1995, էջ 12:

Այսօր հայրենների համահավաք տեքստի<sup>347</sup> հետ առաջին ծանոթությունն իսկ ցույց է տալիս դրանց բազմաբովանդակությունը և լեզվանական որոշ տարաշերտությունը: Դրանց տարբեր շարքերը արտացոլում են տարրեր սոցիալական ոլորտներ, քաղաքային արհեստավոր խավերի հետաքրքրություն և տերմինարանություն, կենցաղային երևություն, զարգացող քաղաքների պայմաններում հողից կտրվող գյուղացու կենսական որոնումներ, երեխն գյուղական կյանքի հովքերգություն, պանդիտության մոտիվներ, խրատական-իմացարանական, ուսուցողական մտքեր և հայրենի համար ամենաբնորոշ՝ սիրային քննարերգություն, որի նմուշները մենք ցանկանում ենք դարձնել մեր քննության նյութը:

Մի կողմից սոցիալ-պատմական որոշակի ժամանակաշրջանի արտացոլումը, մյուս կողմից պաշտոնական-էլիտար բանաստեղծության պոհանքայի հետ հայրենների ընդհանրությունները, որոնց որոշ բյուրեղացած ձևեր մտել են դասական տաղասացների պոհանքայի, ուսումնամիրված և հաստատված ժողովրդական Ակնա երգերի հետ նրանց նմանությունը<sup>348</sup> մեզ առիթ է տալիս ենթադրելու, որ դրանք մեկ անձի կողմից չէին կարող հորինված լինել, առավել ևս, չէին կարող 16-րդ դարում արագորեն ձևավորվել և բյուրեղանալ: Դեռևս 10-րդ դարից սկսած՝ հայ մատենագրության էջերում իրեն զգացնել է տալիս բանաստեղծության մեկ տեսակ, որը գնալով դառնում է ուշադրության առարկա և ընդունում զարգացման մեծ ծավալ: Այն սկզբում հատուկ անունով

չի կոչվում, իսկ հետագայում հայտնի է դառնում որպես «Հայրեն» կամ «Հայրէն»<sup>349</sup>:

Հայրենը պարսից քառյակի նման բանահյուսական ծագումունի, և քանի որ արևելյան միջավայրում, ինչպես ենթադրվում է, այն նաև երգվել է տարբեր լեզուներով, ապա հետազոտողները համերաշխ են այն խնդրում, որ նրա անվանումը ձևավորվել է հենց հայերեն ասվելու կապակցությամբ<sup>350</sup>:

Ի դեպ, Մ. Աբեղյանի այս տեսության հետ համաձայն չէ Ա. Չոպանյանը, որը հայրենի ծագումնաբանությունը կապում է հայր արմատի հետ. «Այսպէս, ուրեմն, մեր համոզմունքով, հայրէն կամ աւելի ճիշտ՝ հայրէնի հասկացութիւնը ծագել է հայր արմատից և իմաստաւորել հայրենի (հայրական) գաղափարը»<sup>351</sup>:

Եթե նկատի ունենանք, որ հայրենները պահպանվել են Հոգ-հաննես երգնկացուց, Ֆրիկից, Խաչատուր Կեչառեցուց մեզ հասած գրական ժառանգության մեջ, որոնք Ա. Մնացականյանը «անհատական» հայրենների խմբին է դասում, ապա պարզ կդառնա, որ հետագայում Քուչակին վերագրվող հայրենների հետ մեկտեղ դրանք բոլորը արտացոլում են ոչ միայն սոցիալ-պատմական տարրեր ժամանակահատվածներ, այլ նաև՝ հեղինակային սոցիալական բազմախավ կազմ, որով հայրենը դառնում

349 Հմտ. «Հայրէններ», էջ 8:

350 Մ. Աբեղյան, Հայոց հիմնարարական պատմություն, գիրք Երևորդ, 11-19 դ. 30-ական թթ., Երևան, 1946, էջ 418:

Այսուեւ հետաքրքիր է նշել, որ հայոց միջնադարյան նրգարվեստում նույնական առկա է մի շերտ, որը վերագրվում է առանձին հեղինակների: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք ժողովրդական ընույթում •Թափանցելով կենցաղ և լայն ժողովրդական զանգվածների ընդերքում հիդարձելով, դրանք հաստատվեցին որպես բանավոր ստեղծագործության արդյունք: Դրանց ժողովրդական ընույթի ապացույցներից մեկը բազմաթիվ տարբերակների գոյությունն է» (Բմմտ. Ա. Ա. Արյունյան, Արմանское городское народное песенное творчество (Автограферат канд. дисс.), Ереван, 1969, стр. 7):

351 Ա. Չոպանյան, Նախապետ Քուչակի դիակնը, Փարիզ, 1902, էջ 35: Ինչ վերաբերում է հայրէն ասելուն, ապա այն բացատրում է իրը «սունե երգել, բայցեր, բայաթի ասել, միայն առանձնայատուկ ոիթմով, ուտանատրով» (տես՝ Ա. Չոպանյան, «Հայրէններու բուրաստանը»):

347 Տե՛ս «Հայրէններ», նշվ. աշխ. :

348 «Ակնայ և Վանայ ժողովրդական երգերի Ամանութեան, շատ անգամ գրեթէ բառացի ինելու պատճառը Քուչակի երգերի հետ պետք է ԺԱ. դարից առաջ փնտրել, իսկ այդ պատճառը այն է, որ ակնեցիք նոյն Վանայ ժողովրդը լինելով, իրենց զարդի ժամանակ մայր-հայրենիթից տարել են և իրենց ժողովրդական երգերը և առանձին կերպով զարգացնելով, հասցել միջն մեր օրերը, հարկավ փոփոխելով, բայց և միշտ էականը նոյնը պահելով» (տես՝ Յովհաննես Թաղէւսեան, Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903, էջ 33, հմմտ. նաև Սիրո երգիչ Նահապետ Քուչակի երգերը, Մշակեց Գևորգ Աստուր, Թիֆլիս, 1905):

էր ամենադեմոկրատական ժանրային ձեւը:

Ինչ վերաբերում է պարսից քառյակին, ապա նրանում տեղի էր ունենում մի հետաքրքիր երևոյթ, երբ Հանձին բանաստեղծության յուրացվում էր անունը: Օթինակ, Օմար Խայամի անունը մագնիսի նման իր շուրջն էր հավաքում բազմաթիվ նույնատիպ բանաստեղծություններ տարբեր հեղինակների կողմից ստեղծված: Վերջիններիս Համար կարեռություն էր ներկայացնում իր ստեղծագործության (Հաճախ էքսպրոմտի) լույս աշխարհ գալը և շրջանառության մեջ մտնելը, որտեղ անունը ծառայում էր որպես «որակի նշան»: Այսպիսով, բանաստեղծության այդ «տեսակը» դարեր շարունակ համալրվում էր նորանոր տարրերակներով, և որքան շատ էին այդ տարբերակները, այնքան հավաստի էին դրանց մեծ գործառության ապացույցները: Հայրենները նույնական կողեկտիվ աշխատանքի արդյունք ենք համարում, որոնց ստեղծման Համար անշուշտ նախատիպ են հանդիսացել մեծ ժողովրդականություն վայելող հեղինակային, անհատական արքեստի գործեր, որոնք բազմաթիվ կրկնությունների և նմանակումների առիթ են ծառայել:

Ո՞վքեր են եղել այդ անհատները, և որո՞նք են այն առանձնահատկությունները, որ ձևավորել են փոքր ժանրային ձևերի յուրահատուկ «տեսակ»: Նահապես Քուչակ, Օմար Խայամ, Մահսաթի խանում ևն: Նրանք ժողովրդին կյանքի տարբեր էթնոհոգերանական ոլորտների և հասարակական գիտակցության ձևերի հետ կապող չափանիշներ և խորհրդանշներ էին: Քուչակը՝ աշխարհիկ ազատախոհության, Խայամը՝ փիլիսոփայական ազատախոհության, Մահսաթի խանումը՝ *frivol* զգայականության ևն: Կատեգորիաներ, որոնց նկատմամբ հակումը, Համատարած կրոնական բարոյագիտության հետ զուգահեռ, միշտ գոյատեսել է ժողովրդի ընդերքում:

Ա. Չոպանյանը հայրենները համեմատում է Սաադիի, Հաֆեղի, Օմար Խայամի ստեղծագործությունների հետ, որոնց Համարում է թագավորներին ծառայող, արքունական փայլով օժտ-

ված հեղինակներ, այդպիսով, ընդգծելով թվարկվածների և քուչակյան բանաստեղծությունների տարրերությունը<sup>352</sup>: Սակայն Ա. Չոպանյանը մասսամբ է իրավացի: Նախ՝ թվարկվածներից ոչ մեկն էլ պարսկական միջնադարյան պոեզիայում չի համարվում և չէ արքունական: Ով թեկուղ հպանցիկ ծանոթ է իրավամբ արքունական արհեստավարժ բանաստեղծների արվեստին (*Ծնորի, Ֆառուսի, Մանուչեհրի, Անվարի, Ազրաղի Մոեզզի ևն*), նրանց թեմաներին, ոճին, մեթոդին, անմիջապես կնկատի նրանց միջև եղած տարրերությունը: Սաադին, Հաֆեղը, Խայամը՝ որպես հայտնի և հեղինակավոր այրեր, ընդունված կարգի համաձայն ընդամենը արքունիքում մեկնասաներ են ունեցել, սակայն արքունական ծրագրային էթիկետին չեն ենթարկվել, «գրաքննություն» չեն անցել և համեմատաբար ազատ են եղել իրենց ստեղծագործական ընթացքի մեջ: Ավելին, ոմանք հակամարտության մեջ են եղել իշխող խավերի հետ: Հիշենք հենց նույն Օմար Խայամին, որին վերագրվող քառյակները ոչ միայն անընդունելի են եղել իւլամական գրաքննությանը, այլև փաստորեն դուրս են մղվել պարսից գրականությունից, Հանրաճանաչչություն ստացել և սեփական հայրենիք վերագրածել միայն եվրոպացիների կողմից «Հայտնաբերվելուց» և թարգմանվելուց հետո<sup>353</sup>: Ինչ վերաբերում է Սաադիի արվեստին, ապա այն մեծապես հեռացած է արքունական գրականության կազմապարից, և՝ ձեւի և բովանդակության տեսանկյունից և յուրովի սինթեզ է էլիտար ու ժողովրդական-քաղաքային արվեստի, որտեղ հղկված է ուամկական սկիզբը: Քննությունը ցույց է տալիս, որ Սաադիի բանաստեղծությունների և մեր հայրենների պոետիկան բազմաթիվ ընդհանրություններ ունի, ինչը կապված է տարածաշրջանային սոցիալ-պատմական փոփոխությունների՝ համընդհանուր ժողովրդական

352 A. Tchobanian, *Les Trouveres Armeniens*, P. 1905, ինչպես նաև՝ *Поэзия Армении с древнейших времен до наших дней*. Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова, М., 1916, стр. 56:

353 The life of Edward Fitzgerald, Translator of the Rubaiyat of Omar Khayyam. By Alfred McKinley Terhun, London, 1947.

շարժումների, արևելքի տարրեր ժողովրդների անմիջական շփումների, հայոց մեջ հոգևորականության ազդեցության թուլացման հետևանքով ամրապնդված աշխարհիկ ոգու վերելքի, քաղաքների և արհեստների բուռն զարգացման, ինչպես նաև՝ նոր ձևավորված դրական հերոսների, աշխատանքի մարդու՝ արհեստավորի սոցիալական կարգավիճակի հաստատման հետ:

Փորձենք վերը բերված դրույթը հիմնավորել փաստական նյութի վերլուծությամբ, տարրեր ժանրերում արտահայտված Սաադի բանաստեղծության և Հովհաննես Երգնկացու հայրենի ընդհանրությունը նշող մի թեմայի քննությամբ:

Մէկ մարդ մի ճոհար ունէր և ի խելաց շահել շրկարաց,  
Մինչ խելքն ի վերայ եկաւ, նա գընաց ճոհարն ի ձեռաց,  
Գընաց նա ի վայր նստաւ, ողորմիկ ու շատ մի իլաց:  
Նորա լացն այլ ի՞նչ շահ է, երբ գընաց ճոհարն ի ձեռաց<sup>354</sup>:

Սաադիի Գոլեսթանում «Ծերության և թուլության մասին» դիմում մի բանաստեղծություն կա:

Լսել եմ, որ այս օրերս, մի զառամյալ ծերունի  
Զառամ գլխում մտցրել էր, որ մի շահել կին առնի.  
Մի դեռատի սիրուն աղջկ ուզեց Գոհար անունով  
Եվ թաքցրեց գոհարի պես մարդկանց աշքից ապահով:  
Ինչպես հարկն էր լավ հարսանիք արավ ծախրով մեծամեծ,  
Բայց ծերունին հենց նոյն օրը ձախորդության հանդիպեց:  
Ծերն այնուինտ գանգատվում էր ծանոթներին սրտակից,  
Թե իմ սրտով սիրած կինս կոյս հեռացավ ինձանից:  
Գործ հասավ դատարանին, Սաադին իր խոսքն ասեց.  
Թե աղջիկը ինչ մեղք ունի այս վատ գործի մեջ ձախող  
Երբ դողոջուն քո ձեռքերը գոհար պահել չեն կարող<sup>355</sup>:

354 Արմենութիւն Սրբապան, Հովհաննեսն Երգնկացի, ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958, էջ 160 (այսուհետև՝ Հովհաննեսն Երգնկացի, Բնագրեր):

355 Մովսես Էդ Դիմ Սաադի, թարգմ. Ա. Մելիք-Վարդանյանը, Երևան, 1958, էջ 181:

Բացի ակնհայտ բառախաղից (Գոհար-գոհար), հետաքրքիր է թեմայի ձևավորումը հետևյալ ներքին կառույցի վրա՝ Թանկարժեք իր, անարժան տեր, կորուստ, ողբ, որը մեր կարծիքով աստվածաշնչային էթիկայի հեռավոր արձագանքն է. «Մի արկանէք զմարգարիտ ձեր առաջի խողաց, զի մի առ ոտն կոխիցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ»<sup>356</sup>, կամ՝ «...Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ»<sup>357</sup>: Հայոց արմատական բառարանում գոհարը պահլավական-պարսկական ծագում ունի, որ ազնիվ քար է նշանակում: Դրա արաբական ձևը ճոհարն է, որ նույնպես թանկագին քար է<sup>358</sup>: Հայկազյան բառարանում՝ «Ակնկամ քար պատուական»<sup>359</sup>: Պարսկերեն բացատրական բառարանում այն մարգարիտ իմաստն ունի<sup>360</sup>:

### Հայրեն.

Աւադ զայն, որ շատ դատիս,  
Մարդ չկայ, որ զելն ճանչէ.

Հաշուէ թե ճոհար ունի,  
՚ի ի խոզուն առջև կու վաթէ,  
Խոզն զճոհարն ո՞նց ճանչէ,  
Զօրն ի բուն զաղբըն կու փորէ:  
Կոխէ նայ զքո ճոհարն,  
Ու դնչովն զքեզ կու դեղէ<sup>361</sup>:

Սաադիի և Երգնկացու պոեզիայում արտացոլված երեւոյթը համբնդհանուր մարդկային տիպարանության մասնավոր դեպքերից մեկն է:

Հովհաննեսն Երգնկացու վերը նշված հայրենի բառարանը

356 Ավետարան ըստ Մատթեոսի, Է. 6:

357 Նոյն տեղում, ԺԳ, 46:

358 Հ. Ականյան, Հայերն արմատական բառարան, հ. Ա. Երևան, 1971:

359 Նոր բառգիրը Բայկազեան լեզուի, հ. առաջին, Երևան, 1979:

360 Թորիան-Շաթէ, Թնթրան, 1336.

361 Հայեններ, էջ 353:

բնորոշ է նրա ողջ ստեղծագործությանը, ուր բազմիցս օգտագործում է, օրինակ, ճռհար բառը, սակայն այլ իմաստով։ 1281-1284 թթ. ճանապարհորդելով Մերձավոր Արևելքում, նա մոտիկից ծանոթացել է մահմեղական աշխարհի գիտությանը։ Ենթադրվում է, որ կիլիկիայի գիտականների հետ համագործակցած (նրանց, ովքեր անմիջական շփման մեջ էին արարապարսից աշխարհի հետ)՝ նա շարադրել է իր «ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» բնափիլիսոփայական աշխատասիրությունը, ուր անդրադարձել է նյութին, առաջնային չությանը, որ նունպես ճռհար է կոչվում<sup>362</sup>։ Վերը բերված օրինակներում մեկ անգամ ևս ընդգծվում է անհատական և քուչակյան կոչվող հայրենի ընդհանրությունը, դրանց ծագումնաբանական կապը՝ այսինքն՝ այն, որ հայրենը զուտ հայոց երեւոյթ է և ձևավորվել է ժողովրդի ընդերքում ու սնել անհատական արվեստը։

Երգնկացուց մեզ հասած հայրեններում հետաքրքիր են նրա քանաստեղծական հնարանքները բնափիլիսոփայական տերմինների միջոցով, որոնք աշխույժ և կենսախինդ վերարտադրում են քրիստոնեական հարատես դիլեման՝ հոգի թե՞ մարմին։

Զայս չորս յիրար ո՞նց սազեմ, ամեն մէկ յինքըն կու քաշէ,  
Չոր Հողջս խուշկիկ առնէ, ջուրս գէճ կու ցըրտացնէ,  
Քամին զիս յերեք ունի, կըրակի՛ն բոցըն կու վառէ<sup>363</sup>։

Չորս տարրերի խտացման հնարքը մենք տեսնում ենք դեռևս Ռուդաքիի և Նարեկացու պոեզիայում։

Նարեկացի։

«Քանզի թէ եւ ի փառս ահաւորութեան սրանչելեաց մնձիդ՝  
Հակառակարն հանդերեցներ զկազմած մարդոյս,  
Չոմն՝ ծանը, եւ զոմն՝ թեթեւ,  
Զմին՝ զով, եւ զմիւսն՝ հրային,

362 Հմնտ. Ս. Արևշատյան, Հովհաննես Երգնկացու իմաստասիրական անհայտ աշխատությունը, էջ 298։

363 Հովհաննես Երգնկացի, Բնագրեր, էջ 161-162։

Զի դիմադրութիւնն ի հակառակացն հարթ պահեցեալ՝ Արդա՛ր կոչեսցուք հաւատարիմ հաւասարութեամբ<sup>364</sup>։

«Չորս տարրերից յուրաքանչյուրը (եզնիկը դրանք անվանում է հյուղ, նյութ կամ բնություն), այդ ուսմունքի համաձայն, կյանքի կոչվելով արարչից, օժտված է երկու այնպիսի ներհակ հատկանիշներով (հուրը չոր է և ջերմ, օգը՝ ջերմ և նոռնավ, ջուրը՝ խոնավ և ցուրտ, հողը՝ ցուրտ և չոր), որոնցով հակադրության մեջ է մտնում և կամ միավորվում, հաշտվում մյուսի հետ՝ հաստատելով, կարծես, սիրո և ատելության խորհուրդը<sup>365</sup>։ Ըստ որում, ամեն մի հեղինակ յուրովի լուծում է տալիս դրանց։ Բնափիլիսոփաների պոեզիայում այն համապատասխանում է սեփական գիտական տեսություններին, արքունական բանաստեղծի մոտ դրանք զարդարանքի և սրամիտ ու ճկուն պատկերի տեսք են ստանում։ Առաջինների պոեզիայում դրա գործառությունը գիտական-ուսուցողական է, մյուսների մոտ՝ վարպետության ապացույց, գովասանք կամ պարգև ստանալու միջոց։

Եթե վերը նշված հայրենը համեմատենք Հովհաննես Երգնկացու հիշատակված գիտական աշխատասիրության մի փոքր հատվածի հետ, մեկ անգամ ևս կհամոզվենք մեր դրույթի իսկությանը, ինչպես նաև Երգնկացու նմանատիպ հայրենների պատկանելությանը։ «Չորս տարրերս սեռ խաս կոչին...», «Շառաւալիդն է լուսոյն պատկեր, ջերմութիւնն՝ հրոյն, և գիճութիւն՝ ջրոյն, և տաքութիւն և հովութիւն և շարժումն՝ օդոյն, հովութիւն և չորութիւն՝ հողն և սոցա տարրերս պատահմամբ տեսակ ընդունին և ոչ մնացական, այլ փոփոխական, որպէս ջուրն, որ ջերմանայ, և հողն տաքանայ և այլ այսպիսիք. օդն ցրտանայ»<sup>366</sup>։

Խայամը, վերարտադրելով ավանդական հակաթեղերի թեման, իր ստեղծագործությանը հաղորդում է երկու սկիզբ՝ փիլիսոփայական և բանաստեղծական։ Ահա օրինակ՝

364 Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Բան ԶԶ (ա)։

365 Նոյն տեղում, Մանոթագրություններ, էջ 1021։

366 Տե՛ս Ս. Արևշատյան, նշվ. աշխ., էջ 305։

Խմաստունների հետ հաղորդակցվիր,  
չէ՞ որ քո մարմնի էությունը,  
Փոշին, գեփյուռը, կայծնու կաթիլ են<sup>367</sup>:

Բեյթի իմաստը կառուցված է հունական փիլիսոփայության, ինչպես նաև Եցն Սինայի այն գրութիւնի հիման վրա, ըստ որի՝ բացի Հողից, ջրից, օդից և կրակից «մնացած բոլոր մարմինները կազմվում են դրանցից»<sup>368</sup>: Իրերի գոյությունը իրականանում է այդ չորս տարրերի իրար փոխանցվելու միջոցով. ինչպես օրինակ օդը գառնում է ջուր, հող՝ ջուր, ջուրը՝ հող, ինչպես նաև՝ կրակ՝<sup>369</sup>:

Սելջուկյան շահ Սանջարի արքունական բանաստեղծ Մոեզ-զին, ակնարկելով օգոստափառ նվեր, գրում է.

Հենց շահը տեսնի իմ տաղանդի կրակը,  
Հողից ինձ մինչ երկինք կրարձրացնի,  
Հենց լսի երկու բեյթ ջրի պես (զուլալ),  
Մի հրաշալի նժոյզ կնվիրի՝ քամու նման (սուրացող)<sup>370</sup>:

Ֆրանսիացի մի հետազոտող հայտարարում է. «...Նահապետ Քուչակ ինձի շատ բարձր կը թուի Օմար Խայամէն..», «...պարսիկին տաղիկները բառական թարգմանութիւններուն մէջ կերեւան միօրինակ, արուեստակեալ, յաճախ ցուրտ, իմաստով և պատկերներով աղքատ: Նահապետ Քուչակ ընդհակառակն՝ նոխութիւնը, ջերմութիւնը, բնականութիւնն իսկ է»<sup>371</sup>: Ակսենք նրանից, որ «Օմար Խայամի քառյակները պարսից պոեզիայում նոր որակ են, բոլիչը<sup>372</sup> թեմաների բազմազանությունից դեպի փիլիսոփայա-

367 Տե՛ս Ա. Կ. Կօմոյն, Ռубան և կլասսիկական պոեզիա հայության մասին աշխատանքներ, Երևան, 1981, ստ. 85:

368 Տե՛ս Բ. Կ. Չալօյն, Վոստօք-Զապադ, Մ., 1968, ստ. 182

369 Հմմտ. նոյն տեղում, էջ 86:

370 Դիվան-է Մընօզի, Թեհրան, 1318, ոռքայա:

371 «Հայրեններու բուրաստամը», էջ 121:

372 Այս որակումը առաջին անգամ տվել ենք ատենախոսությունում («Формирование рубаи в классической поэзии на фарси 10-12 вв. Автореферат канд. дисс., М., 1976») և նշված «Ռубան...» մեմագրությունում (էջ 79), որը նետազայում

կան ազատախության ոլորտ: Ժանրային ձևի բարձրագույն կետը, որպիսին իրավամբ համարվում են այդ քառյակները, ենթադրում է երկու հատկանիշ. առաջին՝ ժառանգականություն, նախորդների նվաճումների որոշակի կատարելագործում և երկրորդ՝ մի նոր, արմատական, որակական փոփոխություն: Երկու հատկանիշներն էլ բնորոշ են դրանց»<sup>373</sup>: Հնչյունային և ոիթմամեղեգային հնարանքները փոխարինելու են գալիս նախորդների զարդարանդակ, բարդ ու նրբաճաշակ պատկերների համակարգին և մեղմում են նրա անպաճույթ, ոացիոնալիստական ոճը: «Սառնությունը» բացարձակ սուրբեկտիվ որակում է, չունի գիտական հստակ չափանիշ:

Նրա քառյակները ծանրաբեռնված են ոացիոնալիստական-փիլիսոփայական լիցքով, սոցիալական երգիծանքով, ըմբռուտաստվածուրացությամբ, որով և դուրս են գալիս պարսկական արքունական պոեզիայի համատեքստից և նոր որակ են բերում այդ գրականությանը: Ասկածը արդեն հակասում է նրա «միօրինակ» որակմանը: Ինչ վերաբերում է քուչակյան հայրենների «ճոխությանը», ապա դա թերեւս առավել բնորոշ կլիներ Գրիգորիս Աղթամարցու կամ Հովհաննես Թլկուրանցու տաղերին: Հայրեններն անպաճույթ են, պատկերները՝ զգայական, մոտ ժողովրդական անմիջական ոգուն. նրանց բնորոշ է կենցաղային-ոամեկական տեսարանների նկարագրություն, կերպարների բազմազանություն, լեզվառնական պարզություն: Հայրենների մասին վաղուց հայտնված կարծիքները և գնահատականները բերվում են միմիայն նշելու համար, որ երբ սկզբունքորեն ճիշտ չեն համեմատության ելակետերը, ապա ճիշտ չեն լինում նաև եզրահանգումները: Նշված համեմատության մեջ ընդհանրությունները ձևի (քառյակ-հայրեն) սահմաններից դուրս չեն գալիս: Հայրենները չունեն իրական խոհական լիցք, դրա փոխարեն նրանց մի

373 Տույն աշխատանքում կատարված այլ եզրահանգումների հետ մտել է «Համաշխարհային գրականության պատմություն» համրագիտարան (տե՛ս Իстория всемирной литературы, том второй, М., 1984, стр. 272)

373 Հմմտ. Ա. Կ. Կողմանյան, նշված էջ 79.

մասը հագեցած է բարոյախրատական ոգով: Կյանքի ունայնութանը վերաբերող փիլիսոփայական մտորումները առանձնապես բնորոշ չեն հայրեններին:

Օմար Խայամ.

Տեսա տանիքին միայնակ մի մարդու,  
Որ ոտքով հարվածում էր ու ճզմում կավը (հողը),  
Այդ կավը (հողը) մարդկային ձայնով ասաց.  
Բնակիչ (այս կյանքի), հարվածներ ես ստանալու,  
ինձ նման<sup>374</sup>:

Հայրեն.

Մահալօրս ի վար կուգի, նայ տեսայ չոր գանկ մի պառկած.  
Ուորս ալ թապալ տրիի, նա երես ի վար ծիծաղաց.  
Դարձաւ ու պատասխանեց.  
Յետ գընա, կըտրիճ շըփացած, էրէկ քեզի պէս էի,  
Այսօր զիս այս հալս է ձգած<sup>375</sup>:

Օմար Խայամը կյանքի և մահվան հակասությունն ու դիալեկտիկան արտացոլող մի ամբողջ շարք ունի, երբ աշխարհի հավերժության գաղափարի խորքի վրա ընդգծվում է մարդկային կյանքի ունայնությունը: Նյութի հարափոփոխությունն իր գեղարվեստական լուծումն է ստանում Խայամի սիրելի «Հերոսի»՝ արհեստավոր-բրուտի գործունեությամբ: Այդ քառյակները այն «տեսակներն» էին, որ հավաքվում էին հենց Խայամի անվան շուրջ: Մեր կարծիքով՝ վերը նշված հայրենը առանձնապես չի համապատասխանում հայրենների ընդհանուր ոգուն: Հնարափոր է, որ այն խայամյան քառյակների նշված շարքի մի տարբերակն է, մեկը այն հարյուրներից, որ շրջում էր արևելյան ժողովուրդների մեջ՝ անընդհատ տարափոխվելով և նորերը ծնելով:

Եթե ելնենք ժամանակակից լեզվառնաբանության այն ընդհանրացումից, թե որքան ցածր է օգտագործվող բառի հաճախա-

կանությունը, այնքան ավելի ուշ շրջանի է այն պատկանում<sup>376</sup>, ապա կտեսնենք, որ «գանկը» հայրենների համահավաքում համարյա թե չի հանդիպում: Կան բարձր հաճախականություն ունեցող բառեր՝ տղա, մանչ, ճոհար, կտուր, շապիկ, ծոց, պագ, մահալ և այլն:

Բազմաթիվ հետազոտողներ համերաշխ են այն հարցում, որ հայրենները քաղաքային կյանքի արտացոլում են: Այստեղից էլ հարկ է սկսել հայրենների համեմատությունը պարսից պոեզիայի հետ՝ հեռանալով մեզ արդեն ծանոթ նրբաճաշակ, բարդ արքունական արվեստից և ընդհանրություններ որոնելով քաղաքային բանաստեղծության նմուշների հետ:

Հնարափոր է՝ նահապետ Քուչակը իսկապես ապրել է 16-րդ դարում, հավաքել ու գրի է առել հայրեններ, գուցե նաև ստեղծագործել է այդ ժանրային ձևով, սակայն արդեն վերը նշված հանգամանքները ստիպում են կարծել, որ փոքր ժանրային ձևերը վաղուց են ապրել ժողովրդի մեջ և պոետիկայի բազմաթիվ տարրեր հենց այնտեղից են մուտք գործել մեր տաղասացների պոեզիա: Անշուշտ, ժողովուրդը իր ուրախության և տոնների ժամանակ նարեկացու «Տաղ ազնիւր» չէ, որ արտասանում ու երգում էր:

Մանուկ Արեղյանը, մեկ առ մեկ քննելով հայրենները, համեմատելով դրանց ուեցեացիայի ենթարկված տարբերակները, ցույց է տվել հայրենների զարգացումը՝ նրանցում ավանդականության և նորարարության աստիճաննը, տաղաչափական առանձնահատկությունները և զուտ հայկական ծագումը, կապը ժողովրդական երգի հետ, ինչպես նաև այն, որ դրանք գոյություն են ունեցել 16-րդ դարից առաջ: «Դրանք (հայրենները-Ա.Կ.) բերանացի ավանդված տաղեր են եղել, և մեկ ժամանակի և մեկ անհատի ստեղծագործություն չեն, այլ ընդհակառակն, դրանց վրա աշխատել են բազմաթիվ սերունդներ և դրանք փո-

374 Սահեղ Հեղալաթ, Թարանեհայն Խայամ, Թերթան, 1339, 89.

375 «Հայրեններ», էջ 185:

376 В. М. Арапов, М. М. Херц, Математические методы в исторической лингвистике, М., 1974, стр. 3.

փոխություն, վերամշակություն և գարգացում են կրել ու բնականաբար, երգիչների բերանին երգվելու ժամանակ, այն էլ դարբեր ընթացքում: Ուրիշ խոսքով՝ այդ փոքրիկ տաղերն ապրել են ժողովրդական երգերի կյանքով և իրրև ժողովրդական երգեր գրի են առնված զանազան ժամանակներում, տեղերում և՝ զանազան մարդկանց ձեռքով: Ուստի և մեկմեկուց տարբեր տաղաչարքերով և բազմազան վարիանտներով, ճիշտ այնպես, ինչպես մեր ժամանակի ժողովրդական երգերի ժողովածուներն են»<sup>377</sup>:

Հայրենների տաղաչափությունը օգտագործվել է մեր գասականների պոեզիայում, այն ծանոթ է եղել նարեկացուն, Շնորհալուն:

Հայրենները համեմատելով ոռբայի և դորեյթի հետ՝ Մ. Աբեղյանը գրում է. «Ռոտանավորի տեսակն արժեք չունի: Ամեն տեսակի չափերով էլ կարող են բեյթավոր քառյակներ հորինվել հանգերի գասավորությամբ»<sup>378</sup>: Անշուշտ փոքր ժանրային ձևերը բազմաթիվ ընդհանրություններ ունեն. դրանց ժողովրդական ծագումը, երգային բնույթը, հաճախ անանուն լինելը, բազմաթիվ տարբերակները, որպես գրական ժանրային ձև նրանց կազմակորման ու բյուրեղացման ընթացքը ևն, իրենց մեջ նմանություններ են կրում, սակայն վերապահելի է Աբեղյանի վերը նշված համոզումը, քանի որ պարսկական փոքր ժանրային ձևը՝ ոռբային, հստակորեն կանոնարկված է և «ամեն տեսակի» չափով չի կարելի այն ստեղծել: Բացի հատուկ հանգավորումից և չորս տողերից, ոռբային ունի որոշակի 24 չափ, որից ամենանըբերանգային շեղումը անգամ, ընկալելի իհարկե միայն սովոր ականչին, ոռբային կարող է դարձնել դորեյթի կամ թարանե: Նշված հանգավորումով, սակայն այլ բանաստեղծական չափով գրված չորս տողը կկոչվի բեկոր (դաթե), դորեյթի, սակայն ոչ ոռբայի: Այդ է պատճառը, որ պարսից միջնադարյան ծաղկաքաղ-թագրյարեններում կամ դիվաններում նախապես ժանրային ձևի անու-

377 Մ. Աբեղյան, Երկն, հ. Բ, էջ 128:

378 Նոյն տեղում, էջ 30:

նը անպայման նշվում է: Հետո առաջնային է այս մագնատ-պար լուսում մասիրությունները ցույց են տալիս, որ հայրենն էլ է կանոնարկված. «Պարսիկ քառյակներու և հայ քառյակներու տարբերությունն անոր մեջ է, որ առաջիններուն յուրաքանչյուր տողը երկու հատվածով՝ ինչպես մեր հայրենը, մերթ 9, մերթ 10, մերթ 11 կամ 12 վանկե կը բաղկանա, մինչդեռ հայրեններու տողը միշտ տասնհինգ վանկե է»<sup>379</sup>: Հայրենը յամբ-անապեստյան ուտանավոր է բաղկացած հիմնականում կամ 4, կամ 8 կիսատողից: Երբ կիսատողերը հանգ են կազմում, այն դառնում է ութնյակ:

Հանգը՝ դաֆինը<sup>380</sup> (որն աղավաղված ձևով մտել է Հայոց մեջ որպես կաֆա), պարսից քառյակի կառուցվածքի ամենակարենոր տարբերից մեկն է: Օգտագործելով հանգի չորս տեսակները (պարզ, լրիվ, շքեղ և ուղիփոփ)<sup>381</sup>՝ բանաստեղծները հնչողության հարմոնիայի և հակադրությունների ամենաբարդ ու բազմազան տարափոխումների միջոցով հասնում են քառյակի բովանդակությունն ու ներքին լիցքն արտահայտող ոլիթմամեղեղայնության: Քառյակի տողերի տրամարանական կապը գիտակցվում է զուգորդությունների, հոգերանական զուգահեռների, պատկերների համաչափության և այլ միջոցների օգնությամբ:

Ինչ վերաբերում է Մ. Աբեղյանի այն մտքին, թե կան պարսիկ գրողներ, որոնք գերադասում են քառյակների այն տեսակը,

379 «Հայրեններու բուրաստանը», էջ 111:

380 Պուտիկայի տեսարան Վահիդ Թարիփից (15-րդ դ.) իր աշակերտի համար պատկերավոր Ակարագրում է և համգի. և երկտողի (բյոթ) կառուցվածքը. Հանգը անվանում են դաֆին (ծոծրակ-Ա. Կ.), որովհետև այն երևան է զալիս բանաստեղծության ոտքի ետնից. Երկտողը կոչվում է բյոթ (վրաՅ), որովհետև երկտողը համեմատում են բրդա վրանի հիմ: «Բրդա վրանը տուն է բրդից, այսինքն փալասներից, որ բոշկոր արաբների բնակարանն է: Այն բաղկացած է պարաներից, մեխերից, փալաներից, որով ծածկում են առաստալը: Եթե այն ունի հատակ, տանիք և չորս պատ, ապա բյոթն էլ այդ ամենը ունի, քանի որ հատակը ընա հանգ է, տանիքը՝ միտքը, որին նա ուղղված է, իսկ պատերը՝ չորս ութեքը երկու կիսատողում» (տե՛ս Վահիդ-Թարիփից, էջ 24. աշխ. էջ 27):

381 Պատիփը այն բառը կամ բառերի շարքն է, որ կրկնվում է համգից հետո:

որոնց չորս տողերն էլ հանգավորվում են, ապա պետք է նշել, որ երկու ձևն էլ հավասարապես բնորոշ են քառյակին, սակայն չորս տողերի հանգավորումը համարվում է առավել հնառն, բնորոշ է ժողովրդական քառյակին, իսկ երրորդ՝ անհանգ տողով քառյակները՝ մշակված և գրավոր քառյակի դասական ձևն: Հստ հաշվումների՝ պարսկական դասական քառյակների 70 %-ը հանգավորվում է ԱԱ ԲԱ ձևով<sup>382</sup>:

Հանս Փեթքեն, որը հայտնի էր որպես Հաֆեզի լավագույն թարգմանիչ, հայրենների հրատարակության առաջարանում գրել է. «Քուչակի բանաստեղծութիւնները բաղկացած են մէկ քանի հարիւր տաղիկներէ, որոնք մեծ մասամբ քառեակներ են: Արտայայտութեան այդ ձևը զոր «Արևելքի հնչեակը» կարելի է անուանել, ան փոխ է առեր պարսիկներէն, որ իրենք ալ զայն արաբներէն առած են»<sup>383</sup>:

Ոչ պարսիկներն են քառյակը փոխ առել արաբներից և ոչ էլ հայերը՝ պարսիկներից: Քառյակը՝ ոռոքային, իր ծագումով զուտ իրանական երեւոյթ է, նրա հոգեւոր մշակույթի անքակտելի մասը, առանց որի չի կարելի ամբողջական պատկերացում կազմել պարսից միջնադարյան դասական գրական ժառանգության, փիլիսոփայական (Խայամ) և կրոնական (սուֆիզմ) մտքի զագացման բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Այն սնվել է իրանական բանահյուսությունից և երկար ու ծիգ դարերի ընթացքում փոփոխվելով՝ պահպանել է իր կապը ժողովրդական ստեղծագործ ողու հետ: Նրա բանաստեղծական չափի արմատները որոշ հետազոտողներ տանում են դեպի զրադաշտական Սուրբ գիրքը՝ Ավետան: Ճիշտ է, այն արաբերեն բառ է, որ նշանակում է քառատող, սակայն արաբական պոեզիան անտեղյակ է եղել քառյակի ձևին, և միայն ուշ շրջանում են արար բանաստեղծները գրել այդ օտարածին ժանրային ձևով՝ պարսկերեն թարանե և դորեյթի անվանումները փոխարինելով արաբական ոռոքայիով: Ինչ վերաբերում

382 L. P. Elwell-Sutton, The Persian metres, Cambridge, 1976, p. 254, ու այլ մուլտապ:

383 «Հայուններու բուրաստան», Էջ 124:

է Հայրենին, ապա, ինչպես արդեն նշեցինք նրա տաղաչափությունը վաղուց է ծանոթ մեր բանաստեղծներին: Բացի այդ, բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործությանը բնորոշ են ճկուն, փոքր, երգային ժանրային ձևերը<sup>384</sup>: Հայրենների և քառյակների լեզվա-ոճական և գաղափարական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ այդ շրջանում ընդհանուր արևելյան աշխարհում կենսունակ էին ումիկ ոճը և թեմաները, որոնք մուտք էին գործում գրավոր գրականություն: Տեղի էր ունենում շրջանառություն, երբ ժողովրդական ստեղծագործությունը մտնում էր անհատական արվեստ, մշակվում, հղկվում: Այդ երևոյթը երկու գրականություններում էլ փուլային-տիպաբանական է: Դրա վառ օրինակներից մեկն է հայոց դասական տաղերգության մեջ սիրո առաջնության, սերը հագատից վեր դասելու, կրոնավորին երգիծական երանգով ներկայացնելու երևոյթը, ինչպես նաև՝ անվիճելի արժեքները (քաղաքներ երկրներ) սիրուհուն նվիրելու և այլ գաղափարներ, որոնք առավել ընդգծված են հայրեններում և առավել զգայական երանգում:

Քո ծոցը է ճերմակ տաճար, քո ծըծերդ է կանթեղ ի վառ,  
Երթամ ես ժամկոչ ըլլամ, գամ լինիմ տաճիդ  
լուսարար...<sup>385</sup>

Ռամիկ ոճը և թեմաները պարսից մեջ 12-րդ դարում մուտք են գործում նույնիսկ արքունիք, և արքունական ծրագրային ժանրը՝ զասիդեն (ներբող), նմանապես ենթարկվում է այդ նոր ուղղությանը<sup>386</sup>:

384 Դրանցից են. Միջնադարյան պարսից թարանեն, Թյուրքական մասին, ուսական շաստուշկան, ճապոնական թամկան ևն:

385 «Հայուններու բուրաստան», Էջ 168:

386 Այդ են ցույց տալիս մեզ համաստեղծություն-մրցույթները Սուլահիի, Ամադի, Ռաշիդիի և այլոց միջն, որոնց համույթը հետևել են Վերնախականացությանը, զնամնատեղությունը, հաճախ կոպիտ ու քարեգիծանը, սուր միտքը, հաճգի բարդությունը: Անվանել երգիծանք-պարսպակապես աշքի է ընկել Սուլահի Սամարդանից (այդ մասպագրերով հատկապես աշքի է ընկել Սուլահի Սամարդանիցից)

Հայոց մեջ տաղերգության լեզվին (միջին հայերենին), որը արդեն գրականության գենոլոգատացման փաստերից մեկն է, դումարփում է նաև աշխարհիկ բռվանդակությունը: Դա ցայտուն երևում է Միիթթար Գոչի սրամիտ, շարժուն, ժողովրդի կենցաղն ու առօրյան արտացոլող գրույց-առակներից:

Նշված դարերում տարածաշրջանում սոցիալ-պատմական այնպիսի գործոններ կային, որ ավելի ու ավելի միասնական էին դարձնում այնտեղ բնակվող ազգերի ճգումները, վարքագիծը, ստեղծագործ ոգին: Դրանցից էին արհեստավորական եղբայրությունները, որոնք իրենց կառուցվածքով և հարաբերությունների մշակված սանդղակով (վարպետ-աշակերտ, օսթաղ-շագերդ), էթիկետին խիստ ենթարկվելու պարտավորությամբ արտացոլում էին ավատատիրական հասարակարգի մողելը: Օրինակ՝ հայոց մեջ 12-13-րդ դդ. զարգացած քաղաքներից մեկում՝ Երգնկայում, գործել է եղբայրություն: Նրա անդամների վարքն ու էթիկետը կարգավորող կանոնադրությունը մեզ է հասել «Սահմանք» անվամբ: Հայտնի «Ախի» կոչվող եղբայրությունը իր տարասեռ էթնիկական և կրոնական կազմով միավորում էր արհեստավոր-առևտրական դասի մեծ զանգված<sup>387</sup>: Արժեքները, որոնք ձևավորում էին տարածաշրջանի բոլոր եղբայրությունների անդամների բարյականությունը միասնականություն էին արտահայտում՝ մեծահոգություն, պատվախնդրություն, հանդուրժողականություն, արիություն<sup>388</sup>: «Մանկակիք, երբ ի հաց նստիք, ձենեցէք աղքատք

սին տեսն Բաղի օլ-գաման Ֆրուգանֆար, Սոխան վա սոխանվարան, շափէ-տովոն, Թերթան, 1350, ս. 317):

387 Եղբայրությունների, համակախու «Ախի» մեջ էին ներդրավված նաև սուֆիզմի հետևող դերվիշներ և միստիկ, թափառական, ապահասակարգայնացված բազմաթիվ տարրեր: Սուֆիզմի կապը այդ եղբայրությունների հետ հետաքրքիր և առավելապես շուտումնասիրված բնագավառ է: Ախի ծագումնաբանությունը տարրեր մենաբանույթունը է ստացել: Այն կապվել է արաբերեն եղբայր բառի հետ, սակայն համարվոր է, որ թյուրքական ծագում ունի և նշանակում է «առատանեն» (Վերջինին մասին տես Fr. Taeschner, Akhi, The encyclopaedia of Islam, V. 1, fasciculus 6, Leiden-London, 1956, p. 321).

388 Եղբայրությունների դեմոկրատական, հումանիստական ինստիտուտը ավելի ուշ՝ 16-րդ դարում, Թուրքիայում ալլահերպէց և ազգայնամոլ ու անհան-

ձեղ ընկեր»<sup>389</sup> կամ՝ «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ ամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին եւ յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան»<sup>390</sup> և այլ հայտարարությունները դրա վառ օրինակներն են:

Սելջուկյան շրջանի ողջ մշակույթը իր բոլոր դրսեորումներով քրիստոնեամահմեդական համագործակցության արդյունք էր: Հատուկ քննության է արժանի այն խառնարանը, որում ձևավորվում էր պարսից, հայոց և կովկասյան այլ ժողովուրդների հոգևոր արժեքների սինթեզը և այն հանդուրժողականությունը, որ իրականում մերձեցնում էր այնտեղ ապրող տարրեր ժողովուրդներին և զարգացող քաղաքներում ձևավորվող տարրեր խավերին: Ըստ Հ. Օրբելու՝ «սելջուկյան» կոչվող դինաստիական-էթնիկական տերմինի տակ թաքնված է մի հրաշալի քաղաքակրթություն, երկու զար տեսող զարգացմամբ, հսկայածավալ տարածքներում արվեստի տարրեր ուղղություններով ստեղծված հյոյակապ և յուրօրինակ մի համալիր, որի ստեղծողները բազմաթիվ ազգեր են: Ավելին, «մահմեդական» տերմինը ոչ միայն մշակութային, այլ նաև դավանական է և չի ընդգրկում բոլոր այն ստեղծագործ տարրերը, որոնք իրենց ներդրումն են ունեցել «մահմեդական» մշակույթում<sup>391</sup>:

Այդ շրջանում այլազագան ազգերի բարեկամությունը իրական էր, հակասությունները՝ ձևական: «Սուլթան Ռոքն-ադ Դինը

դուդող բնույթ ստացավ: «Իր զարգացման ընթացքում թուրքական կայսրության կրօնական և տնտեսական կանոնի առանձնահարատկություններով օժտված Փուլուվաթը, ըստ ամենայնի հանդիսանում էր միջնադարյան հասարակական մի հզօր հիմնարկ, որում ընդգրկում էին միաժամանակ կրօնական կից և արհեստակից եղող թուրք անհատներ միայն» (տես. Հ. Ս. Անասեան, Մանր յերկեր, Լու-Անջելս, 1987, էջ 587):

389 Հովհաննես Երզմակցի, Բնագրեր, էջ 74:

390 Տես Լ. Խաչիկյան, Աշխատուցիւմներ, Բ. Ա. Երևան, 1995, էջ 206: Հայտնի է, որ Սոլյանի մտերմի՛ Երզմակից տիրակալին էր նվիրված պարսից բանաստեղծ Նեզամի Գյանջևիկի «Գաղտնիքների զանձարանի» առաջին մասը, որի Բամար նա առատորեն վարձատրվել էր:

391 Հմմտ. Ի. Ա. Օրբելի, Իշբաններ Երևան, 1963, ստ. 362:

պահանջում էր թամարից, որ ովքեր ցանկանում են պահպանել իրենց կյանքը, իր աչքի առջև տրորեն խաչը՝ քրիստոնեության խորհրդանիշը, իսկ քրիստոնյաները երդում են, որ Անդի տաճարներից գուրս կվռնդեն մահմեդականներին. սակայն այդ բոլորը քարացած բառեր էին, հոգեռականության կողմից թելադրված, իսկ կյանքը հարթեցնում է խտրականությունը, մարդիկ ձգտում են իրար, նրանց մերժեցնում է սերը, հաղթում է գեղեցկությունը, հաղթում են ընդհանուր շահերը»<sup>392</sup>:

Կարծում ենք՝ այստեղից է գալիս այն հանդուրժողականությունը, որը բնորոշ է և՛ հայոց, և՛ պարսից քաղաքային պոեզիայի նմուշներին: Դրանք գուրկ են դավանական խտրականությունից և կրոնական թեմաներից: Վերջինս, իհարկե զարմանալի չէ պարսից պոեզիայի համար, քանի որ ի սկզբանե այն աշխարհիկ բնույթ է ունեցել:

Եղբայրություններն իրենց մեջ ներառում էին հատկապես երիտասարդ մարդկանց, որոնք տարբեր անուններով էին կոչվում. կտիրճներ (արար՝ Փութուվաթ), իրանում՝ ջավանմարդ, իսկ հարեւան Վրաստանում «շաբարներն» էին կամ «գառլաները»<sup>393</sup> ևն: Ձոմարդը, որ մինչև օրս իր նախկին բովանդակությունն է պահպանել հայոց մեջ, ոչ այլ ինչ է, եթե ոչ հենց նույն պարսից ջավանմարդը:

Եղբայրությունները բոլորն էլ մասնակցում էին անտեսական և քաղաքական կյանքի իրադարձություններին և մեծապես կողմնորոշում և կարգավորում էին այն: Ինչ խոսք, այդ միությունները հասարակության «ցածր» շերտում ձևավորվող իրենց անդամներով (արհեստավորներ, առևտրականներ, թափառական դերվիշներ ևն) պատահական չեին: Դա սոցիալ-պատմական պա-

392 Տե՛ս Յ. Գործևսկու, Գույքությունները և անտեսական կյանքը Հայության մեջ: Եղբայրությունները մասնակցում էին անտեսական կյանքի բարեկարգության առաջնային գործություններին:

393 Մերձավոր և Միջին արևելքի, ինչպես նաև Անդրկովկասի եղբայրությունների և երիտասարդաց միությունների մասին հակական գրականություն կա. Վրաստանին վերաբերող մասը տե՛ս Մ. Բ. Գաբաშվիլի, Հայությունների մասին պատմությունը և անտեսական կյանքի մասին պատմությունը մասնաւոր մասը՝ առաջնային գործությունների մասին պատմությունը: Այս պատմությունը տարբեր մոտեցումներ և դրանց բնույթի մասին պատմությունը: Տարբեր մոտեցումները պատմությունը տարբեր մոտեցումներ և դրանց բնույթի մասին պատմությունը: Տարբեր մոտեցումները պատմությունը տարբեր մոտեցումներ և դրանց բնույթի մասին պատմությունը:

Հանջ էր՝ կապված երիտասարդ մարդկանց՝ քաղաքային տարրերի ակտիվացման, շուկայի դերի բարձրացման, ցեխային-արհեստագործության մեջ փոքր մարդու դերի աշխուժացման հետ:

Հայաստանում և իրանում այդ ամենը արտացոլվում էր պոեզիայի նմուշներում, հատկապես փոքր ժանրային ձևերում (քառյակ, հայրեն), որոնք իրենց հանպատրաստի բնույթով արտագորեն հարմարվում էին ժամանակի ոգուն և թափանցում հասարակության տարբեր շերտեր<sup>394</sup>: Վերջինիս պետք է վերագրել տարածաշրջանում փոքր ժանրային ձևերի բուռն զարգացումը, որը պատասխանում էր նոր ձևավորված լսարանի պահանջներին, և որոնց առանձնահատկությունն էր պերճաշուր ոճի անկումը և ժողովրդական թեմաների մուտքը գրավոր գրականություն: Պարսից մեջ քառյակի այդպիսի ժողովրդականացմանը նպաստում էր նաև մեզ արդեն հայտնի սուֆիզմի գաղափարախոսությունը:

Քաղաքային պոեզիան բազմազան է: Այն կատարում է ոչ միայն գեղագիտական, այլ նաև հասարակական կողմնորոշման և գաղափարախոսական դեր<sup>395</sup>: Բանաստեղներից ոմանք անմիջականորեն կապված են արհեստավոր խավերի հետ, մյուսները՝ առավելապես արտահայտում են քաղաքացու անհատական ինքնագիտակցությունը:

Պարսից պոեզիայում հայրենների հետ բազմաթիվ ընդհանրություններ ունեցող քառյակների մի շերտ կա, որ ավանդականորեն վերագրվում է բանաստեղծուհի Մահսաթիին: Ըստ մատենագիր Դովլաթշահ Մամարդանդիի՝ Մահսաթին եղել է նեղամիի գործությունները:

394 Տե՛ս Ա. Կ. Կոզմոյն, Проявление новых тенденций в развитии рубаи в 12 вв., ՅՈՒ, 1984, 5, Երևան, стр. 43-49:

395 Հարկ է նշել, որ սուֆիական քայլակն էլ է ձևավորվել քաղաքային միջավայրում և բնութագրվում է ինչպես ավանդական, այնպես էլ նորաստեղծ պոտիկայի ընդհանուր գծերով: Սակայն փոքր ժանրային ձևի այդ տիպը ծնող հանգամանենք, ինչպես արդեն ցուց ենք տվել աշխատանքի առաջնային մասում, պահանջում են տարբեր մոտեցումներ և դրանց բնույթի մասին պուկանդակության տարբեր գնահատականներ:

և Խայամի ժամանակակցը: Նրա կենսագրության հետ կապված առեղծվածներից մեկը այն է, որ իրքեւ թե լինելով շահ Սանջարի հոմանուհին՝ թաքուն սիրել է մի մասվաճառ պատանու: Եթե պարսից մեջ բանաստեղծների գրական անունը կամ տիտղոսը (լաղար, նիսրա) վկայում էին որոշակի երկույթ (զբաղմունք, ծննդավայր ևն), ապա Մահսաթի, Միհսիթի, Մահսաթի անվանումը մեզ ոչ մի որոշակի բան չի ասում: Դեռ ավելին, այդ անվանումը բազմաթիվ ենթադրությունների և կռահումների առիթ է տվել: Մահսաթի խանումի կերպարը միջնադարյան շատ բանաստեղծների նման ծածկված է ժամանակի մշուշով, պատված լեզենդներով, առասպելներով, իսկ նրան նվիրված հիշատակությունները՝ արված իր ժամանակակիցների կամ գուցե հետնորդների կողմից, հանգում են նրա անվան փաստմանը՝ առանց որևէ էական տեղեկության: Հստ առասպելներից մեկի՝ նա եղել է գեղեցկուհի և վարպետորեն ստեղծագործել է էքսպրոմտի ձևով: Նրա անվան ծագումնաբանությանը նվիրված վեճերը տարբեր եղբահանգումներ են ծնել: Ոմանք այն կապում են Մահսաթիին դիմելու ձևի հետ. միհ ասթի՝ դու մեծ ես, կամ մահ ասթի՝ դու լուսին ես: Կա նաև այլ տարբերակ. Ե. Բերտելսը գտնում է, որ միհ սիթի նշանակում է մեծ տիկին, հետագայում՝ խանում-է բողորդ, որը «...կնոջ պատվավոր տիտղոս լինելով և կրկնվելով տարբեր արքունիքներում՝ բերեց գեղեցկուհու, հրաշալի երգչուհու և էքսպրոմտի վարպետի գրական կերպարի ձևավորմանը: Մի բնորոշ առանձնահատկություն. Մահսաթիին վերագրվող քայլակների մեծ մասը հույժ անվայել բնույթ ունեն: Եթե Հաշվի առնենք, թե ինչ դերում էր հանդեր գալիս այդահի երգչուհին, ապա պարզ կդառնա, որ ցինիզմի փառարանումը կարող էր արքունիքում նրան բացարձակ հաջողություն ապահովել»<sup>396</sup>:

396 Frits Meier, die schone Mahsati, Wiesbaden, 1963, s. 43. (տե՛ս նաև E. Z. Berthel's, Խայամի և Փյուլի, M., 1962, стр. 78-80).

Մահսաթի և Ամիրի ողբերգական սիրո պատմությամբ է նշիրված 12-րդ դարի պարսից բանաստեղծ Ջոնարիի ստեղծագործությունը (տե՛ս E. Browne, A literary history of Persia, v. 2, Cambridge, 1964, pp. 344-45):

Մահսաթիի դիվանում պահպանված բանաստեղծությունների մեջ հանդիպում են «թափառող» քայլակներ, որպիսիք կարող ենք գտնել տարբեր բանաստեղծների դիվաններում: Քուչակյան հայրենների և խայամյան քայլակների նման դրանց իսկությունը ևս հավաստի չէ: Հարկավ, անկայուն տեքստաբանական հիմքը երբեմն անհնար է դարձնում վերլուծությունը: Սակայն, այս պարագայում, կարեոր ենք համարում գրական փաստը, այն է՝ երկու գրականություններում գոյություն ունի քայլակների մի տեսակ՝ ավանդականորեն Խայամին, Մահսաթիին և Քուչակին վերագվող, որը, անկախ դրանց պատկանելությունից, հարուստ նյութ է տալիս ոչ միայն 12-15-րդ դդ. արևելյան աշխարհում զարգացող գրական փոքր ժանրերից մեկի պատմության, այլև տարածաշրջանում գրական նոր ուղղվածության, կողմնորոշման, այդ ձևերի նոր գործառության և ժանրային համակարգում նրանց կարգավիճակի ձևավորման ուսումնասիրման համար: Դրանք ներառելով մեզ արդեն հայտնի բանաստեղծության որոշակի «տեսակի» մեջ՝ մենք բնակ նպատակ չենք դնում վերստեղծել կամ վերականգնել գեղեցկուհու կերպարը (ճիշտ այնպիսի, ինչպիս որ մեզ չի հետաքրքրում Քուչակի անձը), այլ փորձում ենք ցույց տալ գրականության զարգացման ընթացքը, դրանում նոր որակի ձևավորումը, ավանդական հոետորական ոճից հեռացումը ևն:

Ճիշտ է, ժանրային նորմատիվությունը ամուր է պահում որոշ տարբեր (միացում-բաժանում, սեր-տառապանք, մշտական մետաֆորային էպիտետներ՝ վարդերես, լուսնադեմ, կեռհոնք ևն), սակայն սիրո թեման տարբեր ձևափոխումներ է ստանում. սիրային-զվարճալի, սիրային-երգիծական, սիրային-կենցաղային ևն: Առօրյան, առտնին սովորույթն ու կյանքը սնում են բանաստեղծի երեակայությունը, և նրանց ստեղծագործություններում ավանդական հերոսների հետ (գեղեցկուհի, մեկենաս) ի հայտ են գալիս նորերը, որոնք չեն շղարշված գույնով, փայլով, սլացքով, բույրով ևն:

Քուչակ.

Խալտեցայ, խալատ մի արի,  
Ան գեշէն պազ մի ուզեցի.  
Ան զեշն ալ ի նազն ելաւ.  
«Չիմ ի տար անունս աւըրի»:  
Աղվոր մը ներսէն ի դուրս.  
Պագիկն աղվորէն ուզէ,  
Որ գիտէ խաթրը կըտիճին»<sup>397</sup>:

Մահսաթի.

Երեկ ասացի այն դերձակ պատաճուն.

«Աստծո սիրուն, լավ տղա, գնանք ներս»:

Ասաց. «Մեր միացման կապան (հազուստը) չառնես».

Ասացի. «Կյանքիս գնով էլ միացման կարը կանեմ»<sup>398</sup>.

Մենք ականատես ենք աշխույժ երկխոսության. ժողովրդի մեջ օգտագործվող պարսկերեն, թյուրքերեն բառերը (աղվոր, միննեթ, խաթըր), ձայնաբառական միասնություն և սեմանտիկական բազմազանություն արտահայտող բառախաղը (դարզի՛ րա, դա՛ր զիրա՛, դա՛րզի րա, որ նշանակում է՝ դերձակ, ներս, կար), սրամիտ և շարժուն սիրային մի մանրապատկեր է ստեղծում, որը եզր չունի դասական դեկորատիվ՝ սիրային պոեզիայի հետ:

Քաղաքային փոքր ժանրային ձևերի ուսումնասիրությունը հայոց և պարսից մեջ ցույց է տալիս, որ դրանց հիմնական թեման սերն է, որտեղ ընդգծված է զգայական տարրը: Պարսից պոեզիայում հետաքրքիր է բանաստեղծությունների այն շարքը, որտեղ գործող պերսոնաժները արհեստավոր կամ առևտրական պատանիներն են, որ մեկ անգամ ևս ընդգծում է նոր սոցիալական խավի մուտքը գրականություն և նրա դրած նոր պահանջները: Հայրեններում էլ այդ նոր խավը բազմիցս հանդես է գալիս

397 Հայրեններ, էջ 729:

398 Տե՛ս Դիհվան-է Մահսաթի, Թերթան, 1336, ս. 25 (այսուհետև՝ Մահսաթի, Դիհվան):

տարբեր անվանումներով՝ կտրիճ, մանչ, մանուկ, տղա, եղբայր, մորճ, պատանի, մանչուկ ևն: Գեղեցիկ պատանիները դեռևս նոր ձևավորվող պարսից պոեզիայում (Ռուդաքի) արգեն հիշատակվում և գովերգվում էին, սակայն միայն այն չափով, որչափ որ առնչվում էին արքունիքի թեմաներին<sup>399</sup>: Գեղեցիկ պատանու և նրա մասնագիտական գործունեության տարբեր առանձնահատկությունների պատկերումը պարսից գրականության մեջ հետագայում՝ 15-16-րդ դդ., ծնեց մի ուղղություն՝ «Շահրաշուր», որ բառացի նշանակում է քաղաքի հանգստությունը խաթարող<sup>400</sup>:

399 Գերված թյուրք պատանիները ծառայում էին արքունիքներում և նշանավոր ավատատիրական տներում: Հատկապես նրանց էր բանձնված խրախնաճների ժամանակ օշարակ և զինի մատուցելու (մատովակի) պարտականությունը: Երբեմն տիրակալներն աղնապես էին սիրում իրենց պատանի ստրուկն և կապում նրա հետ, որ վերջիններին մեծ իրավունքներ էին տալիս: Պատմությանը հայտնի է օրինակ Մահմուտ Ղազմավիի և Այազի սիրային կապը, որը մոտցը է գործել նաև պարսից գրականություն: Այդ մասին Նեզամի Արուգին գրում է թե սովորացը, որ «բարեպաշտ և աստվածավախ մարդ էր, երկար ժամանակ ընդունակություն էր Այազի նկատմամբ իր սիրություն և պայքարություն էր, որ չշեղվի աստծո օրինական ճանապարհից» (Նեզամի Արուգի, նշշ. էջ 65): Սովորաբար այդ կապը պատանիների համար ողբերգական վախճան էր ունենալու հատկանիւնը: Պահպանվել են պեղզիան նմուշներ, նախկինում հեզ պատաճու փոխվող, ըմբուս թափարության մասին:

400 Այսինքն՝ հրաշալի պատանիներ, որոնք իրենց գեղեցկությամբ և աշխատանքի պամին դրսւորած հմայքով հուզում էին բոլորի սրտերը և դրանով իսկ խաթարում քաղաքի համայնքը: Ծամրացությ չունեն ժամանակից տարրերակում և համեն էր զալիս տարբեր ժամանակին ձևերով: Ըստ Ֆ. Մելիքի Մահմաթիի պեղզիան հետոպաշտում ձևավորված «Ծամրացությ» նախատիպան է (տե՛ս նշշ. աշխ. էջ 94):

Ծամրացությ մասին տես՝ Ամբադ-է Գուշին Մամի. Ծամրացությ դար աղաբիյաթ-է ֆարսի, Թերթան, 1967, ինչպես անև՝ Մոհամադ Զաֆար-է Մահչուր, Մարք-է Խորանանի դար շեր-է ֆարսի, Թերթան, 1324, ս. 677:

Ա. Ի. Բոլդիրեվ, Յաննաձին Վասիլի, Ստалиնաբադ, 1957, գլ. 7. Ե. Ի. Մաշտակովա, Ին истории сатиры и юмора в турецкой литературе, М. 1972, А. Мирзоев, Сездах маколэ, Душанбе, 1977, стр. 274, А. К. Козмоян, Проявление новых тенденций в развитии рубан 12 вв. ВОН, 5, Ереван, 1984, стр. 43-49:

Ծամրացությ համարելի բնույթ էր կրում և 15-16-րդ դդ. տարածված էր թյուրքական, պարսկական, հնդկական, պակիստանան տարածաշրջանների գրականությունների մեջ: Սայդ Արդուլլահի բնորչմամբ՝ «Տերմինարանուն» «Ծամրացությ» օգտագործվում է բանաստեղծության այն տեսակի վերաբերյալ, որը անպայման պարունակում է հիշատակություն տնտեսական

Այդ ժամրում հատկապես վառ են արտացոլված քաղաքային կոլորիտը, քաղաքացու կենցաղը, ինչպես նաև բազմաթիվ ազգագրական հետաքրքրություն ներկայացնող նյութերը: Քաղաքացու հանդես գալով և նրա գեղագիտական պահանջների և ճաշակի թելադրանքով պոեզիայում ձևավորվում է պատկերվողի, պերսոնաֆի նկատմամբ նոր մոտեցում, որում իդեալականացումը, գեղեցկության գեկորատիվ նկարագրությունը, նրբաճաշակ և զարդաքանդակ ոճը նաշանջում են ուսալիստական տարրերի և պարզեցման առջե<sup>401</sup>: Ինչ վերաբերում է բովանդակության անհատականացմանը, ապա քաղաքային պոեզիայի նմուշներում անհատական սկիզբը ավելի ընդգծված է:

Քաղաքային պոեզիայում ներգրավված են տարրեր խավերի ներկայացուցիչներ, ինչպես նաև տարրեր մասնագիտությունների կրողներ. բանաստեղծ, թժիշկ, մատգործ, ներկարար, գերձակ, վարսավիր, պայտար, կոչկակար, գդակագործ ևն: Այն անմիջականորեն արտացոլում էր հենց 12-13-րդ դդ. քարգացող քաղաքի սոցիալական կազմը, տնտեսությունը, կոլորիտը:

Հիրավի, «Արհեստագորական եղայրությունների՝ քաղաքներում զբաղեցրած առանձին փողոցները միաժամանակ շուկայի գեր էին կատարում, քանի որ բացի կիրակնօրյա շուկայական օրերից, մնացած օրերի արտադրանքը նույն շարքում էլ վաճառում էր արտադրող արհեստավորը: Նման փողոցներ կամ շարքեր եղել են Հայաստանի շատ քաղաքներում...»<sup>402</sup>: Միջնադարյան քաղաքին բնորոշ քառյակների մի շարք է պահպանվել 12-

կամ քաղաքական խառնակության մասին կամ էլ սոցիալական տարրեր խավերի նկարագրություն՝ իրականացված երգիծանքի, հումորի կամ պարսպագիրի միջոցով» (տե՛ս Թօրիա յանր լիտերատուր Յուստոկա, Մ., 1985, ստ. 62):  
401 Մեալիզմ տերմինը օգտագործել ենք Դ. Լիխաչևի «միջնադարյան ուսալիզմ» հասկացության շրջանակում. «Միջնադարյան տարրերը ունալիզմ չեն, սակայն նշված գծերը կարող են արդարացնել տերմինների մերձավորությունը» (տե՛ս Դ. Ս. Լիխաչև, Պօտիկա գրեալյան լիտերատուրա, Մ., 1979, ստ. 159):

402 Բ. Առաքելյան, Քաղաքների նոր վերելքը 12-13-րդ դդ., (տե՛ս «Հայութի պատմություն», ჩ. 3, էջ 564):

րդ դարի պարսիկ բանաստեղծ Սուզանի Սամարդանդիի դիվանում: Չնայած նրա մասին տեղեկությունները սուր են, իսկ դիվանը, ինչպես նշում է պարսիկ հայտնի բանասեր Սայիդ Նաֆիսին, առատ է սխալներով, որ որոշ չափով բարդացնում է դրանց թարգմանությունը<sup>403</sup>, այնուհետեւ նրա բանաստեղծությունների պատկանելությունը երբեք կասկած չի հարուցել: Եղել է գերծակ, որտեղից և սերում է նրա գրական կեղծանունը՝ Սուզանի (ասեղի վարպետ): Արքունիքում չի ծառայել, սակայն երբեմն ներբողներ է նվիրել այս աշխարհի հզորներին՝ իր տնտեսական վիճակը թեթևացնելու համար: Այդ հանգամանքը մեծապես որոշել է նրա պոեզիայի բնույթը, քանի որ այն ծառայել է ոչ թե վերնախավին, այլ քաղաքային շուկային, արհեստի մարդկանց և պլեսին: Նրա սոցիալական միջավայրը նոր բովանդակություն, թեմաներ ու մոտիվներ էր հաղորդում պարսիկ բանաստեղծությանը, ինչը խորթ էր արքունական պոեզիային.

Լվացարար տղան՝ արև դեմքով գերում  
Մեր աշքերից հույզի արցունքներ է բերում.  
Որպեսզի այդ տղան լվացը լավ անի,  
Զրին, արևին է հուսով ապավինում<sup>404</sup>:

Կենցաղայնությունը, պաշտոնական պոեզիայի «հերոսներին» հակառակ ապահերոսականացումը, կոլորիտը նոր որակ է, որ արտացոլում է նրանց ժամանակակից քաղաքային կյանքը, երբեմն էլ կրում է անձնական-անհատական երանդ կամ պրոֆեսիոնալ հետաքրքրություն: Օրինակ՝ Սուզանիի քառյակներից մեկում գովերգվում է նաշմ անունով մի պատանի, որը իրու թե նրա հոմանին է եղել (նաշմ պարսկերեն նշանակում է աստղ՝ փոխարերական համեմատություն, որ ավանդական է պարսիկ պոեզիայում): Ամբողջ բանաստեղծությունը Սուզանին կառուցել է լուսին-աստղ, կոչկակար-նաշմ բառախաղի, պատկերների զու-

403 Տե՛ս Սայիդ-է Նաֆիսի, Նազմ վա նասր դար իրան վա դար զարան-է Փարսի, Թեհրիան, ս. 99:

404 «Մարգարտաշար», էջ 116:

գաղրության վրա:

Սիրտս գերված էր կոշկակարից լուսնադեմ (այն դեպքում),  
երբ Նաշմը (աստղը) ինձ էր տենչում....<sup>405</sup>

Բավական է մեկ-երկու բեյթ մեջ բերել արքունական բանաստեղծ Օնսորիի պոեզիայից, որպեսզի սիրային բովանդակության ընդհանրության հետ մեկտեղ, անմիջապես պարզ դառնամիկրոպետիկայի, ինչպես նաև նկարագրման մեթոդի տարրերությունը, սալոնային-գտված և ժողովրդական-քաղաքային արվեստների հակադրությունը, վերնախավի և հասարակ ժողովրդի գեղագիտական չափանիշների էությունը.

Ծիմշատ բոյի, քաղցր լեզվի, սադափ մարմնի տեր ես դու,  
Քար սրտի, արծաթ կրծքի, ոսկե գոտու տեր ես դու...<sup>406</sup>

Կամ՝

Խոպոպէ հաբեց շահին է նման (սև), ո՞վ պայծառ

Լիալուսին,

Թագ է նա համպարից (սև, բուրավետ)

Կակաչ գահի (դեմք) համար,

Դու սուզել ես վարդերեսդ՝ ձյութի (խոպոպմեր) մեջ,

Ես սուզել եմ հափրուկը<sup>407</sup> (դեմքս) արյուն-արցունքի մեջ:

Բոլոր արտահայտչամիջոցները ուղղված են շքեղության առարկաներին: Նրբաճաշակ պատկերները, բարդ այլարանությունները ստեղծում են յուրահատուկ սեմանտիկական դաշտեր.

Ա. շահ, թագ, գահ - իշխանության ոլորտ

Բ. կակաչ, վարդ, հափրուկ - բուսական աշխարհ

Գ. պայծառ, կարմիր, արնագույն - գույնի աշխարհ

Ամեն ինչ նրբաճաշակ է, բացի ձյութից, որը ի հայտ է եկել  
միայն հանգը ապահովելու համար (մոնիր-զարիր-դիր) և յուրա-

405 Դիվան - է Սուօպանի, Թեհրան, ս. 389:

406 Տե՛ս Օնսորի, Դիվան, էջ 197:

407 Բուս, որը իրուն դեղին ներկ է ծառայում (Օնսորի, Դիվան, էջ 191):

տեսակ հավասարակշռություն է տալիս բանաստեղծության ողջ հակաթեզային բնույթին: Հետաքրքիր է բանաստեղծության ավարտը, որտեղ քնարական հերոսը արնաշաղախ արցունքներ է թափում: Դժվար է հավատալ նրա անկեղծությանը. դրամատիզմը կարեկցանք չի առաջացնում: Հայոց մեջ մեզ արդեն ծանոթ (տես 2-րդ գլուխ) դեկորատիվ սիրո օրինակները նույն պատկերն են գծագրում: Դրանք հնդկական միջնադարյան գրականության մեջ նույնպես առկա այն տեսակն են, որոնք որակված են այսպես. «Դրանցում ոչ վիշտն է ընկալվում որպես վիշտ, ոչ սերը՝ որպես սեր»<sup>408</sup>:

Օնսորիի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու սիրային բանաստեղծություններում չկա շարժում, չկան այլ հերոսներ: Ընդհանուր խորքը շքեղության առարկաներն են (մուշկ, համպար, սև սաթ, բյուրեղապակի, սամույր, ոսկի, արծաթ), որոնք քաղաքային քառյակում փոխարինվում են հասարակ, ամենօրյա առարկաներով՝ ասեղ, թել, թաս, մանգաղ, կշեռք ևն: Մարգարտավաճառի կերպարին փոխարինելու է գալիս «մրգավաճառի» կերպարը: Եթե արքունական բանաստեղծը դիտավորյալ բարդացնում ու զարդարում էր իր խոսքը, ապա քաղաքային արվեստի ներկայացուցիչը դիտավորյալ պարզեցնում էր այն: Եթե արքունական ծագալուն ժանրային ձևերում (դասիդե) փաստական-ինքնակենսագրական նյութն անգամ արտացոլում էր արքունական կոլորիտը, բարձրաշւարհիկ խավի կենցաղը, ապա այս դեպքում գրանք գառնում էին քաղաքային միջավայրն արտացոլող փոքրիկ գրավագներ: Վերջինս երբեմն այնքան էական է դառնում, որ, օրինակ, Սուլացանի Սամարդանդիի դիվանի հիման վրա վերականգնվել է բազմաթիվ արհեստավոր-բանաստեղծների անձը, այն պարագայում, երբ նրանք նույնիսկ չեն հիշատակվել բարեխիղճ մատենագիրների ժողովածուներում<sup>409</sup>. օ-

408 Ա. Բեշմ, Չudo, которым была Индия, М., 1974, стр. 444.

409 Պարսից միջնադարյան ծաղկարադները կոչվում էին թագքարի: Դրանք նաև հակիրճ կենսագրական տնդեկություններ էին հաղորդում բանաստեղծի մասին:

րինակ՝ Հանային (հինա պատրաստող), Աբրեշումին (մետաքսագործ), ևն<sup>410</sup>: Կենցաղայնությունը մի նոր շրջան էր երկու գրականությունների զարգացման պատմության մեջ, որը առավել ընդգծված է փոքր ժանրային ձևերում:

### Հայրեն.

Քո եարն ի Հալէպ քաղաքն  
ի շուկան շեքէր կու ծախէ.  
Աչուին է կշեռ արել՝  
Ունքերովն իր վեր կու քաշէ.  
-Ծեքրին գինն ալ հրամէ  
-Պագ մը տուր և շուտ խալըսէ<sup>411</sup>:

### Մահսաթի.

Ղասարս մի մորթուց քաշեց, հանեց դմակը,  
Վերցրեց ձեռքն ու ասաց. «Փահ-փահ, ի՞նչ լավն է».  
Ինձ ու ինձ. «Մի դրա ախորդակին նայեր.  
Այդ դմակով (որ ինքն ունի) դմակ է ցույց տալիս»<sup>412</sup>:

Սա ուղղամիտ և ճշմարիտ ժողովրդական երգիծանք է, աշխույժ և զգարճայի շուկայի առօրյա: Կարելի է ենթադրել, որ այն ասվել է մի առիթով, էքսպրոմտով: Շարահյուսությունը պարզ է, բառարանը՝ մասնագիտական: Պատմողականությունը ընդգծվում է ուղղակի խոսքի մուտքով:

### Մահսաթի.

Ով դասարս, քո (սիրո) դարդից ես եփում եմ,  
Մինչև դանակը ոսկորիս հասնի՝ համբերում եմ:  
Քո օրենքն է, որ մորթես ու ծախես,  
Աստծո սիրուն, մորթիր, քայց մի ծախիր...<sup>413</sup>

410 Տն' Ա. Սագնա, Сузанн и самаркандская литературная среда в 12 вв. Автореферат канд. дисс., Душанбе, 1971, стр. 4:

411 Հայրեններ, էջ 50:

412 Մահսաթի, Դիվան, էջ 25:

413 Նույն տեղում, էջ 33:

Արևելյան շուկան իր ատրիբուտներով մտնում է գրականություն, քաղաքային հրապարակի և թաղամասերի (մահալ, քուչե) «հերոսը» դառնում է բանաստեղծականացման նյութ: Վերը բերված օրինակների մերկ կառույցը հետևյալն է:

### Հայրեն.

### Քաղաք

Սոցիալական վարչական մարմին

Քաղաք (Հալեպ)

Քաղաք (դասարի գործի վայրը)

Ճերոս

յար

դասաբ

Գործունեության վայր

շուկա

շուկա (մսի վաճառքի վայրը)

Գործունեության տեսակ

վաճառք

վաճառք, մորթ

Վաճառքի առարկա

շաքար

միս

Վաճառքի գործիք

կշեռք

դանակ

Մահսաթի.

Մսագործը իր սովորութիւն համաձայն

ինձ սպանեց և ասաց, «Սա իմ գործն է.»

Հետո գլուխը դրեց ոտքերիս ու ներում հայցելով,

Փշեց, որպեսզի (հեշտ) հանի կաշիւ<sup>414</sup>:

Ինչ խոսք, այլարանական են բերված օրինակները՝ կառուցված արհեստների և մասնագիտական գործուներության տերմինների վրա: Պաշտոնական պոեզիայից մեզ ծանոթ աչք-հոնք չարչրկված համեմատության առարկաները հայրենում բացարձակ նոր լուծում են ստանում, ծավալուն փոխարերությունը մի

414 Մահսաթի, Դիվան, էջ 25: Ֆ. Մելեքը նշված աշխատության մեջ վերջին բերթը համբուլի ակտ է համարում:

շարժուն պատկեր է ստեղծում համատեքստի բոլոր մակարդակներում և ոճական, և գաղափարական: Յարը խաղացնում է աչք-հոնքը այնպես, ինչպես խաղում են կեռ ծողից կախված կշեռքի թաթերը: Այս դեպքում հոնքը բացի իր սովորական պատկերից՝ կորությունից, արտահայտում է լրացուցիչ մի հատկանիշ և՝ շարժում: Եթե անգամ ինքնակենսագրական երանգ է կրում զասարի համառորեն կրկնվող կերպարը Մահսաթիի քառյակներում, այնուհետեւ, անժիստելի է այն փաստը, որ հանապազօրյա կենցաղը հեղինակային վերախմաստավորմամբ, երգիծական երանգներով թափանցում է պոեզիա, ձևավորում լեզուն և ոճը, պատկերավորման ողջ համակարգը: Բանաստեղծականացման օրյեկտների կտրուկ փոփոխությունը իր հետ բերում է պրոզաիզմներ, վուգարիզմներ, ընդգծված նատուրալիստական պատկերներ: Մսագործի կերպարը տվյալ համատեքստում (դաժան սիրեցյալ) վերականգնում է մեզ արդեն հայտնի կանոնարկված զուգորդություններ, կապված սիրո, ցավի, վշտի, մի խոսքով չափազանցված ցավային-օրգանական զգացումների հետ, այն, ինչը բնորոշ էր արքունական պոեզիային (սիրուց գեղնած գեմք, կորացած մեջք ևն): Այս քառյակը հին, ավանդական պատկերի նոր տարրերակն է: Մի հանգամաք, որ մեկ անգամ ևս ընդգծում է քառյակում կանոնի և ավանդույթի ուժը: Ինչ վերաբերում է լեզվին, ապա ակնհայտ է պարզ, կենցաղային ոճը: Այնտեղ 25 բառային միավորից 10-ը կենցաղային են. մսագործ, արհեստ, գործ, կաշի, ոտք, գլուխ, տապալել, սպանել, հանել, փչել: Նոր հերոսների հանդես գալով, նրանց շարժունությամբ փոքր ժանրային ձև մուտք գործում ոչ բարդ պատմություններ, ստեղծվում է իրավիճակ: Դրան նպաստում է նաև երկխոսության և ընդեղության մուտքը փոքր ժանրային ձևեր, որը էպիկական որոշ երանգ է հաղորդում բանաստեղծության: Կենցաղային, հետաքրքրաշարժ սյուժեների ու թեմաների մուտքը պոեզիա և նրանց ընդհանրությունները հայց և պարսից մեջ փուլային-սիրապանական երեսույթ են, «...երբ առանձին ստեղծագործություններ, ժանրեր և ոճեր, որոնք ուղղակի ազդեցություններով

չեն կապված իրար հետ, սակայն ի հայտ են բերում առավել կամ պակաս նմանության գծեր՝ պայմանավորված սոցիալ-պատմական պայմաններով»<sup>415</sup>:

Քաղաքային կյանքը, ինչպես հայտնի է, քայքայում է հին, ամուր բարոյական հիմքերը: Բերված օրինակը տղամարդու կոպիտ ուժի ցույց է սիրո մեջ, որը սիրային քառյակին խորթ երևույթ էր: Անհերքելի է, որ նոր անունների և վավերագրական փաստերի ներթափանցումը փոքր ժանրային ձևեր երբեմն նվազեցնում էր դրանցում առկա քնարական լիցքը:

Սիրո թեման տարրեր ձևափոխումներ է ստանում: սիրային-զվարճալի, սիրային-կենցաղային ևն: Ժանրային նորմատիվության հետևանքով հաճախ ամուր են մնում որոշ մոտիվներ: օրինակ դաժան սիրեցյալի կերպարը, բաժանում-միություն մոդելը, որոշ մշտական մետաֆորային էպիտետներ ևն: Քաղաքային պոեզիան ժողովրդական կենսախինդ ոգով, լավատեսական տրամադրությամբ, սրամիտ ու զավեշտական երանգներով է հագեցած: Դրանց հիմնականում խորթ է սիրո տառապանքը:

Ակնհայտ է, որ փոքր ժանրային ձևերը, բազմաթիվ յուրահատկություններով հանդերձ, ունեն նաև բազմաթիվ ընդհանրություններ:

Հափեղ.

Խոհվ-հերարձակ, զՎարթ- հնիին ու քիշ գինովցած,  
Շապիկն արձակ, երգը շուրթին ու փարշը ձեռքին,  
Աշքերը շարաճճի ու շուրթերին հեգնանք,  
Եկավ երեկ գիշեր ու նստեց սնարիս մոտ.

Մոտեցրեց գլուխն ականջիս ու շշուկով ասաց.

«Ո՞վ սիրահարդ խենթ, աշքիդ քու՞ն է գալիս, տե՛ս ինչպես

415 В. М. Жирмунский, Сравнительное литературоведение, Восток и Запад, Л., 1979, стр. 22.

Սիրահարը, որին փարչ են բերում ցայգին,  
Սիրո անհավատ կդառնա, թե զի՞նեմոլ չդառնա....<sup>416</sup>

### Հայրեն.

Այս ծով անատակ գիշերս ի բուհ  
Ես երկու շրջան մանեցի.  
Խօշ եարս այլ ի միտս ընկաւ,  
Թեզ մ ելայ զջահարաս վերուցի,  
Փարշիկ մ այլ անուշ զինի  
Խօշ եարիս դուուն գնացի.  
Խօշ եար ա՛մ, զդուուղդ բաց  
Զին եկեր, ոտիս կու մըսի<sup>417</sup>:

Թվարկված մանրապատկերները քաղաքային էմանսիպացիայի հրաշալի արտահայտութուն են, ամենայն հնի թոթափում և ազատախոհության ցույց: Այս պարագայում նոր երեւյթ է նաև կին քնարական հերոսի ձևավորումը:

Ակնհայտ է օտար բառերի (խոշ, յար, թեզ, ջահար) մուտքը պոեզիա, որ մեկ անգամ ևս ցույց է տալիս, թե հայրենը լայն ժողովրդականություն է ունեցել, հագեցած է տարածաշրջանի ժողովուրդներին առնչվող բառ ու բանով: Ժողովրդի ոգուն մոտ գրական ձևերում նմանապես, յուրատեսակ իրականանում էր այն սինթեզը, որը մենք տեսանք պաշտոնական տաղերգուների պոեզիայում: Պարսից երանգ էր հաղորդվում հայկականին (օրինակ՝ ի Շահնամայայն) և հայոց ոճական համատեքստում հնչում էր պարսից (Աղթամարցու, Թլկուրանցու «խայտարդետ» տաղերը ևն): Մի երեւյթ, որ մենք չենք տեսնում ավելի վաղ շրջանում 10-12 դդ.: Ավելին: Հայ ավատատերերը իրենց պահանջներով նպաստում էին ազգային պատմությանը նվիրված երկերի և իրենց նախնիների գործունեության նկարագրությունների ստեղծմանը: Բագրատունիները, իշխանները՝ հատկապես,

տարված էին իրանական ծագում ունեցող ժողովրդական ասքերի հավաքագրման գաղափարներով: Նրանց համար գծագրվում էր Հայաստանում թագավորության վերականգնման հեռանկարը՝ հիմնված հայոց ավատատերերին հարազատ իրանական հոգեորմակության սկզբի վրա, հակառակ մահմեդական քաղաքակրթության: Սակայն այն հայ գրողները, որոնք անձեռներ էին հոգեկան նմուշների վրա, իրանականից նողեկում էին ոչ պակաս, քան մահմեդականից<sup>418</sup>:

